

ISSN 2579-2733

УНИВЕРСИТЕТ
ГРИГОР НАРЕКАЦИ



UNIVERSITI
GRIGOR NAREKATSI

ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԴԴՐԱՏՈՒՆ

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՀԱՆԴԵՍ

1(7) - 2019

ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ

ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ «ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ»
ՊԵՏՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՎԱԾ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԴՊՐԱՏՈՒՆ

Հասարակական գիտությունների
հանդես

2019-1 (7)

ԵՐԵՎԱՆ



2019

ISSN 2579-2733

ՏՊԱԳՐՎՈՒՄ Է
ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ «ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ»
ՊԵՏՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՎԱԾ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԵՐԱՇԽԱՎՈՐՈՒԹՅԱՄԲ

Գլխավոր խմբագիր՝ ՎԱՐԴԱՆ ՀԱԿՈԲՅԱՆ
Պատասխանատու քարտուղար՝ ՆԱՆԱՐ ՍԻՄՈՆՅԱՆ

Главный редактор: ВАРДАН АКОПЯН
Ответственный секретарь: НАНАР СИМОНЯН

Chief Editor: VARDAN HAKOBYAN
Executive Secretary: NANAR SIMONYAN

© Հանդեսում զետեղված հեղինակներ, 2019
© Ստեփանակերտի Գր. Նարեկացի համալսարան, 2019
© Մրմավ հրատարակչություն, 2019

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ԱՎԱԳՅԱՆ ԱՐԾՐՈՒՆ – բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ԵՊՀ բանասիրական ֆակուլտետի դեկան

ԱՎԱՆԵՍՅԱՆ ԱՐՄԵՆ – բանասիրական գիտությունների թեկնածու, ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի ավագ գիտաշխատող

ԱՎԱՆԵՍՅԱՆ ՎԱԼԵՐԻ – պատմական գիտությունների դոկտոր, ԱրՊՀ պրոռեկտոր

ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ ԼԻԼԻԹ – բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտի ղեկավար

ԲԱԲԱՅԱՆ ԴԱՎԻԹ – պատմական գիտությունների դոկտոր, ԱՀ Նախագահի աշխատակազմի տեղեկատվության գլխավոր վարչության պետ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՄԱԼՅԱ – բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ, Ստեփանակերտի «Գրիգոր Նարեկացի» համալսարանի Արևմտահայերենի, հայագիտության գիտահետազոտական Լուստովիկա և Յակոբ Այնթապեան կենտրոնի տնօրեն, Որակի ապահովման պատասխանատու

ԴԵՎՐԻԿՅԱՆ ՎԱՐԴԱՆ – բանասիրական գիտությունների դոկտոր, ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի տնօրեն

ԵՐԻԱՉԱՐՅԱՆ ԱՉԱՏ – բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Հայ-ռուսական համալսարանի հայոց լեզվի և գրականության ամբիոնի վարիչ

ԹՈՎԱՍՏՅԱՆ ԼՈՒՍԻՆԵ – բանասիրական գիտությունների թեկնածու, Ստեփանակերտի «Գրիգոր Նարեկացի» համալսարանի օտար լեզվի դասախոս

ՀԱՎՈՐՅԱՆ ՍԵՎԱԿ – իրավաբանական գիտությունների թեկնածու, ԱՀ գլխավոր դատախազի տեղակալ, Ստեփանակերտի «Գրիգոր Նարեկացի» համալսարանի իրավագիտության ամբիոնի վարիչ

ՄԱՆԱՍՅԱՆ ԱԼԵՔՍԱՆԴՐ – փիլիսոփայական գիտությունների դոկտոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, ԵՊՀ տեսական փիլիսոփայության և տրամաբանության ամբիոնի պրոֆեսոր

ՄԱՐԳԱՐՅԱՆ ՍԻՐԱՆՈՒՇ – բանասիրական գիտությունների թեկնածու, ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի գիտական քարտուղար

ՄԿՐՏՉՅԱՆ ԷՂՎԱՐԴ – բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Ստեփանակերտի «Գրիգոր Նարեկացի» համալսարանի լեզուների ամբիոնի դասախոս

ՄՈՒՍԱՅԵԼՅԱՆ ՀՈՎԻԿ – բանասիրական գիտությունների դոկտոր, ԱրդՀ գրականության և լրագրության ամբիոնի դասախոս

ՄՈՒՐԱԴՅԱՆ ՍԱՄՎԵԼ – բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ԵՊՀ, ակադեմիկոս Հր. Թամրազյանի անվան հայ գրականության պատմության ամբիոնի վարիչ

ՆԻԿՈՂՈՍՅԱՆ ԱՐՁՄԵՆԻԿ – բանասիրական գիտությունների թեկնածու, ՀՀ ԳԱԱ Մ.Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի ավագ գիտաշխատող

РЕДАКЦИОННЫЙ СОВЕТ

АВАКЯН АРЦРУН – доктор филологических наук, профессор, декан филологического факультета ЕГУ

АВАНЕСЯН АРМЕН – кандидат филологических наук, старший научный сотрудник литературного института имени М. Абегамяна НАН РА

АВАНЕСЯН ВАЛЕРИЙ – доктор исторических наук, проректор АргУ

АРЗУМАНЯН ЛИЛИТ – доктор филологических наук, профессор, ректор Ереванский государственный института театра и кино

АКОПЯН СЕВАК – кандидат юридических наук, заместитель главного прокурора АР, заведующий юридической кафедрой степанакертского университета «Григор Нарекаци»

БАБАЯН ДАВИД – доктор исторических наук, Начальник Главного информационного управления Аппарата Президента АР

ГРИГОРЯН АМАЛИЯ – кандидат филологических наук, доцент, директор западно-армянского арменоведческого научно-исследовательского центра Лютовики и Акопа Айнтаплеан степанакертского университета «Григор Нарекаци», ответственная по обеспечению качества

ДЕВРИКЯН ВАРДАН – доктор филологических наук, директор литературного института имени М. Абегамяна НАН РА

ЕГИАЗАРЯН АЗАТ – доктор филологических наук, профессор, заведующий кафедрой армянского языка и литературы армяно-русского университета

МАНАСЯН АЛЕКСАНДР – доктор философских наук, член-корреспондент НАН РА, профессор кафедры философии и логики ЕГУ

МАРГАРЯН СИРАНУШ – кандидат филологических наук, научный секретарь литературного института имени М. Абегамяна НАН РА

МКРТЧЯН ЭДВАРД – доктор филологических наук, профессор, преподаватель кафедры языков степанакертского университета «Григор Нарекаци»

МУРАДЯН САМВЕЛ - доктор филологических наук, профессор, ЕГУ, заведующий кафедрой армянской литературы и истории имени академика Г. Тамразяна

МУСАЕЛЯН ОВИК - доктор филологических наук, преподаватель кафедры литературы и журналистики АрГУ

НИКОГОСЯН АРКМЕНИК - кандидат филологических наук, старший научный сотрудник литературного института имени М. Абеяна НАН РА

ТОВМАСЯН ЛУСИНЕ - кандидат филологических наук, преподаватель кафедры языков степанакертского университета «Григор Нарекаци»

EDITORIAL COUNCIL

ARTSRUN AVAGYAN - Doctor of Philological Sciences, Professor, Dean of YSU Faculty of Philology.

ARMEN AVANESYAN - Candidate of Philological Sciences, Senior Researcher at Literary University named after M. Abeghyan of NAS RA.

VALERI AVANESYAN - Doctor of Historical Sciences, ASU Vice-rector.

LILIT ARZUMANYAN - Doctor of Philological Sciences, Rector of the Yerevan State Institute of Theater and Cinematography.

DAVIT BABAYAN - Doctor of Historical Sciences, Head of the Central Information Department of the Artsakh Republic President

AMALYA GRIGORYAN - Candidate of Philological Sciences, Docent, Director of Lutovica and Agob Aintablean Western-Armenian and Armenology Research Centre at Stepanakert «Grigor Narekatsy» University, in charge of Quality Assurance.

VARDAN DEVRIKYAN - Doctor of Philosophical Sciences, Rector of Literary University named after M. Abeghyan of NAS RA.

AZAT EGHIAZARYAN - Doctor of Philological Sciences, Professor, Head of the Armenian Language and Literature Chair at the Armenian-Russian University.

LUSINE TOVMASYAN - Candidate of Philological Sciences, Lecturer of Foreign Language at Stepanakert «Grigor Narekatsy» University.

SEVAK HAKOBYAN - Candidate of Law Sciences, Deputy of AR Chief Presecutor, Head of the Law Chair at Stepanakert «Grigor Narekatsy» University.

ALEQSANDR MANASYAN - Doctor of Philosophical Sciences, Correspondent Member of NAS RA, Professor of Chair of Theoretical philosophy and Logic of YSU.

SIRANOUSH MARGARYAN - Candidate of Philological Sciences, Scientific Secretary at the Institute of Literature named after M. Abeghyan of NAS RA.

EDWARD MKRTCHYAN - Doctor of Philosophical Sciences, Professor, Lecturer of Language Chair at Stepanakert »Grigor Narekatsy» University.

HOVIK MUSAELIAN - Doctor of Philosophical Sciences, Lecturer at the the Literature and Journalism Chair of ASU.

SAMVEL MURADYAN – Doctor of Philological Sciences, Professor, YSU, Head of History of Armenian Literature Chair named after Academician Hr. Tamrazyan.

ARQMENIK NIKOGHOSYAN - Candidate of Philological Sciences, Senior Researcher at the Literature Institute named after M. Abeghyan NAS RA.

ՎԱՐԴԱՆ ՀԱԿՈՒԹՅԱՆ

ՊԱՏԿԵՐ. ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԻՑ ԴԵՊԻ ՏՐԱՄԱԲԱՆԱԿԱՆԸ, ԿԱՄ՝ ԺԱՄԱՆԱԿԻ ԵՎ ՏԱՐԱԾՈՒԹՅԱՆ ՏԱՐՐԱԼՈՒԾՈՒՄԸ ԲԱՌԻ ՄԵՋ*

Բանալի բառեր՝ քնարերգություն, պատկեր, առարկայական, տրամաբանական, ոգեղեն, ժամանակ և տարածություն, ավանդական, նորարարական, ոգի, թումանյանագիտություն, գեղագիտություն, հառաչանք, մարդ, մետաֆոր, բանաձևային մտածողություն, ստեղծագործություն, ժողովրդական բանահյուսություն:

- 1 -

Գեղարվեստական գրականության եւ գեղագիտության բնագավառներում /թե հայրենի եւ թե համաշխարհային իրականության մեջ/ կատարած երկարամյա ուսումնասիրություններն ու գիտահետազոտական որոնումները, իհարկե՝ հնարավորության սահմաններում, իմ սկզբունքային մոտեցումներում, ընդհանրապես՝ արվեստի ու արվեստագետի մասին, ամրագրել են անհերքելի մի ճշմարտություն, որն ունի պարզ, բանաձևային շարադրանք, այն է՝ **լավ գրողը չի կարող վատ մարդ լինել, ինչպես որ վատ մարդը չի կարող լավ գրող լինել:** Ինչո՞ւ. խոսքս սկսեցի նման դիտարկումով: Բանն այն է, որ բոլոր ժամանակներում էլ հասարակության մեջ հաճախ այդ երկու հասկացությունների միջեւ, մեղմ ասած, ջրբաժան է դրվել, դրանք երբեմն ներկայացվել են տարանջատ ու իրարամերժ ըմբռնումներով: Թումանյանի մարդկային բացառիկ գեղեցիկ ու վեհ նկարագիրն ու նրա գործը /նաեւ՝ ոչ գեղարվեստական/ մեկ անգամ եւս հաստատում են, որ մեծ միտքն ու մեծ հոգին առանց մեկը մյուսի լինել չեն կարող, ավելին՝ պայմանավորված են իրարով: Եվ միանգամայն բնական է, որ հայ մարդուն բնորոշ բոլոր լավագույն հատկանիշներն ու գծերը թումանյանի մեջ խտացված ձեւով ներկայանում են իբրեւ ընդգծված ազգային արժեք, այլ ձեւակերպմամբ՝ հայ-

* Հոդվածն ընդունվել է 15.05.2019 թ., երաշխավորվել է տպագրության Ստեփանակերտի «Գրիգոր Նարեկացի» համալսարանի գրականության ամբիոնի կողմից՝ 22.05.2019 թ., ստորագրվել է տպագրության՝ 23.05.2019 թ.:

կական ժողովրդական: Հետեւապես՝ մենք որքան գնում ենք դեպի Թումանյան, այնքան ավելի ենք մոտենում ինքներս մեզ, որքան հեռանում ենք Թումանյանից, այնքան ինքներս մեզանից ենք հեռանում: Թումանյանը ժողովուրդն է այլևս, և եթե առաջնորդվենք Պ. Սևակի տրամաբանությամբ՝ **«լավագույն թումանյանագետը Թումանյանն է»**,¹ ստացվում է, որ Թումանյանը նաև մեր լավագույն... ժողովրդագետն է:

Հանրահայտ իմաստությունն ասում է՝ մարդ «կազմված» է լինում այն գրքերից, որոնք նա ընթերցում է: Եթե այդպես է, իսկ դա կասկածի տեղ չի թողնում, ուրեմն, մեզանից յուրաքանչյուրի բաղադրության մեջ ամենից շատը Թումանյանն է:

Ինչո՞վ է բացատրվում Թումանյանի **բացառիկությունը**:

Նախ՝ գրողի յուրաքանչյուր բառ նրան ոչ միայն մոտեցնում է մեզ, այլև դարձնում է մեզանից մեկը՝ սկսած **«Հոգու հատոր»** բանաստեղծությունից, մինչև վերջին տողն ու, հազար ափսոս, կիսատ մնացած հանճարեղ **«Հազարան բլբուլը»**: Եվ մեր վեհացում-վսեմացումն է դա:

Ապա՝ Թումանյանը չի ասում **«Ի սկզբանե էր բանը»**, այլ այն դարձնում է ի սկզբանե: Թումանյանի բերած նորույթը այն չէ, որ ասում է՝ **«Բառը աշխարհ է»**, մանավանդ, որ իրենից առաջ էլ դա հանրահայտ «Ուլիսես»-ում² Ջեյմս Ջոյսն ասել էր, այլ այն, որ բառը դարձնում է անկրկնելի ու բոլորովին նոր, նմանը չունեցող աշխարհ:

Բանաստեղծի **«հզոր հոգին»** բարձրից, այսինքն՝ անաբատ ու անբիծ զգացումների վեհարանից, կամենում է նայել **«աստծո աշխարհքին»** /«Բարձրից»/: Եվ ի՞նչ է տեսնում այնտեղ՝ **«հայրենիքներն անձուկ», «ուտում են ամենքն ամենքին, Ամեն հայրենիք՝ իրեն զավակին, Եվ իր պաշտողին՝ ամեն մի աստված, Եվ կյանքը տանջանք, ցավ համատարած»**: Խորը դրամա է ապրում պոետը, հայտնվում վշտի ու ողբերգության մեջ, ուր և ծնվում է բաղձալի երկրի գաղափարը, տեսլականն այն «աշխարհքի», որ ինքը պիտի ստեղծի՝ այնտեղ **«շնչելու շունչն աստվածային»**: Ու տիեզերքում **«հաշտ ու խաղաղ մարդկություն»** փնտրող հոգին փրկության խարիսխ է ձգում բանաստեղծի մեջ.

Անպատում վշտով վերստին նայեց

Իմ էս մեծ սրտին՝ աշխարհքից էլ մեծ—

1 Սևակ Պ., Երկերի ժողովածու, հ. 5, «Հայաստան» հրատ., Երևան, 1974, էջ 366:

2 Ջեյմս Ջոյս, Ուլիսես, Հեղինակային հրատ., Երևան, 2012, էջ 94:

*Անսահման աշխարհը, և սեր ընդհանուր,
Եվ մարդը ուրախ, և երգ ամենուր...¹*

Իրական աշխարհը տեղի է տալիս հոգևորի առաջ, և բանաստեղծի կերտած պատկերը առարկայականությունից անցնում է եուֆեմականին, նյութականից՝ աննյութականին ու ոգեղենին, որոնց և մշտապես հետամուտ է գրողի միտքը: **Իրը** վերածում է **իրավիճակի**, նյութը հաղթահարվում է, խորքում անլուր ողբերգություն, ցավ ու, այդ ամենի հետ միասին՝ հեգնախառն, անսահման տխուր լույս:

Ահա շիրիմ... իմ ընկերն էր...

*մի սովորուք ուներ նա,
Գիշերն արթնում, լույսն էր վառում,
նստում ժամը իմանա...*

*Հե՛յ, ի՞նչ անմիտ խոսք է էսօր ժամը
կողքին էս շիրմի...*

*Հե՛յ, անուշ ջան, ի՞նչ ես հարցնում
ժամը քանիսն է հիմի...²*

Նովելային մի փոքրիկ պատումի մեջ բառերն անգամ իրենց իմաստային ճառագումներում չեն երեւում, մնում են ասելիքի «ետեւում»՝ ժամի մեջ ներառելով կյանքի եւ մահվան մութօլուսի **«անհեթեթությունը»**: Պատկեր-գործողությունները փոքրիկ քերթվածում հաջորդում են մեկը մյուսին: Ծանր ապրումների ու հուզմունքի գերլարված իրադրություն, տվայտանք: Ընդհանրապես պիտի նշել, որ Թումանյանի ստեղծագործություններում, իսկ դա բացատրվում է նրա ժողովրդական մտածողությամբ, գերիշխում են պատկեր-գործողությունները, որոնք եւ դրամատիզմ են հաղորդում նրա մտածողական-գեղարվեստական ամբողջ համակարգին:

*Ինչպես շնաճանճի մի բուն
Քանդես, թողնես,
Էն ճանճի պես
Ամբողջ գլուղով օրդու կապում,
«Բուհ» են անում, դուրս են թափում
Ամեն միևն առած մի բան.
Որը ձեռին մի հրացան,
Որը եղան, ցաքատ կամ սուր,
Որը թի, բահ, որը շամփուր,*

1 Թումանյան Հովհ., Ընտիր երկեր, «Սովետ. գրող» հրատ., Երևան, 1978, էջ 54:

2 <https://granish.org/hovhannes-tumanyan/>

Որը կացնով, որը փետով,
 Որը ծիով, որը ոտով,
 Որն անգդակ, որը բոբիկ—
 Դեպի դուշման գյուղը մոտիկ:

(«Մի կաթիլ մեղրը»)

Բառը երևույթ է. դավանանքային այս մոտեցումը թումանյանի գեղագիտական սկզբունքների առանցքում է: **«Բանաստեղծի համար,-** ընթերցում ենք Պուշկինի մասին ասված նրա գնահատանքի խոսքում,- **մի բառը մի աշխարհ է, և մեծ նշանակություն պիտի տա բանաստեղծը բառին»:**¹

Ավելին, թումանյանի բառը որքան բաց է աշխարհի առաջ, նույնքան էլ փակ է, ինչպես հեքիաթային այն աղբյուրը, որն իսկույն ցամաքում է, երբ անարժան մեկն ուզում է խոնարհվել նրա ակին: Բանաստեղծի բառը ոչ միայն աշխարհ է, այլև նաև հավերժալույս դուռ, որ բացվում է անսահմանի վրա: Մենք մեր ուսումնասիրության մեջ կփորձենք «գաղտնագերծել» թումանյանական բառի պարզության առեղծվածները՝ այդ համապատկերում ներկայացնելով գեղարվեստական պատկերի գլխավոր հատկականությունները, առարկայականից դեպի տրամաբանական-էութենականը տանող նրա մտակառույցների ներքին շարժումներն ու զարգացումները, ապա՝ տարածության ու ժամանակի մեջ բառը տարրալուծելու, ժամանակը բանահյուսելու գրողի «ալքիմիան»:

- 2 -

Թումանյանի փիլիսոփայությունն աչքի է ընկնում իր արտակարգ բարձր կենսականությամբ: Այս առումով խիստ բնութագրական են բանաստեղծի **«Ահա շիրիմ»** վերոնշյալ քառյակի երրորդ և չորրորդ տողերը. հերոսը, որ գիշերն անգամ արթնանում ու ժամացույցին էր նայում՝ ժամը քանի՞սն է, արդեն հողի տակ է, և **«հ՛նչ անմիտ խոսք է էսօր ժամը կողքին էս շիրմի»:** Ժամանակի բավականին դաժան, սակայն իրական, չգունագարդված «ընթերցանություն», ուր, մանավանդ, վաղանցիկ են ու անհասկանալի **«կան և չկան»**² աշխարհի: Եվ բանաստեղծի բառը միտում ունի անանցողիկ

1 http://www.toumanian.am/toumanian/html/stegts/gna_hatmamb.html

2 Թումանյան Հովհ., Ընտիր երկեր, «Սովետ. գրող» հրատ., Երևան, 1978, էջ 76:

պահաստեղծման, որը և նրա բանաստեղծությունը դարձնում է ոգեղեն:

Կյանքն ու մահը **«անցվոր, ունայն, Մեծ հավերժի ձեւերն են միայն»** Թումանյանի համար, եւ բանաստեղծի **«զարկած հավքն»** անգամ մշտապես թռչում է նրա մտքում, որը տվյալ պատկերում դառնում է ե՛ւ տարածական, ե՛ւ ժամանակային միավոր: Բառի ընդերքներում Թումանյանն ընդարձակում է հոգեւորի անընդգրկելի սահմանները՝ անմահությունը փնտրելով իր ներսում. **«Եվ թե հաստատուն մի բան կա անմահ Արդյոք իմաստուն հոգի՞ն է...»...** Այդպես եղել է և էն գլխից, **«Երբ չկան էլ դեռ չկար»**¹ աշխարհում, այդպես է եւ այսօր...

Ինչպես գիտենք, կյանքի ունայնության փիլիսոփայությունը միանգամայն հարազատ է և ԱՎ. Իսահակյանի աշխարհագագողությանը, իհարկե, սկզբունքային միանգամայն այլ դրսեւորումներում ու գեղարվեստական ուրույն պատկերի մեջ.

Ամեն ինչ ունայն, երազ անցավոր,

Աստղ էլ որ լինիս՝ պիտ հանգչես մի օր,

Ոչինչ է մարդը՝ փոշի փոշու մեջ,

*Իր ցավը սակայն տիեզերքից մեծ:*²

Թումանյանի միտքը, սակայն, ի վերջո, իր հենման կետը գտնում է հոգու մեջ, քանի որ **«Անցվոր է ողջը-բախտ, վայելք ու փառք»**, եւ ինչքան էլ **«Էսօրն ու երեկը փոփոխվեն»**, **«միշտ մնում է»** միայն մի **«մեծ ժամանակ-եղպես էլ հոգին»**:

Հոգի եւ **անմահություն** եզրույթները բանաստեղծի գեղագիտության մեջ նույնացվում են **անհունի** հետ /**«Դեպի անհունը»/**, **«ուր չկա մահ, անջատում»**, ուր **«սերն անհատնում»** է: Ի դեպ, Չարենցի գեղարվեստական կերպավորման մեջ ժամանակի եւ տարածության անեզրությունը մարմնավորվում է **«դեպի երկինք պիտի գնամ, դեպի եզերքն Ամենտի»**³ պատկերային կառույցի մեջ:

Արժարժվող այս խնդրի լուսաբանման առումով բավականին խորհրդանշական է Հովհաննես Թումանյանի **«Սիրիոսի հրաժեշտը»** իմաստասիրական քերթվածը, ուր բանաստեղծը միանգամայն ինքնատիպ ու ամփոփ լուծում է գտնում վերջին

1 Թումանյան Հովհ., Ընտիր երկեր, «Սովետ. գրող» հրատ., Երևան, 1978, էջ 75:

2 Իսահակյան ԱՎ., Երկերի լիակատար ժողովածու, հատոր առաջին, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., Երևան, 2003, էջ 513:

3 Չարենց Ե., Ընտիր երկեր, «Նաիրի» հրատ., Երևան, 1997, էջ 11:

տողերի հարցման մեջ տալով նաեւ բոլոր ժամանակներում գոյի եւ անգոյի հարաբերակցության թեմա դարձած առեղծվածի պատասխանը.

Մարդու քանի՞

Սերունդ կանի

Մի հրաժեշտն աստեղային:

Դառնանք **«Հառաչանք»** պոեմին: Այստեղ ևս բոլոր գծերի, բոլոր երանգների մեջ թումանյանն ամբողջականության է տանում **Մարդու** կերպարը: Եվ պահի հոգեբանական պատկերն առավել համոզիչ է դարձնում նա հեղինակային մի դիտարկմամբ: Ահավասիկ. **«Ահա տարածվեց հեռու ծըմակից Եվ ձիգ ոռնոցը սովատանջ գիլի»:**

Ընդհանրապես թումանյանին հատուկ է երկերում նախապես նշել իր **«գյուլի պես»**¹ սլացող խոսքի ուղղությունը, որն, իհարկե, գալիս է ազգային-ժողովրդական պատումների էպիկական ոճից, ավելին, նա ընթերցողին ձգում-տրամադրում է «հազար ականջ» դարձած լսել: **«Հառաչանքի»** ծերունին **«մի քանի կոճղեր»** դնելով կրակին, փաստորեն իր ներսում ծխացող հուրն է բորբոքում:

Ծերունուն թումանյանը «կերտում է» հենց նրա ներսից եկող ցավով, նրա տառապանքի ամեն մի արտահայտությամբ, գնահատանքով, աշխարհն ու մարդուն քննող-զննող-դատող մտքերով՝ գեղագետի իր նուրբ արվեստով կառուցելով հնի հակադիր բեւեռում բարձրացող երազ-աշխարհի մանրակերտը: Այսպես, ծերունու աշխարհայեցողությունը ներկայանում է ամենատարբեր իրավիճակների մեջ, սակայն նրա վերաբերմունքն ու փիլիսոփայական ընդհանրացումները ելակետային նույն հիմքի վրա են: Ու, որքան էլ զարմանալի թվա, ծերունու մտահոգությունը տիեզերական սուբստանցի արդար կայունությունն է: Երեւույթը դիտարկենք **«Հառաչանքում»** ներկայացվող տարբեր իրադրություններում: Այսպես.

•

Բա մեռած հո չենք, ապրում ենք, Էլի,

Ամեն մեռնողի երանի տալով:²

1 Թումանյան Հովհ., Ընտիր երկեր, «Սովետ. գրող» հրատ., Երևան, 1978, էջ 248:

2 Թումանյան Հովհ., Ընտիր երկեր, «Սովետ. գրող» հրատ., Երևան, 1978, էջ 160:

•

*Մեր ապրուստն ի՞նչ է,- մի կտոր չոր հաց,
Էն էլ հրեն հա-երկընքից կախված:¹*

•

Աչքդ թեքեցիր-բանիդ տերը չես:²

•

*Դարձել է աշխարքն, ախպեր, առ ու փախ,
Սերը դարձել սուր ու ջուրը-արին,
Ոչ ամոթ ունի ուժեղը, ոչ վախ,
Վայը եկել է, տարել տրկարին:³*

•

*Մինը իր կամքին՝ ինչ ասես՝ անի,
Մյուսը խոսելու իրավունք չունի...⁴*

Գեղարվեստական մարմնավորումների մեջ ներկայացվող բանահյուսական /բանաձեւային/ մարգարիտների այս շարքը կարելի է երկար շարունակել, սակայն դրանցից, թերեւս, մեկն էլ բավական է՝ շնորհիվ թումանյանական խոսքի բացառիկ ուժգնության ու համոզականության, որ ընթերցողը հստակորեն տեսնի ծերունու միջոցով ներկայացվող թումանյանի տեսիլ-հիմնագաղափարը, մի աշխարհ, որը կա միայն հեղինակի ու նրա հերոսների, երազանքների մեջ՝ որպես բնորոշ:

Թումանյանի խոսքը միաձուլվ է բանահյուսական բանավորի հետ, եւ դրանով է նա գրական գործը հասցնում գեղարվեստական կատարելության: Այստեղ է դրսևորվում բանաստեղծի անօրինակ վարպետությունը: Նրա տողերի մեջ բառերը գրեթե չեն երեւում, անտեսանելիորեն աներևութանում են՝ «ասպարեզը» թողնելով բովանդակային իմաստին, ուր առաջին գծի վրա հոգեբանական իրավիճակն է: Հաճախ ընդհանուր ասելիքն է հուշում գույնի ընտրությունը, եւ ոչ մի պարագայում գրողը հայրենի բնությունից, այսինքն՝ ինքն իրենից, չի բացակայում, միշտ իր աշխարհի հետ է. **«Ձորեր, այ ձորեր...Ձեզ մոտ եմ գալիս, ուզում եմ երգել»...**⁵ Գունային

1 Նույն տեղում, էջ 161:

2 Նույն տեղում:

3 Նույն տեղում, էջ 162:

4 Նույն տեղում, էջ 165:

5 Նույն տեղում, էջ 156:

խտացումները խոսքն ավելի պահանջված ու լսելի են դարձնում, իսկ **«Աստծու հարվածի հետքերն եք դուք էլ»**¹ խոստովանական արտահայտությունը նկատելիորեն խտացնում է հոգու **«թախիճն ահավոր»**:

Թումանյանի բնապաշտությունը վերածվում է մարդապաշտության: Եվ ժամանակն ամրագրվում է գրողի ամենատես հայացքի մեջ հառնող իրադարձային հայտնություններով, որոնք փոխում են տիեզերքը՝ ճարտարապետական ճշգրտության մեջ նեկայացնելով երեւոյթները, իհարկե՝ դեմիոլոգյան «նախագծերի» ու վարպետության թումանյանական խմբագրումներով.

*Գիշերվան անքուն հավքերն են տըխուր
Ծըվում, ծըկլթում խավարի միջում,
«Որբն» է եղբորը կանչում ցավալուր,
Բուն է իր դաժան վայրը կռնչում:*

Դժբախտաբար, խորհրդային գրականագիտությունը Թումանյանին մշտապես ներկայացրել է որպես նահապետական գյուղն ու նրա չարքաշ մարդկանց տխուր առօրյան իր երկերում արտացոլող մի գրողի՝ այդ իսկ համատեքստում ընդգծելով կոմունիստական գաղափարախոսության «գերակայությունները»: Ընթերցողի տեսադաշտից, այդպիսով, միշտ «դուրս են մղվել» Թումանյանին բնորոշող նրա արվեստի էական կողմերը, «խորհրդայնացված» Թումանյանից օտարվել են իրական Թումանյանը, տառապյալ գեղջուկի աչքերում արթնացող արևային հեռուն: Եվ որքան կյանքը դաժան է, երագները նույնքան գեղեցիկ են՝ միջնադարյան մանրանկարչությանը բնորոշ նրբություններով ու ծածկանշաններով, հենց այս տեսիլների գեղանկարչության մեջ են բանաստեղծի մեծությունն ու բացառիկությունը, այստեղ է, որ նա հավասարի իրավունքով նույն սեղանի շուրջ նստում ու բաժակ է զարկում աշխարհի մեծերի հետ: Չարենցը քանդակում է.

*Ես կարդում եմ նրան ու ասում.- Այս հմուտ,
հանճարեղ Լոռեցին
Հովերի, Գյոթեի հետ մի օր՝ հավասար՝
նստել է քեֆի,
Եվ թաս է բռնել նրանց հետ, մեծարանք
տվել ու առել,
Ինչպես իր պապերն են արել՝ իրար հետ
խնջույքի նստելիս:-²*

1 Նույն տեղում:

2 Չարենց Ե., Ընտիր երկեր, «Նաիրի» հրատ., Երևան, 1997, էջ 212:

Թումանյանի ռեալիզմը համադրական է և իր մեջ պարունակում է նաև մոգականության տարրեր, թեև մոգական ռեալիզմը գրականության մեջ, ինչպես գիտենք, դրսևորվեց հիմնականում անցյալ դարի երկրորդ կեսին: Արտասովոր են Թումանյանի պայծառատեսությունը, ոգեշնչման թափը, ինչը և Ավետիք Իսահակյանին մղել է գրելու նման տողեր. **«Նրա կախարդական գրիչն ուր դիպավ, կատարվեց իսկական արվեստի հրաշք, լինի առակ, թե քառյակ, հեքիաթ, թե պատմվածք, հովվերգություն, թե վիպերգություն... Նա մեզ համար եղավ այն, ինչ որ եղավ Պուշկինը ռուսների համար, Միգկեիչը՝ լեհերի համար»:**¹ Պակաս հետաքրքրություն չի ներկայացնում Դեմիրճյանի դիտարկումը, նա նշում է, որ **երբ Թումանյանը տանն է լինում, տունը լցնում է իրենով:** Անշուշտ, այս անսովոր ու ճշգրիտ գնահատումները բացատրվում են թումանյանական բառի աստվածային լույսով, նրա ներսում բոցկլտացող անմահական հրով: Եթե Նարեկացին, Թումանյանի բառերով, խոսում-գրուցում է Ամենակարողի հետ՝ երես առ երես, ապա ինքը՝ Թումանյանն աստվածային պատկերն իր մեջ կրող ժողովրդի հետ է անմիջնորդ «խոսք խոսում»: Նրան մշտապես կեղեքում է «հայոց վիշտը», որը **«անհուն մի ծով»** է,² ուր **«տառապելով լող է տալիս»** պոետի հոգին:

Թումանյանը մեր ամենաանանձնական երգիչն է, նա ոչ միայն ժողովրդի հետ ու ժողովրդի մեջ է, այլև ժողովրդին կրում է իր ներսում, նրա համար ստեղծագործելը նույնն է, ինչ ժողովրդի բերանով բանահյուսելը: Պոետին տրված գնահատումների մեջ թերևս առանձնանում է Չարենցի խոսքը. **«Թումանյանն է անհաս Արարատը մեր նոր քերթության»:**³ Այդուամենայնիվ, Թումանյանն իրեն դրամատուրգ է համարում, ոչ թե բանաստեղծ: Ասենք, որ նրա յուրաքանչյուր գործ՝ **«Շունն ու կատուն»** բալլադից մինչև ցանկացած քառյակ, կարելի է բեմականացնել: Թումանյանը չափազանց խստապահանջ էր իր ստեղծագործությունների հանդեպ: Բանաստեղծը մեր գեղագիտական մտքի պատմության մեջ առանձնանում է մի էական հատկանիշով ևս, նա իր մեջ կրում է ոչ միայն գրող-

1 http://www.toumanian.am/tangaran/namakani.php?_clear=1&cont=4&lang=EN

2 Թումանյան Հովհ., Ընտիր երկեր, «Սովետ. գրող» հրատ., Երևան, 1978, էջ 39:

3 Չարենց Ե., Ընտիր երկեր, «Նաիրի» հրատ., Երևան, 1997, էջ 188:

քննադատին, այլ նաև գրող-ինքնաքննադատին, արժանիք, որ մեծերին ի վերուստ է տրվում:

Գրողի փիլիսոփայությունը խիստ ժողովրդական է. ազգային ցավն ու խորը դրաման նրան երբեք հանգիստ չեն տալիս: Ազգայինով հանդերձ՝ Թումանյանի գրականությունը համամարդկային է: Բնության երևույթները, կյանքը նա տեսնում է արյան բջիջներով: Թումանյանի ստեղծագործության տիեզերական ընդգրկումների անտեսանելի ոլորտները թափանցելու համար կարող է բանալի լինել նրա **«Տպավորություններ»** բանաստեղծության հետևյալ քառատողը.

Հա, կյանքում ես միշտ այսպես եմ եղել-

Խնդացող տխուր, սրտաբեկ ուրախ.

Հագիվ ուզել եմ անհոգ ծիծաղել

Եվ սրտիս խորքից հառաչել եմ «ախ»:¹

Բանաստեղծի **«Խնդացող տխուր, սրտաբեկ ուրախ»** եութենական պատկերը հակասական գունախոսության մեջ ներդաշնակություն է հաղորդում Թումանյանի գեղարվեստական մտածողությանը, և նրա հառաչանքն այնքան խորքային չէր լինի, եթե պոետի սրտի ամենահեռու ընդերքներում այնքան թշվառ չլիներ Հայրենիքը: Ասենք, որ Լևոն Հախվերդյանը Թումանյանի պատկերային համակարգում գլխավոր ու առաջնային տեղ է հատկացնում **հառաչանքին**, տեսակետ, որն Ազատ Եղիազարյանն ընդունում է, բայց՝ ոչ առանց վերապահումների, իհարկե՝ բերելով իր գիտական փաստարկները, որոնց հետ չի կարելի չհամաձայնել:

Անվանի թումանյանագետ Լևոն Հախվերդյանի **հառաչանք** հասկացության մեկնությունը յուրովի է շարունակել մեր ժամանակների մեծագույն բանաստեղծ Պարույր Սևակը /այս պարագայում արդեն՝ գրականագետ/ իր **«Թումանյանի հետ»** բազմաթիվ հարցադրումներով հարուստ հոդվածում, որը, չնայած այնտեղ առաջ քաշված վիճելի, իմ կարծիքով, դրույթներին /խոսքն **«աչքի պես պարզ և աչքի պես բարդ»** իմաստուն եզրույթի մեկնության, **«Նրանք չգիտեն ու չեն կարող իմանալ, որ «հասարակն» ու «արվեստն» իրար հակոտնյա են այնպես, ինչպես ավազն... ու պարանը»**, մանավանդ՝ **«Թումանյանի լեզուն ունի որոշ երկկենցաղություն, որից պիտի սովորենք՝ դրանից խուսափելու իմաստով»**

¹ Թումանյան Հովհ., Ընտիր երկեր, «Սովետ. գրող» հրատ., Երևան, 1978, էջ 32:

դիտարկումների մասին է/, կարելի է համարել թումանյանագիտության ձեռքբերումներից մեկը:

Եվ այսպես, Սևակը գրում է. **«Լ.Հախվերդյանը ճիշտ է գտել այդ բառերից մեկը, որ հառաչանքն է՝ մի բառ, որից Թումանյանը չի կարողանում խուսափել իր ամբողջ կյանքում, որովհետև անկարելի է խուսափել ինքն իրենից: Բայց հառաչանքը, ինչպես գիտենք, Թումանյանի համար միայն բառ չէ, այլ վերնագիր, որ անտարակույս ավելին արժի, քան սոսկական բառը»:**

Այնուհետև Սևակը «Հառաչանքին» զուգադրում է «Դեպի անհունը» եւ «Հայրենիքիս հետ» վերնագրերը և «երկու անկյուն» ևս ավելացնելով՝ ստեղծում եռանկյուն, «դարձյալ այն երրորդությունը, եռանկյունությունը, որ տեսանք «Նախերգանք»-ում»:

Հետաքրքիր դիտարկում է, անշուշտ, սակայն եթե այս տրամաբանությամբ առաջնորդվելու լինենք, կտեսնենք, որ եռանկյունին դառնում է քառանկյուն, հնգանկյուն ու այդպես շարունակ, քանի որ նման վերնագրերն ու եզրույթները քիչ չեն Թումանյանի ստեղծագործության մեջ, օրինակ, ինչո՞ւ չի կարելի այդ շարքի մեջ տեսնել, ասենք, «Հայոց վիշտը», «Հայոց լեռներում» և այլն: Ավելին, Սևակը հաջորդ տողերում ամրագրում է այսպիսի միտք. **«Թումանյանը, որ ամենևին էլ սովորական հավատացյալ չէր, շատ ու շատ է գործածել այս «աստված» բառը, թերևս ոչ պակաս, քան «հառաչանք»-ը, և դա նույնքան բնորոշ է իր էության և այդ էությունը հասկանալու համար»:** Ինչպես տեսնում ենք, «եռանկյունին» տեղի է տալիս: Դիմենք հենց Սևակի կողմից հոդվածում մեջբերված մի եռատողի «Դժոխքի հանդեպ» բանաստեղծությունից.

Սարսափի պիտի աշխարքը համակ...

Եվ մարդն ամաչի գելից ու շնից,

Որ մարդ է ծնվել՝մարդու նմանից:

Միայն այս երեք տողի մեջ Թումանյանը երեք անգամ գործածում է «մարդ» բառը, որը լավագույնս է իր մեջ ներառում Թումանյանի ամբողջ գեղագիտությունն ու կենսափիլիսոփայությունը: Հետևապես, երբ խնդրին մոտենում ենք թումանյանական պոետիկային հատուկ միջոցների բազմազանության, նրա հզոր մտքի ամբողջական ներուժի կիրառելիության, մեծ տեսանողի գեղագիտական սկզբունքների ու էական գծերի նկատառումներով, ծնվում է հարցը՝ ո՞րն է, ի վերջո, **հառա-**

չանքի, որը նույն **«թառանչն»** է, ակունքը: Չէ՞ որ Թումանյանի գերնպատակը ոչ թե մարդու մեջ ապրող **հառաչանքը** ցույց տալն է, այլ **«ժողովրդի հառաչանքը հաջող հառաչելն է»**, ասել է թե՛ **հառաչանքի** խորքից լույսին ձեռք մեկնող **մարդուն** ներկայացնելը: Այսինքն, տրամաբանությունն ուղիղ գծով տանում է դեպի նահապետական իրականությունն ու սոցիալական անարդարությունները: Եվ դա կլինե՞ր ժամանակավրեպ, եթե **հառաչանքի** մեջ հստակորեն չուրվագծվե՞ր Թումանյանի Տեսլականը՝ մարդու **«Էն վեհ ու վսեմ, Էն մաքուր ու անարատ պատկերը, որ տվել է նրան աստված, կազմված ու հյուսված բնության ամենամաքուր տարրերից»**:¹ Եվ դա նշանակում է, որ Թումանյանի հիմնական մետաֆորը բնությունն իրենով իմաստավորող, իր մեջ այն կրող **մարդն** է: Իսկ **պոեզիայի բոլոր գեղեցկություններից, ըստ Արիստոտելի, միայն մետաֆորն է, «որ սովորել չի կարելի, այն իսկական տաղանդի նշան է, քանի որ գտնել բնական մետաֆորներ, նշանակում է կարողանալ բնության մեջ նկատել առարկաների նմանությունը»**:²

Հովհաննես Թումանյանի արարած մարդն իր մեջ ամփոփում է անընդգրկելի: **«Թումանյանինը մարդն է,- գրում է գրականագետ Ազատ Եղիազարյանը,- որ ոչ մի ժամանակի ու տարածության մեջ չի սահմանափակվում, թեև իբրև հերոս միանգամայն կենդանի է ու համոզիչ: Թումանյանն ինքը ճեղքում է մարդու ընկալման բոլոր սահմանները, հասնում մարդու բուն էությանը, դրա համար էլ երբեմն մարդը գրում է մեծատառով»**:

Կատարենք մի դիտարկում ևս. Թումանյանը ոչ միայն չընդունեց այն իրականությունը, որի զոհն էին դառնում նրա հերոսները, այլև, բնականաբար, իմաստնորեն հրաժարվեց իրեն «պարտադրված» ժամանակի ու տարածության կցորդը լինելուց, **«Թումանյանը վեր է ժամանակից»**...³ Եվ դա միայն մեկ պատճառով՝ ինքը պիտի բառ առ բառ ստեղծեր, **բանահյուսեր իր տարածքը, իր ժամանակը, իր հայրենիքը**՝ հոգում անվերջ հասունացնելով երազային այն տեսլականը, որ տեսնում է սովորական գեղջուկ մարդկանց աչքերում: Այս առումով, կարծում եմ, սխալված չենք լինի, եթե արժևորենք նրա կերպարները Շեքսպիրի, Պուշկինի, Շիլլերի և համաշ-

1 Թումանյան Հովհ., Երկերի ժողովածու, հատ. 4, էջ 240:

2 <http://kantegh.asj-oa.am/900/1/239-244.pdf>

3 http://ijevanlib.ysu.am/wp-content/uploads/2018/04/Hrant_Matevosyan.pdf

խարհային մյուս մեծերի ստեղծած հերոսների գեղանկարչական պատկերասրահի մեջ՝ համեմատական զուգահեռներում:

Ինչ վերաբերում է **ժամանակի և տարածության** գաղափարին, այն գրողին հուզել է վաղ պատանեկության տարիներից ի վեր, թեև այդ հասկացությունների ճշգրիտ ձևակերպումներն ու բանաձևումները դեռևս չի կարողացել տալ գիտությունը: Իսկ ահա բանարվեստը փորձում է յուրովի «մեկնել» այդ երևույթները: Ասված ճշմարտություն է, երբ **Ֆիզիկան** դժվարանում է այս կամ այն խնդրի լուծման գործում, վրա է հասնում **մետաֆիզիկան**: Թումանյանն այդ հարցին անդրադարձել է իր առաջին հրապարակախոսական արձակի մեջ՝ «**Բորչալվում**»: Ի դեպ, ստեղծագործական բավականին հետաքրքիր աղերսներ կան այդ գործի և Հրանտ Մաթևոսյանի «**Անհիծորի**» միջև՝ բառի ազնվության, անմիջականության ու մորեմաքուր անարատության տեսակետից: Մանավանդ երկու ստեղծագործությունների թեման էլ Լոռին ու սոցիալական անարդարությունների դեմ պայքարող մարդիկ են: Թումանյանը Լոռվա եզերքի մասին գրում է. «**Ամենալավ, ամենաբերրի հողերը պատկանում են զանազան իշխանների, թավադների ու աղալարների**»:՝¹ Եվ ահա մի դար հետո Նրան արձագանքում է Հրանտ Մաթևոսյանը. «**Իսկ Լոռին լիքը իշխանիկ էր**»:՝² Այնպես որ, տարածաժամանակը սոցիալական անհավասարությունների առումով էլ քիչ է փոխվել:

Իհարկե, **ժամանակի և տարածության** մասին վարկածներն ու դրույթները բազմաթիվ են, իրարամերժ տեսակետները հասնում են ընդհուպ մինչև այնտեղ, որ գիտական հիմնավորումներ կան ենթադրելու, թե «**աշխարհի մասին մարդկանց վաղ դիցաբանական պատկերացումն անժամանակային էր**»:՝³ Այնչտեյնը գտնում էր («**Հարաբերակցության տեսություն**»), որ տարածությունը և ժամանակը պետք է սինթեզվեն, միաձուլվեն ու ներառվեն մեկ միասնական հասկացության մեջ՝ **տարածաժամանակ**:

Ստեղծումները որքան տարբեր, հաճախ այնքան էլ հակասական են: Ինչպես տեսնում ենք, գիտական հանրահայտ հրապարակումներում **ժամանակը և տարածությունը** տե-

1 Թումանյան Հովհ., Երկերի լիակատար ժողովածու, վեցերորդ հատոր, «Հայաստան» հրատ., Երևան, 1994, էջ 28:

2 Մաթևոսյան Հր., Երկու հատորով, հատոր առաջին, «Սովետ. գրող» հրատ., Երևան, 1985, էջ 7:

3 <https://hy.wikipedia.org/wiki/%D4%BA%D5%A1%D5%B4%D5%A1%D5%B6%D5%A1%D5%AF>

սակավորվում են բովանդակային բազմազան ձևերի մեջ՝ հոգեբանական, սոցիալական, կենսաբանական և այլն, և այլն: Ավելին, **«տարբեր մշակույթների հետ կապի շնորհիվ ժամանակը ձեռք է բերում տարբեր կոնտեքստներ»:**¹

Տարածության և ժամանակի մասին խոսքս ուղղվում էմ եզրափակել Սերգեյ Սարինյանի և Հրանտ Մաթևոսյանի դիտարկումներով. **«ժամանակը բարդ կատեգորիա է,- ասում է Սարինյանը:- Կա օրացուցային էմպիրիկ ժամանակ և փիլիսոփայական ժամանակ: Բոլոր գրողները ստեղծագործում են ժամանակի մեջ, բայց բոլոր գրողները չէ, որ ունեն իրենց ժամանակը, կամ իրենց ստեղծագործության այն համադրումը, ինչ Բախտինն անվանում է խրոնոտոպ»:**² Հրանտ Մաթևոսյանի ձևակերպմամբ, **«ժամանակը նույնքան առարկայական է, ինչքան առարկայական է ողջ աշխարհը»:**³ Եվ ահա հենց այդ **«առարկայական ժամանակը»** կամ տարածությունը թումանյանն իր ստեղծագործություններում դարձնում է ոգեղեն: Բայց դրանց անդրադառնալուց առաջ ավելորդ չեմ համարում կանգ առնել թումանյանի մի զվարճախոսության վրա, որը լավագույնս ներկայացնում է բանաստեղծի պատկերացումը ժամանակի մասին: Ահա այն.

«Ասում է՝ գնացին տեսան Մոլլա Նասրեդինը մի վարար ջրի ափի Նստած՝ սպասում է:

Ասին՝ ընչի՞ ես սպասում:

Թե՛ սպասում եմ գետն անց կենա, որ հետո ես անց կենամ:

Ճիշտ էսպես. Մենք էլ սպասում ենք էս ժամանակն անց կենա, որ մեր ուզած կյանքով ապրենք, պարապենք... ու շարունակ սպասում ենք»:⁴

Ընդգծենք, որ անգամ այս «ուրախ» պատմության մեջ կա մեծ ցավ: Թումանյանը երբեք չսպասեց **«ժամանակն անց կենա»**, նա արարեց իր դարը:

Ակնհայտ է, որ **ժամանակ և տարածություն** հասկացությունները յուրօրինակ մարմնավորում ու մեկնաբանություն ունեն թումանյանի երկերում, բայց, ցավոք, թումանյանագիտությունը դրանց չի անդրադարձել, կամ լուսաբանել է

1 Նույն տեղում:

2 Սարինյան Ս., Հայոց գրականության երկու դարը, գիրք հինգերորդ, «Դիզակ պյուս» հրատ., Ստեփանակերտ, 2009, էջ 152:

3 <https://www.vnews.am/culture/hrant-matevosyann-asel->

4 <https://www.toumanianmuseum.am/sayings>

մասնակիորեն: Դրանք բանաստեղծը յուրովի տարրալուծել է իր բառի մեջ՝ նոր չափումների ենթարկելով:

*Հե՛յ ագահ մարդ, հե՛յ անգոհ մարդ,
միտքդ երկար, կյանքդ կարճ,
Քանի՛ քանիսն անցան քեզ պես, քեզնից
առաջ, քո առաջ,
Ի՛նչ են տարել նրանք կյանքից, թե ինչ
տանես դու քեզ հետ,
Խաղաղ անցիր, ուրախ անցիր երկու
օրվան էս ճամփեդ:¹*

Ինչպես տեսնում ենք, Թումանյանը տարածության չափման միավոր է դարձրել ժամանակը՝ **«երկու օրվան էս ճամփեդ»**: **«Բերանն արնոտ»**² քառյակի մեջ որակափոխությունը բերում է բոլորովին այլ պատկեր. **«Ձեռքերն արնոտ գնում է նա դեռ կամկար, Ու հեռու է մինչև Մարդը իր ճամփան»**: Կամ **«Հոգեհանգիստ»** բանաստեղծության մեջ. **«Մարդակեր գազան՝ մարդը՝ դեռ երկար էսպես կը մնա»**: **«Երկար»**-ի մեջ տարածքը ժամանակային է, իսկ մարդը գազանի ու մարդու միջև դեռ տարուբերվում է: **«Ու հեռու է մինչև Մարդը»** պատկերում տեսնում ենք ժամանակայինի ու տարածականի յուրօրինակ համադրություն: **«Հայ մեծագույն բանաստեղծը, - գրում է Ա. Սողոյանը, - չի ենթարկվում ժամանակատարածական և ոչ մի օրենքի, նա գալիս է ժամանակի խորքից, բերում է իր հետ անցյալի շունչը, բայց և մնում մերօրյա ու արդիական»**:³

Սեկ ուրիշ գործի մեջ **«Երկու դարի արանքում»**⁴ պատկերային կառույցին Թումանյանը իմաստաբանորեն համահունչ է դարձնում **«Երկու քարի արանքում»** տողային զուգադրումը, որը և ավելի է սրում հակադրությունը հաջորդ տողերի **«ընկերի»** (առարկայական) և **ցավի** (ապրումային) պատկերների միջև՝ կատարելով փիլիսոփայական ինքնատիպ ընդհանրացում:

Կամ մի այլ քառյակ.

*Ինչքան ցավ եմ տեսել ես,
Նենգ ու դավ եմ տեսել ես,*

1 Թումանյան Հովհ., Ընտիր երկեր, «Սովետ. գրող» հրատ., Երևան, 1978, էջ 71:

2 Նույն տեղում, էջ 70:

3 http://archiveranyan.blogspot.com/2016/02/blog-post_53.html

4 Թումանյան Հովհ., Ընտիր երկեր, «Սովետ.գրող» հրատ., Երևան, 1978, էջ 64:

*Տարել, ներել ու սիրել,—
Վատը՝ լավ եմ տեսել ես:¹*

Թումանյանի պատկերները կառուցված են երևույթների ներքին հատկանիշների, այլ ոչ թե առարկայական նմանությունների վրա, գրողի բառն այն կախարդական «շինանյութ» է, որով բարձրացել են նրա հոյակերտ կառույցները՝ **Տարածություն, Ժամանակ, Հայրենիք**, ավելին՝ Թումանյանն իր ապրած կյանքի տարածական չափումներում ընդարձակել է **Ժամանակը**, Ժամանակի մեջ՝ **տարածությունը**, իսկ այդ երկուսում միասին՝ **Հայրենիքը**: Մեր գրականության մեջ, այս առումով, Թումանյանի հետ զուգահեռ է կազմում Հրանտ Մաթևոսյանը: Անզուգական զուգահեռ, որը հետաքրքիր անակնկալներ և իմաստուն հուշումներ ունի: Հրանտ Մաթևոսյանին անվանի գրականագետ Լևոն Մկրտչյանը մի օր հարցնում է, թե նա ինչ կգրեր քարին /հասկանալի է, որ հայերս քարին գրում ենք ամենակարևոր, ինչպես ասում են՝ մատընտիր բառերը/, եթե նման հնարավորություն տրվեր, և Մաթևոսյանը ձեռագրել է իր խոսքը. **«Էս ի՞նչ սիրուն աշխարհ էր»:**² Սա, իհարկե, սոսկ սովորական լավատեսություն չէ, ինչպես և Թումանյանի բանաձևային տողը՝ **«Անգամ վատը՝ լավ եմ տեսել ես»**,³ այլ աշխարհի հանդեպ՝ մեծահոգություն, աշխարհ, որին Հրանտ Մաթևոսյանը՝ մեր Նորագույն **«Ժամանակներն ու տարածությունները հպատակեցնող»**⁴ եզակի տիրակալը /Հրանտ Մաթևոսյանն այսպես բնորոշել է Չարենցին/, հույս ունի տեսքի բերելու: Մեծ Գեղագետի, Մարդու, Մտածողի մեծահոգություն:

Հովհաննես Թումանյանն իր գրեթե բոլոր գործերում ներկայանում է որպես անզուգական ողբերգակ: Այստեղ արդեն նա կանգնում է Գրիգոր Նարեկացու կողքին: Ասվածի ամենաիրական իմաստով: Ամրագրենք, սակայն, որ նրա ոգին տիեզերական է, որը և խոսում է Թումանյանի աստվածային տարերքի, բառուբանի անմարում ներշնչումի մասին.

*Բազմած լուսնի Նուրբ շողերին,
Հովի թևին թռչելով
Փերիները սարի գլխին*

1 Նույն տեղում, էջ 66:

2 http://science.rau.am/uploads/blocks/0/6/695/files/Hra_nt_Matevosyan.pdf

3 Թումանյան Հովհ., Ընտիր երկեր, «Սովետ. գրող» հրատ., Երևան, 1978, էջ 66:

4 Չարենց Ե., Ընտիր երկեր, «Նաիրի» հրատ., Երևան, 1997, էջ 4:

Հավաքվեցին գիշերով:¹

Իսկապես՝ մարդակերտություն: Ամենեցու հավիտենական գոյությունը թումանյանը հակադրում է անցավորին ու ժամանակավորին՝ ձուլվելով բնությանը: Այսպես նա վերապրում է իր անեզրական **«տանջանքներով ու տենջանքներով»**, աստվածաշնչյան **Հորի** տառապանքով՝ փոփոխական ձևերի մեջ **«ձևը խաղ է անցավոր»**/ փնտրելով իր և տիեզերքի ներդաշնակությունը. **«Տիեզերքում աստվածային մի ճամփորդ է իմ հոգին»**,² **«Ես միշտ հոգի, տիեզերքի մեծ հոգու հետ, ինչ կա որ»**,³ **«Տիեզերքի խոր մեղեդին ու մրմունջը ամենուր»**,⁴ **«Աստեղային երազների աշխարհքներում լուսնկաթ»**...⁵ **«Իմ գիշերը՝ լիքն աստղերով»**:

Թումանյանի, այսպես ասած, **«տիեզերագիտությունը»**, որ, անշուշտ, սկսվում է սոցիալական ախտերից, անարդարություններից, երկնքի ու հոգու անհուններից, աստղերից, հետևապես և՛ երազից ու նորից ու կրկին նրան տանում-հասցնում է իր բանահյուսական ակունքներին, ուր նա ապրում է ոչ միայն **անախտ, հաղթած** /իր բառերն են/, այլ նաև **«նյութից զատված»**:⁶ Ժողովրդական բառուբանի մեջ **աստղ ու լուսին** հասկացությունները «թարգմանվում» են երազով: Իսկ գրականագիտության մեջ, ընդունված է առանձնացնել հիմնականում ժողովրդական ստեղծագործությունների երեք խումբ՝ **արձակ, չափածո և բանաձևային**: Թումանյանը դրանք իր ստեղծագործություններում միավորել է բանաձևայինի մեջ՝ նոր շունչ ու բովանդակություն տալով իրողություններին: Եվ դա նրա մտածողության ու ոճի առանձնահատուկ հատկանիշն է, որը և նրան դարձնում է **մեծ նորարար**՝ բառի ամենախորը իմաստով:

Քանի որ խոսք եղավ բանաստեղծի բանահյուսական ակունքների մասին, նշենք, որ նրա յուրօրինակ գլուխգործոցների մեջ ուրույն տեղ ունի «Սասունցի Դավիթը» էպոսի մշակումը, որին, անշուշտ, մեծ ակնածանքով է մոտեցել Թումանյանը, քանի որ **«Ժողովուրդները ոչ մի բանի մեջ էնքան պարզ ու պայծառ չեն երևում, ինչքան իրենց ազգային**

1 Թումանյան Հովհ., Ընտիր երկեր, «Սովետ. գրող» իրատ., Երևան, 1978, էջ 166:

2 Նույն տեղում, էջ 76:

3 Նույն տեղում, էջ 74:

4 Նույն տեղում, էջ 73:

5 Նույն տեղում, էջ 74:

6 <https://astghikblogblog.wordpress.com/2018/02/21>

Էպոսի մեջ»¹: «Սասնա ծռերը» ունեցել է ոչ քիչ մշակումներ մեր գրչի երևելիների կողմից, սակայն, խոստովանենք, որ Թումանյանի մշակումն անգերազանցելի է: Թումանյանով մեզանում հիմնավորվեց փաստորեն նյութի մշակման նոր արվեստ, ավելի կոնկրետ՝ **մշակելու մշակույթ**: Եվ այստեղ մեծ է բանաստեղծի ժողովրդական ոճի ու լեզվի առկայության գործոնը, բնականաբար: Միանգամայն տեղին է նկատված, որ պոեմի **«ոճը, պատկերները, համեմատություններն ու էպիտետներն այնքան հարազատ են ժողովրդին ու էպոսի ոգուն, որ չես իմանում որտեղ է սկսվում էպոսի տեքստը, որտեղ է վերջանում Թումանյանի մշակումը» /Ստեփան Չորյան/**²

- Ով քընած եք՝ արթուն կացե՛ք,
Ով արթուն եք՝ ելե՛ք, կեցե՛ք,
Ով կեցել եք՝ զենք կապեցե՛ք,
Չենք եք կապել՝ ձի թամբեցե՛ք,
Ձի եք թամբել՝ ելե՛ք, հեծե՛ք.
Հետո չասեք՝ թե մենք քընած-
Դավիթ գող-գող եկավ, գընա՛ց...³

Մեր ժամանակի ճշմարիտ գեղագետները՝ անդրադառնալով Թումանյանի երկերին, գտնում են, որ բանաստեղծի ստեղծագործության խորքային ու ամբողջական մեկնությունը, ըստ էության, դեռևս չի տրվել: Մոտեցումները, բնականաբար, տարբեր են: Այսպես, Վահագն Դավթյանը շեշտում է, որ Թումանյանի երկու աշխարհներից մեկը՝ **ոգեդենը**, առայսօր **«մնում է անհայտ»**⁴: Հետևությունը մեկն է՝ այն Թումանյանին, որ իրականում կա, մենք բոլորովին չգիտենք, նա **«մնացել է և՛ չմեկնաբանված, և ստորադասված...»** /Պ. Սևակ/⁵ Իսկ առանց ոգեդենի ի՞նչ Թումանյան:

Ամենայն հայոց բանաստեղծի երկերի կենսափիլիսոփայությունը թեև մշտապես ուղեկցում է մեզ՝ **«տիրության, թեքեֆի ժամին»**,⁶ մանավանդ՝ ճշմարիտ մարգարեություններ րի կիրառելիության բարձր աստիճանով, բացառիկությամբ ու

¹ Թումանյան Հովհ., Ընտիր երկեր, «Սովետ. գրող» հրատ., Երևան, 1978, էջ 484:

² http://www.ysu.am/files/12N_Tirabyan.pdf

³ Թումանյան Հովհ., Ընտիր երկեր, «Սովետ. գրող» հրատ., Երևան, 1978, էջ 216:

⁴ <https://hetq.am/hy/article/42530>

⁵ Սևակ Պ., Երկերի ժողովածու 6 հատորով, հ. 5, «Հայաստան» հրատ., Երևան, 1974, էջ 377:

⁶ Թումանյան Հովհ., Ընտիր երկեր, «Սովետ. գրող» հրատ., Երևան, 1978, էջ 18:

գործառնական բարձր նշանակությամբ /Թումանյանն այստեղ նույնպես անմրցակից է/, այնուամենայնիվ, գրողի իսկական նկարագիրը հեռու է գրականագիտական վերլուծությունների ու մեկնությունների ամբողջականությունից: Թումանյանական պայծառատեսությունը՝ նրա գործերն անսխալ ընթերցելու, առավել ևս՝ ընթեռնելու առումով պետք է մեր նոր օրերի թումանյանագիտությանն առաջնորդի կրկին դեպի նոր հայտնություններ, մանավանդ, որ արդեն, բարեբախտաբար, ձեռքագատված է գաղափարական կապանքներից ու կաշկանդումներից:

Գրողի երկերից հանեք նրա տեսլականը, տակը կմա անփառունակ, ոչինչ չասող, օրացուցային ժամանակի լուսանկար: Սա անվիճելի է: Թումանյանի ցանկացած ստեղծագործության մեջ, ինչպես մի կաթիլ ջրում, հստակ ցլանում են նրա ազգային ոգին, իմաստասիրական դավանանքը և, բնականաբար, աշխարհայացքն ու գեղագիտությունը: Այս տեսակետից ամենաբնութագրականը /անգամ **«Մնուշից», «Գիքորը»** պատմվածքից ու մյուս հանրահայտ պոեմներից, հեքիաթներից, քառյակներից, ժողովրդական էպոսի մշակումներից առավել/, իր իսկ՝ գրողի խոստովանությամբ, **«Հազարան բլրբուլ»**¹ հեքիաթ-պոեմն է: Ինչո՞ւ: Մեր հետազոտական վերլուծությունում մենք փորձեցինք հասու լինել խնդրի էությունն ու հեղինակային լուծման նրբություններին, թեև ամեն մի հաջողված երկ, կարծում եմ, ունի իր ներքին ծածկագիրը, որը ենթակա չէ վերջնական ընթերցման: Այսպես թե այնպես, որոշ փակագծեր փորձենք բացել:

Ուշադրություն դարձնենք մի հանգամանքի վրա. պոեմի սկզբնամասում Թումանյանը, իրեն ոչ հատուկ ձևով, խիստ բարի գույներով է նկարագրում Ալան թագավորին՝ էպիկական շնչով պատկերելով երկիրն այն, որտեղ **«իշխում ու տիրում»** է նա: Դա, իհարկե, մանրուք չէ և ոչ էլ պատահականություն: Հիշենք, թե «Հառաչանքի» ծերունին ինչպես է խոսում թագավորի մասին. **«Էլ ինչ թագավոր կամ էլ ինչ իշխան, Որ կռիվ չանի, ուրիշին չըտիրի, Մարդ չըկոտորի, երկիր չավերի...»**² Ուրեմն, նոր ելակետի վրա է խոսք կառուցում Թումանյանը: Դա ունի հիմնավոր պատճառ: **«Հազարան բլրբուլ»** պոեմում աշխարհը նախնական անաղարտության մեջ է.

1 Թումանյան Հովհ., Պոեմներ, «Էդիթ Պրինտ» հրատ., Երևան, 2010, էջ 183:

2 Թումանյան Հովհ., Ընտիր երկեր, «Սովետ. գրող» հրատ., Երևան, 1978, էջ 160:

Երբ դեռ շունչը արարչական ծավալվում էր
 օդի մեջ,
 /Երբ դեռ նոր էր կույս աշխարհքում մարդը
 խաղում պարզ ու պերճ/,
 Երբ տիրում էր ամենուրեք սերն ու
 հանգիստն անվրդով,
 Եվ գառն ու գել դեռ միամիտ խաղում էին
 իրար քով...¹

Ու հանկարծ միանգամից ամեն-ամեն ինչ փոխվում է աշխարհում: Մենք, իհարկե գիտենք, որ այն, ինչ ազգային-ժողովրդական է, Թումանյանի համար բացարձակ արժեք է ներկայացնում, բնականաբար, բացառություն չեն կարող լինել օրինանքներն ու անեծքները: Եվ ահա «Հազարան բլբուլ» նույնպես գերծ չէ նման «հավատալիքներից»։ Կոեմի սյուժեի հիմքում որդեկորույս մոր անեծքն է՝ ուղղված Ալան թագավորին։

Ինչպես որդիս իր մոր գրկին
 Մեռավ՝ կարոտ աչքն աշխարհքին,
 Նրանք էլ թող մնան Էնպես
 Կարոտ իրենց սուրբ փափագին,
 Եդեմ այգին կտրի թող փուշ,
 Իրենք գազան չար ու ապուշ:²

Անեծքը, ինչպես ժողովուրդն է ասում տեղ է հասնում, Ալան թագավորի երկիր-դրախտավայրը մի վայրկյանում վերածվում է դժոխքի, մարդիկ գազան են դառնում, վարդերը՝ փուշ: Ինչ ասես, որ չի անում բարի ու ոսկեգահ Ալան թագավորը, միայն թե վերականգնի իր տերության նախկին փառքն ու գեղեցկությունը: Բազում իմաստունների, մարգարեների հետ խորհուրդ է անում արքան, բայց ելքը չկա ու չկա: Եվ հանկարծ ամպերի միջից երևում է մի սպիտակամորուս ծերունի և ասում **մինչև չբերեք Հազարան բլբուլ, որ երգի՝ այգին չի դալարելու, փուշը վարդ չի դառնալու, մարդիկ գազան էլ մնալու են:**³

Ինչո՞ւ են կանգ առա սյուժետային այս մանրամասների վրա: Պատճառը պարզ է: Իր անավարտ երկի մեջ Թումանյանը **մաքրագրությունն էր** փորձում կատարել իր ամփոփ

1 Թումանյան Հովհ., Պոեմներ, «Էդիթ Պրինտ» հրատ., Երևան, 2010, էջ 183:

2 Նույն տեղում:

3 Նույն տեղում:

կենսափիլիսոփայության՝ «գործի դնելով» գեղարվեստական հարուստ փորձն ու հնարանքները: Ակնհայտ է, **«Հազարան բլրուկը»** թումանյանական աշխարհի փոքրիկ «մոդուլն» է կրում իր մեջ: Գրողն իր կրտսեր որդուն՝ Արեգի անունով կնքված ասպետական երգիչ-աշուղի մեջ մարմնավորել է կյանքի, արդարության, դավանանքի և հավերժական սիրո սխրանքը:

Այս երկի գլխավոր կերպարը Թումանյանի Երազն է:

Այո, հզոր երևակայություն ունի Թումանյանը, ես միանգամայն ընդունելի ու ճշգրիտ եմ համարում այն տեսակետը, որ Թումանյանն է մեր երևակայական /ֆանտաստիկ/ գրականության հիմնադիրը:

Հեքիաթ-պոեմում գործում են ոչ թե մարդիկ, այլ նրանց իսկ կերպարով մարմնավորված Տեսլականներ: Եվ հենց դրանում է կայանում պոեմի գեղագիտական ու գաղափարական նորությունը: Ահա, կարծում եմ, նաև այս մասին է նշել և ինքը՝ Թումանյանը. **«Ես գիտեմ մի օր, իհարկե, ոչ շուտ, իմ կյանքը մեծ հետաքրքրություն ու աղմուկ է հանելու: Շատ բան է պարզվելու, տեսնելու են բոլորովին ուրիշ բան: Գրվածքներս դեռ լավ չեն կարդացել, տեսել»:**¹

Գրողի նշած **«ոչ շուտ»** օրն արդեն եկել է:

Թումանյանը «գրականություն չի անում», նա ցանկացած իր տողում ներկայանում է բնական անկողմնակալությամբ, բառի գտարյուն ազնվությամբ ու հստակ մտքի անսեթևեթ խիզախությամբ. **«Գյուղացի Համբոյի տունը կռիվ էր ընկել...»**² (**«Գիքորը»**), **«Մի սեպտեմբերի մեր գյուղացի որսկան Օսեփը ինձ գիշերակաց որսի տարավ Եղնուտի կիրճը»**³ (**«Եղջերուն»**), **«Խորն աշունքին Լոռու սարերով անցկենալիս մի գյուղում մուրք վրա հասավ»**⁴ (**«Գեղը»**):

Աղայանն առաջինն էր նկատել դեռևս երիտասարդ Թումանյանի **հանճարը**⁵ խորապես ընդունելով և ողջունելով ժողովրդականի մշակման նրա գեղագիտական սկզբունքները: Իսկ Մանուկ Աբեղյանը հենց Թումանյանի առաջին գրքում է տեսել նրա **եզակիությունը**:

Հիրավի, «Լուսավորչի կանթեղը» Թումանյանը կրում է իր

1 <https://www.armdaily.am/news/12665.html?lang=hy>

2 Թումանյան Հովհ., Ընտիր երկեր, «Սովետ. գրող» հրատ., Երևան, 1978, էջ 261:

3 Նույն տեղում, էջ 293:

4 Նույն տեղում, էջ 310:

5 <https://movsisyannune.com/2012/02/12/բգեգի-դպրոց/>

ներսում: Անգղագական Լուսարար Է Նա, ու Նրա լուսաբուժությունն Էլ պիտի լինի մեր Ներսից, որովհետև, ինչպես բանաստեղծն Է ասում, **«Մենք Ներսից ենք փչացած»:**¹ Ապավինենք լավատեսությանը: **«Մեծությունը,- գրել Է մեծ լռեցին,- օրենքներ ու կանոններ չի ճանաչում, իրեն ցանկապատով չի փակում, եղած ցանկապատն Էլ քանդում Է»:**²

Թումանյանը հենց այդպիսին Է: Նրան միշտ հուզել են երևույթի Էությունը, ներքին խորհուրդը, քարի մեջ՝ նրանից ծնվող կայծը: Ազգայինը Թումանյանի հոգևոր հատկանիշն Է, որով և պայմանավորվում Է արժեքների այն համակարգը, որը Նա ստեղծել Է: Թումանյանն ինքն իր բառն Է, և նրանում տարրալուծված **տիեզերք-հոգի** կամ **ժամանակ-տարածություն** եզրույթները մեկնելի են դառնում միայն ցավի քուրայում:

- 3 -

Թումանյանի հավատարմությունը ավանդականին ու Նորին միանգամայն ինքնատիպ արտահայտություն ունի Նրա գեղագիտական դավանանքի մեջ: Եվ այդ սկզբունքի վրա Է բարձրանում ոչ միայն Նրա ստեղծագործությունը՝ ազգային հարուստ ճարտարապետությամբ ու բովանդակությամբ, այլ Նաև ապրած ամեն մի պահը, ամբողջ կյանքը: Դիտարկենք այս հարթության վրա ժողովրդական մի ասացվածք, որը շատ մոտ Է Թումանյանի մտածողությանը. **«Ասողին լսող Է պետք»:** Կապակցության մեջ **ասողը** միայն **ասող** չԷ, այլև **ասացող**, առավել ևս՝ **լսող** չԷ **լսողը**, այլև **ականջալուր** լինող: Այսինքն՝ բառը Թումանյանի համար Նախ և առաջ **գործառույթ** Է:

*Մենք ամենքս հյուր ենք կյանքում
Մեր ծննդյան փուլ օրից,
Հերթով գալիս, անց ենք կենում
Ես անցավոր աշխարհից:*³

Երևի թե մեր գրականության մեջ ամենից շատ մարդկանց շուրթերից հնչող քառատողերից մեկն Է սա (**«Թմկաբերդի առումը»** պոեմի Նախերգանքից), սակայն ցավով պիտի ար-

1 Թումանյան Հովհ., Ընտիր երկեր, «Սովետ. գրող» հրատ., Երևան, 1978, էջ 419:

2 <https://karinepetrosyan.wordpress.com/2015/07/17/թումանյանի-մտքի-դիմագ/>

3 Թումանյան Հովհ., Ընտիր երկեր, «Սովետ. գրող» հրատ., Երևան, 1978, էջ 247:

ծանազբեմ, որ շատ անգամ այս և նման այլ մարգարեություններ (ներառյալ ժողովրդական մարգարիտների մեր հարուստ գանձարանը), **ասում են ասվելու-լսվելու** համար, և նրանց **կիրառելիության, օգտակար գործողության գործակիցը** բավականին ցածր է: Այս մտահոգությունն ունեցել է և ինքը՝ բանաստեղծը. «**Մեր դժբախտությունն էն է, որ մեր ժողովրդի մի մասն անգրագետ է, կարդալ չգիտի, իսկ ով գրել-կարդալ է սովորում, դառնում է գրող ու կարդալը մոռանում է: Դրա համար էլ մենք շատ գրողներ ունենք, բայց ընթերցող չունենք: Իսկ գրողին ամենից առաջ ընթերցող է հարկավոր**»: Այսինքն՝ ոչ թե գիրք **կարդացող**, ոչ թե անգամ, ինչպես մեծն Սևակը կասեր, **կարդացածը հասկացող**, այլ, ավելացնենք՝ հասկացածը **կատարող**: Սա թումանյանական գեղագիտության առանցքային սկզբունքներից է, նրա համար ազգային արժեք են ոչ միայն հոգևոր կոթողները, այլև, առաջին հերթին, այն հատկանիշները, որոնք մարդուն **մարդ** են դարձնում, որոնք ներքին հարստություն են և **փոխանցվում են գրականությանը**՝ կոնկրետ այս կամ այն գեղարվեստական երկում:

Ճշմարիտ խոսքի գործառնական դերի ու նշանակության բարձրացման գործում մեծ են, անշուշտ, մեր դպրոցների և բուհերի անելիքները: Շատ դեպքերում աշակերտը ժպիտով ու ուրախությունից փայլփլող աչքերով է արտասանում թումանյանի «**Հայոց վիշտը**», Մարոյի մոր ողբի տեսարանը ներկայացնող հատվածը («**Մարո**» պոեմից) և այլն, և այլն, իհարկե՝ գոհ մնալով միայն իր «դասը լավ սերտած» լինելու հանգամանքով: Մինչդեռ ստեղծագործության բերած ապրումն ու «կյանքի դասը», դուրս են մնում դասապրոցեսից: **Գրականության և արվեստի գեղագիտությունը պիտի դառնա կյանքի գեղագիտություն, կենսակերպի արտահայտություն**: Այս մասին, սակայն, մի այլ անգամ:

Ես իմ հոդվածն ուզում եմ ավարտել Ստեփան Չորյանի խոսքով. «Եթե մի օր աշխարհի բոլոր ժողովուրդների բանաստեղծությունների ցուցահանդես լինի, հայ ժողովուրդը ուրիշ ոչ ոքի չի կարող ուղարկել, բացի թումանյանից՝ իբրև օրինակ գտարյուն հայ բանաստեղծի»:¹

¹ https://www.northern.am/images/git-hraparakum/Tum_anyan-145.pdf

ԱՄՓՈՓՈՒՄ

**ՊԱՏԿԵՐ-ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԻՑ ԴԵՊԻ ՏՐԱՄԱԲԱՆԱԿԱՆԸ,
ԿԱՄԻ ԺԱՄԱՆԱԿԻ ԵՎ ՏԱՐԱԾՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԼՈՒԾՈՒՄԸ ԲԱՌԻ ՄԵՋ
ՎԱՐԴԱՆ ՀԱԿՈԲՅԱՆ**

Հոդվածում անդրադարձ է կատարվում Հովհաննես Թումանյանի քնարերգության գեղարվեստական եւ գեղագիտական առանձնահատկություններին, պոետիկային՝ հայ եւ համաշխարհային գրականության զարգացման ընդհանուր համապատկերում:

Գիտական վերլուծության են ենթարկվում գրողի ստեղծագործության թեմատիկ-գաղափարական բովանդակության, ինչպես նաեւ էպիկական ոճի եւ մտածողության սերտ կապն ու ներքին առնչությունները հայկական ժողովրդական հարուստ բանահյուսության հետ: Ուսումնասիրության մեջ հատուկ տեղ է հատկացվում հին ու նոր աշխարհների պայքարում հստակ ուրվագծվող կերպարների մեկնությանը, մարդու մեջ մարդկայինի կատարելագործման /«Ու դեռ հեռու է մինչեւ Մարդը իր ճամփան»/ թումանյանական Տեսլականին, որը եւ դիտարկվում է որպես բանաստեղծի գլխավոր մետաֆոր:

Հեղինակը հետազոտական աշխատանքում հանգամանորեն քննում է պատկերը /պատկեր-գործողություն/ առարկայականությունից դեպի ներքին տրամաբանությունն ու էությունականը «տանելու» գրողի նորարարական միջոցներն ու հնարանքները, սոցիալ-հոգեբանական ժամանակն ու տարածությունը բառում տարրալուծելու, իր ժամանակն ու իր հայրենիքը ստեղծելու սկզբունքները, թումանյանական կենսափիլիսոփայության ամբողջական արժեհամակարգի բնորոշ կողմերը:

РЕЗЮМЕ

**ОБРАЗ: ИЗ ПРЕДМЕТНОСТИ К ЛОГИЧНОМУ, ИЛИ- РАЗДЕЛЕНИЕ
ВРЕМЕНИ И ПРОСТРАНСТВА В СЛОВЕ
ВАРДАН АКОПЯН**

Ключевые слова: сатира, образ, предметность, логичный, душевность, время и пространство, традиционность, новейший, душа, туманяноведение, эстетика, стон, человек, метафора, сформировавшееся мышление, произведение, устное народное творчество.

В статье исследуются сатирические, художественные и эстетические особенности поэтики Ованеса Туманяна: развитие армянской и всемирной литературы в общих очертаниях.

Научному анализу подвергается крепкая связь тематико-

смыслового содержания произведения писателя, а также эпического стиля и мышления, внутренние столкновения с армянским богатым устным народным творчеством. В исследовании особое место уделяется уединению очерченных образов в борьбе старых и новых миров, туманяновский взгляд - совершенствование в человеке человеческого («еще далек до человека его путь»), который и интерпретируется как основная метафора поэта.

В научном труде автор исследует образ (образ-действие) из вещественного к внутренней логике, а также новейшие способы и средства писателя - «забирание» сущности, разделение социально-психологического времени и пространства, создание своего времени и своей Родины, принципы полноценной жизненно-философской структуры.

SUMMARY

IMAGE FROM SUBJECT MATTER TO LOGIC OR DECOMPOSITION OF TIME AND SPACE IN A WORD

VARDAN HAKOBYAN

Key words: *Lyrics, image, subject matter logical, spiritual, time and space, traditional, innovative, spirit, Tumanyan-Science, aesthetics, sigh, human being, metaphor, formula-thinking, work, folklore.*

The article touches upon the artistic and aesthetic peculiarities of Hovhannes Tumanyan's lyric poetics, in the general context of Armenian and worldwide literature development.

The theoretical and ideological content of the writer's work, as well as in the epic style and mentality, the close connection and internal relationships with the rich Armenian folklore are exposed to scientific analysis. In the research a special attention is given to the comment of the explicit outlined characters in old and new worlds' battle, human perfection in man/»It is still far from the man's way»/ and Tumanyan Vision which is considered as the poet's main metaphor.

The author thoroughly examines in his research work the image / image-activity/ from the subjectivity to internal logic and the essence "taking " to the writer's innovative means and tricks, decomposing the social-psychological time and space in a word, creating the principles of his time and his homeland and the typical sides of the complete value system of Tumanian life philosophy.

ՎԱՀՐԱՄ ԼԱԼԱՅԱՆ

ՆԱՐԵԿԻ ԽՈՐՀՐԴԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՑՈԼՈՒՄԸ ՄԻՋՆԱԴՐԱՅԱՆ ԼՈՒԾՄՈՒՆԵԻ ՉՈՐՍ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ (Բան Ա-ից՝ Բան ԻԸ)

Բանալի բառեր՝ Նարեկացի, «Մատենանոց գրադարան», խորհրդաբանություն, չորս խմբագրություններ, Նալյանի մեկնություն, Աստված, առաքիլություն, մեղք, Ս. Հոգի, Զրիստոս, ապաշխարություն, աղոթք, «մեղա»:

Զրիստոսի ծննդյան հազարամյակն արգասաբեր եղավ Հայոց եկեղեցու համար, քանի որ Գրիգոր Նարեկացին երկնեց իր աստվածաշունչ քերթվածը՝ «Մատենանոց գրադարանը»: Հավանաբար ԺԳ դարի վերջերից «Մատենան» նաև Նարեկ է կոչվել, քանի որ 1309 թ.-ին գրված Նարեկացու վարքի տարբերակներից մեկում ասվում է՝ «յօրինեաց զիրաշալի գիրս աղօթից, որ յանուն տեղոյն Նարեկ կոչի»¹: Աստիճանաբար «Մատենանի» մեկնությունը դառնում է «հասարակական պահանջ» և ծնունդ տալիս միջնադարյան լուծմունքին, որ գիտական շրջանակներում հայտնի է իր չորս խմբագրություններով²: Այս հիմքի վրա էլ Պոլսի հայոց պատրիարք Հակոբ Նալյանը ԺԸ դարում գրում է իր մեծածավալ մեկնությունը³:

«Աղոթքի խորհրդաբանության» տեսանկյունից կարևոր

* Հոդվածն ընդունվել է 25.05.2019 թ., երաշխավորվել է տպագրության պատմական գիտությունների դոկտոր Վալերի Ավանեսյանի կողմից՝ 02.06.2019 թ., ստորագրվել է տպագրության՝ 06.06.2019 թ.:

1 Տե՛ս Ա. Ղազինեան, Գրիգոր Նարեկացի, «Բանաստեղծական Արուեստը», Անթիլիաս, Լիբանան, 1995, էջ 35:

2 Ըստ Նարեկագետ Պ.Խաչատրյանի՝ Ա խմբագրության մեկնիչ-հեղինակը Հակոբ Ա Կլայեցի կաթողիկոսն է (1268-1286), Բ և Գ խմբագրությունների հեղինակները թեև անհայտ են, սակայն չեն կարող լինել ո՛չ Սարգիս Շնորհալին, ո՛չ էլ Ներսես Լամբրոնացին, իսկ Դ խմբագրության «ծնունդ տվողը» ԺԴ-ԺԵ դդ. բազմաշնորհ մատենագիր Գրիգոր Խլաթեցին է (1349-1425), (տե՛ս, Պ.Խաչատրյան, «Գրիգոր Նարեկացին և հայ միջնադարը», Ս.Էջմիածին 1996, էջ. 251-252, 265-267, 271-273):

3 Հարկ է նաև նշել, որ ավելի վաղ «Պատարագի մեկնություն» մեջ Ներսես Լամբրոնացին (+1198) արդեն ԼԳ Բանի վերջին երեք գլուխների վերլուծությունն էր կատարել: (Տե՛ս, «Սրբոյն Ներսեսի Լամբրոնացւոյ, Տարսնի եպիսկոպոսի՝ խորհրդածութիւնք ի կարգս եկեղեցւոյ եւ մեկնութիւն խորհրդոյ պատարագին», ի Վենետիկ ՌՄԴԶ-1847 էջ 250-260:)

Բան Ա-ի մեկնությունը Ա խմբագրության ձեռագիրը չունի, ուստի համեմատության մեջ կներկայացվեն մյուսները¹:

«**Ձայն հառաչանաց հեծուրեան ողբոց սրտից աղաղակի**»²
Բան Ա (ա-1)

Ըստ Դ խմբագրության՝ Մովսեսը ծովի ափին, իսկ Հովնանը՝ (մարգարեն) ձկան փորում ոչ «անյօղ» (անհողաբաշխ, անհողավոր) և աննշանական, այլ «յօղեալ» (հողաբաշխ կամ հողավոր) և նշանական աղոթքով խոսեցին Աստծու հետ³: Գ խմբագրության մեջ սկզբում ներկայացվում են ձայնի բաժանումները՝ «յօղեալ-անյօղ», նրանց «արտահայտչաձևերը» բնության մեջ և կենդանական աշխարհում, որոնք, իրենց հերթին նշանական և աննշանական լինելով, ծնունդ են տալիս հողաբաշխ նշանական և անհողաբաշխ նշանական կամ անհողաբաշխ աննշանական ձևերին, բերվում են օրինակներ, իսկ հետո նշվում, որ մարդու ձայնը հողաբաշխ է և սրտի խորքից հառաչմամբ բխող՝ ինչպես Մովսեսինը ծովի ափին և Հովնանինը՝ կետի փորում⁴:

Ըստ Բ խմբագրության՝ սրբի հողաբաշխ ձայնը սրտի խորքից հառաչմամբ է՝ ինչպես Մովսեսինը ծովի ափին և Հովնանինը կետի փորում⁵: «**Ձայն հառաչանաց...**» Բան Ա (ա-1) և «**Քեզ վերընծայեմ, տեսող գաղտնեաց**» Բան Ա (ա-2) տողերի իմաստին Նալյանն այսպիսի մեկնություն է տալիս՝ «փոխանակ ձայնի՝ քեզ նուիրեմ զհառաչանս սրտի իմոյ եւ փոխանակ ողբոց լալկանաց՝ զհեծուրեին իմոյ եւ փոխանակ աղաղակելոյ՝ զոչեմ սրտիւ, զի տեսանող ես գաղտնեաց և առանց արտաբերելոյ

1 Ըստ Պողոս Խաչատրյանի՝ Ա խմբագրության բոլոր ձեռագրերում պակասում է «Նարեկի» սկզբի մասի մեկնությունը՝ մինչև Բան Դ-ն ներառյալ (Տե՛ս Պ. Խաչատրյան, «Գրիգոր Նարեկացին և հայ միջնադարը» էջ 255):

2 Նարեկացի Գրիգոր «Մատենան ողբերգութեան», աշխ. Պ.Մ. Խաչատրյանի և Ա.Դազիսյանի, Երևան 1985 (այսուհետև՝ Նարեկի բոլոր հղումները կլինեն այս գրքից՝ բնագրից):

3 Տե՛ս ՄՄ ձեռ. 5921, թ. 11ա:

4 Տե՛ս ՄՄ ձեռ. 623, թ. 66բ: Ըստ Հայկազյան բառարանի հայրերի. «Ձայն երկակի է՝ կամ յօղեալ կամ անյօղ, որպես անասնոյ եւ կամ որպես անշնչիցն հնչմունք...» («Նոր բառգիրք Հայկազեան լեզուի» հատոր առաջին, Երևան 1979, էջ 210): Իսկ «աննշանական»-ին այսպիսի բացատրություն է տրվում. «ոչ ունին նշանակութիւն...» (նույն տեղում, էջ 212), ընդ որում ձայնը (բառը) հողավոր և աննշանական է՝ ինչպես ծիակապիկինը և եղջերվաքաղիկը (մտացածին կենդանիներ) կամ անհող ու աննշանական՝ ինչպես քարի կամ փայտի հնչումը (տե՛ս նույն տեղում, էջ 212): Այսինքն, եթե մարդկային խոսքը հողավոր է (բաժանված բառերի և հնչյունների, նաև նշանական է, քանի որ յուրաքանչյուր բառ որևէ միտք է արտահայտում: Ամեն դեպքում հառաչանքի ձայնը ևս հողաբաշխ է ու նշանական, քանզի «սրտի բարբառով» բազում իմաստներ է հաղորդում:

5 Տե՛ս ՄՄ ձեռ. 437, թ. 11ա:

զբախնա՝ ձայնիւ, իմանաս գիղծս եւ զկիրս սրտից»¹: Մովսեսի և Հովնան մարգարեի օրինակներին Նայյանն անդրադառնում է մեկ այլ տեղ՝ Աստծո զորութունը մատնանշելու ժամանակ, երբ լուռ Մովսեսին (Աստված) ասում էր՝ ինչո՞ւ ես գոչում, իսկ կետի փորում երեք օր ու գիշեր տանջվող մարգարեին (իր աներևույթ ներգործությամբ) փրկության ափ հասցնում՝ ըստ նրա աղոթական բաղձանքի² (հմմտ. Յովն. Բ.11): Այսպիսով՝ խմբագրությունների մեկնությունները կրկնելով իրար, ի տարբերություն Նայյանի մեկնության, նաև ձայների մասին լրացուցիչ գիտելիքներ են հաղորդում: Արդյունքում Նայյանը միտքն ամբողջական կերպով մեկնելով, հառաչանքները «հասցնում է» Աստծուն, իսկ մյուսները՝ հատվածաբար մեկնելով (առանց 2-րդ տողի)՝ ամբողջը հասկանալի են համարում:

Երրորդ տողից «թախծության հուրը», որ Նարեկացին սասանված մտքի կամքի բուրվառով «Աստծուն է առաքում» 5-րդ տողում, այսպիսի մեկնաբանություն է ստանում (ըստ Բ խմբագրության) «Չյօժարութիւն կամացն ի յաղօթս եւ զվառում սրտին»³: Իսկ որպես լրացուցիչ բացատրություն, նշվում է, որ ինչպես խունկը կրակի վրա հոտ արձակելով լցնում է ողջ շրջապատը, այնպես էլ զղջացողի «ի խորոց սրտի» աղոթքով՝ իբրև ծառի պտուղ, մատուցվում է մտքի փափագը⁴: Եվ հուրը, ըստ մեկնիչի, երկակի զորությամբ է օժտված՝ լուսավորել և այրել⁵: Նույնն են կրկնում նաև Գ և Դ խմբագրությունները՝ բացառությամբ հրի հատկությունների արծարծման⁶: Բան Ա-ի 3-5 տողերն են՝

**«Եւ մատուցեալ եղեալ ի հուր թախծութեան անձին
տոչորման**

**Չպտուղ ըղձից ճենճերոյ սասանեալ մտացս՝
Բուրվառաւ կամացս առաքել առ Զեզ»:**

Բան Ա - ա (3-5)

Նայյանը, ի տարբերություն իր նախորդների, «Աստծուն է մատուցում» ոչ թե մտքի փափագը, որը կարող է նաև նույնացվել կամքի հետ, քանի որ Տաթևացին կամքը «տեղադրում է» մտքի կարողությունների շարքում՝ իմացության և հիշողության

1 Նալեան Յակոբ (պատրիարք.), «Գիրք մեկնութեան աղօթից սբբոյն Գրիգորի Նարեկացոյ, հրեշտակական վարդապետին» (այսուհետև՝ Նալեան), Կոստանդնուպոլիս, 1745, էջ 20:

2 Տե՛ս նույն տեղում, էջ Ի:

3 Տե՛ս նույն տեղում, ՄՄ. ձեռ. 437, թ. 11ա:

4 Տե՛ս նույն տեղում:

5 Տե՛ս նույն տեղում:

6 Տե՛ս ՄՄ ձեռ. 623, թ. 66բ և ՄՄ ձեռ. 5921, թ. 11ա:

հետ¹, այլ սրտի իղձն ու փափագը, որը զղջացողի՝ առ Աստված աղօթական կեցվածքը խորհրդապաշտության վերացարկված մտահայեցողական ուղղությունից դեպի բարոյագործական կամ բարոյախմացաբանական ոլորտ է տեղափոխում²:

Բացի դրանից, նա սրտի թախիծը անձի ախտերի կիզիչ կամ տոչորիչ է համարում, որն ապաշխարության խորհրդաբանության «բացահայտման» տեսանկյունից կարևորություն է ստանում, քանի որ Աստծուն սիրող, բայց իր մեղքերի համար տրտմած կամ սուգի մեջ մտած հավատացյալն արդեն իր բնության մաքրագործման ճգնափուլական ընթացքի մեջ է հայտնվում³: Այնուհետև Նայանը Բ-Գ-Դ խմբագրություններին կրկնելով, Սարգիս Շնորհալու անունով է ներկայացնում «ի հոլը թախծութեան»-ի մեկնությունը, որն ըստ Պ. Խաչատրյանի սխալ է⁴: Բան Ա-ում Նարեկացին շարունակում է կերտել աղոթական պատկերներ՝

«Մատուցեալ ծխոյն բարդութեան» Բան Ա (ա-8): Ըստ Դ խմբագրության՝ ինչպես ծուխն է (քուլա-քուլա) ելնում բուրվառից, այնպես էլ աղոթքը՝ մտքից⁵: Ըստ 11-րդ տողի՝

«Ելքէ՛ ի խորոց աստի զգայութեանց խորհրդակիր սենեկիս» Բան Ա (ա-11)

Ըստ Գ խմբագրության՝ հոգու հինգ զգայությունների մասին է խոսքը, որոնցից առաջինը մարմնական զգայությունների միասնական տեսությունն է՝ անկատար, կիսատ, առանց քննության (այդ պատճառով պարզ տեսություն է, ոչ ամբողջական), երկրորդը երևակայությունն է, երրորդը՝ կարծիքը, չորրորդը՝ տրամաբանությունը, իսկ հինգերորդը՝ միտքը⁶: Կամ հոգու երկու զորությունների խմբերն ի նկատի ունի՝ կենդանական և ճանաչողական: Ճանաչողականի մասերը նրանք են,

1 Տե՛ս Գրիգոր Տաթևացի, Ոսկեփորիկ, աշխարհաբար թարգմանությունը և ծանոթագրությունները Հ. Զեոսեյանի, Երևան, 1995, էջ 248:

2 Տե՛ս Նալեան, էջ իա: Իսկ խորհրդապաշտական հոսանքների մասին ավելի մանրամասն, տե՛ս Վ. Լալայան, Ինը երանիները հայ խորհրդաբանական ավանդույթի մեջ, «Էջմիածին» - 2009 ժ(հոկտ.), էջ 21-37:

3 Տե՛ս Նալեան, նույն տեղում:

4 Տե՛ս երկրորդ տողատակի դիտարկումը:

5 Տե՛ս ՄՄ ձեռ. 5921, թ. 11ա: Այստեղ մեր հիմնական նպատակը խմբագրությունների և Նայանի մեկնությունները համեմատության մեջ ամբողջովին ներկայացնելը չէ, այլ՝ ընտրողաբար խորհրդական Աստվածաբանության համար կարևոր դիտարկումներն արձանագրելը՝ թեկուզ մեկ խմբագրությամբ: Այն մեկնաբանությունները, որտեղ բացակայում են խմբագրությունների և Նայանի տեսակետները՝ ամբողջությամբ կա՛մ մասնակիորեն, նշանակում է կա՛մ դրանք բացակայում են (որպես Նայանի և խմբագրությունների ընտրողության հետևանք), կա՛մ մեր կողմից ընտրողաբար չեն ներկայացվել:

6 Տե՛ս ՄՄ ձեռ. 623, թ. 67ա:

որոնց մասին վերևում հիշատակվեց (միտք, տրամաբանություն, կարծիք, երևակայություն և հասարակ զգայություն) իսկ կենդանականի մեջ են մտնում կամքը, հոժարությունը, ընտրողությունը, բարկությունը և ցանկությունը¹:

Եթե տեսականով զարդարվում է հոգու բանական մասը, ապա գործնականով՝ անբան մասերը, ըստ այդմ կատարյալ իմաստասիրությունը երկուսի է բաժանվում՝ տեսական և գործնական²: Ըստ **այլ տեսության**՝ հոգին երկու գործություն ունի՝ (միտք և բան), որոնցից մտքինը հինգ գործություններն են՝ իմաստությունը, տեսողությունը (կամ մտավոր տեսությունը), ուսողությունը (ուսման կարողությունը), անմոռացությունը և ճշմարտության կատարումը, իսկ բան-ինը՝ խոկումն է, գործնական հավատքը, առաքինությունը և բարու կատարումը (կամ բարեգործությունը)³: Այսպես խառնվում են միմյանց՝ իմաստությունը՝ խոկումին, տեսությունը՝ գործնականին, ուսողությունը՝ առաքինության հետ, անմոռացությունը՝ հավատի և կատարումը՝ բարու հետ, քանզի միտքը շարժվելով իմաստների հետևից, կանգ է առնում ճշմարտության վրա, իսկ բանը սկիզբ առնելով խոկումից, տեղ է գտնում բարու մեջ և երկուսի վախճանն «Աստծո մեջ է», քանզի Նա է ճշմարտությունը և բարին՝ ճշմարիտ բարին և բարի ճշմարտությունը⁴:

Դ խմբագրության մեկնության մեջ, երբ որպես հինգերորդ զգայություն նշվում է միտքը, ավելացվում է, որ դա է «խորհրդակիր սենեակը», ինչպես նաև երևակայությունը համարվում է կենդանական ու ընկալվում հոժարության, բարկության և ցանկության հետ Նույն շարքում⁵: Դ խմբագրությունը կամքը վերագրում է ինչպես հոգու բանական մասին, այնպես էլ կենդանականին⁶: Իսկ մեկնելով «Որ յիսն է պարարտութիւն» Բան Ա (ա-15) տողը, գրում է. «զգօրութիւն հոգոյն ասէ՝ իւրովքն մասամբք, որպէս վերագրեցաւ ըստ Դաւթեայ փիլիսոփայի»⁷: Իսկ այն բաժանման մասին, որ հոգին երկու գործություն ունի՝ **միտք և բան**, որպես հեղինակ է նշվում Մաքսիմոսին⁸: Եվ ավարտելով 15-րդ տողի մեկնությունը, գրում է (կրկնելով «Գ»-ին), որ Աստված է ճշմարիտ բարին և բարի ճշմարտությունը, որին

1 Տե՛ս Նույն տեղում:

2 Տե՛ս Նույն տեղում:

3 Տե՛ս Նույն տեղում: Այս տեսության մասին դեռ կխոսվի:

4 Տե՛ս Նույն տեղում:

5 Տե՛ս ՄՄ ծեռ. 5921, թ. 11բ:

6 Տե՛ս Նույն տեղում:

7 Նույն տեղում:

8 Տե՛ս Նույն տեղում:

Էլ աղոթում է (Նարեկացին) ամբողջ անձով և իր ողջ զորությամբ¹, իսկ Գ խմբագրությունը ավելացնում է. «յամենայն մտաց. յօժար կամօք»²: Մարդու հիվանդ անձը համեմատելով անբան մշակի հետ, իսկ նրա անկումային բնությունը՝ անբերրի երկրի, Նարեկացին Աստծուց խնդրում է, որպեսզի հոգևոր վաստակի անպտղություն չլինի.

«Մի՛ եղեց անպտուղ ի փոքր վաստակոյս

«Իբր ապաջան սերմանող անբերրի երկրի»

Բան Բ - գ (81-82)

Ըստ Բ խմբագրության՝ թմրած (պղերգ) միտք, հեղգ հոգի, ծույլ ու հեշտասեր մարմին ունեցող անձը նման է անպտղաբեր հողի և անբան մշակի³: Ըստ Գ-ի, Նարեկացին աղաչում է՝ չլինել անպտուղ գրելու ասպարեզում, քանի որ թմրած միտք... (շարունակության մեջ կրկնում է Բ խմբագրությանը)⁴: Այդպիսի անձնավորությունն արդեն չի պայքարում՝ հաստատվելու համար ինը երանիներով տրված (որդեգրության հոգուն բնորոշ) առաքինությունների մեջ⁵.

«Ճոյս առ երանութիւն ընտանութեանն» (ծեռ.-ում «Երանութիւն ընտանի»)

Բան Ե (բ-50):

Ըստ Դ խմբագրության՝ խոսքը ինը երանիների (կամ երանության) մասին է, որով մարդը բնությամբ ընտանեանում է (կամ ընտանի է դառնում) Աստծուն⁶: Նույնն է կրկնում Նաև լուծմունքի Բ խմբագրությունը⁷: Ճգնավորի համար, ապաշխարության ճշմարիտ ճանապարհի «բացահայտման գործը» ևս կարևոր բանալի է ինը երանիներով տրված առաքինությունների մեջ հաստատվելու ճանապարհին.

«Եւ արդ, քանզի միապէս մատնէ կորստեան

Ե՛ւ զղջումն ուժգնապէս, ե՛ւ մեղանչելն մոլեգնաբար»

Բան Ժ - ա (1-2)

Ըստ Բ խմբագրության, եթե մարդը չի հավատում, որ Աստված կարող է իր մեղքերը ներել և մեղքերի ծանրության կամ բազմության պատճառով հուսահատության գիրկն է ընկնում, ապա կասկածի է ենթարկում Աստծո ներելու կարողությունը և

1 Տե՛ս Նույն տեղում:

2 ՄՄ ձեռ. 623, թ. 67ա:

3 Տե՛ս ՄՄ ձեռ. 5169, թ. 4բ:

4 Տե՛ս ՄՄ ձեռ. 623, թ. 69բ:

5 Տե՛ս Նաև Վ. Լալայան, Նշվ. աշխ., էջ 21-37:

6 Տե՛ս ՄՄ ձեռ. 5921, թ. 32բ-33ա: Այսպիսի անցումները (Բան Բ-ից՝ Բան Ե) կարող են լինել ինչպես խմբագրությունների, այնպես էլ մեր ընտրողությունը:

7 Տե՛ս ՄՄ ձեռ. 5169, թ. 8ա:

սահմանափակում Նրա «ողորմածության տիրույթները» (սրան Բ խմբագրության հեղինակը խիստ որակում է տալիս՝ հայիոյություն Որդի Աստծո դեմ)¹: Այս դեպքում, մեղքերը մնում են նրա վրա (թեկուզ տվյալ մեղքերի մեջ արդեն չի էլ ընկնում), բայց քանի որ փրկության հույսը մարեց, կորստյան է մատնվում²: Նույնն է կրկնում նաև «Գ» խմբագրությունը³: Չորրորդ խմբագրությունը Աստծո ներելու կարողության սահմանափակելը (ի տարբերություն Բ-ի) հայիոյություն է համարում ոչ թե Որդի Աստծո, այլ Ս. Հոգի Աստծո դեմ⁴: Իսկ մոլեգնաբար մեղանչողի մեկնության մեջ նշելով, որ մոլեգնաբար մեղանչումից խեղճահան են լինում, վկայակոչում է Բարսեղ Կեսարացուն, որն ասում է, թե մեղքով բռնվածները մտքից էլ են ընկնում և կորցնում բանականությունը⁵: Նայանի մեկնաբանությունն ավելի խորն է ու համապարփակ և ի տարբերություն Բ-Գ-Դ խմբագրությունների, ավելի հստակ է ներկայացնում սատանայի դերակատարությունը, անհավասարակշիռ գղջացողին՝ հուսահատության, իսկ մոլեգնաբար մեղանչողին՝ անտարբերության թմբիի մեջ նետելու գործում⁶: Աղոթքի խորհրդաբանության դիտանկյունից կարևոր են նաև (բացի Բան Ա-ա)-ից Բան ԺԱ-ի (բ՝ 37-42) տողերը.

«Եւ քան ի խառնեալն երբեմն աղացմամբ ի սպաս խորանին» Բան ԺԱ (բ-40): Ըստ Բ խմբագրության՝ չորս տեսակի խնկի մասին է խոսքը, որ խառնելով աղում էին խորանի սպասավորության համար (կնդրուկ-քաղբան-ծակոտկեն-Ժեռավորի), նույնպես և մարդը՝ չորս առաքիլությունները (խոհեմություն, արիություն, ողջախոհություն և արդարություն) խառնելով աստվածայինի հետ (հավատ, հույս, սեր) ու սրանցով Աստծուն աղոթելով (կամ աղաչելով) ամենաաստվածահաճո զոհաբերությունն է կատարում⁷ կամ անուշահոտ պատարագը մատուցում⁸: Նույնն են կրկնում նաև Գ և Դ խմբագրությունները⁹:

1 Տե՛ս ՄՄ ձեռ. 5169, թ. 8բ:

2 Տե՛ս նույն տեղում:

3 Տե՛ս ՄՄ ձեռ. 623, թ. 72բ:

4 Տե՛ս ՄՄ ձեռ. 5921, թ. 38բ:

5 Տե՛ս նույն տեղում:

6 Տե՛ս Նալեան, նշվ. աշխ., էջ ձԷ - 87:

7 Ըստ Գրիգոր Տաթևացու՝ մարդու առաքիլությունը խունկ է համարվում, քանի որ խունկը չորս նյութերից բաղկացած խառնուրդ է (ստախշ, քաղբան, եղնգնաքար և կնդրուկ), որոնք խորհրդանշում են չորս մարդկային առաքիլությունները՝ խոհեմություն, արիություն, ողջախոհություն և արդարություն (տե՛ս Գրիգոր Տաթևացի. «Երգ երգոցի մեկնությունը»՝ աշխարհաբար թարգմանությունը և ծանոթագրությունները՝ Խ. Գրիգորյանի, Երևան 2005, էջ 19):

8 Տե՛ս ՄՄ ձեռ. 5169, թ. 10ա:

9 Տե՛ս ՄՄ ձեռ. 623, թ. 74ա և ՄՄ ձեռ. 5921, թ. 42բ:

Նույնիսկ ծանր մեղքերի առկայության դեպքում փրկության հույսը դեռ կարող է մարդուն փրկել:

«Ունի եւ նշխար նշողից փրկութեան կենաց հպաւոր»

Բան ԺԱ (բ-26):

Ըստ Բ խմբագրության, եթե առաքինության բարձրությունից (քրիստոնյան) մեղքերի գուբի մեջ ընկնի, փրկության հույսի նշույլ դեռևս ունի և պահպանում է¹: Նույնն է կրկնում նաև Գ խմբագրությունը²: Դ խմբագրությունը միայն «նշխար նշողից» բառակապակցությունն է բացատրում՝ որպես հույսի մնացորդ³: Մարդու հոգու խորքում փրկության հույսի առկայծումը Նարեկացին նմանեցնում է նաև Բ Մակար. (Ա. 19-20)-ում հիշատակվող «հրախառը ջրին»՝ որպես զոհասեղանից վերցված կրակ, որ տասնամյակներ առաջ թաքուն պահվել էր ջրիորի խորքերում, և թեև հեղուկ, սակայն պահել էր հրի զորությունը:

**«Որպես զհուր նշանաւոր եւ զարմանաւոր թանձրամած Հրաշիւք մակարդեալ վեհին հրամանի՝
Ի հատակս ներքինս նիրհեալ ջրիորոցն»**

Բան ԺԱ – Բ (28-30)

Ըստ Դ խմբագրության՝ այդ հուրը 70 տարի մնալով ջրիորի տիղմի մեջ, արդեն որպես հրահեղուկ (կամ «ջրախառը հուր») քնած մարդու պես է, որ պիտի զարթնի, նույնպես և հույսն է մեղավորի սրտում փրկության դարձի ներուժ կրում իր մեջ⁴: Այդ փրկությունն ուղղակի կապված է խաչի վրա Քրիստոսի «մատուցած պատարագի» և Նրա թափած «սրբագործ Արեան» նկատմամբ հավատքի առկայությունից:

**«Քանզի արդարեւ յարդարացուցանելն զմեզ Աստուծոյ՝
Ոչ ոք զաւրէ դատապարտ առնել»**

Բան ԺԱ – Դ (100-101)

Ըստ Դ խմբագրության՝ Քրիստոսի շնորհների մասին է խոսքը, որն արդարացնում է հավատացյալին⁵: Նույնն են կրկնում նաև Բ և Գ խմբագրությունները⁶: Քրիստոսով տրված որդեգրության հոգու շնորհով է նաև, որ Աստծուն եկեղեցին «Հայր մեր»-ով է դիմում:

«Իսկոյն եւ կոչումն քնտանի ձայնի...»

Բան ԺԲ (ա-8):

1 Տե՛ս ՄՄ ձեռ. 5169, թ. 9բ:

2 Տե՛ս ՄՄ ձեռ. 623, թ. 73բ:

3 Տե՛ս ՄՄ ձեռ. 5921, թ. 42բ:

4 Տե՛ս Նույն տեղում:

5 Տե՛ս Նույն տեղում, թ. 43ա:

6 Տե՛ս ՄՄ ձեռ. 623, թ. 74ա և ՄՄ ձեռ. 5169, թ. 10ա:

Ըստ Դ խմբագրության՝ «Հայր» անունով է կոչում Աստծուն¹:
Բ և Գ խմբագրությունները Հոր անվանը «կցում են» նաև
9-րդ տողում Նարեկացու կողմից Հայր Աստծուն տրվող «ահա-
վոր անուն» որակումը².

«Ահաւորութեան անունն շնորհածիրն բարերարի»

Բան ԺԲ (ա-9):

Նարեկացու սերը առ Աստուած որդիական սեր է, որ բարձր
է ծառայական և վարձկանական սիրո աստիճաններից.

**«Ոչ եթէ վասն պարգեւաց Նորա դարձեալ մատուցեալ
յողոք դեգերիմ,**

Այլ իբր զկենդանութիւն իսկապէս»

Բան ԺԲ - Բ (15-16)

Ըստ Դ խմբագրության՝ Նարեկացին ոչ թե ապագայի
պարգևների համար է Աստծուն աղաչում, որ վարձկանական
սիրո արտահայտություն է, և ոչ էլ որպեսզի ապրի առանց մեղ-
քերի ու տանջանքներից փրկվի (որ խորհրդանշում է ծառայա-
կան սերը), այլ այնպես է պաշտում Աստծուն, ինչպես կենդա-
նին կենդանությանը և զգայականը՝ զգայությանը և շնչավորը՝
շնչին (օրինակ, կենդանին առանց կենդանության կենդանի չէ,
իսկ զգայականը առանց զգայարանների չի վայելում կամ շնչա-
վորն առանց շնչի անգո է, ինչպես ինքն առանց Աստծո), և այս է
որդիական սերը, որ ըստ էության է պաշտում Աստծուն³: Նույնն
են կրկնում նաև Բ և Գ խմբագրությունները⁴:

Աստծո հետ սիրո միությունը առավել մերձավորության միա-
վորություն է, քան հույսով ու հավատով հաղորդակցությունը.

«Չի ոչ այնքան յուսոյն հանգուցի,

Որքան սիրոյն կապանաւք բերկրիմ»:

Բան ԺԲ - Բ (19-20)

Ըստ Դ խմբագրության՝ ոչ միայն հույսով, այլև սիրով են կա-
պակցված Աստծուն⁵:

1 Տե՛ս նույն տեղում, ՄՄ ձեռ. 5921, թ. 45բ:

2 Տե՛ս ՄՄ ձեռ. 5169, թ. 10բ և ՄՄ ձեռ. 623, թ. 74բ: Եղիշեն և հետագայի
մեկնիչները տալիս են «Հայր» պատվանվան վարդապետական
բացատրությունը (տե՛ս Եղիշե վարդապետ. «Հայր մեր» աղոթքի մասին,
աշխարհաբար թարգմանությունը՝ Խ. Գրիգորեանի, «Գանձասար» Գ, էջ
248-254):

3 Տե՛ս ՄՄ ձեռ. 5921, թ. 45բ: Սիրո այս մակարդակների աստվածաբա-
նական բացատրությունը տրված է Հովհ. Արճիշեցու «Վասն երից կար-
գացն փրկելոցն եւ ապրելոցն...» ճառում, աշխ. Հ. Զեոսեյանի (տե՛ս աստ-
վածաբանության ֆակուլտետ. Տարեգիրք, Երևան, 2007, էջ 223-233):

4 Տե՛ս ՄՄ ձեռ. 5169, թ. 10բ և ՄՄ ձեռ. 623, թ. 74բ:

5 Տե՛ս ՄՄ ձեռ. 5921, թ. 45բ:

Նույնն են կրկնում նաև Բ և Գ խմբագրությունները¹: Նարեկացու սիրո խոստովանությունը տարբեր արտահայտչամիջոցներ է գտնում.

**ա. «Ոչ փառքն են ինձ անձկալի,
Այլ փառաւորեալն է համբուրելի»**

Բան ԺԲ - բ (22-23)

Բ խմբագրությունը «համբուրելի» արտահայտությունը բացատրում է հպելի, հանդիպելի իմաստներով²,

**բ. «Ոչ կենացն փափագանաւք
Այլ կենարարին յիշատական միշտ ճենճերիմ**

Բան ԺԲ - բ (24-25)

Ըստ Գ խմբագրության՝ ինչպես ճարպն է հրից ճենճերում, այնպես էլ ինքը՝ (խորհրդագգածը), Նրա սիրուց³: Նույնն է կրկնում նաև Բ խմբագրությունը⁴,

**գ. Ոչ վայելիցն տարփանաւք հեծեմ,
Այլ հանդերձաւդին տենչանաւք՝ յերիկամանց աստի
կականիմ»**

Բան ԺԲ - բ (26-27)

Ըստ Բ խմբագրության՝ տենչալը սաստիկ սերն է, իսկ երիկամները («երիկամուկքն») սիրո շտեմարանն են⁵,

**դ. «Ոչ հարսնարանին խնջոյիւք,
Այլ Փեսային անձկութեամբ մաշիմ»**

Բան ԺԲ - բ (30-31)

Ըստ Բ խմբագրության՝ այստեղ արծարծվում է Նարեկացու սիրո փափագը, իսկ «անձկութեամբ»-ը բացատրվում է նեղանալ իմաստով⁶:

Միտքը կարևոր դերակատարություն ունի հոգու և մարմնի մաքրության վիճակի պահպանման գործում: Ըստ Նարեկացու.

**«Չմիջնորդ ազդման կափուցմանց երկակի շրթանցս
Արժանափակ աղխիւ կարկելոց առ անհամարձակ
լեզուիս շարժութիւն,
Նորոգեցից ի յերգ հառաչման պաղատանացս
յեղանակութեանց**

Աղիողորմ հեծեծանաց՝ ի բարձունս աղաղակելոց»:

Բան ԺԲ - գ (42-45)

1 Տե՛ս ՄՄ ձեռ. 5169, թ. 10բ և ՄՄ ձեռ. 623, թ. 75ա:

2 Տե՛ս ՄՄ ձեռ. 5169, թ. 11ա:

3 Տե՛ս ՄՄ ձեռ. 623, թ. 75ա:

4 Տե՛ս ՄՄ ձեռ. 5169, թ. 11ա:

5 Տե՛ս Նույն տեղում:

6 Տե՛ս Նույն տեղում:

Ըստ Բ և Գ խմբագրությունների՝ խոսքը մտքի մասին է, որ ազդում է հոգու և մարմնի վրա¹: Պ. Խաչատրյանն ավելի ճիշտ է համարում Գ. Ավետիքյանի տեսակետը, որ ազդման այդ միջնորդն աղոթքն է, իսկ մի այլ բացատրությամբ՝ գիրը²:

Մարդը որպես անձ միության մեջ է իր հոգեմարմնական բնության հետ և Նարեկացին, ի վերջո, մարդու անձի և անկումային բնության հարաբերությունն ի նկատի ունի, երբ իր անձը տառապյալ է համարում (բնությունը սրբության մեջ պահելու գործում)։

«Պահեստե՛ս Զո կամաւքդ զտառապեալ անձն ոգւոյս»

Բան ԺԲ (գ-62)

Բ և Գ խմբագրությունները որպես «անձն ոգւոյս» հասկանում են մարդու միտքն ու հոգին³: Երկրային կյանքում մարդու հոգին անհանգիստ է, քանի դեռ Աստծուն չի գտել, և նրա միտքը հավատքի զորությամբ Ս. Հոգու մեջ խաղաղությամբ չի հանգչել: Այսինքն՝

**«Հոգենորոգ զուարթութեամբ
Ի Զեզ արծանացեալ»**

Բան ԺԲ - դ (85-86)

Բ և Գ խմբագրությունները «Ի Զեզ արծանացեալ»-ը հասկանում են Զո մեջ հաստատվելու իմաստով⁴:

Աստծուց տրված հավատի շնորհն արդեն «ապահովում է» մարդ-Աստված աղոթական կապը.

«Չայս ձայն մաղթանաց բուրմամբ հաւատոց»

Բան ԺԲ (դ-87)

Ըստ Բ խմբագրության՝ աղոթականի կամքը՝ որպես բուրվառ, մաղթանքը՝ որպես խունկ, հավատը՝ որպես հուր, անուշահոտություն են բուրում՝ ընդունողի (Աստծո) կամքին հաճելի⁵: Նույնն են կրկնում Նաև Գ և Դ խմբագրությունները⁶: Սակայն Աստծո կամքին հաճելի է ապաշխարության ուղին ընտրած անձը, որ զոջումով խոստովանությամբ և բարեգործությամբ ձգտում է քավել իր մեղքերը և առաքինի դառնալ: Դեռևս Հին Կտակարանում առկա էր խոստովանության զորության մասին գիտություն.

«Արասցե՛ս ահա ելս քաւութեան, ըստ մարգարէին»

Բան ԺԵ (դ-74)

1 Տե՛ս ՄՄ ձեռ. 5169, թ. 11ա և ՄՄ ձեռ. 623, թ. 75ա:

2 Տե՛ս Գրիգոր Նարեկացի, «Մատենա ողբերգութեան» (Բան ԺԲ-ի 2-րդ ծանոթագրությունը), էջ 998:

3 Տե՛ս ՄՄ ձեռ. 5169, թ. 11ա և ՄՄ ձեռ. 623, թ. 75բ:

4 Տե՛ս ՄՄ ձեռ. 5169, թ. 11բ և ՄՄ ձեռ. 623, թ. 75բ:

5 Տե՛ս ՄՄ ձեռ. 5169, թ. 11բ:

6 Տե՛ս ՄՄ ձեռ. 623, թ. 75բ և ՄՄ ձեռ. 5921, թ. 45բ:

Ըստ Գ խմբագրության՝ խոսքը Եսայու մարգարեության մասին է՝ «ասացի թե պատմելու եմ իմ բոլոր անօրինությունները (մեղքերը) և Դու թողություն կտաս ու կարդարացնես¹» (հմմտ. Եսայի ԽԳ.26): Նույնն են կրկնում Բ և Դ խմբագրությունները²: Խոստովանելով, որ խորհուրդների պատերազմում պարտություն է կրել, Նարեկացին միաժամանակ մատնանշում է ճգնափորական կյանքի գլխավոր մտահոգությունը՝ սրբության մեջ հարատևելու դժվարությունները:

«Ոչ կացուցի յոտին զերիվար մտացս երասանաւ բանին»

Բան Ի (գ-75)

Ըստ Գ խմբագրության՝ ինչպես երասանով սանձահարվում է ձին, այնպես էլ խոհեմությամբ՝ մտքի վայրենությունը³: Այսուհանդերձ, ազատ կամքով գործած մեղքերն են մեծ ավերածություններ գործում հավատացյալի ներաշխարհում, քանզի մարդու հոգեկան բնությունն այնպիսին է, որ արդեն մեղքից հետո խղճի խայթը սկսում է տանջել նրան (ակամա կամ անգիտությամբ գործված մեղքերի դեպքում այդ «ներքին դատավորի» զորությունն անհամեմատ նվազում է):

«Զգայութիւն սրտին իմաստից՝ խեթիւ խոցոտեալ»

Բան ԻԳ (բ-21)

Ըստ Գ խմբագրության՝ «Նեղի ի խղճե մտացն՝ յետ յեշտութեան մեղացն»⁴: Նույն կերպ է մեկնաբանում նաև Բ խմբագրությունը⁵:

Այս միտքը 25-րդ տողում փոքր-ինչ այլ ձևակերպում է ստանում:

«Եւ տեսականացն ողջ ելով՝ իմանալիքն վիրաւորեալ»

Բան ԻԳ (բ-25)

Բ խմբագրության մեկնիչը նշում է, որ մինչև մեղքի հետտուությունը բանականությունը կորչում է, ու մարդն անասուն է դառնում, իսկ հետո հիշելով՝ հեծում է⁶: Նույնն է կրկնում նաև Դ խմբագրությունը⁷:

«Մեղայ»-ի խորհրդի «խնկարկումը» Արևելաքրիստոնեական հորհրդապաշտությանը հոգեհարազատ իրողություն է և Նարեկացու կողմից չէր կարող անտեսվել:

«խորհուրդ կնքեալ, ընդ որ չիք ումեք անցանել,

1 Տե՛ս ՄՄ ձեռ. 623, թ. 76բ:

2 Տե՛ս ՄՄ ձեռ. 5169, թ. 14բ և ՄՄ ձեռ. 5921, թ. 45բ:

3 Տե՛ս ՄՄ ձեռ. 623, թ. 79բ:

4 ՄՄ ձեռ. 623, թ. 80բ:

5 Տե՛ս ՄՄ ձեռ. 5169, թ. 17ա:

6 Տե՛ս նույն տեղում:

7 Տե՛ս ՄՄ ձեռ. 5921, թ. 75ա:

«Եթե ոչ անըմբռնելի մտաց արագման զսա ծանից Է»

Բան ԻԷ-գ (38-39)

Ըստ Բ և Գ խմբագրությունների՝ խորհուրդ Է «մեղա»-ն և զորություն Է պարփակում իր մեջ ու այնպես Է կնքված կամ դրոշմված, որ «ոչ Աստուած կատարե եւ ոչ այլ ոք»¹: Վերջին արտահայտությունը կարելի Է հասկանալ, որ Նրա բացահայտումը կամ խորհրդագերծումը ոչ ոք չի կատարում իմաստով, իսկ չորրորդ խմբագրությունը ավելի հասկանալի Է մեկնում. «զորոյ կնիքն ոչ Աստուած կոտրե եւ ոչ այլ ոք»² (բացառված չէ, որ Բ և Գ խմբագրությունների գրիչները «կոտրե» բառը սխալմամբ «կատարե» ձևով փոխանցեին):

Ըստ Բ, Գ և Դ խմբագրությունների՝ այնքան զորություն ունի «մեղա»-ն, որ անհաս Է մտքի համար³: Նայանս իր մեկնության մեջ ձգտում Է նաև պատճառաբանել թե ինչո՞ւ Է մտքի համար անըմբռնելի⁴: Նարեկացին շարունակում Է «մեղայի» մեկնաբանությունը՝ նաև Բան ԻԷ-ի այլ տեղերում.

«Որով նոյն Ինքն Աստուածութիւնն պսակեալ բարգաւաճի»

Բան ԻԷ (գ-47)

Ըստ Բ խմբագրության, երբ մարդը զոջում Է և մեղա՝ ասում, Աստվածությունը փարթամանում Է՝ (հարստանում Է) շնորհներ բաշխելով⁵: Նույնն են կրկնում նաև Գ և Դ խմբագրությունները⁶: 56-րդ տողում այն մկրտության հետ Է համեմատվում.

«Չերջանիկ բանիդ զմկրտութեան հարազատս»

Բան ԻԷ (ե-56)

Ըստ Բ խմբագրության՝ «մեղա»-ն այնպես Է մարդուն մաքրում մեղքերից, ինչպես մկրտությունը, թեև այն ձրի Է, իսկ սա՝ աշխատությամբ⁷: Նույնը կրկնում են մյուս խմբագրությունները (Ա խմբագրությունը «ձրի կամ աշխատութեամբ» համեմատականը չունի)⁸: Արդեն ԻԷ (ե-58)-ում «մեղա»-ն մարդկային բնությունից բխող մեղքերի համապարփակ խոստովանությամբ Է ներկայանում.

«Մեղա՛յ մարմնոյ ձեռն յոգի հարեալ, յիմարս մեղայ»

Բան ԻԷ (ե-58)

Ըստ Դ խմբագրության՝ ձեռքը խորհրդանշում Է մարմնի

1 ՄՄ ձեռ. 5921, թ. 90բ:

2 ՄՄ ձեռ. 5921, թ. 90բ:

3 Տե՛ս ՄՄ ձեռ. 5169, թ. 20բ և ՄՄ ձեռ. 623, թ. 83բ, ՄՄ ձեռ. 5921, թ. 90բ:

4 Տե՛ս Նալեան, էջ ճղա:

5 Տե՛ս ՄՄ ձեռ. 5169, թ. 21ա:

6 Տե՛ս ՄՄ ձեռ. 623, թ. 83բ և ՄՄ ձեռ. 5921, թ. 91ա:

7 Տե՛ս ՄՄ ձեռ. 5169, թ. 21ա:

8 Տե՛ս ՄՄ ձեռ. 59, թ. 160ա, ՄՄ ձեռ. 623, թ. 84ա, ՄՄ ձեռ. 5921, թ. 91բ:

կամքը, որով հոգին ապականվում է մեղքերով, և երբ մարդը բռնվ կուրծքն է ծեծում (որ հոգու խորհրդանիշն է), սիրտն է ցույց տալիս՝ որպես պատճառ և մայր մեղքերի, որտեղից այն փոխանցվում է մտքին ու անձին¹: Նույնն է կրկնում նաև Գ խմբագրությունը²: Ըստ Խաչատրյանի դիտարկման՝ Նալյանն ու Ավետիքյանը այս մեկնաբանությունը համարել են անկատար, և Նալյանը տարբեր բացատրություններ է տվել՝ ըստ մարմնի ապրելով հոգին արհամարհել կամ մարմնական մաքրությամբ հոգուն հաճոյանալ³: Եզրակացությունը մեկն է՝ մարմնի կամքը կատարելով անտեսել հոգևորը, որը և ընդունելի է համարում Ավետիքյանը⁴: Մեղքի դեմ պայքարի մարտավարությունը պահանջում է մտքի մասերից մեկի՝ հիշողության վերահսկողություն, այս դեպքում՝ «անգործություն»:

«ԹԵ՞ ԳԱՆԿԵՐԱԿԱԳՐԵԼԻՆ ԿԻՉԱՏԱԿԵԼԻ»

Բան ԻԸ (ա-11)

Ըստ Ա խմբագրության՝ մտքում այնպիսի մեղքեր են տպավորվում, որ չպիտի հիշել⁵: Նույնն են կրկնում Բ, Գ և Դ խմբագրությունները⁶:

ԱՄՓՈՓՈՒՄ

*ՆԱՐԵԿԻ ԽՈՐՀՐԴԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՑՈՒՈՒՄԸ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ
ԼՈՒՇՄՈՒՆՔԻ ՉՈՐՍ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ (ԲԱՆ Ա-ԲԱՆ ԻԸ)*

ՎԱՀՐԱՄ ԼԱԼԱՅԱՆ

Նարեկի միջնադարյան լուծմունքի չորս խմբագրություններում արտացոլված աղոթքի խորհրդապաշտության, սիրո, ապաշխարության խորհրդաբանության ընկալումները մեկնաբանների կողմից ճոխացվում են քրիստոնեական մարդաբանության նվաճումներով, որը խորապես հոգեհարազատ է Արևելաքրիստոնեական խորհրդագիտության Նարեկացիական ըմբռնողությանը, քանզի «Մատեն»-ն արդեն իսկ այդ ոգու հանճարեղ մի արտահայտությունն է: Ի վերջո, այս ամենը միտված է ապաշխարության ընթացքով առ Աստված սիրո հարաբերության վերականգնման և փրկության հույսը չմարելու հոգևոր գիտելիքների փոխանցման նպատակին:

1 Տե՛ս ՄՄ ձեռ. 5921, թ. 91բ:

2 Տե՛ս ՄՄ ձեռ. 623, թ. 84ա:

3 Տե՛ս Գրիգոր Նարեկացի, «Մատեն ողբերգութեան» (Բան ԻԵ-ի 10-րդ ծանոթագրությունը), էջ 1025:

4 Տե՛ս Նույն տեղում:

5 Տե՛ս ՄՄ ձեռ. 59, թ. 160բ:

6 Տե՛ս ՄՄ ձեռ. 5169, թ. 91բ, ՄՄ ձեռ. 623, թ. 84բ, ՄՄ ձեռ. 5921, թ. 96բ:

РЕЗЮМЕ

**МИСТИЧЕСКИЕ ВОСПРИЯТИЯ «КНИГИ СКОРБНЫХ ПЕСНОПЕНИЙ»
ГРИГОРА НАРЕКАЦИ В ЧЕТЫРЕХ ИЗДАНИЯХ СРЕДНЕВЕКОВОГО
КОММЕНТАРИЯ (ГЛ.1-ГЛ.28)**

ВАГРАМ ЛАЛАЯН

Ключевые слова - *Нарекаци, «Книга скорбных песнопений», мистика, четыре издания, толкование Нальяна, Св. Дух, Бог, покаяние, молитва, Христос, добродетель, грех, прости Боже, грешен.*

Мистические восприятие, отражённые в четырех изданиях средневекового комментария **Книги скорбных песнопений Григора Нарекаци**-мистика молитвы, мистика любви, мистика покаяния со стороны толкователей обогащаются достижением христианской антропологии, которая глубоко задушевна Нарекацийскому пониманию **Восточнохристианской Мистики**, поскольку Нарек уже гениальное проявление этой души. В конце концов, всё это устремлено к восстановлению в ходе покаяния любовного соотношения с Богом и цели передований духовных знаний непогодающей надежде спасения.

SUMMARY

**THE REFLECTION OF NAREK'S MYSTICAL PERCEPTION IN THE FOUR
EDITIONS OF THE MEDIEVAL INTERNAL PAPERS.**

VAHRAM LALAYAN

Key words: *Narekatsi «The Book of Lamentations», mysticism, four editions, Nalian's interpretation, ciod, virtue, guilt (sin), the Holy spirit, Jesus, Confusion, Prayer, «confess».*

The perceptions of the morality of the prayer, love, repentance, reflected in the four editions of Narek's Medieval Collection, are interpreted by interpreters as the achievement of Christian anthropology, which is deeply related to the Narekian Understanding of Oriental Christianity, for «Narek» is already a genius expression of that soul.

After all, all this is aimed at restoring the relationship of love to God through the process of repentance and the purpose of transmitting spiritual knowledge to the hope of salvation.

ԴԻՑԱԲԱՆԱԿԱՆ ԿԵՐՊԱՐՆԵՐՆ ՈՒ ՄՈՏԻՎՆԵՐԸ ՉԱՐԵՆՑԻ ՍՏԵՂՆԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՄԵԶ*

Բանալի բառեր՝ միֆոլոգիական մշակույթ, դիցաբանական խորհրդապատկերներ, չարի ու բարու երկվություն, աստվածներ, պաշտամունք, առասպելական անցյալ, քաղաքակրթություն, հնդեվրոպական նախահայրենիք, Հին Արևելք, ինքնագոհաբերում, մարմին ու հոգի, հավիտենություն:

Պատմական յուրաքանչյուր դարաշրջան առանձնանում է մարդկային գիտակցության որակական փոփոխություններով: Կրոնը և մշակույթը պատահական հարևաններ չեն: Նրանց մերձեցումն ու միաձուլումը տեսանելի է հենց մարդկության պատմության ակունքներում: Մարդկային գիտակցության ձևավորման մշակույթի վաղ շրջանն իր ձևով ու բովանդակությամբ միֆոլոգիական էր: Այդ մշակույթի ստեղծման հիմքում նույնացվում էին փաստն ու մտացածինը, զննումն ու պատրանքը, իրականն ու երևակայականը, իսկությունն ու լեգենդը, պրակտիկ գործողությունն ու միֆական արարողությունը: Մի խոսքով՝ միֆականությունը մարդկության մանկության աշխարհագրացողությունն է:

Չարենցի երկերում դիցաբանական խորհրդապատկերները բացահայտվում ու մեկնաբանվում են նորանոր տեսանկյուններից: Բանաստեղծն իրեն համարում է Արամազդ աստծու հովանու տակ ծնված: Հայոց Արամազդ աստվածը Պարսկաստանում հայտնի է Օրմուզդ, Որմըզդ անուններով, սակայն նա չի նույնացվում իրանական Ահուրա Մազդայի հետ, քանի որ վերջինիս հատուկ է նաև չարի ու բարու երկվությունը: Իսկ Արամազդը համարվում է «հայր դիցն ամենայնի», լույսի և բարու աստվածություն:

Ինքնապաշտպանության ու ինքնարդարացումի պահերին Չարենցը սիրում էր ասել. «Ինչ ներելի չէ ցուլին, ներելի է Արամազդին...»¹ կամ՝

* Հոդվածն ընդունվել է 23.05.2019 թ., երաշխավորվել է տպագրության բանասիրական գիտությունների թեկնածու Ժաննա Բեգլարյանի կողմից՝ 04.06.2019 թ., ստորագրվել է տպագրության՝ 06.06.2019 թ.:

1 Հուլիսի 27-ին Չարենցի մասին, Եր., «Սովետական գրող», 1986, էջ 79:

*Ինչ Չևսին Է վայել - անվայել է Յուլին: Այսպե՛ս Է
Մեզ ասում առաձն իմաստուն¹:*

Բանաստեղծի մեջբերած առածը Հին հունական առածներից է (լատ. Quod licet Jovi, non licet bovi), որը բառացիորեն թարգմանված է. «Ինչ որ արժե Յուպիտերին, չարժե եզին»:

Չարենցի վաղ շրջանի պոեզիայում կերպարներն իրենց մեջ ամփոփում են բանաստեղծի ներքին մի շարք պատկերացումներ՝ կապված նրա՝ համաշխարհային դիցաբանական հնագույն շերտերի նկատմամբ որոշակի հակվածության հետ: Տարածված սյուժե էր Շամիրամի թեման, որին իրենց ստեղծագործություններում անդրադարձել են նաև բանաստեղծներ Վ. Տերյանը, Վ. Թեքեյանը, Գ. Էմինը, Ն. Չարյանը... Հին Արևելքի միջնադարյան ամենատարածված կերպարներից մեկն է Շամիրամը, որ Հին Աշխարհի տարբեր միջերում հանդես է գալիս տարբեր անուններով՝ Ինաննա, Աստարտե, Կիբելա, Տանիթ, Վեներա, Իշտար, որոնց նույնացրել են հունական Ափրոդիտի հետ: Հայկական դիցաբանության մեջ նա հայտնի է որպես ասորական «Շամիրամ»: Խորենացին նրան անվանում է «վավաշոտ», «անառակ», «այրասիրտ»: Սրա հետ որոշակի աղերսներ ունենմայության և գեղեցկության աստվածուհու՝ Անահիտի և սիրո, երկնային լույսի աստվածուհու՝ Աստղիկի պաշտամունքները: Գրականագետ Ժ. Զալանթարյանը վիճելի է համարում Շամիրամի՝ հայկական հեթանոսական պանթեոնից չլինելու միտքը, «քանի որ Շամիրամի անունը սերտորեն կապված է մեր ազգային պատմության հետ, և նրա պաշտամունքի բազմաթիվ նյութական հետքեր՝ տեղանուններ, միսեյալային պահպանվել են»²:

«Լույսի» որոնումները անխուսափելիորեն Չարենցին պիտի հասցնեին «Հրո երկիր»: Կրակ-հուր՝ հեթանոսականություն, թե՞ աստվածային լույս... Հուրը հիմքն է գոյության: Այս շրջանում բանաստեղծն ամենևին էլ հակված չէր քրիստոնեական հոգեբանության: Նրա ըմբոստ հոգուն խորթ էին անտրտուն ինազանդությունը, հեզությունն ու խոնարհությունը: Սակայն Չարենցն ուներ ճշմարիտ մի հավատամք, դա նրա ինքնագոհաբերումն էր՝ ի սեր մարդու:

«Հրո երկիր» շարքում կինը շողարձակում ու ճաճանջում է բոլոր չորս կողմերով. «ցնորք, քույր, Շամիրամ ու Աստված» (I,

¹ Չարենց Եղիշե, Անտիպ և չհավաքված երկեր, Եր., ՀՍՍՀ ԳԱ, 1983, էջ 271:

² Զալանթարյան Ժ., Եղիշե Չարենց, (ուսումնասիրություններ) Եր., ԵՊՀ հրատ., 2012, էջ 22:

21): Անցյալի հուշերը փխրուն են ու սուտ, անգո է ամեն ինչ, բացի բանաստեղծի տրտմությունից, որ պիրկ լարի պես շարունակվում ու ձգվում է մինչև ներկա: Հեթանոսական շունչ կա հետևյալ տողերի մեջ.

Տո՛ւն էր, տոնակա՛ն

Չոհեքի հանդես -

Բայց ինչու՞ այնքան

Տրտում էի ես... (I, 22):

Շարքի առաջին բանաստեղծության մեջ («Երագում եմ այն երկիրը հեռավոր»), Չարենցը տենչում է տարփալից սեր, որ կարող է նրան բերել Շամիրամը:

Իրիկնային փողոցում ես տեսա նրան:

Նա - սևաչյա պչրուհի, գուցե - Շամիրամ:

Եվ ինձ տվեց հինավուրց հուռուքները նա.

Երկու համբույր - փողոցում, մայթերի վրա (I, 278):

Շամիրամի մասին հնագույն գրույցներում կա այն վկայությունը, որ դիցուհին՝ հուլունքների գորուքամբ ձեռք բերելով սիրեկաններ, հագեցնում էր իր կիրքը: Այստեղ արդեն Շամիրամի դերում հանդես է գալիս «սևաչյա պչրուհին», ով հուռուքների փոխարեն համբույրներով է գերում: Եվ չնայած ծեր է արդեն նրա մարմինն ու «մարած աչքերում էլ հրդեհ չկա», սակայն չեն փոխվել նրա երազն ու խոսքը:

Դիմելով Շամիրամին՝ բանաստեղծը ցավով խոստովանում է. «Ա՛յլ է աշխարհը հիմա, ա՛յլ է հիմա Նայիրին. // Ո՛չ մի արքա էլ չկա, որ չտրվի քո հրին» (I, 207):

Վեր է հառնված Արա Գեղեցիկի վեհ կերպարը՝ ի հակադրություն Նորոյա Արա-արքաների, որոնցով լիքն են «դոյակը», «թատրոնն ու կաֆեն»: Հայոց Արան «կմեռնի, որպես զոհ», սակայն երբեք պարտություն չի կրի: Եվ բանաստեղծը գալիս է իրատեսական մի եզրահանգման. «-Դա՛ն է խորհուրդը սիրո, շամբշոտաշու՛րթ Շամիրամ...»: Ենթատեքստում զգացվում է բանաստեղծի և աստվածուհու հոգեհարազատությունը: Այս խոսքերը կարծես ուղղված են հին ու բախտակից ծանոթներից կամ մտերիմներից մեկին: Երկուսն էլ անմնացորդ նվիրումով ձգտում են իրենց սիրելիներին, սակայն երկուսն էլ հաղիպում են զոհի. մեռնում է Արան, մեռնում է «տխրադալուկ աղջիկը»: Չարենցը հուսադրում է Շամիրամին՝ ինքն էլ լցված մեծ հույսով.

... Բայց կլինի մի գիշեր - ու հմայքով Նայիրյան

Կբարձրանա մշուշից մանկաժպիտ քո Արան (I, 206):

Արա Գեղեցիկը, որպես մեռնող ու հառնող աստվածություն, պաշտամունքի է արժանի հենց «իր պարտությամբ հզոր»։ Առասպելական այս դյուցազնը մարմնավորվել է ՀԿ(Բ)Կ Կենտրոնի առաջին քարտուղար Աղասի Խասնյանի կերպարում.

*Շամիրա՞մն էր արդյոք հրապուրել նրան,
Թե՞ Նվարդի սիրով ընդմիշտ գերված՝
Նա ընդունել էր մահ՝ իբրև հարված
Իր ոսոխի կողին, որպես հնում Արան...*¹

Ստացվում է այնպես, որ այս առասպելն ուղեկցել է Չարենցին մինչև կյանքի մայրամուտ՝ անմահացնելով «Հին պարտության լեզենդը»։

Ակադեմիկոս Թամանյանի անմահ հիշատակին նվիրված «Մահվան տեսիլ»-ում Չարենցի պատկերացրած Երևանը «արևային մի քաղաք» է, իսկ կենտրոնում «գրանիտյա մի բազին»։ Տեսարանը տանում է մեզ հեթանոսական Հայաստան։

Երկնային մարմիններն ու երևույթները մեծ չափով ազդել են հնագույն մարդու գիտակցության վրա, և աստղագիտական անվանումները շատ հաճախ արտացոլվել են տարբեր ազգերի մշակույթներում՝ կրոնական պատկերացումներից մինչև բանահյուսություն և արվեստի տարբեր տեսակներ։ Մարդկության գոյության վաղ ժամանակներից քաղաքակրթությունները հիմնել են կրոնական համոզմունքներ, որոնք զգալի չափով ներառում են Արևի նշանակությունը։ Արևի խորհրդանիշը կարելի է գտնել գրեթե բոլոր մշակույթներում։

Արևի երկրպագությունը հատկապես դրսևորվել է ացտեկների և մայաների քաղաքակրթություններում, իսկ ինկերի մշակույթն ամբողջությամբ կազմված է արևապաշտության տարրերից։

Վաղնջական ժամանակներից հնդեվրոպական նախահայրենիքում Հայկական լեռնաշխարհում ապրող ցեղի ուղղակի ժառանգորդը՝ հայ ժողովուրդը, հազարամյակներ շարունակ ապրել և երկրպագել է իր առաջին աստծուն՝ Արևի աստված Ար-Արային։

Արևը նախնադարյան մարդուն հետաքրքրել է նրանով, որ մեռնում ու հարություն է առնում։ Այս երևույթը փոխանցվել է Զրիստոնեությանը. չէ՞ որ Զրիստոսն էլ ծնվեց ու հարություն առավ։ Հայոց աշխարհում ևս մարդը նկատել է արևի մեռնելն ու հարություն առնելը, տարվա՝ ձմռանը մահանալն ու գար-

¹ Չարենց Եղիշե, Գիրք մնացորդաց. Անտիպ ժառանգություն, Եր., «Տիգրան Մեծ», 2017, էջ 156։

Նաևը հարություն առնելը: Անտարբեր չմնալով այս գաղափարին՝ հայն իր գլխավոր աստծուն օժտել է նաև մեռնող ու հառնող հատկությամբ: Ար աստվածը մեռնող և հառնող բնության աստվածն էր, որ հետագայում ձեռք է բերել նաև ռազմի և քաջության աստվածության նկարագիր:

1921 թվականին Լեյլիին գրած նամակներից մեկում Չարենցը Արևի նկատմամբ տածած իր անսահման սերն ու կարոտն արտահայտում էր՝ համեմատելով մանկության հետ. «Այս անգամ արդեն այնքան կարոտով եմ գրում «Սիրելի Լեյլի», որ կարծես գրում եմ Արևին, Աշխարհին ու Մարդուն - այսինքն Նրանց, որ սիրում եմ ամենից ավելի և սիրում եմ այնպես, ինչպես մանկությունն են սիրում» (VI, 377):

Հայտնի է, որ Վահագնը ծնվել է կարմիր եղեգնիկից: Ագնին, իբրև կայծակի, կրակի աստվածություն, ծնվում է բույսերից: Մ. Աբեղյանը բերում է Ռիգվեդայի հետևյալ բացատրությունը. «Բույսերը կանոնավոր երևացողին՝ Ագնիին իրենց մեջ են առել իբրև սաղմ. այս Ագնիին ծնեցին մայրական ջրերը, նմանապես ծնում են նրան ծառերն ու խոտերը՝ հավետ հղանալով»¹: Հեթանոսական գրեթե բոլոր կրոններում տարածված է կրակի պաշտամունքը, ինչը հաճախ զուգակցվում է նաև հրեշի հնագույն պաշտամունքային ակունքների հետ: Հնագույն առասպելախառն պատմություններից հայտնի հրեշները բերանից ծուխ ու կրակ էին ժայթքում.

*Մեկ էլ են տեսա, որ կրակը թեժ,
Որպես մի վիշապ, ագահ մի հրեշ,
Հնոցի նման բռնկվեց միգում... (II, 47):*

Գեղարվեստի հետ կապվածորև հարցի պարզաբանում մեզ տանում է դեպի հելլենիզմ, քանի որ հենց այստեղ է մարդն առաջին անգամ վերածվել կերպարի, դարձել գեղարվեստական պատկերման հիմնական առարկա: Ստեփան Կուրտիկյանի հետ ունեցած մի զրույցի ժամանակ Չարենցը խոստովանում է. «Հելլադայի աստվածների և դիցուհիների հետ միշտ էլ լավ հարաբերությունների մեջ եմ եղել: Եվ մինչև կյանքիս վերջն էլ չեմ փչացնի իմ լավ հարաբերությունները: Վկա Չևսի ու Լեթոյի իմաստուն որդին՝ Ապոլոնը»²: Հուշագիրը վկայում է, որ «Հին Հելլադայի քաղաքակրթությամբ, հույն փիլիսոփաներով, հատկապես Հերակլիտով ու Արիստոտելով ու, մանա-

1 Աբեղյան Մանուկ, Երկեր, հ. Ա, Եր. 1966, էջ 79:

2 Հուշեր եղիշե Չարենցի մասին, Եր., «Սովետական գրող», 1986, էջ 423:

վանդ, Կրետեով շատ էր տարվել Չարենցը, խոսում էր մասնագետի հմտությամբ ու պոետի ոգևորությամբ»¹:

Չարենցի ստեղծագործության մեջ տեղ են գտել նաև Հին Արևելքի (հին հնդկական, հին եգիպտական, ասորաբաբելական) աստվածները, իսկ ավելի ուշ շրջանի գործերում՝ ապոլոնյան միջերը: Ամեն ցանկալին ու ամեն լուսավորը բանաստեղծը կապում է մահվան առասպելի հետ: Երևում են հաշտության ուղիները, ու մահը դառնում է մերձավոր, մտերիմ: Իր ապրած իրականության հետ անհամատեղելի է սիրո երազը, չի հարմարվում, ձգտում է ազատության, գոյության, մարմնավորում: Երկրային իրականության մեջ կործանվում են բոլոր երազներն ու առասպելները, և բանաստեղծը կառուցում է իր աշխարհը, իր նոր առասպելը Ամենտի եզերքում, Ամենտի երկրում:

*Բայց շուրջս թող որքան կուգե աշխարհը այս խնդա, ցնդի -
Ես - հաշմանդամ ու խելագար ու հավիտյա՜ն վտարանդի՝
Դեպի երկի՜նք պիտի գնամ, դեպի եզերքը Ամենտի -
Իմ բա՛րձր, հին ու աստղային երազների ճանապարհով...*

(I, 298):

«Եզերքը Ափդ» բալլադում Չարենցի գրչի տակ վերաիմաստավորվում է հունական դիցաբանությունից վերցված մի սյուժե. մեռյալների հոգին նավավար Քարոնը Ստիքս գետի վրայով հասցնում է Եզերքը Ափդ, որի մուտքի պահապան Կերբեր շունը ներս է թողնում հոգիները և հսկում, որ ոչ ոք դուրս չգա այնտեղից: Այդ մեռյալները չէ, որ տեղափոխվում են անդրշիրիմյան աշխարհ, այլ՝ մարդկային երազանքները: Այսինքն՝ կենդանի մարդն իսկ մեռյալ է, քայլող դիակ, եթե նրա երազանքները հոշոտվել են ու նետվել Ստիքսը:

*Ու այն եզերքի սևահեր արքան -
Անկուշտ, անոթի,-
Հսկում է, որ ջինջ երազները գան -
Բռնի, հոշոտի,-
Ու երազների դիերն անկենդան
Ստիքսը նետի (I, 56):*

Իսկ որտե՞ղ է Ափդ եզերքը: Չարենցը հստակ մատնանշում է դրա տեղը.

*Հոգու հեռավոր դարպասից անդին,
Ուր մշուշ է, մեզ,-*

¹ Նույն տեղում, էջ 429:

*Ուր թանձր միգում վխտում են մթին
Կասկածները նենգ...
Ուր չի թափանցում նայվածքը երբեք -
Խոհը միամիտ...(I, 56):*

Եթե Ամենտի եզերքում բանաստեղծը փայփայում է երագին հասնելու հույսը, ապա Աիդի եզերքում բաժանվում են սրտերը: Նուրբ ու զգայուն հոգուն համակում է մեղամաղձոտ տխրությունը: Բանաստեղծը մեռյալների հոգիները փոխադրողի՝ Քարոնի կերպարին անդրադարձել է նաև ավելի ուշ՝ 1933 թվականին գրած «Մահվան տեսիլ»-ում:

*Եվ Մտածումս ահա, որպես մշտնջական ու կորովի Քարոն,
Նավարկում է դեպի Անցյալը...(IV, 485):*

«Լիրիկական բալլադներ» շարքն ընդգրկում է «Մարի, Եգ թռչուն...» ստեղծագործությունը, որը կարծես ամփոփում է շարքի ողջ ասելիքը: Երկրից համբառնած հոգին, հայտնվելով երագների սառն աշխարհում, կսկծում ու մորմոքում է, ետդարձի ուղիներ որոնում: Վերհուշ են դարձել «երկրային բերրանքը», «գոհարը շողի», «հովը դաշտերի»: Ետ է տարվում «հավերժի» խաբուսիկ քողը, և քնարական հերոսը տեսնում է նրա կործանող ու ավերիչ եությունը: «Աշխարհը մեռավ հավերժի առաջ»:

Սերը վերածվել է մահվան երգի ու բանտվել մշտագո գիշերային լռության մեջ, իսկ նա, ով հայտնվել է երկնի անհունում, մի բուռ երկիր է տեսնում լիզեր, համբուրեր: Հիասթափությունն ու սուտը ստիպում են էլ ավելի սիրել երկրայինը: Եվ ուղերձը վերևից հնչում է այլ իմաստով:

*Մի՛ նայիր դու վեր. թող կյանքդ լինի
Ոսկի մի դողանք. վա՛ռ բախտի հնչյուն,
Թող կյանքդ լինի հուրհորող գինի,
Մարի, ի՛մ Մարի, Մարի, Է՛գ թռչուն... (I, 59):*

Հնադարյան ժողովուրդների դիցաբանության մեջ կան հերոսներ, ովքեր այցելել են «այն աշխարհը»։ Հոմերոսի «Ոդիսական»-ում՝ Ուլիսը, Վիրգիլիոսի «Էնեական»-ում՝ Էնեասը, իսկ Պլատոնն իր «Հանրապետության» 10-րդ գրքում մի ավանդություն է պատմում պատերազմի դաշտում ընկած հայ Էրի մասին, ում հոգին գնում է հանդերձյալ աշխարհ և տասը օր հետո վերադառնում երկիր, միանում մարմնին և պատմում իր տեսածները: Ժամանակի ընթացքում ավելի է շեշտվել դժոխքի ու դրախտի, հոգիների տանջանքի և վայելքի հակադրությունը:

«Մարի՛, եգ թռչուն»-ի երկվությունը «Վերադարձ»-ում լուծվում է հոգուտ երկրային կյանքի: Չարենցը գիտեր, որ մարդու հոգին ապրել է արևի վրա՝ որպես «վառման երազ», որպես Ռա աստված: Վերջինս հին եգիպտական դիցաբանության մեջ համարվում էր արևի աստվածը: Հանդես էր գալիս նաև Ռա անվանումով, որ պատկերվել է արևի սկավառակով պսակված բազեի կամ կատվի գլխով մարդու տեսքով: Ըստ Լ. Զինգի և Վ. Ֆիլդենսի՝ Ռա անվանումն ու աստծո պաշտամունքը Եգիպտոս մուտք է գործել Ասորեստանից: Ուշագրավ է, որ հին չինարենում Ռի բառը կազմված է շրջանից և ներսում՝ կետից, որը նշանակում է «արև» (աստղագիտության մեջ ևս այդ նշանն օգտագործվում է որպես Արեգակի նշան): Ենթադրվում է, որ անգլերեն ray (ռեյ)բառը, որը նշանակում է ճառագայթ, առաջացել է եգիպտական Ռա արևի աստծո անվանումից: Հիբրավի, բացի դրական իմաստից, **Ռա** բառն ունի նաև բացասական նշանակություն, ինչպես, օրինակ, արաբական Հադրամուտ բարբառում այն ունի մահ և չար իմաստները. այստեղ խորհրդանշական կապը ևս ենթադրելի է, քանի որ Արաբստանում միշտ շոգ է եղել, մարդիկ, գտնվելով անապատներում առանց ջրի, անիծել են արևն ու շոգը:

Հին մշակույթներում Արևը համարվել է Տիեզերքի աչք (Արեգակ): Ինչպես Աճառյանն է նշում իր Հայերենի արմատական բառարանում, նման մոտեցում միայն հայերը չէ, որ ունեին, «նոյնն ունեին նաև ուրիշ ազգեր. այսպես՝ Պարսիկները համարում էին Արամազդի աչքը. Եգիպտացիք՝ Տիմիուրդօսին աչ աչքը. Յոյները՝ Դիոսի աչքը. հին Գերմանները՝ Վուոդանի աչքը...»¹: Նույնիսկ Աստվածաշնչում է հիշատակվում եգիպտական Արևի աստծո մասին. «Եւ նա պիտի կոտրատէ Եգիպտոսում եղող Բեթսամիւսի (Արեգակի տուն) արծանները, եւ Եգիպտոսի աստուածների տները կրակով պիտի այրէ» (Երեմիա, ԽԳ-13):

Չարենցը գնում է ինքնայրումի, ինքնագոհաբերման: Չէ՞ որ վերադարձ չկա Նիրվանայի աշխարհից: Ի դեպ, Նիրվանան հայտնի է բուդդայական կրոնից, ինչին լավ ծանոթ էր բանաստեղծը. «Հնդկաստանի մասին շատ էր կարդում, խոսում էր Գանդիի մասին, անդրադառնում էր բուդդիզմին, իոզներին, խոսում էր Նրանց ուսմունքից: Հաճախ էլ նայում էր Բուդդայի արձանիկին, որ դրված էր պահարանի գլխին, և կարծես մո-

¹ Աճառյան Հր., Հայերեն արմատական բառարան, հ. Ա, Եր., Երևանի համալսարանի հրատ., 1971, էջ 312-313:

ռացած, թե մարդ կա շուրջը՝ խոսում էր վերացած, հոգով ու մտքով տեղափոխված Գանգեսի ափերը»¹, - այսպես է ներկայացնում բանաստեղծին՝ Նրա՝ արվեստի նրբությունների մեջ թափանցելու կարողությամբ զարմացած Բաժբեուկ-Մելիքովը: Ահա թե ինչպես ծնվեց «Մակագրություն իմ պորտրետի վրա» չարենցյան եռատողը.

*Դու դեռ անփորձ ես ոգով, դու դեռ թույլ ես, Չարենց,
Վարժի՛ր ոգիդ, եղիր մոգ, յոգ ու արեգ -
Ինչպես Գանդին Մահաթմա - հնդիկն հանճարեղ...²*

Չարենցն ինքն իրեն չի պատկանում, և հենց դրանից էլ վախենում է: Վախենում է իր հոգով՝ համար: Նաուզում է աշխարհն զգալ «որպես քաղցր դող», նա չի կամենում իրեն բեռ անել «հոգու դիակը», նա փառաբանում է Արևը, Ագնին, Ռան և էգ թռչունի «հուր մարմնի հմայքը դյուրբող»: Հրաժարվելով հավիտենականից՝ նա տենչում է

*...Վառվել ու մարե՛լ աշխարհի վրա՝
Չոհի՛ պես արդար, ինքնաամոքիչ-
Ու մահից հետո չլինի՛ ոչինչ... (I, 61):*

Ե՛վ որպես Ինդրա, Ագնի, Արև, և՛ որպես աստվածների խմիչք, և՛ որպես առանձին աստվածություն՝ վեհագույն աստվածներից մեկը (Ավեսթայի մեջ՝ Հաոմա), «Ռիգվեդայում» հանդես է գալիս Սոման: Ագնիի երկու հիմնական ֆունկցիաներն են մահը և հարությունը: Սոման անհաղթ ուժի, ինչպես նաև բոլոր հիվանդությունները բուժող աստվածն է, ցանկությունների իրականացման պարզևատուն: Հետագայում այս անունով կնքեցին լուսնյակը, ապա նույնացվեցին Սոմա բույսն ու լուսինը: Չարենցի մոտ Սոման «երկնային քույր» է, «Ռիգվեդայում» նշված չէ Նրա սեռը, սակայն «միֆի» հետագա զարգացման ընթացքում նա նույնանում է «լուսնի» հետ, ամուսնանում երկնականմարի աստվածության՝ Դակշայի աղջիկների հետ՝ ձեռք բերելով արական սեռ:

Բանաստեղծը Սոմայի հետ է կապում և՛ մահը, և՛ երկունքը.

*Սո՛մա, գինիդ, որով հարբել,
Խենթ ենք հիմա -
Դա՛ր ու դարե՛ր տվել է մեզ
Երկունք ու մահ.*

¹ Հիշողություններ Եղիշե Չարենցի մասին, Եր., Հայպետհրատ, 1961, էջ 368:

² Չարենց Եղիշե, Անտիպ և չհավաքված երկեր, Եր., ՀՍՍՀ ԳԱ, 1983, էջ 106:

*Մահ է տվել ու գերեզման,
Հող ու անհուն –
Որ դուրս թռչի, ազատ վառվի –
Գերեզմանում... (II, 75):*

Հին փիլիսոփաներն ասում էին, որ մարդը հենց հոգին է, որ փակված է մարմնում և ազատություն է գտնում միայն հետո՝ դուրս գալով մարմնից: Հայտնի է, որ Սոմայի դիցաբանական կերպարը, ինչպես նաև բույսի ու ըմպելիքի պաշտամունքն ունի հնդիրանական ծագում: Մեջբերենք «սոմա» բառի ստուգաբանությունն ըստ Պլատոնի և փորձենք այն հարաբերել չարենցյան «սոմայի» հետ: «Սոմա» բառն առաջացել է սեմագերեզման կամ գերեզմանաքար բառից և ցույց է տալիս, որ մարմինը հոգու զնդանն է, մարմնի մահով հոգին ազատություն է գտնում: Եվ քանի որ մարմինը դիտարկվում էր որպես հոգու բանտ կամ գերեզման, հույները, որ ուշադրությամբ լսում էին Պողոսի ճառը Արիսպագոսում, «Երբոր լսեցին մեռելների յարութիւնը, ոմանք ծաղր էին անում» (Գործք Առաքելոց, ԺԷ-32): Ծաղրի պատճառն այն էր, որ հարությունը ամենափիմար բանն էր հույների համար, քանի որ մարդը, ազատվելով իր բանտից, չի վերադառնա այդ բանտը:

«Աշխարհասասան հրդեհներում», որպես «սրբազան զոհ», վառվում է արյունը մարդկային: Օդը կարծես այրված լիներ: Գեհենի լավայի համուժիտ կար: Աղաղակում էին բոցկլտացող կրակները: Զարենցի պոեզիայում «կրակի» միջոց կապված է զոհաբերության հետ.

*Ու արյունը մեր խառնըված հրին,
Վառվում է հրում՝ զոհ է սրբազան... (II, 78):*

Բանաստեղծն ինքնագոհաբերմամբ գնում է դեպի հավիտենություն:

Պատահական չէ Զարենցը ընտրել չափածոյի կառուցման այնպիսի եղանակներ, որոնք տիրապետող էին հունական և հռոմեական գրականության մեջ (դիստիքոսներ, մոնոստիքոսներ...): Զարենցը քաջածանոթ էր Դելփյան ակունքներին, Պանի կախարդանքին: Նա իր հիացմունքն է արտահայտում Շնորհալու հանդեպ՝ նրա լեզուն անվանելով դելֆյան ջինք լեզու:

Այսպիսով, դիցաբանական կերպարների և մոտիվների առկայությունը Զարենցի ստեղծագործության մեջ, ինչպես նաև՝ շարունակաբար՝ մերօրյա արվեստում բացատրվում է

ներանով, որ ներկան առասպելական անցյալի նորագյուտ բացահայտումներից մեկն է, և առասպելական անցյալը ոչ թե սոսկ անցած-գնացած կամ անցողիկ մի բան է, այլ՝ համաժամանակյա և մշտական մի գործընթաց:

ԱՍՓՈՓՈՒՄ

**ԴԻՑԱԲԱՆԱԿԱՆ ԿԵՐՊԱՐՆԵՐՆ ՈՒ ՄՈՏԻՎՆԵՐԸ ՉԱՐԵՆՑԻ
ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՄԵՋ
ԱՆԻ ՇԻՐԻՆՅԱՆ**

Հոդվածում անդրադարձ է կատարվում Չարենցի ստեղծագործության նախաքրիստոնեական սյուժեներին ու մոտիվներին, կերպարներին ու խորհրդանիշներին, ավանդական արժեքներին (բարություն, բարեգթություն, ներողամտություն, սեր՝ մերձավորի հանդեպ...), որոնք բանաստեղծի համար մնում են անխախտ ու հաստատուն: Քննվում է Չարենցի մարդաբանական հայեցակարգն ու աստվածապաշտությունը, որ բնութագրական է հենց իր ապրած ժամանակահատվածի կրոնա-փիլիսոփայական ու գեղագիտական տեսակետների համար:

Վերադարձը հեթանոս աստվածներին իրականում ոչ թե վերադարձ էր հնին, այլ անհրաժեշտություն էր՝ ճիշտ զգալու ներկան և վստահ քայլելու դեպի ապագան: Դիցաբանական առասպելներն ու տարրերը բանաստեղծին գրավել են իրենց պայծառագեղությամբ, նրբին մշակվածությամբ և հուզականությամբ: Խորամուխ լինելով ակունքների մեջ՝ Չարենցը որոնեց ազգային կեցության պատմական հենարանները և գտավ ներկան անցյալին միացնող կապերը:

РЕЗЮМЕ

**МИФОЛОГИЧЕСКИЕ ОБРАЗЫ И МОТИВЫ
В ПРОИЗВЕДЕНИЯХ ЧАРЕНЦА
ШИРИНЯН АНИ**

Ключевые слова: Ключевые слова: мифологическая культура, мифологические образы, двойственность добра и зла, боги, культ, мифологическое прошлое, политическое образование, индоевропейская родина, старый Восток, самопожертвование, тело и душа, вечность.

В статье затрагиваются христианские сюжеты и мотивы произведения Чаренца, образы и символы, традиционные ценности

(добродушие, снисхождение, любовь к близкому), которые для автора остаются утверждёнными. Исследуются антропологические взгляды боготворения, которые характерны его прожитому периоду для религиозно-философской и эстетической точки зрения.

Возвращение к античным богам на самом деле – не возвращение к старому, а необходимость правильно чувствовать настоящее и уверенно шагать к будущему. Мифологические образы и элементы заинтересовали поэта красотой, утончённостью и волнением. Вникаю в суть истоков, Чаренц искал историческую опору национального бытия и нашёл связи соединения прошлого и настоящего.

SUMMARY

ATHEISTIC CHARACTERS AND MOTIVES IN THE WORK OF CHARENTS ANI SHIRINYAN

Key words: Mythological culture, mythological images, evil and goodness duality, Gods, worship, fabulous past, civilization, Indo-European homeland, Old East, self-sacrifice, body and soul, eternity.

The article touches upon Pre-Christian topics and motives, characters and symbols, traditional values (kindness, charity, forgiveness, love towards relative...) which are immovable and stable for the poet.

Charents' anthropological concept and piety are examined which is the characteristic of the religious-philosophical and aesthetic viewpoints of his life time.

The return to the pagan gods was, in fact, not a return to the old, but a necessity, to feel the present right and to walk safely into the future. Mythological myths and elements have attracted the poet with their delicacy, delicate design and emotionality. Being profound to the roots, Charents sought historic foundations of national existence and found relations which connect the present to the past.

ՄԱՐԱՏ ՅԱՎՐՈՒՄՅԱՆ

ՀԱՅԵՐԵՆԻ ԲԵՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՅՆԱՑՈՒՄԸ ՏԻՊԱԲԱՆԱԿԱՆ ՄՈՏԵՑՄԱՄԲ. ՍԾ ԾԱՌԱԴԱՐԱՆՆԵՐԻ ՓՈՐՁԸ*

Բանալի բառեր՝ բնական լեզվի մշակում, Համընդհանուր կախվածություններ, ծառադարան, շարահյուսական կախումների ծառեր, կորպուս, բառանջատում, քերականական հատկանիշ, ծանոթագրում, պիտակավորում, տեքստի մեքենական մշակում:

ՍՈՒՏՔ

Բնական լեզուների մշակման հետազոտական ուղղությունը վերջին քսան տարում մեծ առաջընթաց է արձանագրել շարահյուսորեն ծանոթագրված կորպուսների շնորհիվ, որոնք անփոխարինելի են լեզվի կամ լեզվի մի առանձին շրջանի վիճակագրական վերլուծության ու մեքենական ուսուցման ալգորիթմների միջոցով լեզվաբանական հետազոտությունների ավտոմատացման համար: Այսպիսի կորպուսներում քերականությունների ձևայնացման ու տվյալների ծանոթագրման համակարգերը շատ հաճախ տարբերվում են միմյանցից, հիմնականում տվյալ լեզվի նկարագրության քերականական որոշակի ավանդույթի կամ էլ հետազոտողների շրջանում ընդունված տեսական այս կամ այն մոտեցման պատճառով: Այս հանգամանքը դժվարացնում է տեքստերի գոյություն ունեցող մեքենական մշակման գործիքների կիրառումը նոր լեզուների մեքենական վերլուծության համար և սահմանափակում արդյունքների համադրելիությունը¹: Խնդիրը հաղթահարելու փորձերն առավելապես ուղղվել են ծանոթագրման միասնական համակարգի միջոցով լեզվաբանական համադրելի տվյալներ ապահովելուն² կամ այդպիսիք ծանոթագրման անհրաժեշտ

* Հոդվածն ընդունվել է 31.05.2019 թ., երաշխավորվել է տպագրության բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ Սիլվա Մինասյանի կողմից՝ 04.06.2019 թ., ստորագրվել է տպագրության՝ 07.06.2019 թ.:

1 St'u Joakim Nivre and Be'ata Megyesi. 2007. Bootstrapping a Swedish treebank using cross-corpus harmonization and annotation projection. In *Proceedings of the 6th Workshop on Treebanks and Linguistic Theories (TLT)*, էջ 97-102.

2 St'u Daniel Zeman, David Mareček, Martin Popel, Loganathan Ramasamy,

համակարգի փոխարկելուն¹, կամ էլ երկուսը միասին²: Լեզվաբանական տվյալների համադրելիության սկզբունքն իր հիմքում ունի «Universal Dependencies (UD) - Համընդհանուր կախվածություններ» նախագիծը, որի շրջանակում մշակվել է արդի գրական արևելահայերեն նախադասությունների շարահյուսական կախումների ծառերի բանկ («Հայերենի ծառադարան») և ձևայնացվել հայերենի քերականությունը:

«ՀԱՅԵՐԵՆԻ ԾԱՌԱԴԱՐԱՆ» ՆԱԽԱԳԾԻ ՄԱՍԻՆ

«Հայերենի ծառադարան» նախագիծը³ մաս է կազմում Universal Dependencies (UD) - «Համընդհանուր կախվածություններ» հարթակի, որը, տիպաբանական և կիրառական հետազոտական նպատակներով, քերականությունների ձևայնացման և տեքստերի լեզվաբանական ծանոթագրման միասնական մեթոդ է առաջարկում բնական լեզուների մեքենական մշակման համար⁴: UD համակարգը կախվածությունների բացահայտման մեթոդով շարահյուսական ամբողջական կառույցների (որպես կանոն՝ նախադասությունների) վերլուծություն է: UD-ն հիմնվում է բայ-ստորոգյալի գերադասության և նախադասության բայակենտրոն կառուցվածքի մասին պատ-

Jan Štěpanek, Zdeněk Žabokrtský, and Jan Hajič. 2012. HamleDT: To parse or not to parse? In *Proceedings of the 8th International Conference on Language Resources and Evaluation (LREC)*, էջ 2735-2741:

1 St'yan Ryan McDonald, Joakim Nivre, Yvonne Quirmbach-Brundage, Yoav Goldberg, Dipanjan Das, Kuzman Ganchev, Keith Hall, Slav Petrov, Hao Zhang, Oscar Täckström, Claudia Bedini, Nuria Bertomeu Castello, and Jungmee Lee. 2013. Universal dependency annotation for multilingual parsing. In *Proceedings of the 51st Annual Meeting of the Association for Computational Linguistics (Volume 2: Short Papers)*, էջ 92-97:

2 St'yan Reut Tsarfaty. 2013. A unified morpho-syntactic scheme of Stanford dependencies. In *Proceedings of the 51st Annual Meeting of the Association for Computational Linguistics (Volume 2: Short Papers)*, էջ 578-584:

3 Նախագիծն իրականացվել է ՀՀ «Գիտության և կրթության հայկական ազգային հիմնադրամի» ([ԳԿՀԱՀ, ANSEE](http://www.giseg.am)) Lingu-4595 և Lingu-5008, ինչպես նաև [ISC Research Grant](http://www.isc-research-grant.am) դրամաշնորհային ծրագրերի շրջանակում, YerevaNN (<https://yerevann.com/>) հետազոտական լաբորատորիայի հետ համագործակցությամբ և ֆ.մ.գ.թ. Հրատտ Խաչատրյանի համադրեկավարությամբ: Հայերենի ձևային քերականությունը մշակվել է ԵՊՀ արաբագիտության ամբիոնի աշխատակից Աննա Դանիելյանի համահեղինակությամբ: Ծրագրի մասին հանգամանորեն տե՛ս <https://armtreebank.yerevann.com/>: Համացանցային հղումների հասանելիությունը ստուգվել է 16.05.2019թ.:

4 St'yan Joakim Nivre, Marie-Catherine de Marneffe, Filip Ginter, Yoav Goldberg, Jan Hajič, Christopher D. Manning, Ryan McDonald, Slav Petrov, Sampo Pyysalo, Natalia Silveira, Reut Tsarfaty, Daniel Zeman. 2016. Universal Dependencies v1: A Multilingual Treebank Collection. In *Proceedings of LREC*. Նախագծի կայքը՝ <https://universaldependencies.org>:

կերացումների վրա: Նախադասությունների իմաստաշարահյուսական կառուցվածքի վերլուծության ընթացքում որպես «շարահյուսական նվազագույն միավոր» նախադասության մեջ իրար անմիջականորեն ստորադրվում են բառերը՝ իբրև լրացական հարաբերություններով միմյանց կապակցված անջատ միավորներ, և քերականական կախվածություններն արտապատկերվում են շրջված ծառի տեսքով՝ որպես նախադասության շարահյուսական կախումների ծառ:

Նախագիծը 2019 թ. մայիսի դրությամբ ներառում է շարահյուսական ծառերի նույն սկզբունքով ծանոթագրված 146 բանկ¹ աշխարհի 83 լեզուներով²:

UD Նախագծի շրջանակում 2017-ից կառուցվում է արդի գրական արևելահայերեն նախադասությունների շարահյուսական կախումների ծառերի UD_Armenian-ArmTDP բանկը (treebank, ծառադարան), որի 2.4 տարբերակը պարունակում է 1742 նախադասություն և 36.368 բառանիշ (թողարկվել է 2019թ. մայիսին): Այս ընթացքում մշակվել է հայերենի ձևային քերականություն³, որը համարվել է նմուշային և ներառվել UD-ի տիպային քերականությունների շարքում:

Հայերենի ծառադարանի տեքստերը վերցված են հայ գեղարվեստական գրականությունից (բացառապես արձակ) և էլեկտրոնային մամուլից (հարցազրույց, մեկնաբանություն, հաղորդագրություն, լուր): Կան նաև իրավական տեքստեր (կառավարության որոշումներ, օրինագծեր, դատական վճիռներ) և դասագրքային օրինակներ: Ամենավաղ թվագրվող նմուշը 1976 թվականից է:

Ծանոթագրումը կատարվում է հետևյալ կերպ. «Հայերենի ծառադարան» կայքում տեքստի մուտքագրումից ու մատենագիտական նկարագրությունից հետո հատույթավորման կամ բառանջատման մեքենական մոդուլի միջոցով տեքստը տրոհվում (tokenization) է պարբերությունների, նախադասությունների և բառանիշերի (token)⁴: Այս փուլից հետո, կրկին

1 Տեսական առումով բանկը դիտարկվում է իբրև լեզվաբանական տիպիկների համախումբ:

2 UD ծառադարանները հասանելի են <http://hdl.handle.net/11234/1-2988> կայքում:

3 Հայերենի քերականության ձևայնացման սկզբունքները համառոտագրված են <http://universaldependencies.org/hy> կայքէջում: Ամբողջական նկարագրությունները առանձին հղումների տեսքով հասանելի են նույն էջից:

4 Բառանջատման մեքենական այս մոդուլը, որը հիմնվում է հայերեն տեքստերի հայտույթավորման կանոնների վրա, հասանելի է <https://>

մեքենական մոդուլի միջոցով, հիմնվելով նախապես մշակված բառարանների վրա, կատարվում է բառանիշերի ձևաբանական վերլուծություն: Բառանիշերից յուրաքանչյուրին վերագրվում է համապատասխան բառույթը (lemmatization)՝ հիմնվելով իմաստային և քերականական հատկանիշների վրա, ապա բառանիշերը խմբավորվում են հատուկ դասերում, այլ կերպ ասած՝ սահմանվում է նրանց խոսքիմասային արժեքը (POS-tagging): Հատուկ պիտակների միջոցով թվարկվում են բառանիշերի իմաստային-քերականական խմբերը և քերականական կարգերը, եթե այդպիսիք առկա են (ձևաբանական պիտակավորում): Այս ծանոթագրողները ձեռքով ստուգվում և անհրաժեշտության դեպքում փոխվում են բառանիշերի սահմանները, և եթե նոր բառանիշը չի նույնականացվում բառարանում (այսինքն՝ բառամթերքը նոր է), ապա ձեռքով ավելացվում է համապատասխան բառույթը և ձևաբանորեն պիտակավորվում: Ձևային նկարագրության վերջին փուլում նախադասություն կազմող բառանիշերը գնահատվում են որպես շարահյուսական բառեր, և վեր են հանվում վերջիններիս միջև անմիջական կախումները: Ծանոթագրողները բառանիշերի միջև ձեռքով նշում են շարահյուսական կապերը, և կախումների ծառը պահվում է UD ծառերի բանկերին հարմարեցված CoNLL-U տիպի նիշքում¹, որն էլ բուն ծառադարանն է:

ՁԵՎԱԲԱՆԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

UD-ում ձևաբանական նկարագրությունը ձևակազմական կամ ձևույթային ավանդական վերլուծությունն չէ, այն ամբողջական բառանիշի համար քերականական հատկանիշների թվարկում է վերջինիս վերագրվող պիտակների տեսքով: Քերականական կարգերն ու հատկանիշներն արտածվում են բառաձևերից (ըստ կազմության) և քերականական կախվածություններից (ըստ գործառության) ու ներկայացվում երեք մակարդակում.

- բառույթի մակարդակ (ներկայացնում է բառիմաստը),
- խոսքիմասային պատկանելության մակարդակ (ներ-

armtreebank.yerevan.com/tokenization/process/ հասցեով:

1 Նիշքի կառուցվածքի մասին տե՛ս <http://universaldependencies.org/format.html>: Հայերենի ծառադարանի նիշքում ծախից աջ տրվում է նախադասության մեջ բառանիշի նույնական համարը, ապա բառանիշը, բառույթը, խոսքի մասը, քերականական հատկանիշները, շարահյուսական կապը, կախումը նախադասության մյուս բառանիշից, հավելյալ նշումներ/տառադարձում:

կայացնում է քերականական արժեք ունեցող վերացարկված իմաստը, որը զուգորդվում է տվյալ բառի հետ),

- քերականական բնութագրերի մակարդակ (ներառում է տվյալ բառին բնորոշ իմաստային-քերականական կամ զուտ քերականական հատկանիշները):

UD նախագծում բառանիշերը խմբավորում են վիճակագրական մոտեցմամբ ընդհանրական՝ բաց (*ինքնուրույն կամ լիիմաստ*) և փակ (*ծառայողական*), ու մնացորդային սկզբունքով՝ այլ դասերում: Առանձնացվում է 17 խոսքի մաս (տե՛ս Աղ. 1), որոնք Google universal part-of-speech tags-ի (UGT)¹ վերանայված տարբերակներն են: Խոսքի մասերի դասակարգման հիմքում իմաստագործառական սկզբունքն է, վիճելի դեպքերում առաջնություն է տրվում գործառական (շարահյուսական) սկզբունքին:

«Հայերենի ծառադարանում» կիրառվում են բոլոր 17 խոսքի մասերը, որոնք պարտադիր են UD նախագծում ներառված ծառադարանների համար: Համեմատությամբ ավանդական հայ քերականությունների՝ առանձին խոսքի մաս է հատուկ անունը (PROPN), տարանջատված են համադասական (CCONJ) և ստորադասական (SCONJ) շաղկապները, դերանվանական որոշիչները (DET) և առարկայանիշ (PRON) դերանունները, առանձնացվում է նաև օժանդակ բայը (AUX): Դերանունները հատկանշային-մակբայական կիրառության դեպքում մակբայներ են: Հարակատար դերբայը երբեմն դիտարկվում է ածական: Ածականներ են բոլոր դասական թվականները (գործառական սկզբունքի հիմքով): Տեքստի մեքենական հատույթավորման և ծանոթագրման առանձնահատկություններից ելնելով՝ առանձին խոսքի մասեր են տվյալ լեզվի կետադրական նշանները (PUNCT), տվյալ լեզվի համար կետադրական չհամարվող այլ գրանշանները, պատկերանշանները, հղումները, էլ. փոստի հասցեները (SYM), նաև տառային, տառաթվանշային կամ գրանշանային շարքերը, որոնք հնարավոր չէ խմբավորել խոսքիմասային մյուս դասերում (X)²: Նման մոտեցումը թույլ է տալիս բոլոր բառանիշերի համար ունենալ խոսքիմասային պատկանելության պիտակ:

1 St'v Slav Petrov, Dipanjan Das, and Ryan McDonald. A universal POS tagset. In *Proceedings of LREC*. 2012.

2 UD նախագծում հայերենի խոսքի մասերի սահմանման առանձնահատկությունները տե՛ս <http://universaldependencies.org/hy/pos/index.html>:

ԲԱՑ ԴԱՍԻ ՄԻԱՎՈՐՆԵՐ	ՓԱԿ ԴԱՍԻ ՄԻԱՎՈՐՆԵՐ	ԱՅԼ ՄԻԱՎՈՐՆԵՐ
ADJ - Ածական (Adjective)	ADP - Կապ (Adposition)	PUNCT - Կետադրույթ- յուն (Punctuation)
ADV - Մակբայ (Adverb)	AUX - Օժանդակ բայ (Auxiliary)	
INTJ - Ձայնարկ- ություն (Interjection)	CCONJ - Համադասական շաղկապ (Coordinating conju- nction)	SYM - Նիշեր (Symbol)
	DET - Դերանվանական որոշիչ (Determiner)	X - Այլ (Other)
NOUN - Գոյական (Noun)	NUM - Թվական (Numeral)	
PROPN - Հատուկ անուն (Proper noun)	PART - Վերաբերական (P- article)	
	PRON - Առարկա- յանիչ դերանուն (Pronoun)	
VERB - Բայ (Verb)	SCONJ - Ստորադա- սական շաղկապ (Subordinating co- njunction)	

Աղ. 1. խոսքի մասերը և դրանց պիտակավորումը UD նախագծում:

Համակարգը, բացի խոսքիմասային պիտակավորումից, յուրաքանչյուր բառանիշի վերագրում է քերականական բնութագրեր ըստ տվյալ խոսքի մասին բնորոշ քերականական կարգերի (հոլով, դեմք, թիվ, եղանակ և այլն): UD-ում առանձնացվում է 17 համընդհանուր այդպիսի կարգ՝ բայական և անվանական: «Հայերենի ծառադարանում» օգտագործվում է դրանցից 13-ը (չեն օգտագործվել սեռի (Gender), դասի (NounClass) անձներականության (Clusivity) ու բացարձակ ստույգ գործողության (Evident) քերականական կարգերը)¹: Ի տարբերություն խոսքիմասային՝ քերականական հատ-

1 UD նախագծում հայերենի իմաստային քերականական խմբերի ու քերականական կարգերի ամբողջական ցանկը և նկարագրությունը տե՛ս <http://universaldependencies.org/hy/feat/index.html>:

կանիշների պիտակավորումն ավելի ճկուն է և հնարավոր է ավելացնել տվյալ լեզվին բնորոշ հատկանիշներ՝ ընտրելով պիտակների Intersect interlingua for morphosyntactic tagsets ցանկից¹: Հայերենի համար առանձնահատուկ են դիտվել ըստ դեմքի (Person[psor]) և ըստ թվի (Number[psor]) դիմաստացականության քերականական կարգերը: Դիմավոր բայերի հաստատական և ժխտական ձևերի նկարագրության զուգաձևությունը պահպանելու համար ժխտական դերբայը դիտվել է որպես ժխտման բուլյան տիպի հատկանիշ² ունեցող պայմանական եղանակի դիմավոր բայաձև (Connegative)³:

ԱՆՎԱՆԱԿԱՆ ԶԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԿԱՐԳԵՐ	ԲԱՅԱԿԱՆ ԶԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԿԱՐԳԵՐ
Gender – Զերականական սեռ	VerbForm – Դիմավոր և անդեմ ձևեր
Animacy – Անձի և ոչ անձի (իրի) առում	Mood – Եղանակ
NounClass – Անվան դաս	Tense – Ժամանակ
Number – Թվի կարգ	Aspect – Կերպ
Case – Հոլով	Voice – Սեռ
Definite – Առկայացում (որոշյալություն)	Evident – Բացարձակ ստույգ գործողություն
Degree – Համեմատության աստիճաններ	Polarity – Ժխտում
+Person[psor] – Դիմաստացականություն (առկայացում) ըստ դեմքի	+Connegative – Ժխտման բայաձև (ժխտ. դերբայ)
	Person – Դեմք
+Number[psor] – Դիմաստացականություն (առկայացում) ըստ թվի	Polite – Զաղաքավարական (հարգական) հոգևակի
	Clusivity – Անձներականություն

Աղ. 2. Քերականական կարգերի պիտակները և անվանումները UD նախագծում:

1 Stěu Daniel Zeman, and Philip Resnik. Cross-Language Parser Adaptation between Related Languages. In *Proceedings of IJCNLP 2008 Workshop on NLP for Less Privileged Languages*. 2008.

2 Ֆունկցիա բուլյան հանրահաշվում և մաթեմատիկական տրամաբանության մեջ: UD-ում այն օգտագործվում է միայն չհակադրվող հատկանիշները պիտակավորելու համար:

3 Դիմավոր և անդեմ բայերը UD համակարգում, զուտ փորձարարական օրինաչափություններից ելնելով, տարբերակվում են առավելապես եղանակի քերականական կարգի հատկանիշով:

Բացի քերականական կարգերից, հայերենի համար առանձնացվել է 15 իմաստային-քերականական խումբ՝ համընդհանուր 6-ի դիմաց:

ԻՄԱՍՏԱՅԻՆ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԽՄԲԵՐ	
PronType	Դերանունների տեսակներ
+Distance	Ցուցականության շարքեր
NumType	Թվականների տեսակներ
+NumForm	Թվականների տիպեր (արաբական, հռոմեական, հայկական և այլն)
Poss	Ստացականություն (բուլյան հատկանիշ)
Reflex	Անդրադարձություն (բուլյան հատկանիշ)
+NameType	Հատուկ անվան տեսակներ (տեղանուն, անձնանուն, մականուն և այլն)
+AdpType	Կապերի տեսակներ (սախադրություններ, հետադրություններ, սախորավորներ)
+ConjType	Շաղկապների տեսակներ (զուգադրական կիրառություններ)
Abbr	Հապավում, համառոտագրություն (բուլյան հատկանիշ)
+Hyph	Հատվածական բաղադրությունների առաջին անավարտ (զծիկավոր) բաղադրիչ
Foreign	Օտարալեզու (օտարագիր) բառեր, ոչ փոխառություններ (բուլյան հատկանիշ)
+Style	Ոճեր (ժողովրդական, խոսակցական, հնացած և այլն)
+Echo	Կրկնավոր հարադրությունների փոփոխված բաղադրիչ
+Typo	Տառասխալներով բառանիշեր (բուլյան հատկանիշ)

Աղ. 3. Իմաստային քերականական խմբերի պիտակները և անվանումները UD նախագծում:

ՇԱՐԱՀՅՈՒՍԱԿԱՆ ԿԱԽՈՒՄՆԵՐԻ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ

Շարահյուսական ծանոթագրումը UD-ում հիմնված է կախվածությունների բացահայտման Ստենֆորդի մոդելի վրա¹ և ունի քերականական կախվածության 37 հարաբերություն: Մոդելը շեշտադրում է նյութական իմաստ արտահայտող (լի-իմաստ) բառերի միջև կախումների բացահայտումը, սպասարկու բառերը դիտվում են անմիջապես կախված վերջիններից և մշտապես ծայրային հանգույցներ են, որոնց վրա ընդհատվում են կախվածության շղթաները: Մոտեցման նպատակը կրկին նկարագրության համադրելիությունը պահպանելն է. նյութական իմաստ արտահայտող բառերի կապակցելիությունը հնարավորինս զուգաձև է տարբեր լեզուներում, մինչդեռ սպասարկու բառերով արտահայտվող լրացական հարաբերությունները կարող են արտահայտվել վերջավորություններով կամ գոյական ձևերով:

Հայերեն նախադասությունների շարահյուսական կախումների ծառերը կազմելու համար օգտագործվել է հայերենին բնորոշ 15 կախվածության հարաբերություն, բացի համընդհանուր կիրառելի 36-ից (չի օգտագործվել ընդամենը 1 հարաբերություն, cIf)²: Հայերենի համար ընդունվել են բառերի միջև կախումների հետևյալ կանոնները. ենթական կախյալ է ստորոգյալից (nsbj), կապերը կախված են խնդրառվող գոյականից (case, case:loc), ածականի իմաստը ճշգրտող մակբայի կախված է ածականից (advmod), ածականի կամ մակբայի իմաստը մասնավորեցնող գոյականները (*վարքով հայտնի*) կախված են դրանցից (obl), գոյականի իմաստը ճշգրտող խոսքի մասերը՝ գոյականից (nmod, amod, advmod:emph): Կախումները դրսևորվում են խնդրառությանմբ, համաձայնությանմբ և առդրությանմբ:

Հայերենի ծառադարանում ուղիղ և հանգման խնդիրները

1 Stanford Dependencies-ի մասին տե՛ս Marie-Catherine de Marneffe, Bill MacCartney, and Christopher D. Manning. Generating typed dependency parses from phrase structure parses. In *Proceedings of LREC*. 2006. Տե՛ս նաև՝ Marie-Catherine de Marneffe and Christopher D. Manning. The Stanford typed dependencies representation. In *COLING Workshop on Cross-framework and Cross-domain Parser Evaluation*. 2008, և Marie-Catherine de Marneffe, Timothy Dozat, Natalia Silveira, Katri Haverinen, Filip Ginter, Joakim Nivre, and Christopher D. Manning. Universal Stanford Dependencies: A cross-linguistic typology. In *Proceedings of LREC*. 2014.

2 «Հայերենի ծառադարանում» կիրառված շարահյուսական կապերի ամբողջական ցանկը տե՛ս <http://universaldependencies.org/hy/dep/index.html>:

(որպես ուղղական/հայցական և սեռական/տրական հոլովներով բայական լրացումներ) վերլուծվում են որպես անցողական և անանցողական բայերի *անմիջական, բուն լրացումներ* (core arguments), ընդ որում, բայի հետ վերջիններիս շարահյուսական կապը՝ կախումը ստորոգյալից նշվում է որպես obj (խնդիր), իսկ հանգման խնդրի դեպքում մասնավորեցվում որպես անուղղակի խնդիր (iobj) միայն այն դեպքում, երբ միաժամանակ առկա են բայի և՛ ուղիղ, և՛ անուղղակի խնդիր լրացումներ: Մյուս հոլովներով և կապերով արտահայտված խնդիրներն ու պարագաները վերլուծվում են որպես «կողմնակի» *խնդիրներ և պարագաներ* (obl - oblique arguments and adjuncts)¹:

Բայերի՝ միայն մակբայներով արտահայտված պարագայական լրացումները նկարագրվում են advmod, իսկ պարագայական երկրորդական նախադասությունները՝ advcl լրացական հարաբերությամբ: Բայի բուն լրացում է համարվում նաև ենթական (nsubj), որը կարող է արտահայտվել նախադասությամբ (csbj): Բայական լրացումների շարահյուսական դիրքում իրացված երկրորդական նախադասությունների կախվածությունը բացահայտվում է ccomp և xcomp շարահյուսական կապերի միջոցով:

Շարահյուսական ccomp (clausal complement) կապը կիրառվում է ուղիղ խնդիր երկրորդական նախադասությունները վերլուծելիս: Այս կապով է բացահայտվում նաև հայերենի «դիմավոր բայ + անորոշ դերբայի ուղիղ ձև» կապակցությամբ արտահայտված բարդ ստորոգյալների անորոշ դերբայը, եթե վերջինիս գործողն անհայտ է: Բարդ ստորոգյալների անորոշ դերբայները բուն բային ստորադրվում են նաև xcomp (open clausal complement) կապի միջոցով, երբ դրանց գործողը/ ենթական հայտնի կամ վերականգնելի է նախադասության իմաստից: xcomp կապը կիրառվում է չեզոք, նաև վերադրառու (վերացական) բայերի միջոցով ենթակային վերագրվող հատկանիշը ծանոթագրելիս, այլ կերպ՝ անվանաբայական ստորոգյալները վերլուծելիս (*թվալ գեղեցիկ, երևալ խելացի, համարել դավաճան*) ընդունվում է, որ առկա է կրկնակի ստորոգում՝ տրամաբանական ենթականերով:

1 Բուն և օժանդակ լրացումների մասին տե՛ս Ա. Դակիբյան, Մ. Յավրումյան, խնդիրներն ու պարագաները շարահյուսական ծառերի UD_Armenian-ArmTDP բանկում: Չեկուցման թեզեր, Ջահուկյանական ընթերցումներ, ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտ, 7-8 հունիս, Երևան, 2018:

Կապակցող սպասարկու բառերը, որոնք հայ քերականությունները նախադասության ինքնուրույն անդամ չեն համարում, UD-ում նախադասության կառուցվածքի անմիջական տարրեր են ձայնարկությունների, ներդրյալ միավորների (parataxis, discourse) հետ մեկտեղ: Շարահյուսորեն վերլուծելի են նաև օժանդակ բառերը (օժանդակ բայ, եղանակիչ, ժխտական բառ-մասնիկ, թարմատար), որոնք հայ քերականություններում բառաձևի առանձին գրվող բաղադրիչներ են:

Կայուն բառակապակցությունները (հարադրություններ, բաղադրյալ անվանումներ, դարձվածքներ) դիտվում են «բազմաբառ արտահայտություններ» (multiword expressions), որոնցում կախյալները որպես ծայրային հանգույց ծանոթագրվում են կախվածության, ըստ էության, բառակազմական արժեք ունեցող հարաբերություններով (compound, flat, fixed, goeswith):

ԿԻՐԱՌԵԼԻՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՆԵԼԻՔՆԵՐ

«Հայերենի ծառադարանը» կիրառելի է ինչպես հայերեն տեքստերի մեքենական վերլուծության գործիքներ, վիճակագրական մոդելներ մշակելու, այնպես էլ տեքստի մեքենական մշակման համակարգերի թեստավորման ու գնահատման համար: Առաջին հնարավորությունն օգտագործվել է տվյալահենք (data-driven) կիսահստվորում ուսուցման (semi-supervised learning) COMBO ներդրանքային ցանցի¹ հենքով հայերեն տեքստի մեքենական վերլուծության առցանց մոդուլ ստեղծելու համար²:

«Հայերենի ծառադարանի» նախագծում աշխատանքները շարունակվելու են երկու ուղղությամբ. ընդլայնվելու է ծառադարանը մինչև նվազագույնը 100 հազար բառանիշ, հղկվելու է հայերենի ձևայնացված քերականությունը՝ որպես ոլորտային հետազոտություններում կիրառելի ստանդարտ:

1 St'u Piotr Rybak and Alina Wroblewska. Semi-Supervised Neural System for Tagging, Parsing and Lematization. In *Proceedings of the CoNLL 2018 Shared Task: Multilingual Parsing from Raw Text to Universal Dependencies*, էջ 45-54, Brussels, Belgium, October 31 – November 1, ACL, 2018.

2 Մանրամասները տե՛ս https://github.com/Armtreebank_/End-to-end-Parser, գործիքի առցանց փորձնական տարբերակը հասանելի է <https://parser.yerevann.com/> կայքում:

ԱՄՓՈՓՈՒՄ

ՀԱՅԵՐԵՆԻ ԹԵՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՅԼԱՑՈՒՄԸ ՏԻՊԱԲԱՆԱԿԱՆ ՄՈՏԵՑՄԱՄԲ. ՍԸ ԾԱՌԱԴԱՐԱՆՆԵՐԻ ՓՈՐՁԸ ՄԱՐԱՏ ՅԱՎՐՈՒՄՅԱՆ

Լեզվաբանական տվյալների համադրելիության սկզբունքն իր հիմքում ունեցող «Universal Dependencies (UD) - Համընդհանուր կախվածություններ» նախագծում 2017-ից մշակվում է արդի գրական արևելահայերեն նախադասությունների շարահյուսական կախումների ծառերի բանկը (UD_Armenian-ArmTDP, «Հայերենի ծառադարան»): Նախագծի շրջանակում ձևայնացվել է հայերենի քերականությունը:

РЕЗЮМЕ

СИНТАКСИЧЕСКИ АННОТИРОВАННЫЙ КОРПУС АРМЯНСКОГО ЯЗЫКА И УНИВЕРСАЛЬНЫЕ ЗАВИСИМОСТИ МАРАТ ЯВРУМЯН

Ключевые слова - обработка естественного языка, универсальные зависимости (UD), трибанк, синтаксически аннотированный корпус армянского языка, стандарты UD, схемы аннотаций, POS-метки, отношения зависимостей, морфологические особенности, токенизация.

В последнее время наблюдается значительный интерес к схемам аннотаций, которые могут последовательно применяться ко многим языкам. Основываясь на усилиях по унификации морфологических и синтаксических аннотаций, проект «Универсальные зависимости» (Universal Dependencies, UD) ставит целью представить кросс-лингвистически применимый набор тегов частей речи и отношений зависимостей, а также большое количество единообразно размеченных банков синтаксических деревьев. В статье на примере банка синтаксических деревьев армянского языка детализируется схема аннотации по стандарту UD, описываются особенности аннотации. Результаты доступны на сайте <https://armtreebank.yerevann.com/>

SUMMARY

UNIVERSAL DEPENDENCIES FOR ARMENIAN

MARAT YAVRUMYAN

Key words: *natural language processing, Universal Dependencies, treebank, Armenian Treebank, UD standards, annotation schemes, POS tags, dependency relations, morphological features, tokenization, tokens, multiword expressions*

There has been substantial recent interest in annotation schemes that can be applied consistently to many languages. Building on several recent efforts to unify morphological and syntactic annotation, the Universal Dependencies (UD) project seeks to introduce a cross-linguistically applicable part-of-speech tagset, feature inventory, and set of dependency relations as well as a large number of uniformly annotated treebanks. I present Universal Dependencies for Armenian and detail the annotation to the UD standard, describing specific challenges and their resolution. The results and some tools and resources are available under open licenses from <https://armtreebank.yerevann.com/>

ԱՐՄԵՆ ԱՎԱՆԵՍՅԱՆ

ԱՐՅԱԽՅԱՆ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԸ ՎՐԵԺ ԻՍՐԱՅԵԼՅԱՆԻ ԱՐՁԱԿՈՒՄ*

Բանալի բառեր՝ արծակ, պատմվածք, դարավերջ, պատերազմ, Արցախ, թուրք, կյանք, մահ, հոգևոր:

20-րդ դարավերջին հայ ժողովրդի ճակատագիրն այնպես դասավորվեց, որ անկախությունն ու պատերազմը համատեղվեցին: Հայ գրողի համար ի հայտ եկան նոր մարտահրավերներ. մի կողմից ոչ վաղ անցյալի մերժում (խորհրդային հասարակարգից անցում), թերահավատություն ներկայի և գալիքի հանդեպ (անկախություն, սոցիալական անարդարություններ և հիասթափություն), հուսահատության և հերոսականության հակադիր բևեռների բախում (պատերազմ):

Գրականությունն իբրև կենդանի օրգանիզմ չէր կարող չարձագանքել ժամանակի գլխավոր հրամայականին: Իսկ ժամանակը պարտադրում է դեռևս չավարտված պատերազմ: Պոեզիան ավելի զգայուն էր, և այդ արձագանքը եղավ պատերազմական բուն գործողությունների ընթացքում: Վարդան Հակոբյանի «Քրիստոսի ծաղիկները», Հրաչյա Թամրազյանի «Պաշարված ամրոց», Էդվարդ Միլիտոնյանի «Եռաբլուր» շարքը, Խաչիկ Մանուկյանի «Բարձունքը մերն է», Ռոբերտ Եսայանի և այլոց մի շարք բանաստեղծություններ հերոսական շեշտադրումներով ներկա օրերի տրամադրություններն էին արտահայտում:

Արձակում՝ պատերազմական թեման ավելի ուշ արտահայտվեց: Գուցե ժամանակ էր հարկավոր իրողությունը մարսելու: Լևոն Խեչոյանի, Վրեժ Իսրայելյանի ստեղծագործություններում, ապա և Հովիկ Վարդումյանի, Արա Նազարեթյանի, Հրաչյա Բեգլարյանի, Հովհաննես Երանյանի, Սուսաննա Հարությունյանի որոշ գործերում պատկերվել է պատերազմի իր ահասարսուռ տեսարաններով և դրանց արձագանքները հերոսների ներաշխարհում:

* Հոդվածն ընդունվել է 02.06.2019 թ., երաշխավորվել է տպագրության բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վարդան Հակոբյանի կողմից՝ 04.06.2019 թ., ստորագրվել է տպագրության՝ 07.06.2019 թ.:

Թերևս վերը նշված գրողներից Լևոն Խեչոյանն իր «Սև գիրք, ծանր բզեզ» պատերազմի նման չավարտված վեպով և «Հուլիսի հինգը և վեցը» պատմվածքների ժողովածուով հնարավորինս ամբողջական ու համակարգված է պատկերել Արցախյան հերոսամարտը: Գրողը թեմայի գեղարվեստականացման ընթացքում ապավինել է պատերազմին իր իսկ մասնակցության փորձով և պատումը հիմնականում առաջին դեմքով է:

Վրեժ Իսրայելյանը իր մի շարք պատմվածքներում հայացքը հառել է պատերազմին, սակայն մի փոքր այլ հայեցակարգերով և խնդրադրումներով: Նա ներսից գիտեր հայոց բանակը, քանզի երկար տարիներ աշխատել է ՀՀ զինված ուժերում: Այսինքն՝ մարտական գործողություններին **մասնակից** խեչոյանական հերոսը խորթ էր Իսրայելյանին, քանզի նա հայողն ու տեսանողն էր, քննողն ու ճանաչողն էր. «Ես պատերազմին չեմ մասնակցել, բայց տեսնում եմ, թե ինչպես է ծարավ հողը արյուն խմում, թե ինչպես են արեգակի շողերը խտտում սպանվածի դեմքը և ինչպես է դրսից սողոսկող ջերմությունը դուրս մղվում նրա սառչող երակներից: Տեսնում եմ, թե ինչպես է վախը արիություն ծնում, և ինչպես են վաղվա հերոս հռչակվողները վախից թրջում իրենց տաբատները: Պատերազմը մարսելու համար խելք պետք չէ. մի քիչ հանդգնություն, մի քիչ էլ չտեսություն»¹:

Ընդհանուր առմամբ Վրեժ Իսրայելյանի պատումին բնորոշ է ներհյուսվածքային հաճախ կիրառվող հակասական, անգամ իրարամերժ գաղափարների ներդաշնակ համակեցությունը: Այս դիտավորյալ ստեղծված խառնաշփոթը հաճախ բխեցնում է հարցեր, որոնց պատասխանները գրողը հիմնականում թողնում է ընթերցողին: Այնուհանդերձ, Արցախյան հերոսամարտի վերաբերյալ գրողն ունի հստակ վերաբերմունք, դիրքորոշում և պատասխան. «...ընդամենը արձանագրում եմ փաստը՝ հայ ժողովուրդը փառահեղ հաղթանակ տարավ այդ պատերազմում (սա արդեն իմ երևակայության արդյունքը չէ)» (Էջ 362):

Արցախյան հերոսամարտը, ըստ Վրեժ Իսրայելյանի՝ 100 տարի առաջ սկսված և դեռևս չավարտված հայ-թուրքական

1 Իսրայելյան Վրեժ, Վաղ թե ուշ, Երևան, Լուսակն, 2014, էջ 356: Այսուհետ սույն գրքից մեջբերումների էջերը կնշվեն մեջբերումից հետո՝ փակագծերում:

հինավուրց խաղն է: Պատերազմը պատմության շարունակությունն է դառնում, ուստի հաճախ գրողի մոտ նույնացվում են թուրք և ազերի հասկացությունները:

Գրողն առաջ է քաշում տեսակի խորհուրդը: Հայն այն բնավորության կրողն է, որ կարող է 150 ոսկի ծախսել իր 1 ոսկին ետ բերելու համար, այն նվիրումն ունի, որ պատրաստ է 5 երիտասարդի զոհել 1 հայ աղջկա գերությունից ազատելու համար, ով էլ որպես «երախտիք» հետո ամուսնանալու է թուրքի հետ:

Ապա գրողը թիրախը շրջում է դեպի ներս, որ հայը տեսնի ու ճանաչի իր միջի թուրք տեսակին, իսկ «Հայի թուրք տեսակից սարսափելի բան չկա»: Հայի թուրք տեսակը Ազգային Ժողովում մեկ վայրկյանում խլելու է քաջարի հայորդիների կյանքը, հայի թուրք տեսակը մի ապտակի հիշողությամբ «Արծիվներ» ջոկատի ցուցակը գրքում հրատարակելիս չի հիշելու իր մահամերձ մարտական ընկերոջը, պատերազմի օրհասական պահերին իր խիզախությամբ աչքի ընկած, սակայն խաղաղ օրերին չքավոր դարձած Հակոն հայի թուրք տեսակի համար լինելու է ավելորդ:

Գրողը կերտում է նաև պատերազմողի կերպարը: Պատերազմող է հայ տանտիկինը, ով Սումգայիթյան ջարդերից մի քանի օր անց ամուսնու թուրք ընկերոջ առջև մոռանում է տոհմիկ հյուրընկալությունը և վերջինիս բերած խոստացված տասը տուփի սև խավիարները թողնում է հարևան Ժենիկի դռան դիմաց: Պատերազմող է 80-ամյա պառավը, ով ամեն գնով փորձում է փրկել դասալիք թոռան կյանքը: Պատերազմող է Սոնան, ով ջոկատի 11 տղաներին ոգևորում է ամեն գնով՝ նրանց մղելով հաղթանակի: Պատերազմող է համր տղան, ով դեռևս 100 տարի առաջ թաքնվելով անապատի ավազների տակ, եղեռնից մազապուրծ հայ գաղթական քարավաններին ուղղորդում է դեպի անվտանգ ճանապարհ:

Մինևույն ժամանակ պատերազմը դառնում է իրականության չարիքը: Պատահական չէ, որ Իսրայելյանի ազատամարտիկ հերոսներից մեկի անեկդոտը իրականության մեջ ավելի ողբերգական երանգներ է ստանում. «Ուրեմն, մի կորած-մոլորած գյուղից 11 հոգի պատերազմ են գնում: 10-ը զոհվում են, մեկը հենակներով վերադառնում է գյուղ: Ուրեմն գյուղացիք շրջապատում են ես խեղճ հաշմանդամին ու հարցախեղդ

անում. «Հլա պատմի տեսնենք էդ ի՞նչ բան է պատերազմը»: Ես հաշմանդամը իմաստուն զարմանքով ասում է. «Այ ժողովուրդ, ի՞նչ պատերազմ, ի՞նչ բան... մարդասպանություն էր»» (Էջ 326):

Մարդ մարդու սպանելու անհեթեթությունը բազմիցս արտահայտվում է տարբեր պատմվածքներում, սակայն միևնույն է՝ սպանությունը տեղի է ունենում: «Հայ-թուրքական հինավուրց խաղ» պատմվածքում գրողը շնչավորում է քամուն, որն ականատես է պատերազմին. քամին մարդուց ճշմարիտ է դառնում, քանզի «Քամին ազգային պատկանելություն չուներ. հայ երկրապահների դիրքերը հոտոտելով, Աշոտի աչքերին թոզ փչելով, անարգել խախտեց հայ-ադրբեջանական ռազմաճակատային գիծը և հայտնվեց ազերի կամավորականի մորուքի մեջ: Իր զորությունը գիտակցելով՝ քամին հանդգնեց ծաղրել հակառակորդների մարտավարական ծրագրերը, նրանց հայրենանվեր նկրտումներն ու հայեցակարգերը, սողոսկեց թշնամիների ինքնաձիգների փողերի մեջ, սվսվացնելով մերթ հայկական, մերթ թուրքական մեղեդիներ, որոնք մերթնդմերթ միաձուլվելով հավասարակշռում էին ազգերի ինքնորոշման իրավունքի և պետությունների տարածքային ամբողջականության ճանաչման միջազգային դրույթները» (Էջ 356-357):

Ի վերջո, պատերազմը երկու հարևան ժողովուրդների միջև նույնական է Աբել-Կայենյան առաջին մեղքի հետ: «Ֆեսկուկ» պատմվածքում հերոսը օգտվելով համացանցային անսպառ հնարավորություններից, փնտրում է իրեն տանջող մեկ հարցի պատասխան. ի՞նչ է տեղի ունեցել իր ուսանողական տարիներին մթազնումի 8 ժամերի ընթացքում: Պարզվում է, ազերի ուսանողուհու հետ է եղել, ով որդի է ծնել (Մեծ Միեր-Իսմիլ Խաթուն առասպելական դրվագը), որը մեծագույն հայատյաց է և թշնամու զինվորական բարձրաստիճան սպա: Հղումը Էպոսյան Սասունցի Դավիթ-Մսրա Մելիք պայքարին ուշագրավ է, և միֆը նորովի է կիրառված:

Պատերազմը մարդու ներաշխարհում ևս ավերածություններ է թողնում: Պատմության ուսուցիչ Գասպար Մարիկյանը պատերազմի ընթացքում ավտոմատի խզակոթով սառնասրտորեն հարվածում է թուրք Չինգիզ Հասանովի գլխին ու գերեվարում, ով ճակատագրի հեգնանքով ևս պատմության ուսու-

ցիչ էր: Խաթարվում են արժեկարգերը, մարդը դառնում է իր նմանի թշնամին և քանի դեռ սովոր չէ անթշնամի լինել, ամենուր փնտրելու է իրեն թշնամի. «Պատերազմը գեներալ հորինեց և ընծայեց այս հին ու նոր աշխարհի ամենախմաստուն ժողովրդին. փա՛ռք պատերազմին: Հաղթանակը խաղաղություն հորինեց և որպես դափնեպսակ դրեց պատմության գլխին: Կեցցե՛ խաղաղությունը: Խաղաղությունը պես-պես շքանշաններ հորինեց ու զարդարեց գեներալի կուրծքը. փա՛ռք ու պատի՛վ գեներալին: Գեներալը փող հորինեց ու լցրեց գրպանները: Փողը իշխանություն հորինեց, իշխանությունը՝ մահակ» (Էջ 334): Կենսական ռիթմերը խաթարվում են և մարդու գոյությունը դառնում է անիմաստ: Եվ «Արծիվներ» ջոկատի խիզախ երկրապահ Գասպարի որդին տեսնելով հոր ստորացումը ընդվզում է բնության դեմ՝ չի ջրում նոր կարմրին տվող պոմիդորները, մորթում է գառներին, չթողնելով, որ ոչխար դառնան, ի վերջո, հուսահատական հայիոյում. «Ես ձեր մերը... միայն թուրքը հիշեց հայրիկիս»:

«Արծվի ճուտի» նման պատերազմի արհավիրքն իր մաշկին կրում է թուրքի ձին, որին երեխաները ճիպոտներով ծեծում են միայն այն պատճառով, որ այն թուրքի է պատկանում... Բնության մեջ խաթարվում է բնականոնությունն ու ներդաշնակությունը: Պատերազմն իր հետքն է թողնում ամենուր՝ մարդկանց կենսագրություններում, բնության երևույթների վրա, խաթարվում է կյանքն ու տիրում է մահը, որը ոչ միայն մարմնական է, այլև առաջին հերթին՝ հոգևոր:

ԱՄՓՈՓՈՒՄ

ԱՐՑԱԽՅԱՆ ՀԵՐՈՍԱՍԱՐՏԸ ՎՐԵԺ ԻՍՐԱՅԵԼՅԱՆԻ ԱՐՁԱԿՈՒՄ ԱՐՄԵՆ ԱՎԱՆԵՍՅԱՆ

Վրեժ Իսրայելյանը իր մի շարք պատմվածքներում հայացքը հառել է պատերազմին, սակայն մի փոքր այլ հայեցակարգերով և խնդրադրումներով:

Ընդհանուր առմամբ Վրեժ Իսրայելյանի պատումին բնորոշ է ներհյուսվածքային հաճախ կիրառվող հակասական, անգամ իրարամերժ գաղափարների ներդաշնակ համակեցությունը: Այս դիտա-

վորյալ ստեղծված խառնաշփոթը հաճախ բխեցնում է հարցեր, որոնց պատասխանները գրողը հիմնականում թողնում է ընթերցողին: Արցախյան հերոսամարտը, ըստ Վրեժ Իսրաելյանի՝ 100 տարի առաջ սկսված և դեռևս չավարտված հայ-թուրքական հինավուրց խաղն է: Պատերազմը պատմության շարունակությունն է դառնում, ուստի հաճախ գրողի մոտ նույնացվում են թուրք և ազերի հասկացությունները: Գրողը նույն զուգահեռի վրա պատկերում է պատերազմի ավերիչ բնույթն ու հերոսացումը, որը անխուսափելի է ու դառն իրականության կողմից պարտադրված:

Պատերազմն իր հետքն է թողնում ամենուր. մարդկանց կենսագրություններում, բնության երևույթների վրա, խաթարվում է կյանքն ու տիրում է մահը, որը ոչ միայն մարմնական է, այլև առաջին հերթին՝ հոգևոր:

РЕЗЮМЕ

АРЦАХСКАЯ ВОЙНА В ПРОЗЕ ВРЕЖА ИСРАЕЛЯНА АРМЕН АВАНЕСЯН

Ключевые слова - проза, история, век, война, Арцах, турк, жизнь, смерть, духовность.

Вреж Израелян в большей части своих рассказов обращается к теме войны, рассматривая ее под несколько другим углом и с другим мировоззрением. В общем и целом, характерной чертой прозы Врежа Израеляна является гармоничное сочетание зачастую несочетаемых, иногда противоречащих друг другу замыслов.

Эта преднамеренная путаница часто поднимает вопросы, ответы на которых писатель оставляет своему читателю. Арцахская война, по мнению Врежа Израеляна, это - 100 лет назад запущенная, да так и не законченная армяно-турецкая древнейшая игра. Война становится продолжением истории, следовательно, автор часто отождествляет такие понятия, как турок и азербайджанец.

Автор, в одной и той же параллели изображает всю разрушительную суть и восславление войны-неизбежной и навязанной горькой реальностью. Война везде оставляет свои следы: в биографиях людей, в природных явлениях, нарушается цикличность жизни, и во всем правит смерть, которая является не только телесной, но и, в первую очередь, духовным катаклизмом.

SUMMARY

ARTSAKHIAN HEROIC FIGHT IN THE PROSE OF VREJ ISRAELYAN ARMEN AVANESYAN

Key words: *prose, story, the end of century, war, Artsakh, Turk, life, death, spiritual*

Vrej Israelyan, in his series of stories, concentrated his attention on the war, but with a little bit different perspective.

Generally Vrej Israelian's style of writing and contexture is the harmonious coexistence of inconsistent even contradictory ideas. This intentionally made disorder often leads to asking question, the answers of which the author leaves to the reader. According to Vrej Israelyan, the Artsakhian heroic fight began a hundred years ago but the Turkish-Armenian ancient conflict hasn't finished yet. The war is the continuation of the geopolitical conflict and the author often identifies the concepts of Turks and Azeri. The author on the basis of the same parallel depicts the devastating character of the war and the heroic fight, which is inevitable and imposed by the objective reality.

The war influenced on the biography of people, on nature, it distorts the life. Everywhere one can notice the predominance of the death, which is not only physical but also spiritual.

ՄՀԵՐ ԶՈՒՄՈՒՆՑ

ԳՐԱԲԱՐԻ ԱՆՑՅԱԼ ԴԵՐԲԱՅԸ ԲԱՐԲԱՌԱՅԻՆ ՄԻ ԶԱՆԻ ԲԱՌԵՐՈՒՄ. ՍՏՈՒԳԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ*

Բանալի բառեր՝ Սյունիք-Արցախ բարբառային տարածք, գրաբար, ածանց, արմատ, իմաստ, լեզուներ, ստուգաբանություն, թյուրքերեն, պարսկերեն:

Անգյալ բառը բարբառագիտական աշխատություններում նշվում է բարբառային փոխառությունների շարքում՝ պրսկ. **āngāl**, թուրք. engel «պարագիտ, մակաբույծ»¹: Հայերենի բարբառներում տարածված է **անկյալ, անգյալ, անգալ**՝ «1. ծույլ, 2. անդամալույծ, 3. անազնիվ» իմաստներով², Սյունիք-Արցախում բառը գործածության ակտիվ շերտում է՝ **անգյալ, անկյալ, Էնգալ, անգալ, անգալ**՝ «1. հիվանդ, անդամալույծ, 2. վատ արարք, 3. ապաշնորհ, 4. փորձանք, 5. արատ, թերություն, 6. հապաղում» իմաստներով: Նրանով կազմված են **անգյալմանալ, անգյալ տանալ**՝ «1. հաշմանդամ դառնալ, 2. թուլանալ», **անգյալ մընալ, անգյալ անել**³ «1. փչացնել, 2. ծուլանալ», Արցախում **անգյալա ք'օք անել** «թերանալ»:

Անգյալ բառը արտաքին՝ հնչյունական կազմով և արտահայտած իմաստներով մոտ է գրաբարի «անգանիլ, ընկանիլ»⁴ բառին՝ «1. ընկնել, 2. բաժին ընկնել, 3. մեկին ապավինել, 4.

* Հոդվածն ընդունվել է 23.05.2019 թ., երաշխավորվել է տպագրության բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վարդան Հակոբյանի կողմից՝ 30.05.2019 թ., ստորագրվել է տպագրության՝ 03.06.2019 թ.:

1 **Մարգարյան Ա.**, Գորիսի բարբառը, Երևանի համալս. հրատ., Եր., 1975, էջ 503, **Սարգսյան Ա.**, Ղարաբաղի բարբառի բառարան, Եդիթ Պրինտ, Եր., 2013, էջ 44 (այսուհետև՝ ՂԲԲ, 2013), **Իսրայելյան Ա.**, Պարսկերենից փոխառյալ բառերը Արտաշատի խոսվածքում, «Հայագիտական հանդես», թիվ 3-4 (23 - 24), Եր., 2013, էջ 45:

2 Հայոց լեզվի բարբառային բառարան, ՀՀ ԳԱԱ Հրաչյա Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ, հատ. 1, **Գիտություն**, Եր., 2010, էջ 62 (այսուհետև՝ Հլբբ): Կոստանդնուպոլսի բարբառում «աշխատելու անընդունակ, խեղանդամ, պակասավոր», Նոր Նախիջևանի բարբառում «կաղ, անդամալույծ» իմաստներով է (**Աճառեան Հ.**, Հայերեն գաղառական բառարան, Լազարեան ճեմարան, Թիֆլիս, 1913, էջ 102 (այսուհետև՝ ՀԱ., Հգբ, 1913):

3 Գործում գործածական է «համբերել, հապաղել» իմաստներով՝ **«անգյալ ըրա, կյամ եմ»**:

4 **Աճառյան Հր.**, Հայերեն արմատական բառարան, Երևանի համալս. հրատ., հատ. Ա, Եր.1971, էջ 197 (այսուհետև՝ ՀԱԲ):

մատնվել, ենթարկվել» և այլն¹: Նշվածներից ամենաշատը հանդիպում է «ընկնել» ընկած» իմաստով²: Օրինակ՝ «Աստվածաշնչում» **անկանիլ** բայի 807 կիրառությունն կա, որոնց մեծ մասն ունի «ընկնել» իմաստը³: Միջին հայերենում հանդիպում է **ընկնիլ || ընկնալ || ընկնուլ** տարբերակներով՝ «1. ընկնել, 2. ընկնավորել, 3. լինել, գտնվել»⁴:

Անկանել || անգանել արմատի հ.-ե. ***sang-** նախաձևի ժառանգորդները՝ գոթ. **siggan**, գերմ. **sinken** և այլն, «բոլորն էլ ունեն վայր ընկնել»⁵ իմաստը: Գրաբարի անցյալ դերբայի **-եալ** մասնիկը, որ ծագում է ***-lo** ածանցից՝ ***-isālo-**՝ հայ. սեռ. **-ոյ**՝ դերբայական արժեքով⁶, դեռևս գրաբարում նաև անվանական ածանցի դեր է ունեցել՝ **առաքյ[ե]ալ, հեծյ[ե]ալ, մեռյ[ե]ալ** և այլն⁷: Կարծում ենք՝ անցյալ դերբայի վերջավորության քերականական իմաստի մթագնման հետևանքով արդեն գրաբարում **անկեալ**-ը «ընկած» անվանական իմաստով անցել է բարբառներին ու տարածվել ըստ տարածքային հատկանիշների՝ **անգյալ, անգյալ, Էնգալ, անգյալ, անգյալ** և այլ տարբերակներով՝ «ընկած՝ աշխատելու ոչ ունակ, թերություն ունեցող» հիմնական իմաստներով: Սյունիք-Արցախ բարբառախոսմբը զուգահեռաբար ունի **անգյալ** և **անգած>ինգած**, որ ունեն նույն իմաստները՝ «թուլացած, տկար, խեղճ» և այլն: Ընդ որում, **անկ** արմատից գրաբարում վկայվող **անկելանոց**⁸

1 **Ղազարյան Ս.**, Գրաբարի բառարան, Երևանի համալս. հրատ, Ե., 2000, էջ 101-102, Անտիքեան Գ., Սիւրմէլեան Խ., Աւգերեան Մ., Նոր բառգիրք հայկազեան լեզուի, Տպարան ի Սրբոյն Ղազարու, հատ. առաջին, Վենետիկ, 1836, էջ 168-169 (այսուհետև՝ ՆՀԲ):

2 Սբ. Գրքից առանձնացված հատվածների մեծ մասում «ընկնել» իմաստն է. «Եւ անկեալ ի վերայ պարանոցին Բենիամինի եղբօր». **Աստուածաշունչ, Հնոց եւ Նորոց Կտակարանաց**, Կալկաթա, 1817, էջ 50 (այսուհետև՝ Աստուածաշունչ, 1817), «թլփատեաց զանթլփատութիւն որդոյն իւրոյ. եւ անկեալ առ ոռոս Նորա ասէ...», էջ 54 և այլն:

3 **Անկանել** բայի տվյալները կարելի է տեսնել «Գրաբար Աստուածաշունչ զուգահեռ անգլերենով» համաբարբառում՝ <http://www.arak29.am> (վերջին այցը՝ 1.06.2019)։

4 **Ղազարյան Ռ. Ս., Ավետիսյան Հ. Մ.**, Միջին հայերենի բառարան, ԵՊՀ հրատարակչություն, հատ. 1, Եր., 2009:

5 ՀԱԲ, էջ 199:

6 **Զահուկյան Գ.**, Հայերեն ստուգաբանական բառարան, Ասողիկ, Եր., 2010, էջ 803 (այսուհետև՝ ՀԱԲ), Հին հայերենի վերջածանցների ծագումը, «Պատմա-բանասիրական հանդես», N 1-2, Եր., 1994, էջ 62:

7 **Էլոյան Ս. Ա.**, Ժամանակակից հայերենի ածանցների առաջացման ուղիների մասին, «Պատմա-բանասիրական հանդես», N 4, Եր., 1959, էջ 57:

8 **Աւգերեան Մ., Ճելալեան Հ.**, Առձեռն բառարան հայկազեան լեզուի, Սուրբ Ղազար, Վենետիկ, 1865, էջ 66 (ընդհանրություններ կան ***ghel-կեղլկեղ** «խոց, ուռուցք» արմատի հետ, բայց, կարծում ենք, **անկելանոց** բառում **անկ** արմատն է՝ **անկ-ել-ա-ն-ոց**):

«հիվանդանոց» բառի զուգահեռը նույնպես հանդիպում է բարբառախմբում **անգյալանոց** («Ա հի՛նչ ամ, անգյալանոց էս ինգյալ», «Սա տոն չի, հենց ա անգյալանոց ինի»)¹: Հավանական է նաև, որ Գորիսի բարբառում կապակցության մեջ գործածվող **անգը** բառը նույնպես **անկ** || **անգ** արմատից է՝ **անգը կախ** «թույլ, դանդաղաշարժ»:

Ինգյիլ, ըղնե, ընգընե, ընգնե, ըյնե, ընգյիլ տարբերակներով «Ղարաբաղի բարբառային բառարանում» նշվում են բազմաթիվ իմաստներ², որոնց հավելում ենք նաև Սյունիքում գործածական **«մահամերձ վիճակ, թուլացած, անկարող»** իմաստները:

Փաստորեն՝ **անկ (անկանիմ)** արմատի իմաստային և կազմության բազմազանությունից բարբառներում նույնպես տարածվել են բառային տարբերակներ, համանուններ. Սյունիք-Արցախում հիմնականում տարածված են **ինգյիլ** || **ըղնե** > **յեր ընգյե** > **ոլոլոր ինգել** և **անկեալ** > **անգյալ** համանունները: Կարծում ենք՝ **անկեալ** > **անգյալ** բառը նախապես ունեցել է «տկար, խեղճ» (անկած) իմաստը, որ հետագայում ձեռք է բերել այլ իմաստներ՝ **«Անգյալ ա տառալ էս մարթը»** - «ծուլանալ, վիճակը վատթարանալ», «Սա **անգյալ** կօրծ ա» - «վտանգավոր», «Ստեղ մի **անգյալ** կա» «թերություն», «Բալլըմ մի **անգալ** էն ըրալ, վեր մենք գլոլոլում չենք» «գաղտնի արած վատ արարք», այլև՝ «ապաշնորհ, փորձանք, արատ» և այլն:

1 Արտաքին կազմով և նրբիմաստով մոտ **անգյոլման** բառը, կարծում ենք, առնչությունն չունի **անկ** արմատի **անկումն** (-կման) ձևի հետ: Հավանաբար այսպ. **gāman /گامان/** «ենթադրություն, կարծիք, կասկած» բառն է, որ Սյունիք-Արցախ բարբառային տարածքում ունի «անելանելի վիճակ, տարակույս» իմաստները: **Ան-** ածանցի կցմամբ պետք է կազմվեր **անգյոլման** «անտարակույս» բառը: Չարմանալի է, որ այդպես չէ. և՛ Սյունիք-Արցախում, և՛ Արարատյան բարբառախմբում **անգյոլման** բառն ունի «անհույս, հուսահատ, անորոշ, անտեղյակ, անհետք» իմաստները: Հենց այս է պատճառը, որ ենթադրել է տալիս **անկ** և **անգյոլման** բառերի ընդհանրությունը: Նույն կերպ **անկ** || **անգ** արմատին մոտ է բարբառախմբի **անգի** «նիհար, վտիտ» բառը, որ Հ. Աճառյանը նշում է անհայտ՝ կարծելով ինչ-որ կենդանու անունից (Հ.Ա., Հգբ, 1913, էջ 95):

2 1. Դեպի ցած շարժվել, ընկնել, 2. որևէ բանի վրա հենվել, տարածվել, փռվել, 3. ջղել, գետնին փռվել (աղոթելու, աղերսելու համար), 4. իջնել, նվազել, թուլանալ, 5. կորցնել, զրկվել, 6. իր վրա կրել, ծանրաբեռնվել, 7. որևէ բանի ենթարկվել, 8. հարձակվել, արշավել, 9. վատ արարքը բացահայտվել, վատ արարքի մեջ բռնվել, 10. լինել, տարածվել, սփռվել, 11. որևէ տեղ հայտնվել, գնալ, 12. առաջանալ, ծագել, տարածվել, 13. թափանցել, անցնել, մի բանի դիպչել, 14. որևէ բանի մեջ գրվել, հաշվառվել, տպագրվել, 15. որևէ հիվանդությամբ վարակվել, 16. դեգերել, թափառել, 17. մի բանի տակ, արանքում մնալ, 18. թակարդով, ծուղակով բռնվել, 19. մեկին ապավինել, մեկի, մի բանի օգնությունը ակնկալել (Տե՛ս ԴԲԲ, 2013, էջ 157-158):

Թերևս **-եալ** մասնիկ-ածանցի **-յալ** դառնալը պայմանավորված է հին հայերենից ավանդված, նաև բարբառային բազմաթիվ բառերում առկա ձայնեղների ազդեցությամբ¹, հմմտ.՝ **ժանկ>ժանգ, թանկ>թանգ** և այլն:

Հավանական ենք համարում Ատրպատականի թյուրք. **anqa** «մոռացկոտ»², **anqalı** «1. մոռացկոտ, 2. անպետք, անօգտակար»³, Շամախիի թյուրք. բարբառում **anqalı** «թեթևամիտ, գիժ»⁴, **angallu** «արատ ունեցող» բառերի հիմքում ընկած է **անկ || անգ** արմատը, որ անցել է Սյունիք-Արցախ բարբառներից: Վերջին ձևը՝ **angal-lu**, ածանցով անցել է նաև հայերենին և գործածվում է **անգյալլու**՝ ածական և գոյական կիրառությամբ՝ «ծույլ, չաշխատող մարդ» իմաստներով: Թյուրք. **engel** (> engel-lemek, engel-lenmek, engel-letmek, engel-li, engel-siz) «խոչընդոտ» իմաստով բառը նշվում է պրսկ. ծագմամբ՝ **engal** «հանգույց, կոճակի անցք» բառից, որ թյուրքերենից անցել է սիրիական արաբերենին⁵: Ս. Նիշանյանը նշում է, որ այն կապ չունի պարսկերեն նույնանուն բառի հետ, և բառի վկայությունները նոր են թյուրքերենում⁶: **Engel**<enğ-gel նշվում է **enğ** «ուռուցք, այտուց» արմատի իմաստից՝ «այտուցվածություն»⁷: Համանուններ են նշվում **engel** «խոչընդոտ», **engel** «մակաբույծ»՝ որպես պարսկերենից փոխառյալ⁸: Հնարավոր է, որ **անգյալլ** բառի փոխաբերական իմաստից է նաև պրսկ. **āngāl** /انگال/ «1. մակաբույծ, պարագիտ, 2. փոխ. անբան մարդ» բառը:

Այսպիսով՝ գրաբարի **անկանել || անգանել** բազմիմաստ բառի **անկ || անգ** արմատից են Սյունիք-Արցախ բարբառային տարածքի բառապաշարի **անգյալ, անգը (կախ), անգյալանոց** բառերը:

1 Այս մասին կարելի է տեսնել՝ **Դավթյան Կ. Ս.**, Լեռնային Ղարաբաղի բարբառային քարտեզը, ԳԱԱ հրատարակչություն, Եր., 1966, էջ 25-28:

2 Տարածված է Չարդաբում. այս մասին տե՛ս՝ Azərbaycan dialektoloji lüğəti, cild 1, 1-bolum, Azərbaycan Elmlər Akademiyası, A-L, Ankara, 1999, s. 15 (այսուհետև՝ A.d.l., cild 1, 1999).

3 Azərbaycanca-rusca lüğət, 4 cildə, birinci cild, «Şərq-qərb», Baqı, 2006, s. 118 (այսուհետև՝ A-r.l. 2006).

4 A.d.l., cild 1, 1999, s. 15.

5 **Eren H.**, Türk dilinin etimoloji sözlüğü, ikinci baskı, Ankara, 1999, s. 135.

6 Nişanyan Sözlük - Çağdaş Türkçenin Etimolojisi, kelime: **engel**, maddenin son güncellenme: 18.09.2014 /www.nisanyansozluk.com/ (այսուհետև՝ Nişanyan Sözlük).

7 **Eyuboğlu İ.**, Türk Dilinin Etimoloji Sözlüğü, ikinci baskı, Sosyal yaymlar, İstanbul, 1988, s. 234, .

8 **Tietze A.**, Tarihi ve etimolojik Türkiye Türkçesi lugatı, Verlag der Österreichischen Akademie der Wissenschaften, birinci cilt, Wien, 2002, s. 658.

-**Յալ** ածանցը վերոնշյալից բացի հանդիպում է **Ժանկ-յալ/Ժենգյալ** բառում: Կարծում ենք, որ **Ժանկ/զ** բառը բարբառախմբին անցել է իմաստային ածանցումից՝ «ոչ մշակովի և տարածվող խոտաբույսերի ընդհանուր անվանումը»՝ **-յալ** ածանցի իմաստի կցմամբ, հմմտ.՝ **քարի ժանգ, երկաթի ժանգ, խոտի ժանգ** և այլն՝ «ամենայն աղտ և ապականություն նիւթեղինաց»¹, այստեղից՝ **Ժանգեալ>Ժանգյալ՝ Ժանգ || Ժենգ + -եալ>-յալ**, որի հնչյունական և իմաստային կապը **Ժախ/Ժախո/Ժէխո** «անպետք բույս» բառի հետ քիչ հավանական ենք համարում: Գ. Տաթևացին **Ժանգ-յալ** բառը նշում է «աղտ, ապականություն, վատ արարք, մեղք» իմաստներով: «Գիրք Զարոգուբեան որ կոչի Ամառան հատոր» գրքում բազմիցս օգտագործվում է բառը² և տրվում բացատրությունը հոգևոր տեսանկյունից. «Այլեւ կրէ **Ժանկ**՝ եւ աղտեղանայ ի գգայեութեանց մարմնոյն՝ եւ ի գարշ հեշտութեանց աշխարհի՝ եւ ի պատրանաց սատանայի»՝ «Չի **Ժանկն** նշանակէ զմեղս վասն տասն յատկութեան նորին»³, իսկ «Զմեռան հատորում» հանդիպում է նաև «վայրի բույս» իմաստով՝ «...ի թգենեաց ոմանք **Ժանգ** կոչին. զի ամենեւին դառն են պտղով...»⁴:

Հայերենի բարբառնում տարածված արմատ է **Ժանգ || Ժանկ**, իսկ **Ժանկ-յալ**⁵ կազմությամբ հիմնականում հանդիպում է արևելյան բարբառներում, առավելապես՝ Սյունիք-Արցախում⁶:

Այսպիսով՝ հայերենին իրանական լեզուներից անցած **žang-ār** «Ժանգ>Ժանգոտվել»⁷, **žang-xʷard** «Ժանգը ուտել»⁸

1 ՆՀԲ, էջ 830:

2 **Գրիգոր Տաթևացի**, Գիրք Զարոգուբեան որ կոչի Ամառան հատոր, Նորին դարձեալ քարոզ վասն խոստովանութեան ինոյն Բանն (խոստովան եղերուք միմեանց զմեզս ձեր), Յակօբոս. 5. 16, Կոստանդնուպոլիս, 1741, Գլուխ. ՀԹ (այսուհետև՝ Տաթևացի, Գ.ք.կ.Ա.հ.):

3 **Տաթևացի**, Գ.ք.կ.Ա.հ., Գլուխ. ՀԹ:

4 **Գրիգոր Տաթևացի**, Գիրք Զարոգուբեան որ կոչի Զմեռան հատոր, Նորին դարձեալ քարոզ վասն խոստովանութեան ինոյն Բանն (խոստովան եղերուք միմեանց զմեզս ձեր), Ղուկ. 13. 6, Կոստանդնուպոլիս, 1741, Գլուխ. ԴԲ: Այստեղ հանդիպում է նաև **Ժաժանգել** «տարածել, ապականել» ձևով:

5 Այս մասին տեղեկություններ կարելի է տեսնել՝ **Քումուկ Մ.**, Ֆիզիկական աշխարհի նշող գրաբարի շրջանի բառերը Սյունիքի և Արցախի բարբառներում, Հայագիտություն. Սյունիք, գիտական նյութերի ժողովածու, թիվ 1, Նոր տպագրիչ, Եր., 2016, էջ 70-71:

6 Այս մասին կարելի է տեսնել՝ Հլբբ, 2, էջ 155:

7 **Horn P.**, Neupersische Schriftsprache von, Grundriss der iranischen Philologie, hrsg. von W. Geiger und E. Kuhn, I band, 2 abteilung, Strassburg: Trübner, 1898, p. 177 (այսուհետև՝ GIP).

8 GIP, p. 149.

բառերի հիմքում, ինչպես նշում է Հ. Աճառյանը¹, **Ժանկ** || **Ժանգ** արմատն է, որին կցված **-եալ** մասնիկ-ածանցից առաջ է եկել նոր բառ՝ **Ժանգ-յալ**՝ «ոչ մշակովի և տարածվող խոտաբույսերի ընդհանուր անվանումը», այստեղից էլ՝ «Ժանգյալավ հաց»:

Կարծում ենք՝ Սյունիք-Արցախ բարբառային տարածքից թյուրքերենի բարբառներին են անցել **cangıl** «1. անապատ, ամայի վայր 2. վայրի բուսածածկույթ», որ Ս. Նիշանյանի բառարանում սխալմամբ նշվում է անգլերենից փոխառյալ՝ **jungle** (շոնգլի)², Օրդուբադի թյուրք. խոսվածքում **չոն-ց** «լոբաբույսի փաթաթվող նուրբ ծիր, որ նման է գայլուկ բույսին» բառերը³:

Բարբառախմբում **-յալ** ածանցով ձևավորված բառերի շարքը համալրում է **մաճյալ** բառը՝ «անասունների հավաքելու տեղը»: Հին հայերենում արձանագրվում է **մակ** կամ **մագ** «վրա» իմաստով բառը, որ «յետոսկեդարեան հունաբան հեղինակների մօտ դարձել է շատ սովորական մասնիկ»⁴: **Մակ** արմատը, հավանաբար, կովկասյան փոխառություն է⁵՝ «վրա, կրկին, երկու» իմաստներով, որ ընկած է նաև **մակառ** բառի հիմքում: Իմաստային և հնչյունական թույլ առնչությունները հիմքեր են ստեղծել՝ այն նույնացնելու **մակաղ** ասորական փոխառության հետ: Հ. Աճառյանը **մակաղ** բառահոդվածում հիշատակում է «Ղրբ. **մակալ**», այլ ոչ թե **մաճյալ**, ինչպես գործածվում է Արցախում: Ըստ Էոթյան՝ դժվար է **մաճյալ** բառի զուգահեռելը **մակ** || **մագ** բառ-ածանցի հետ, քանի որ **մակ**-ով պարզ կազմություններ գրեթե բացակայում են: Ավելի հավանական է **մաճյալ** բառի ընդհանրությունը ասորական և հունական **մակաղ** /**ma-klā>μακέλα**/ ձևերի հետ, մանավանդ որ **մակ** || **մագ** կաղապարի բառային արժեքը մթագնած է: Այդ հիմունքով՝ ավելի հակված ենք Հ. Աճառյանի տեսակետին՝ **մաճյալ**-ը բխեցնելու **մակաղ** արմատից՝ **-եալ** ածանց-մասնիկով՝ «...եղիցի իբրեւ զիօտ **մակաղեալ**, եւ իբրեւ զխաշն լքեալ...»⁶. **մաճյալ**< **մակաղեալ** (**կ-ղ** փոխդեցությամբ՝ **գ**, որի ազդեցությամբ էլ՝ **-եալ**>-**յալ**), որ գրաբարում տարածված է և իմաստով համանշվում է բարբառախմբում տարածված

1 ՀԱԲ, 226:

2 Nişanyan Sözlük: **cangıl**:

3 A.d.l., cild 1, 2-bolum, 1999, s. 98-99.

4 ՀԱԲ, 230:

5 ՀԱԲ, 501, ՀԱԲ, 230-231:

6 Աստուածաշունչ, 1817, էջ 846:

վիրամ եկած, վիրամ տառած, վիրամ ըրած, վիրամ իլան, յիրամ պիրամ կազմություններին, որոնց հիմքում ընկած է «հավաքել» իմաստը: Խնդրահարույց է նաև **մաճյալ** բառի՝ ուտիերենում և քրդերենում եղած տարբերակների հարցը՝ **«mägʷal** «մակաղատեղի», **meyel** «անասունի դադար՝ հանգիստ առած տեղը, մակաղատեղի»⁷». հնարավոր է՝ բարբառախմբից անցած փոխառություն լինի: Նույնական կազմություններ կան **մաճյալ անել/տալ** «անասուններին ստվերոտ տեղ հավաքել», **մաճալ ինիլ || տըռնալ** «հավաքվել», այլև՝ **մաճյալիլ, միգյալիլ** «վրա բերել, հավաքել», **մաճյալվիլ, միգյալվիլ** «վրա բերվել, հավաքվել», **մըգըլատեղ**: Սյունիքում **մաճյալ || մաճյալիլ, մակաղ || մըկաղիլ** բառույթները գործածվում են հիմնականում «հավաքել» իմաստով, **մաճյալ** ասվում է նաև «ճաշին ոչխարների հավաքվելու» երևույթին:

Մակաղ> Մաճալ բառը հայերենից անցել է թյուրք. մի շարք բարբառների⁸: Ընդ որում, Արցախի և Սյունիքի բարբառներից հարևան թյուրք. բարբառներին է անցել՝ **mağal** «օրվա տոթ ժամին անասունների հավաքվելը»⁹: Դժվարանում ենք հստակորեն ասել, թե թյուրք. լեզուներին¹⁰ ավելի վաղ անցած **mağar** «հավաքատեղի, որևէ կառույց, որտեղ հավաքվում են», **mağara** «որջ, փարախ»¹¹ բառերը հայերենից են անցել, թե՞ սեմական լեզուներից¹²:

7 ՀԱԲ, էջ 231:

8 Օրինակ՝ Վանի թյուրք. խոսվածքում **mağal|| meğel** «փարախ, ոչխարները մակաղելու տեղ» (Derleme sözlüğü, Türkiye’de Halk Ağzından, IX, 2 baskı, Ankara üniversitesi, Ankara, 1993, s. 3103):

9 A.d.l., cild 2, M-Z, 2003, s. 376.

10 **Mağar> mağara** բառերի ծագման վերաբերյալ թյուրք. ստուբազանական աղբյուրները տարբեր տեսակետներ ունեն. **bağra>mağara (kav > qar)** պրսկ. արմատից (**Həsən bəy Hadi**, Türkcə Etimoloji Sözlük, II (L-Z), Arın sözlüyü, Təbriz, 2010, s. 31), արաբ. **ğāra / غار** / «թաքստոց, փարախ, փոս» (**Nişanyan Sözlük: mağara**):

11 A-r.4. 2006, s. 294. Մեզ հանդիպած առաջին վկայությունը 15-րդ դարի է. օսմ. **mağara / مغارة** / «քարանձավ». «**mağara kesmek < mağara kesüp** «քարանձավ կտրել, բացել»» (**Hikmet**, XV, 57, Tarama sözlüğü, IV, 2 baskı, Ankara üniversitesi, Ankara, 1996, s. 2793).

12 Թյուրքերենում բառավերջի **l>ra** նցում հանդիպում է մասնավորապես արաբ. փոխառություններում, հմմտ. **iyāl>ayar** և այլն (**Veysele Karaca**, Türkiye Türkçesindeki alıntı sözcüklerde görülen ses olayları üzerine bir inceleme, «Turkish Studies», 7-4, Ankara, 2012, s. 2084):

ԱՄՓՈՓՈՒՄ

ԳՐԱԲԱՐԻ ԱՆՅԱԼ ԴԵՐԲԱՅԸ ԲԱՐԲԱՌԱՅԻՆ ՄԻ ԶԱՆԻ ԲԱՌԵՐՈՒՄ
(Ստուգաբանություններ)

ՄՀԵՐ ՔՈՒՍՈՒՆՑ

Այսպիսով կարծում ենք՝ **-եալ>-յալ(-յալ[ա])** ածանցով Սյունիք-Արցախում հանդիպում է երեք բառ՝ **անգյալ**, **ժանգյալ**, **մալգյալ**, որոնք, հնարավոր է, բարբառախմբում ձևավորվել են գրաբարի շրջանում. **անկ[գ]**, **ժանգ[կ]**, **մակաղ[գ]** արմատներից և անցյալ դերբայի իմաստային ընդհանրացումից առաջ են եկել գոյականներ, որոնցում քերականական մասնիկի մթազնուովից¹ նոր բառեր են ձևավորվել: Ընդ որում նշված արմատները բարբառախմբում առկայացած են **-գ** վերջադիրով, որի ազդեցությամբ **-եալ>յալ** հնչունական փոփոխության հետևանքով վերջին ձայնավորը քմայնացել է՝ **-յալ**: Հավանական է, որ **եալ>յալ** անցումը բարբառում ավելի վաղ է տեղի ունեցել՝ մինչև միջին հայերենի կազմավորումը:

РЕЗЮМЕ

ПРОШЕДШЕЕ ВРЕМЯ ПРИЧАСТИЙ В НЕСКОЛЬКИХ СЛОВАХ ДРЕВНЕАРМЯНСКОГО (ГРАБАР) ЯЗЫКА

(Этимологии)

ՄԴԵՐ ԿՄԱՄԱՆՑ

Ключевые слова: Территория диалекта Сюника и Арцаха, древнеармянский (грабар), суффикс, корень, смысл, этимология, языки тюркский, персидский.

От частицы флексии прошедшего времени **-еал (-եալ)** в древнеармянском (грабар) образовалась суффикс **-ял (-յալ)**. В лексиконе диалекта Сюника и Арцаха при помощи этой суффикса образовались слова **ангял (անգյալ)**, **жангял (ժանգյալ)**, **магял (մալգյալ)**, которые встречаются также и в древнеармянском (грабар). Территории этих диалектов, эти слова перешли в тюркский язык и в его некоторые диалекты.

При помощи суффикса **-ял (-յալ)** в группах диалекта образовались слова с другими значениями, образованиями

1 **-Յալ** ածանցի տարածվածության մասին կարելի է տեսնել Նաև՝ **Մուրվայան Ա.**, Հայոց լեզվի բառային կազմը, ԳԱԱ հրատարակչություն, Եր., 1955, էջ 282:

и формами. От слова **маках** (մակաղ), **анкеал** (անկեալ), **жанк** (ժանկ) и от суффикса **-ял** (-յալ) сформировались слова: **магял** (մագյալ) «место загона скота», **ангял** (անգյալ) «ленивый медлительный», **жангял** (ժանգյալ) «дикое растение».

SUMMARY

PAST PARTICIPLE OF GRABAR IN A FEW DIALECTICAL WORDS

(Etymologies)

MHER KUMUNTS

Key words: *Syunik-Artsakh dialectical area, grabar, derivative, radix, meaning, languages, etymology, Turkish, Persian.*

-Yal (-եալ) derivative came from **-eal** (-յալ) particle of grabar past participle. In dialectical vocabulary Syunik-Artsakh words **angyal** (անգյալ), **djangyal** (ժանգյալ), **magyal** (մագյալ) which are also in grabar, were formed with this derivative. This words were passed from dialectical area to Turkish and its some dialects. In dialect's group from words with **-yal** (-յալ) derivative were formed other meanings and constructions.

From the word **makagh** (մակաղ) and derivative **-yal** (-յալ) was formed word **magyal** (մագյալ) (place where gathers brutes), from the word **ankeal** (անկեալ) and derivative **-yal** (-յալ) was formed word **angyal** (անգյալ) (lazy, slow), from the word **djank** (ժանկ) and derivative **-yal** (-յալ) was formed word **djangyal** (ժանգյալ) (wild plant).

ՍԱՐՈՅԱՆ-ԿԱՐԱՊԵՆՑ ԳՐԱԿԱՆ ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐ*

Բանալի բառեր` արդիական հնչեղություն, գրչի թագավոր, համաշխարհային գիտակցություն, գրական առնչություններ, անհանգրվան հոգեաշխարհ, օտարություն, ամերիկյան գրականություն, ստեղծագործական դաշտ, կերպար, հայրենիք, հայկական միջավայր:

Գրական կյանքի առաջին տասնամյակում Սարոյանը գրել է մի քանի հարյուր պատմվածք, որոնց մեծ մասն ամփոփվել է տասից ավելի ժողովածուներում: Սարոյանը հատկապես կարճ պատմվածքի, նորավեպի ժանրում ներմուծել է տեղի ու ժամանակի իրողության հետ սերտորեն կապված սոցիալական-հոգեբանական թարմ թեմատիկա, արդիական հնչեղություն ունեցող մարդասիրական բարոյական մոտիվներ, պատումի նոր ձևեր, քնարականությամբ ու հումորով լի հնչերանգներ, բնականություն և ճշմարտացիություն, պատկերների ու կերպարների գունագեղություն: Սարոյանի գրական շատ կերպարներ ներկայացնում են հայկական միջավայրը` ազգային ավանդույթներով ու բարքերով: Հայրենիքի մոտիվը, ինչպես և նրա դարավոր ավանդույթները պահպանող մարդկանց կերպարները հակադրվում են ապրելակերպի համահարթեցնող չափանիշներին: Իրականության հետ նույնպիսի հարաբերության մեջ են «տարօրինակ» ու ձախորդ մարդկանց սարոյանական կերպարները ու հատկապես մանուկների և պատանիների տպավորիչ կերպարները: Դրանք համաշխարհային գրականության մեջ մտել են որպես հոգու մաքրության խորհրդանշան: Իրականության և երազանքի հակադրության, անհատի ներքին ազատության և հոգևոր գեղեցկության, սիրո և բարու հաստատման մոտիվներն են մարմնավորված Սարոյանի արձակում, որոնք հետաքրքրական լուծում են ստացել նաև նրա դրամաներում («Իմ սիրտը լեռներում է»), «Կյանքիդ ժամանակը», «Քարանձավի մարդիկ», «Հե՛, ո՞վ կա այդտեղ», «Կոտորածն մանկանց», «Խաղողի այգին» պիեսները: Ե՛վ

* Հոդվածն ընդունվել է 25.04.2019 թ., երաշխավորվել է տպագրության բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ Ամայա Գրիգորյանի կողմից՝ 03.05.2019 թ., ստորագրվել է տպագրության՝ 07.05.2019 թ.:

Սարոյանը, և՛ Կարապետն իր հաճախ ստեղծագործական դաշտում ներգրավել են ծագումով օտար կերպարների՝ «անծանոթ հոգիների»։ Նրանց հերոսներն «օտարության» տառապանքը կիսող մարդիկ են՝ անկախ ազգությունից, սակայն մի էական չափով՝ հայկական բնավորության գծերով։

Հ. Կարապետն զնահատել է Վ. Սարոյանի վաստակը բացառիկության թելադրանքով. «Ֆրեզկոյի մեծագույն ու անառարկելի արքան մնում էր Ուիլեամ Սարոյեանը – Գրչի Թագաւորը, որը ոչ միայն հայութեանը ճանաչում պարգեւեց ժողովուրդների այս հոծ խառնարանում, այլ նաեւ Ֆրեզկոյի անունը դրեց քարտեսի վրայ։ Իսկ անելի լայն առումով՝ Սարոյեանն էր, որ Հայաստանի մարմինն ու ոգին դրոշմեց համաշխարհային գիտակցութեան անջնջելի պաստառի վրայ»¹։

Մեզ թույլ տանք խորանալ Կարապետ-Սարոյան այն տարբերիչ գծերի վրա, որոնք նկատվել են մերօրյա գրական խաչուղիներում։ «Կարապետն մեր հայատառ Սարոյեանն էր, որոշ չափով, անշուշտ, որուն անձին ու գրականութեան քաջածանօթ էր ու միշտ հիացումով կը խօսէր...,- նկատում է արծակագիր Մարգար Շարաբխանյանը։- Բայց Կարապետն կեանքին մէջ արկածախնդիր չէր եղած Սարոյեանի նման։ Մեր խորթափանց գրողն էր ան՝ առանց «տերվիշական» ու հպանցիկ դրսեւորումներու, ինչպէս եղած էր Սարոյեան իր բովանդակ կեանքին ու ստեղծագործութեանց մէջ»²։ Սարոյան-Կարապետն գրական առնչությունների ծալքերը փորձում է բացել Հր. Թամրազյանը։ Բանն այն է, որ Վ. Սարոյանը Հ. Կարապետին շարունակ հորդորում էր «բացուել» ընթերցողին անգլերեն, քանի որ հայերեն կարդացողները քիչ են։ Այս առումով արժե նկատել գրող և հրապարակագիր Մարգար Շարաբխանյանի գրական «հիշողությունը». «Կարապետն, ճիշդ է որ ամերիկեան մամուլին մէջ փորձեր կատարած էր՝ օրուան պատշաճ քրոնիկներ ու կարճ պատմութեանքներ ուղարկելով անոնց։ Իսկ Համաստեղ, որուն հանդէպ (Հ. Կարապետն – Ն.Ս.) մեծ հիացում ուներ, անընդհատ ու բուռն կերպով կը թելադրէր, Կարապետն շուտով անդրադարձաւ, թէ ինք հայ գրող էր, եւ թէ ամերիկեան գրականութիւնն իրեն պետք չունէր, եւ ոչ ալ ինք ամերիկեան գրականութեան»³։

1 Կարապետն 3., Երկու աշխարհ...- Տե՛ս՝ գրողի «Սարոյեանը՝ մասամբ ներհայեցողութեամբ» ծրագրային փորձագրությունը։- Էջ 159-160։

2 «Հորիզոն» / գրական, Մայիս, Մոսկւայ, 2017, էջ 9-10։

3 «Հորիզոն» / գրական, Մոսկւայ, 2017, թիւ 5 (393), Մայիս, ԼԳ. տարի, էջ 10։

Երկու գրողներին ստեղծագործական դաշտում մերձեցնում է մարդկային տեղը ճշտորոշելու անդուլ պայքարը, ուր պատրաստի պատասխաններ չկան:

«Մարդկային տեղը ճշտորոշելու անդուլ գերխնդիրը», իբրև գեղարվեստական հանձնառություն, փոխում է Հ. Կարապետյանի քննության ազգային անկյունագիծը դեպի մարդն առհասարակ, և նա էլ Վիլյամ Սարոյանի նման դառնում է իր գրականության հավաքական հերոսը՝ լինի ամերիկացի թե հայ, արաբ թե թուրք, ինչը որևէ նոր բան չի փոխելու հարցադրումների ուղղության մեջ: Այդտեղ ազգային գերակայություն կամ գնահատության գեղչում չեք գտնի:

Ամերիկյան, արդեն կրկնակի օտարության մեջ է ապրում ու տառապում Կարապետյանի «Որևէ տեղից մինչև այստեղ» պատմվածքի հերոս Արտավը, ով իր ողբերգականությամբ ու մահով շատ նման է Վիլյամ Սարոյանի «Հե՛յ, ով կա այդտեղ» մեկ գործողությամբ դրամայի հերոսներին: Արտավը ծնունդով Էջմիածնից է, ապրել է Երևանում, կնոջ և զավակի հետ աքսորվել Սիբիր, ապա բռնել պանդխտության նոր ճամփան՝ դեպի Ամերիկա: Եկել է, բայց դա իր վերջնական հանգրվանը չէ: Մենության խորհուրդը նրան մերձեցնում է Վիլյամ Սարոյանի «Հե՛յ, ով կա այդտեղ» դրամայի հերոսներին, ինչի հուշարար բանալին կարծես երկուսի խորագրերի նմանությունն է:

Ասես Վ. Սարոյանի աշխարհից «իջած» Արտավը հստակ լսում է հողի տնքոցը և իր հետ գրույցի բռնված գրողին հարցնում, թե արդյոք վերջինս զգո՞ւմ է այդ տնքոցը: «Մի՞թե հոգիների տնքոցը բավական չէ», («Անծանօթ հոգիներ», Էջ 61),- հետևում է «սարոյանական» պատասխանը: Հարցադրումը մեզ ականա տանում է դեպի Համաստեղի «Միջոն», որի հերոսը նույնպես ապշում էր հողի ներսից եկող և իրեն հասանելի ձայների արձագանքից:

Արթնության ոգին ընդհանուր ելակետ է Հակոբ Կարապետյանի «Վերջին կայարանը» և Վիլյամ Սարոյանի «Գեղեցիկ, սպիտակ ձիու ամառը» պատմվածքներում:

«Վերջին կայարանը» պատմվածքում Կարապետյանը գրեթե չարենցյան տիպի «ազգային երազ»-երազանքի հաճախանքն ապրում է պատանի Վաչիկ Արամյանի շնորհիվ: Վաչիկի համար Երևանը հրապույր է, ձգողական կույր ներուժ, արյան հեռակա թվացող վազք: Ժամանակին ծնողների գորովագուրթ պատմությունները Հայաստանի, Արարատ-Մասիսի ու Արաքսի մասին այնքան էին բորբոքել տասնամյա պատա-

նու երևակայությունը, որ նա համոզում է սևամորթ ընկերոջը, որի անունը շարունակվող երազի հանդուգն ու հեգնական տրամաբանությամբ Ջորջ Վաշինգտոն էր, թոցնել «մինչև վերջին կայարան» նշումով երկու տոմս, անցնել կամուրջներ ու ծովեր, հասնել հեքիաթի Երևան: Բայց գնացքը պատանիներին հասցնում է ընդամենը «վերջին կայարան», ոչ ավելին: Երազն ավարտվում է ամերիկյան տիրական ռեալությամբ, բայց առանց ցնցումի, առանց փիլիսոփայական գունավորումի: Նրանք հասել են Ջեֆերսոն,- ըստ Հ. Կարապետցի՝ «Հայկական Ամերիկայի» գեղարվեստական միջնաբերդը,- այստեղից զանգահարել են հայ պատանու մորը, որ գա զավակի ետևից. արկածն ավարտված է, տառապանքը՝ հաղթահարված: Սակայն Երևանը մնում է այդպես էլ «չնվաճված»:

Թախիծը հազարավոր մղոններ կտրելու տարածական պատրանք է ձևավորել, բայց այն ավելի է թանձրանում, երբ չենք հաղթահարում միջքաղաքային տարածքներ բաժանող սրտերի հանգրվանները: Դա բխում է Հ. Կարապետցի առաջին ժողովածուի՝ ընդհանուր առմամբ հայրենական կարոտի կսկիծը խորքերում թաքցնող հերոսների ընդհանրական դարձած վարքագծից, որոնք որոնում են իրենց այսքան բարդ Նոր Աշխարհում ու այդպես էլ չեն գտնում, քանի որ թաքցնում են իրենց անհանգրվան ներաշխարհը, երբ փորձում են ամերիկյան գրամշակութային աշխարհի հետ համընթաց քայլել: Ուղղակի Հ. Կարապետցը հայ ընթերցողի վախժորած ականջին փորձում է հասցնել նրանց անկարեկիր հառաչանքի չերևացող նստվածքների ծանրությունը:

Ամերիկյան այս գողտրիկ նյութը հաճելիորեն հիշեցնում է Վիլյամ Սարոյանի՝ անհամեմատ վաղ գրված նշանավոր «Գեղեցիկ, սպիտակ ձիու ամառը» պատմվածքը՝ «Իմ անունն Արամ է» ժողովածուից, ուր պատանեկան խանդավառության նույն ազգային խորքն է՝ հպանցիկ, բայց հետք ձգած սյուժետային կառուցումով: Վ. Սարոյանի պատանիներին հաջողվում է գրաստ դարձած ձիու առավոտներին տենչ հաղորդել, այն, ինչ ենթագիտակցորեն իրենց ռունգերում է, իրենց հայկականության խորքերում: Ենթագիտակցական է նաև Հ. Կարապետցի պատանու հայկականության հաստատման նույնքան բորբոք քայլը, բնագոյներն են առաջնորդում նրան, նախորդ սերնդից մնացած կոչնակները, որոնց ակամա արձագանքում է որդին՝ վաղը գտարյուն ամերիկացի դառնալու ճանապարհին:

Գրականագետ Դ. Գասպարյանը բարձր գնահատելով Կարապետի «Վերջին կայարանը» պատմվածքը, առաջարկում է այն զետեղել Հայաստանի հանրակրթական հիմնական դպրոցի գրականության դասագրքերում՝ «...դրանով իսկ Հակոբ Կարապետի համար էջ բացելով գրականության ուսուցման մեր ծրագրերի մեջ»¹: Պահանջը, թվում է, տեղին է, միայն պիտի նկատի ունենալ ամերիկյան միջավայրի երկու խոշոր արձակագիրներ Վ. Սարոյանի և Հ. Կարապետի գրական կյանքի մատուցման միասնական եղանակը. եթե խոսքն աշակերտների մեջ ազգային հպարտության ձևավորման պահանջն է, ապա ավելի նախընտրելի է համադրական քննության մեկ պատուհանը, որով հնարավոր է դառնում հայրենիքի տեսլականը ներկայացնել անմիջական շնչով:

Հուշագրության պատմավավերական հպանցիկ, բայց տպավորիչ կնիք ունեցող «Ռ՞ւր մնացին սասունցիները» պատմվածքում Կարապետը ներկայացնում է Անդրանիկի երբեմնի զինվոր, Սասունի ապստամբության մասնակից Սարգսի ամերիկյան «անշուք» օրերը: Նրա աչքի առաջ թուրքերը խոշտանգել են կնոջը, սրախողխող արել երկու մանկահասակ տղաներին: Նա առաջին անգամ տարագիրների շարքը լրացնում է իբրև «Ֆլորս Նաշընը» դրամատան դռնապան, բայց շարունակում է մնալ Մշո դաշտում՝ հողագործի իր աշխատանքի պատրանքին: Դրամատունն օվկիանոսից այն կողմ միայնակ, բայց երբեք չխեղճացող սասունցուն նվիրել էր տնամերձ տարածք, որն ինքը տարիների ընթացքում շենացրել է՝ գրքերի, քարտեզների շնորհիվ վերակերտելով Հայաստանի պատկերը՝ զույգ Արարատներով, Չվարթնոցով, Սուրբ Էջմիածնով, Արաքսով, Անիի մայր տաճարով, Օշականով, Մաշտոցի կիսանդրիով, Աղթամարով, Երեբունյքով ու, անտարակո՛ւյս, Երևանով, նրա շենչող լույսերով:

«Սասունցի Սարգիսը կառուցում էր, որպեսզի աշխարհը չէն մնայ, որպեսզի մարդն այլևս մարդուն վատութիւն չանի: Թէեւ նա ամբողջութիւնը չէր կռահում, սակայն գիտէր, զգում էր, որ մի տեղ մի բան խարխւել է, որ ինքն ու իր ցեղը ինչ-որ անասելի անդոհանքից են անցել» («Նոր աշխարհի հին սերմնացանները», էջ 119-120): Որքա՞ն համահունչ է «մի տեղ մի բան խարխւել է» տողը սարոյանական նշանավոր՝ «Ես ոչ մեկի

¹ Գասպարյան Դ., Հայ գրականություն, գիրք երկրորդ, էջ 259:

անունը չեմ տալիս, պա՛, բայց ինչ-որ տեղ մի բան սխալ է...»¹ արտահայտությանը «Իմ սիրտը լեռներում է» աշխարհահռչակ դրամայից: Նույնակարգ դատողության մենք հանդիպում ենք Կարապետի «Արևոտ առավոտների կարոտը» թավրիզի հայերի ջեֆերսոնյան կյանքի մասին պատմվածքից, որի հերոսը՝ մեծահարուստ Նիկողոս Մուրադխանյանը, չէր հաշտվում, որ իր հիշողության մեջ թարմ ու մնայուն են «...թաւրիզեան սպիտակ օրերը..., երբ կեանքն այնքան լի էր երազներով ու խոստովներով: Մի՞թէ աւելի լաւ չէր լինի Թաւրիզում չոր հաց ուտել եւ հայ մնալ, քան գալ այստեղ ոսկիների վրայ նստել ու մի պատառ հայութեան կարօտը քաշել: Չէ՛, մի տեղ հիմքում մի բան խարխլել է», - եզրակացնում է յոթանասունին մոտեցող ծերունին («Նոր աշխարհի հին սերմնացանները», էջ 221): Այս վերջին օրինակը ցույց է տալիս, թե Վ. Սարոյանը որքան խորն է նստած Հ. Կարապետի ստեղծագործական ներքին շերտերում:

ԱՍՓՈՓՈՒՄ

ՍԱՐՈՅԱՆ-ԿԱՐԱՊԵՏԻ ՏՐԱԿԱՆ ԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԻՄՈՆՅԱՆ ՆԱՆԱՐ

Սույն հոդվածում անդրադարձել ենք Վիլյամ Սարոյան-Հակոբ Կարապետի գրական առնչություններին: Փորձել ենք ցույց տալ, որ և՛ Սարոյանը, և՛ Կարապետը հաճախ ստեղծագործական դաշտում ներգրավել են ծագումով օտար կերպարների՝ «անծանոթ հոգիների»: Նրանց հերոսներն «օտարության» տառապանքը կիսող մարդիկ են՝ անկախ ազգությունից, սակայն մի էական չափով՝ հայկական բնավորության գծերով:

Երկու հեղինակների գործերը համեմատելով՝ եկել ենք հետևյալ եզրակացության. Վ. Սարոյանը խորն է նստած Հ. Կարապետի ստեղծագործական ներքին շերտերում:

1 **Սարոյան Վ.**, Ընտիր երկեր՝ չորս հատորով, հ. 2-րդ / պիեսներ, պատմվածքներ, Եր., «Սովետական գրող», 1987, տե՛ս՝ էջ 39 և էջ 42:

РЕЗЮМЕ

ЛИТЕРАТУРНЫЕ СООТНОШЕНИЯ САРОЯНА И КАРАПЕНЦА НАНАР СИМОНЯН

Ключевые слова: актуальное звучание, король пера, всемирное сознание, литературные соотношения, беспричальный внутренний мир, отчуждение, американская литература, творческое поле, образ, родина, армянская среда.

В данной статье анализируются литературные соотношения Акоп Карапенц-Вильям Сароян. Попытались показать, что в творческом поле и Сарояна и Карапенца «чужие» по происхождению образы, «незнакомые души». Их герои люди делившие гореч чужбины в независимости от национальности, но значительно носившие армянские черты характера.

Сравнивая труды двух авторов, мы пришли к выводу. произведения Акопа Карапенца вникнуты Вильямом Сарояном.

SUMMARY

SAROYAN-KARAPENTS LITERARY RELATIONS NANAR SIMONYAN

Key words: Modern sounding, king of pen, global consciousness, literary relations, worrying world-spirit, strangers, American literature, creativity, character, homeland, Armenian environment.

This article examines literary relations of Vilyam Saroyan - Hakob Karapents. We tried to show that both Saroyan and Karapents often included foreign origin characters of «unknown spirits» in their creative field. Their heroes are those who share the suffering of «strangers» regardless of nationality, but in essence, in terms of Armenian character.

Comparing the works of two authors, we came to the following conclusion: V. Saroyan is deeply seated in creative interior layers of H. Karapents.

ՌԵՆԱ ՄՈՎՍԵՍՅԱՆ

ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆ ԻԲՐԵՎ ԲԱՐԲԱՌԱՅԻՆ ԲԱՌԵՐԻ ՊԱՀԱՐԿՄԱՆ ԵՎ ԳՈՐԾԱԾԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԿԱՅՐ...*

Բանալի բառեր՝ ժողովրդայնացում, գեղարվեստական գրականություն, ծագումնաբանական բազմազանություն, կենսունակություն, բարբառայնություն, լեզվամտածողություն, ոճավորում, հնդեվրոպական, փոխառություն, իմաստային, բարբառախոս միջավայր:

Ժողովրդի բնավորության, մտածելակերպի, կենսափիլիսոփայության գեղարվեստական արտացոլման եղանակներից է լեզվի ժողովրդայնացումը: Իսկ լեզվի ժողովրդայնացման ուղիներից մեկը բարբառային ու ժողովրդախոսակցական իրողությունների գործածությունն է:

Հայ դասական և ժամանակակից գրողներից շատերն իրենց ստեղծագործությունների լեզվական միջոցների ընտրության շրջանակներն ընդլայնել են՝ ի հաշիվ լեզվի տարածական տարբերակների՝ բարբառների, ենթաբարբառների, խոսվածքների, որը հայ լեզվաբանության և գրաքննադատության մեջ տարբեր ժամանակներում տարբեր կերպ է գնահատվել, բարբառային իրողությունները դիտվել են կա՛մ որպես գրական նորմայից շեղումներ, «ցածր» ոճի դրսևորումներ, կա՛մ էլ բներանգ ստեղծելու, կերպավորման, ազգային հոգեբանության դրսևորման լավագույն միջոցներ և այլն:

Ջննելով բարբառային իրողությունների դրսևորման առանձնահատկություններն ու նպատակադրումը՝ նկատելի է հեղինակի կողմից դրանց կամա և կանխամտածված ընտրությունը: Ակամա ընտրությունը հեղինակի լեզվամտածողության ինքնաբուխ ու բնական արտահայտությունն է: Բարբառը կամ խոսվածքը լեզվական այն տարբերակն է, որին մարդը (այս դեպքում՝ գրողը) տիրապետում է վաղ մանկութ-

* Հոդվածն ընդունվել է 22.05.2019 թ., երաշխավորվել է տպագրության բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ Չինախդա Բալայանի կողմից՝ 04.06.2019 թ., ստորագրվել է տպագրության՝ 05.06.2019 թ.:

յունից, և բարբառով է նրա գիտակցության մեջ ձևավորված քերականական տրամաբանությունը: Այդ մասին Հր. Աճառյանը գրում է. «Ամեն մի անհատ, որ գրում է որևէ մայրենի լեզվով կամ բարբառով, ինչքան էլ լավ իմանա այդ օտար լեզուն կամ բարբառը, այնուամենայնիվ իր մայրենի լեզվից կամ բարբառից որևէ հետք կթողնի: Երբ մի վանեցի գրում է գրական հայերենով, լինի դա արևելյան թե արևմտյան բարբառով, անշուշտ մի քանի տեղ որոշյալ բառերի ը հոդը կուլ պիտի տա: Երբ Լեոն իր Հայոց Պատմության մեջ (Ա, էջ 609) գրում է. «Տիգրունից մոտ է ապրում», դրանով մատնում է իր դարաբաղցի լինելը (Ղարաբաղի բարբառում մօտ նախադրությունը վերցնում է բացառական խնդիր, մինչդեռ ուրիշ բարբառներում սեռական-տրական խնդիր): Կամ երբ Մանանդյանը իր հրատարակած Նոննոսի մեջ (Marburg, 1903, էջ 5, ծան.) գրում է պիտի լինի՜ր փոխանակ պիտի լիներ, դրանով մատնում է, թե խոսում է կարնեցոց բարբառը»¹:

Բարբառային իրողությունների կանխամտածված ընտրությունը ոճական արժեք ունի, գեղարվեստական ստեղծագործության մեջ այդ միավորներն ունեն տարբեր գործառնություններ. բնութագրում են տվյալ տարածաշրջանի կենցաղը, բարբառը կամ խոսվածքը դարձնում են ավելի ճանաչելի՝ ընդլայնելով ընթերցողի պատկերացումը տվյալ բարբառի առանձնահատկությունների մասին, և ստեղծելով համապատասխան բներանգ՝ գրական կերպարները դարձնում են ավելի գործուն, կերպավորում՝ ավելի համոզիչ: Բարբառային բառերի գործածումով հարստանում են գեղարվեստական լեզվի ոճական և պատկերավորման հնարավորությունները, ավելի անկեղծ է դրսևորվում հեղինակի վերաբերմունքը, բարբառային իրողությունների միջոցով գեղարվեստական խոսքը դառնում է ավելի բնական, և ընթերցողը ավելի է կապվում հեղինակի՝ որպես ժողովրդի միջից ծագած կերպարի հետ: Բացի դրանից՝ բարբառային իրողությունների գործածությունը նպաստում է նաև բարբառների ու գրական լեզվի մերձեցմանը՝ բարբառների հաշվին բազմապատկելով գրական լեզվի զարգացման հնարավորությունները:

Ուսումնասիրության նյութը Արցախի ժամանակակից գրողների ստեղծագործություններում գործածված բարբառային բառերն են:

¹ Աճառյան Հ., Հայոց լեզվի պատմություն, մաս 2, Երևան, Հայպետհրատ, 1951, էջ 116:

Արցախի գրողները Ղարաբաղի բարբառի կրողներն են, և նրանց ստեղծագործություններում դրսևորվող բարբառայնությունները մեծ մասամբ Արցախի տարածքի խոսվածքներին հատուկ իրողություններ են, որոնց մի մասը, բնականաբար, բնորոշ է նաև մյուս բարբառներին ու խոսվածքներին, մյուս մասը ինքնատիպ է, բնորոշ է միայն տարածաշրջանի խոսվածքներին:

Բարբառի հարուստ բառապաշարի հումքը Արցախի ժամանակակից գրողների ստեղծագործություններում դարձել է իրական պատկերների, տիպական կերպարների կերտման լավագույն միջոց: Դրանց գործածությունը ունի տեղական բներանգ ստեղծելու, ժողովրդի լեզվամտածողության և հոգեբանության ինքնատիպությունը ցույց տալու ոճական բեռնվածություն, գեղարվեստական խոսքին հաղորդում է աշխուժություն, կենդանություն, հարազատություն և անմիջականություն:

Ինչպես՝ *Որից վառվող-լույս տվող փիթեկան (պատրույգ) սնունդ է առնում: Առհասարակ ամեն շնչավոր նեղ օրին քաշվում է իր սամթը (այստեղ՝ կողմ)²: Ասեմ, որ նմանների ու մեկ էլ՝ փահլևանի (լարախաղաց) երևալը մեր կողմերում զվարճանալու լավ առիթ էր դառնում³: Սառույցը ցեխաջրի երեսը բարակ փառ (թաղանթ) էր կապել⁴:*

Գրողի կողմից բառի ընտրությունը պայմանավորված է ոչ միայն նրա տաղանդով, գեղագիտական ըմբռնումով, այլև երկի թեմատիկ առանձնահատկություններով, այն միջավայրով, որը ներկայացվում է ստեղծագործության մեջ: Եթե փորձենք ընդգծված բարբառային բառերը փոխարինել համապատասխան գրականներով, ապա կխամրի միջավայրի զգացողությունը և խոսքի բնականությունը: Հատկանշելի է մի իրողություն ևս. եթե այս կառույցները մի կողմից՝ սահմանափակում են ստեղծագործության «հանրամատչելիությունը», այսինքն՝ այլ բարբառակիր ընթերցողը հաճախ բառարանային ընթերցմամբ պետք է ընկալի համահենքը, ապա մյուս կողմից՝ այդօրինակ գործածությունները դառնում են տվյալ հանրության

1 Հակոբյան Վ., Չափիկը ջրավազանի հատակին, «Դիզակ պյուս» հրատ., Ստեփանակերտ, 2010, էջ 591:

2 Ղահրիյան Ա., Պատրանք, «Սովետական գրող» հրատ., Երևան, 1983, էջ 190:

3 Ավետիսյան Ն., Սրտի կայծեր, Ստեփանակերտ, «Վաչագան Բարեպաշտ» հրատ., 2013 էջ 82:

4 Հովհաննիսյան Մ, Երկեր, հ.1, «Վաչագան Բարեպաշտ» հրատ., էջ 376:

լեզվական առանձնահատկությունների, նաև մշակույթի ճանաչողության իրական փաստեր:

Գեղարվեստական խոսքում կրկնակի արժևորվում են բարբառային այն բառերը, որոնք գրական փոխարինիչներ չունեն: Նման բառերը գրական լեզվին հատուկ նկարագրական միջոցներով փոխարինելը խոսքը ոչ միայն գրկում է վերոնշյալ որակներից, այլև սեղմությունից, դիպուկությունից: Այսպես՝

*Մազան էլ ես կբերեմ, հլա որ գինին լավ եղավ, մի երկու բանկա էլ կապած կրմզուկ կբացեմ:*¹ - *Խմիչքի հետ գործածվող ուտելիքն էլ ես կբերեմ, հլա որ գինին լավ եղավ, մի երկու բանկա էլ կապած կրմզուկ կբացեմ:*

Շունը իսկույն ետ է դառնում, ցանկանում է աստիճաններով բարձրանալ, բայց աստիճանների վրա *խափանգը* փակած է²: - Շունը իսկույն ետ է դառնում, ցանկանում է աստիճաններով բարձրանալ, բայց *աստիճանների վրա դեպի ներքևահարկը կամ տանիքը բացված մուտքի վրա դրվող դռնակը* փակած է:

Ընդգծված բառերը նշված իմաստներով փոխարինելով՝ կորչում են նկարագրության տիպականությունը, բներանգային առանձնահատկությունները, թուլանում դինամիկությունը, իսկ եթե հեղինակն ընտրեր մոտ իմաստ արտահայտող այլ գրական բառեր (ինչպես՝ *մազա-ուտելիք, խափանգ-դռնակ* և այլն), ապա կտուժեր նկարագրության հասցեավորումը, հեղինակի ասելիքը կկորցներ ներգործության ուժը, խոսքի գեղարվեստական հատկանիշները կխամրեին:

Արցախի գրողների ստեղծագործություններում գործածված բարբառային բառերն ունեն նաև ծագումնաբանական բազմազանություն: Դրանց մեջ մեծ է և՛ բնիկ բառերի, և՛ փոխառությունների թիվը: Բնիկ հայերեն բառերը կազմում են թե՛ գրական հայերենի, թե՛ նրա բոլոր տարբերակների բառապաշարի միջուկը, հիմնաշերտը:

Հատկանշական է, որ ուսումնասիրվող ստեղծագործություններում իմաստային հետաքրքիր ծավալումներ ունեն հնդեվրոպական ծագման այն միավորները, որոնք վկայված չեն հայերենի գրավոր հուշարձաններում, բայց առկա են հայերենի քիչ թվով բարբառներում, այդ թվում Ղարաբաղի բարբառում: Այդպիսի միավորներ են **հեռ** (հ.ե. ers, գրբ. եռ) - 1.եռալը, 2.ցավ, կսկիծ, **կեփ** (գրբ. գաբ, հ.ե. ghabh) - այստեղ՝ *զիստ*,

1 Հովհաննիսյան Մ, Երկեր, հ1, «Վաչագան Բարեպաշտ» հրատ., էջ 241:

2 Նույն տեղում, էջ 401:

ագոր, Ի՞նչ ես կենիերդ բաց արել, բա դու սկի ամոթ չունե՞ս¹: **ճիթ** (հ.ե. gei) – ողկույզ-Մի ճիթ խաղող բարձրացել էր գլխից վեր²., **պող** -վառվող, կրակ կտրած ածուխ-Գոնե լուսացույցը, որ մթան մեջ պողի էր նման, շուտ կանաչե՞ր³., **տալ** (հ.ե. dhel)- ծառի ճյուղ 8.Երկու ոյուցագուն ծառեր՝ ճղատարած ու հզոր, ամեն մի տալը մի ծառ⁴ և այլ բառեր:

Պատմական զարգացման ընթացքում Ղարաբաղի բարբառի բառապաշարի հարստացման արտաքին աղբյուր են հանդիսացել հիմնականում արևելյան լեզուների (արաբերեն, պարսկերեն, թյուրքական լեզուներ) և ռուսերենի բառապաշարը: Արցախի գրողների ստեղծագործություններում բառապաշարի այդ շերտը ակտիվ կենսունակությամբ դրսևորվել է: Փոխառողն, անշուշտ, բարբառն է եղել, իսկ գրողների նպատակը ժամանակաշրջանի ժողովրդական խոսքն ու մտածողությունը ընթերցողին ներկայացնելն է: Հատկանշական է Ռ. Իշխանյանի նկատառումը. «Պետք է խստորեն տարբերել նախ իր՝ գրողի կատարած փոխառությունը օտար լեզվից և այն փոխառությունը, որը ոչ թե գրողը, այլ բարբառն է կատարել»⁵:

Օրինակ՝ **մագազին/մադազին** (ռուս. магазин, արաբ. magaz թրք. magaza, ֆր. magazin) – խանութ *Կարծեցի՝ ոսկու մագազին ես: Աղջի, էդ ինչի՞ ես զուգվել*⁶: **Գրադուզ/գըրադուզ** (ռուս. градус, լատ. gradus) – ջերմության, հեղուկի խտության, սպիրտի թնդության աստիճանի չափման միավոր - *Որ ընկեր Սահրադյանը տանի գրադուզը ստուգի*⁷, **Սարսաղ** (թրք. sarsak) – հիմար, տիմար- *Այ սարսաղ տերտեր, քեզ ո՞վ է իրավունք տվել*⁸: **Դայի** (թրք. dayə) – 1. քեռի, մորեղբայր, 2. տարեց տղամարդկանց դիմելու հարցական կոչական բառ -*Բա չգիտե՞ս, Կուլքի դայի..*⁹: **Ափաշկարա** (թրք. apaşı-kar) – ակնհայտ՝ պարզորոշ՝ բացահայտ կերպով-*Վանին քթի տակին նորից*

1 Օվյան Վ., Կապույտ տարիներ, Ստեփանակերտ, «Դիզակ պլուս» հրատ., 2007, էջ 306:

2 Ավետիսյան Ն., Սրտի կայծեր, Ստեփանակերտ, «Վաչագան Բարեպաշտ» հրատ., 2013, էջ 22:

3 Մարտիրոսյան Հ., Համազարկ հրաժեշտից առաջ, ՀԳՄ հրատ., Երևան, 2007, էջ 75:

4 Հովհաննիսյան Մ, Երկեր, հ1, «Վաչագան Բարեպաշտ» հրատ., էջ 229:

5 Իշխանյան Ռ., Բակունցի լեզվական արվեստը, «Միտք» հրատ., Երևան, 1965, էջ 91:

6 Օվյան Վ., Կապույտ տարիներ, «Դիզակ պլուս» հրատ., Ստեփանակերտ, 2007, էջ 307:

7 Նույն տեղում, էջ 249:

8 Նույն տեղում, էջ 42:

9 Աբրահամյան Ս., Սերունդների հետ, Երևան, «Ամարաս» հրատ., 2008, էջ 62:

խնդմնդաց՝ հիմա ափաշկարա ¹: **Չոփուշ** (թրք. čovuş) – գզիր - Գիշերվա կեսին մեկ էլ տարածվում է չոփուշ Թեմուրի ծայնը...²: **Մեզար** (արաբ. mezar) – մազից՝ բրդից գործած մեծ սփռոց, որի վրա շարում են խմորի գնդերը կամ թոնրից հանած տաք հացերը - Սոնա տատը մեզարը մեկնում էր հատակին, ինքը ծալապատիկ նստում...³: **Լդար** (պրսկ., թրք. lăgar) – նիհար, վտիտ - Լող-լող կերպարանքում, երկար լճար դեմքին ու խռիվ բեղերին իջած լրջությունն էր հիմա ծիծաղելի⁴ ևն:

Խնդրո առարկա գեղարվեստական ստեղծագործությունների մեջ ռուսական փոխառությունները քանակով գերազանցում են մնացած լեզուներից կատարած փոխառություններին: Հետաքրքրական է, որ Արցախի բանահյուսության լեզվի քննությանը նվիրված աշխատանքի մեջ Լ. Մարգարյանը նշում է, որ բանահյուսության լեզվում արևելյան լեզուներից կատարած փոխառությունները քանակով գերազանցում են ռուսական փոխառություններին: Պատկերն այդպիսին է նույնիսկ նորագիր բանահյուսական նմուշներում, չնայած թվում է՝ նորագիր բանահյուսական նմուշներում պետք է նկատվեր ռուսերեն փոխառությունների կտրուկ աճ՝ պայմանավորված վերջին տասնամյակներում բարբառ ներհոսած ռուսերեն բառերի մեծաքանակությամբ: Սա, ըստ Լ. Մարգարյանի, կարելի է բացատրել նրանով, որ բանասացները ավագ սերնդի ներկայացուցիչներ են, իսկ բանահավաքները բանահյուսական նմուշը փոխադրելիս նախանձախնդիր են նմուշի «բնօրինակային» առանձնահատկությունները պահպանելուն:

Գեղարվեստական գրականության պարագայում գրողի նախանձախնդրությունն ուղղված է տվյալ ժամանակաշրջանի ժողովրդի լեզվամտածողությունը ճիշտ ներկայացնելուն: Մեր կարծիքով՝ դրանով է պայմանավորված այն հանգամանքը, որ, ի տարբերություն բանահյուսական լեզվի, խորհրդային և հետխորհրդային ժամանակաշրջանի գեղարվեստական գրականության լեզվի բառապաշարը հարուստ է ռուսերենից կատարած բարբառային փոխառություններով: Ինչպես՝ **Մասկա** - (ռուս. маска, իտ. maschera, ֆր. masque) – դիմակ - *Ինչո՞ւ*

1 Հովհաննիսյան Մ., Երկեր, հ1, «Վաչագան Բարեպաշտ» հրատ., էջ 113:

2 Նույն տեղում, էջ 145:

3 Նույն տեղում, էջ 224:

4 Ղաիրիյան Ա., Պատրանք, «Սովետական գրող» հրատ., Երևան, 1983, էջ 67:

Ե ներս մտել ձեռնոցներով ու սպիտակ մասկայով¹: **Տելեգրեյկա** (ռուս. телегрейка) – տղամարդու մզդակած հաստ ու կարճ վերնազգեստ - Եկավ սապոգները քարշ տալով, տելեգրեյկան ուներին ծոված ու գլխարկն աչքերը համարյա ծածկած²: **Դոխտուր** (ռուս. доктор, լատ. doctor) – բժիշկ - *Բաղունց Հակոբ ապոր Նվարդը դոխտուր է դարձել, չէ՞³*: **Շոփեր** (ռուս. шофер, ֆր. chouffeur) – վարորդ-Մաթևոսի համար քաղաքի հասուն աղջիկները վարժուհիներ են, երիտասարդները՝ վարսավիրներ կամ «շոփերներ»⁴:

Ծագումով փոխառյալ մի շարք բառեր բարբառում և մեր օրինակներում գործածվում են փոխատու լեզվում ունեցած բառիմաստից տարբերվող նոր իմաստով, մի շարք բառեր էլ գուգահեռաբար պահում են նաև փոխատու լեզվի իմաստը: Օրինակ՝

քիլիկյոշ (պրսկ. kālǧūš) բառը փոխատու լեզվում ունի «եռացրած» իմաստը, իսկ բարբառում բառիմաստը մասնավորվել է և նշանակում է «կերակրատեսակ, որ պատրաստում են չորաթանը ջրի մեջ լուծելով և վրան յուղի մեջ խարկած տիս լցնելով»: Ինչպես՝ *Քիլիկյոշ ... Կարո՞ղ ես եփել: Սիրիրում այնքան եմ հիշել մայրիկի եփած կերակուրները*⁵:

չանչախ (պրսկ. čākāčāk)-ը պարսկերենում ունի «դռան թակիչ» իմաստը, Ղարաբաղի բարբառում բառիմաստն ընդլայնվել է և ունի հետևյալ նշանակությունները. 1 ջրաղացի կրիճակին ամրացված ու ծայրով ջրաղացքարի վրա ընկած փայտե շերտիկ, որի ցնցումները հաղորդվում են կրիճակին, և աղուևը դանդաղորեն թափվում է քարի անցքի մեջ 2. փայտե հաստ ցից, որ խրում են գետնի մեջ, 3. փխբ. շատախոս մարդ: Մեր օրինակում էլ բառը գործածված է վերջին՝ փոխաբերական իմաստով: Համապատասխան պայմաններով թելադրված՝ առաջին երկու իմաստները գործածության նվազ հաճախականություն ունեն, մինչդեռ փոխաբերական իմաստով

1 Հակոբյան Վ., Չատիկը ջրավազանի հատակին, «Դիզակ պյուս» հրատ., Ստեփանակերտ, 2010, էջ 218:

2 Ղահրիյան Ա., Պատրանք, «Սովետական գրող» հրատ., Երևան, 1983, էջ 82:

3 Աբրահամյան Ս., Սերունդների հետ, Երևան, «Ամարաս» հրատ., 2008, էջ 47:

4 Օվյան Վ., Կապույտ տարիներ, «Դիզակ պյուս» հրատ., Ստեփանակերտ, 2007, էջ 89:

5 Հակոբյան Վ., Չատիկը ջրավազանի հատակին, «Դիզակ պյուս» հրատ., Ստեփանակերտ, 2010, էջ 379:

գործածությունը կենսունակ է: Ինչպես՝ *Գլուխը լուրջ-լուրջ տմբամբացնում է չանչափ Բենիկը*¹:

փանջաք (պրսկ. fenče) բառը փոխատու լեզվում գործածվում է «*ծեռքի թաթ*» իմաստով, բարբառում բառիմաստի ծավալումով ունի «*մի ծեռքով՝ բռնով տանելու չափով քանակություն (խոտի, հացաբույսի և այլն)*» և «տասը կամ քսան խուրձից բաղկացած փոքրիկ դեզ» իմաստները: Ինչպես՝ *Լավ, ի՞նչ անենք, թե օրական վեց փանջաք հունձ ես անում*²:

շաբաշ (պրսկ. šabaš - կեցցե՛, շա՛տ լավ) բառը բառիմաստի շրջումով բարբառում կիրառվում է «*հարսանիքի՝ տոնահամբության և այլնի ժամանակ նվագողներին, պարողներին տրվող դրամական նվեր*» նշանակությամբ, ինչպես՝ Ինձ համար «*Ջեյրանի*» նվագիր, հիսուն ռուբլի **շաբաշ** եմ տալիս³:

քավթառ-ը (պրսկ. kaftār) փոխատու պահլավերենի «բորենի» նշանակությամբ բարբառում չի գործածվում: Այն ստացել է «*տգեղ, ծեր (ջաղու)*» իմաստները և ունի ընդգծված բացասական երանգ: Ինչպես՝ Անամոթ, անամոթ **քավթառ** կին է, բայց այնպես է զուգվում-գարդարվում, կարծես հարսատեսի է պատրաստվում...⁴:

խալաթ (արաբ. xəlāt) բառը փոխատու լեզվի «*ընծա, նվեր*» իմաստին զուգահեռ ունի «տանը կամ աշխատանքի վայրում հագնելու երկար վերնազգեստ» իմաստը, ինչպես՝ *Սերիկ, այդ ինչո՞ւ է խալաթդ սևացել*⁵:

Արցախի և Չանգեզուրի գրողների ստեղծագործություններում գործածված որոշ բարբառային բառերի կենսունակությունը փորձել ենք որոշել՝ հարցում կատարելով տարբեր սերունդների ներկայացուցիչների շրջանում: Առանձնացրել ենք 50 բնիկ և փոխառյալ բարբառային բառեր, որոնք գիտեն և գործածում են 70-85 տարեկան բոլոր հարցվողները (12 հոգի) :

Այդ բառերի մոտ կեսը՝ **յուղոնիկ-1**⁶ (*հավերի ընտանիքին պատկանող վայրի կամ ընտանի փոքրիկ թռչուն*), **քյափուռ-0** (*անխիղճ, անգութ մարդ*), **դալք-0** (1. *կեղծ, խաբիված*, 2. *ծույլ, դանդաղաշարժ*), **փանջաք-0** (*տասը կամ քսան խուր-*

1 Օվյան Վ., Կապույտ տարիներ, «Դիզակ պլուս» հրատ., Ստեփանակերտ, 2007, էջ 31:

2 Նույն տեղում, էջ 232:

3 Նույն տեղում, էջ 45:

4 Հովհաննիսյան Մ., Երկեր, հ1, «Վաչագան Բարեպաշտ» հրատ., էջ 173:

5 Հակոբյան Վ., Չատիկը ջրավազանի հատակին, «Դիզակ պլուս» հրատ., Ստեփանակերտ, 2010, էջ 506:

6 Թվերով տրվում է համապատասխան բառն իմացողների քանակը:

ծից բաղկացած փոքրիկ դեզ), **մազա-3** (խմիչքի հետ գործածվող ուտելիք), **քյոհլան-0** (արագաշարժ), **թամբաքյու-0** (մորմազգիների ընտանիքին պատկանող բույս, որի չորացրած և մանրացրած տերևները գործածում են ծխելու համար), **մաշալա-3** (գոհունակություն, խրախուսանք, բարեմաղթություն արտահայտող բացական-չություն՝ կեցցես), **մազալու-0** (տեղը տեղին, համով, հոտով, 2. աշխույժ, հետաքրքիր), **քյառա-0** (ականջները կտրած), **դամիշ-3** (եղեգ), **դաբա-0** (կանացի երկար գգեստ), **խափանգ-0** (դեպի ներքնահարկը կամ տանիքը բացված մուտքի վրա դրվող դռնակ), **սարթ-0** (ած., 1. թունդ, բարկ, 2. համառ, 3. խիստ, դաժան, խստաբարո), **կուփեճ-0** (գորգագործների երկաթե ատամնավոր գործիք, որով գործածամեն շարքը ծեծում են՝ խիտ նստեցնելու՝ ամրացնելու համար), **ճաթ-0** (գարուց կամ կորեկից թխած հաց), **դիրմա-3**, (1. փամփուշտի արճճե մանր գնդակ, 2. ած., փխբ. մանր (պտուղների մասին), **մութրուբ-0** (անճարակ, խեղճ ու կրակ), **չետվեր-0** (տարողության չափ, որ հավասար է 4 լիտրի, 2. այդպիսի տարողությամբ շիշ), **կեփ-2**, (կարթանման երկճյուղ փայտիկ, որ կապում են թակի՝ պարանի մի ծայրին, իսկ մյուս ծայրն անցկացնելով դրա միջով՝ բեռը պրկում), **դյոյաթ-3** (ջանք, եռանդ, ուժ), **դաբադ-0** (խոշոր եղջերավոր անասունների վարակիչ հիվանդություն), **քյառա-0** (ականջները կտրած) անծանոթ է բարբառախոս միջավայրի 15-25 տարեկան բոլոր կամ գրեթե բոլոր հարցվողներին (50 հոգի): Գեղարվեստական գրականության մեջ սրանց գործածությունը առավել արժևորվում է. դրանցով ոչ միայն կոլորիտ է ստեղծվում, այլև գրականությունը դառնում է այդպիսի բառային միավորների գործածության ու պահպանման եզակի միջավայր:

Հիմք ընդունելով այդ բառերի անծանոթությունը, ըստ այդմ նաև սակավ գործածությունը նոր սերնդի խոսքում՝ պայմանականորեն դրանք համարում ենք անկենսունակ միավորներ:

Այդ բառերի մի մասի (**կուփեճ, ճաթ, կեփ, թամբաքյու, խափանգ, դաբա**) անկենսունակությունը պայմանավորված է նրանով, որ դրանք նշանակող իրերը, երևույթները դուրս են եկել կամ այլևս քիչ են գործածվում կենցաղում, իսկ մնացած բառերը գործածությունից դուրս են մղել դրանց գրական համարժեքները:

Առանձնացված բառերից համեմատաբար կենսունակ են

մուշտարի-48 (հաճախորդ, այցելու), **փառ-48** (թաղանթ), **աբուռ-47** (ամորթի, պատվի, պատկառանքի զգացում), չոփ-47 (1.չոր ճյուղ, փայտի կտոր, 2. փխբ. շատ նիհար), **ցաք-48** (փշոտ թուփ), **ճկռել-50** (կքվել), թազնիլ-45 (նստել՝ շան, գայլի, արջի մասին), **լազաթ-48** (1 հաճույք, բավականություն, 2. ած. հաճելի բավականություն պատճառող), **կռոճ-49** (շաքարի, քարաղի և այլնի ամբողջական կտոր, գուղձ), **դամաթ-44** (բախտով վիճակված բաժին), **գյուլ-50** (1.լճակ, 2. փոսի մեջ հավաքված ջուր), **դորթ-39** (ճիշտ, ճշմարիտ), չուխ-42 (ոտքից կամ ձեռքից հաշմանդամ, կաղ), **յալ-42** (1.սարալանջ, 2.ծիու և այլ կենդանիների վզի մազ), **սատոր-47** (փայտի հաստ կոճղ, որի վրա փայտ կամ միս են ջարդում, կտրտում), **օյին-48** (1.խաղ, խաբեբայություն, 2.մեկ ամբողջություն կազմող խաղի մի մասը, 3. մեկի գլխին բերած փորձանք), **փիալա-48** (վերևը՝ լայն, տակը նեղ հախճապակե բաժակ՝ առանց ունկի) բառերը, դրանց իմաստները գիտեին հարցվածների 80 տոկոսից ավելին: Դրանք հաճախ են հանդիպում խնդրո առարկա ստեղծագործություններում:

Այս բառերը հաճախական գործածություն ունեն նաև այսօր: Ի տարբերություն սրանց՝ ներքոբերյալ բառերը կարելի է համարել միջին կենսունակություն ունեցող բառեր: **Արդո-9** (խոշոր աղացած հացահատիկ, որով կերակրում են անասուններին), **դալլաք-9** (վարսավիր), **ռուզի-9** (բարիք, բերք, ապրուստի միջոց), **փիթելա-18** (պատրույգ), **սամթ-20** (1.նպատակահարմար եղանակ, 2. կողմ, որոշ ուղղությամբ ընկած բնակավայր), **խախալ-21** (խոշոր անցքերով մաղ՝ ցորենը, գարին, ընդեղենը մաքրելու համար), **արսղզ-25** (1.անհոգ, ոչնչով չմտահոգվող, 2. անամոթ, անպատկառ, 3. դիմացկուն (բույսերի մասին), **քիլինկյոշ-25** (կերակրատեսակ, որ պատրաստում են չորաթանը ջրի մեջ լուծելով և վրան յուղի մեջ խարկած սոխ լցնելով), **դիյամաթ-33** (սաստիկ ցուրտ, սառնամանիք), **չանչախ-27** (շատախոս մարդ), **նամարդ-24** (տմարդի, ստոր մարդ), **դուզդուն -35** (ագռավ):

Հարցումների արդյունքները վկայում են, որ բարբառի զարգացման ընթացքն անընդհատական է, և այն արտացոլում է հասարակական կյանքի տեղաշարժերը: Ըստ այդմ բառային մի շարք միավորներ աստիճանաբար արտամղվում են: Այս դեպքում գրավոր հուշարձանը՝ գեղարվեստական ստեղծ

ծագործությունը, դառնում է այդ բառերի ճանաչողության տարածք ու պահոց:

Այսպիսով՝ բարբառային բառերը գեղարվեստական գրականություն կարող են մուտք գործել ակամա՝ լեզվամտածողության թելադրանքով, և կամա՝ գեղարվեստական երկի ոճավորման նպատակով:

Արցախի գրողների ստեղծագործություններում գործածված բարբառային բառերը ունեն ինչպես իմաստային, այնպես էլ ծագումնաբանական բազմազանություն: Ուսումնասիրվող ստեղծագործություններում իմաստային հետաքրքիր ծավալումներ ունեն ինչպես հնդեվրոպական ծագման և հայերենի գրավոր հուշարձաններում չվկայված միավորները, այնպես էլ բարբառային փոխառությունները: Արցախի ժամանակակից գրողների ստեղծագործություններում մեծ թիվ են կազմում ռուսերենից կատարված բարբառային փոխառությունները, ինչը բացատրվում է նրանով, որ այդ հեղինակները ապրել և ստեղծագործել են խորհրդային և հետխորհրդային տարիներին: Հատկանշական է, որ ուսումնասիրվող գրականության մեջ գործածված բարբառային բառերի մի մասը անծանոթ է բարբառախոս միջավայրի 15-25 տարեկան բոլոր կամ գրեթե բոլոր հարցվողներին: Ուրեմն՝ գեղարվեստական խոսքը հաճախ դառնում է բարբառային բառերի պահպանման ու գործածության եզակի միջավայր:

ԱՄՓՈՓՈՒՄ

ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆ ԻՐՐԵԿ ԲԱՐԲԱՌԱՅԻՆ

ԲԱՌԵՐԻ ՊԱՀԱՐԿՄԱՆ ԵՎ ԳՈՐԾԱԾԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅԱՆ

ՄԻՋԱԿԱՅՐ...

ՌԵՆԱ ՄՈՎՍԵՍՅԱՆ

Գրողի կողմից՝ ժողովրդի բնավորության, մտածելակերպի, կենսափիլիսոփայության գեղարվեստական արտացոլման եղանակներից մեկը բարբառային ու ժողովրդախոսակցական իրողությունների գործածությունն է:

Բարբառային բառերը գեղարվեստական գրականություն կարող են մուտք գործել ակամա՝ լեզվամտածողության թելադրանքով, և կանխամտածված՝ գեղարվեստական երկի ոճավորման նպատակով:

Արցախի գրողների ստեղծագործություններում գործածված բարբառային բառերը ունեն ինչպես իմաստային, այնպես էլ ծագումնաբանական բազմազանություն: Հատկանշական է, որ ուսումնասիրվող գրականության մեջ գործածված բարբառային բառերի մի մասը անծանոթ է բարբառախոս միջավայրի նոր սերնդի բոլոր կամ գրեթե բոլոր ներկայացուցիչներին: Ուրեմն՝ գեղարվեստական խոսքը հաճախ դառնում է բարբառային բառերի պահպանման ու գործածության եզակի միջավայր:

РЕЗЮМЕ

ХУДОЖЕСТВЕННАЯ ЛИТЕРАТУРА КАК СРЕДА ХРАНЕНИЯ И АКТИВНОГО УПОТРЕБЛЕНИЯ ДИАЛЕКТНЫХ СЛОВ РЕНА МОВСЕСЯН

Ключевые слова: *популяризация, художественная литература, этимологическое многообразие, живучесть, диалектизм, языковое мышление, стилизация, индоевропейский, заимствование, смысловой, диалектная среда.*

Одним из художественных способов отображения характера народа, образа мышления, жизненной философии является применение диалектных и разговорных реалий со стороны писателя. Диалектные слова могут проникнуть в художественную литературу непроизвольно, под влиянием языкового мышления, а также преднамеренно, для стилизации художественного произведения. Диалектные слова, примененные в произведениях арцахских писателей, имеют как смысловое, так и этимологическое многообразие. Примечательно, что в изучаемой нами литературе часть диалектных слов незнакома для всех или почти всех представителей нового поколения диалектной среды. Значит, художественное слово часто становится единственной средой сохранения и применения диалектных слов.

SUMMARY

**FICTION LITERATURE AS ACTIVE INVIRONMENT OF STORAGE
AND USE OF DIALECTAL WORDS**

RENA MOVSESYAN

Key words: *popularization, fiction, etymological diversity, vitality, dialectism, linguistic thinking, stylization, Indo-European, borrowing, semantic, dialectal environment.*

Fiction as an Environment for the Storage and Active Use of Dialectal Words One of the artistic ways of the writer's reflection of the character of people, the way of thinking, the philosophy of life is the use of dialectal and colloquial realities. Dialectal words can penetrate into the fiction literature involuntarily, under the influence of linguistic thinking, and intentionally, for stylization of the work of art. Dialectal words used in the works of Artsakh writers have both a semantic and etymological diversity. It is noteworthy that in literature some of the dialectal words are unfamiliar to all or almost all representatives of the new generation of the dialectal environment. Hence, the artistic word often becomes the only environment for the preservation and use of dialectal words.

ՉՈՒՆՐԱ ԵՐՎԱՆԴՅԱՆ

ԱՐՑԱԽ ԱՇԽԱՐՀԻ ՆԿԱՐԱԳԻՐՆ ՈՒ ԲՈՎԱՆԴԱԿԱՎՈՐՈՒՄԸ ՎԱՐԴԱՆ ՀԱԿՈՒՅԱՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ*

Բանալի բառեր՝ պոետական, հիմնարար, բնաշխարհիկ, կոթողային, փառերգող, աստվածանվեր, ներաշխարհային, խորհրդանիշ-օրինակ, ինքնաճանաչման, սրբագործված:

Քաղաքական, սոցիալ-բարոյական ու հոգեբանական դժվարին կացությունները իրենց հետ գրականություն են բերում նոր հնչերանգներ, նոր վարքագիծ ու նոր կենսադիրքորոշում: Ամսան չէ նաև Վարդան Հակոբյանի ստեղծած գրականությունը, որի էջերում ոչ միայն ի բաց ասվածը, այլև ներխուժային տարածքներում պահված ենթատեքստային գաղտնաշերտերն են իրենց ներքին ազդակներով տեսանելի դարձնում պոետական վարքագիծն ու դիրքորոշումը, բանաստեղծելու և աշխարհը ընկալելու կերպը:

Հակոբյանի պոետական աշխարհում, մեծ մասամբ անսպասելի, խոսքային զուգորդումների միջոցով ձևավորվում են գեղարվեստական պատկերների իմաստային շերտեր, որոնց գաղտնագրերի բացում-ընթերցումով է հնարավոր հասու դառնալ հեղինակի գեղագիտական իդեալին, տեսնել նրա մտածումների խորքը՝ դառնալով ինքնատիպ փոխաբերություններով, մետաֆիզիկական այլաբանություններով հարուստ բանաստեղծական խոսքի հարընթաց փոփոխությունների վկան:

Վարդան Հակոբյանի գեղագիտական իդեալը արցախցու կոթողային տեսակն է, արցախցու այն տեսակը, որ սարեր է տեսնում «անգամ թռչող հավքի թևիկներին», իսկ հարընթաց փոփոխություններով պոետական խոսքի գերակա թեման «սրտի չափ փոքր, աշխարհի չափ մեծ»¹ Արցախն է, որտեղ՝ «Անաշուն տխրություն է: Թռչուններն արցախյան երկնքում// սավառնող խաչեր են, երբ իջնում են քարի՝ //քարը դառնում

* Հոդվածն ընդունվել է 27.05.2019 թ., երաշխավորվել է տպագրության բանասիրական գիտությունների թեկնածու Կիմ Գաբրիելյանի կողմից՝ 04.06.2019 թ., ստորագրվել է տպագրության՝ 05.06.2019 թ.:

1 Մուշեղ Գալստյանի՝ Հայաստանը բնութագրող խոսք-պատկերն է (Քեզ վերևից չպետք է նայել, Եր., «Նաիրի» հրատ., Եր., 1990, էջ 10):

Ե վանք, երբ ծառի են իջնում //ծառը դառնում է եկեղեցի...»
(«Կոնդոլիզա Ռայսը Ղարաբաղում»):

Բանաստեղծի կերպարավորած բնապատկերներում անգամ փոխաբերականացված հերոսները հիմնականում Արցախն ու արցախցիներն են: Հեղինակը գեղագիտական միջավայր ստեղծող մանրահամակարգի բազմատեսակ տարրերով է իրականացնում իր հավատամքի հիմը կազմող հայրենի եզերքի և նրա մարդկանց ճակատագրի պատկերավորումը՝ դրանով իսկ գեղարվեստականացնելով նրանց գոյի և հավերժելու իմաստասիրական հիմնադրույթը:

«Չկա հայրենիք, որ չունենա իր արվեստը, ուրեմն և չկա արվեստ, որ չունենա իր հայրենիքը», - գրում է Վահրամ Փափազյանը: Մեծ արտիստի խոսքից օգտվելով՝ վերաբանաձևումով ասենք՝ Արցախ աշխարհի բանաստեղծ Վարդան Հակոբյանի արվեստի հայրենիքը Արցախն է: Իրողություն, որ բանաստեղծն իր համար մեծ երանությունն ու պատիվ է համարում՝ «Իսկ Մայակովսկին կամ Ուիթմենը որտեղի՞ց իմանան, թե // ինչ երանություն է՝ չճանաչված երկրի // քաղաքացի և, առավել ևս՝ բանաստեղծ լինելը» (**«Հանգրեք մուկը»**):

Արցախով հպարտանալն ու նրա հանդեպ տածած անսահման սերը Հակոբյանի գեղագիտական աշխարհի հիմնարար տարրերից են, և պատահական չէ, որ նրա բանաստեղծական եության խորքն ու տարածքը ամբողջ հարստությամբ երևում են հենց Արցախին և արցախցուն նվիրված գործերում, որոնց հենքում արցախյան բնաշխարհիկ խորապատկերներով ու գունդերանգով գեղարվեստականացված արցախական ոգին է, հավատն ու լավ օրվա երազանքը: Հայրենի եզերքի նկատմամբ տածած խորունկ սերը, նրա խորհրդանիշներով ժայռ ու քերծով, վանք ու մատուռով, քար ու խաչքարով անսահման հիացումը, ինչպես և նրա ոգեպինդ գավակների հանդեպ ունեցած հպարտության զգացումը միշտ աներեր են պահել Վարդան Հակոբյանի հավատն ու պոետական ոգին: Հենց այդ հավատն ու ոգին և իր ժողովրդի արժանապատիվ ապագայի հույսը ստեղծեցին նրա՝ գեղարվեստական աշխարհ բերած ազգային ինքնագիտակցության յուրատիպ կերպը:

Ընդհանրապես անմեկնելի է այն կապի գաղտնագիրը, որ կա մարդու և հայրենիքի, ինչպես և ծննդյան եզերքի միջև (**«Իմ երակներով անլուռ հոսում է, // Ծաղկում է լեզվում հող ու հայրենիք»**, **«Ես ինձ «տանել» չեմ կարողանում, // երբ Ստեփանակերտում չեմ»**): Հայեցման հավաստումն են հայրենյաց

հողի համար նահատակվող-մարտիրոսվողների, հերոսացող-անմահացողների, նրանց առաջնորդող առեղծվածային ոգու մասին անհիշելի ժամանակներից հյուսվող հերոսապատումներն ու ասքերը:

Ոգու որոնման ճանապարհին ունեցած ցավի ու տառապանքի զգացումները, մաքառման դառնությունները, ճանաչման ու հաստատման բերկրանքը, ինչպես և որոնումները հաղթանակով պսակելու զգացողությունները Հակոբյանի պոեզիայում դարձել են գեղարվեստական խտացումներ, վերածվել գեղագիտական վիճակների ներթափանցումներով հյուսվող բարձրարվեստ խոսքի պոետական կենսավորումներ: Պետք է ասել, որ դրանցում Արցախ աշխարհի թեմայի գերակայությունը պայմանավորված է ոչ միայն հեղինակի աշխարհայացքով, այլ նաև ոչ վաղ անցյալի արյունոտ իրադարձությունների, դրանց հաջորդած կենսաերևույթների նրա ցավոտ ընկալումներով. *«Օրը սպասումից ցամաքած առու է: Տխրության // տերը պոետն է միայն: Իր հողի վրա տուն // ունենալն արցախցու կերպ է: Ուրիշ հողում չմեռնելը՝ // նույնպես» («Դիրքեր»):*

Ընդհանրապես բանաստեղծի գեղագիտական խոհամաստասիրության առանցքը ներդաշնակ կյանքի երազանքն է, իսկ գեղագիտական հիմնասկզբունքներից կարևորվողը՝ արցախցու կերպարը կերտել-ներկայացնելը:

Հայի ենթագիտակցական ոլորտում արցախահայության ընդհանրացված կերպարը անդրադարձվում է որպես հերոսականության խորհրդանիշ: Այդ հավաքականության՝ հողի՝ որպես հայրենիքի արքետիպի ընկալման յուրակերպությունը, հավելած ագերական ախտածին իրականության նկատմամբ ունեցած համառ, անվերապահ ժխտողական վերաբերմունքը, գոյավորել են հայի մի տեսակ, որն իր հոգեկերտվածքով ու գոյաբանական համակառույցով, իրոք, կոթողային է:

Արցախահայության բնավորությունն ամբողջացնելու միտումով բանաստեղծը քնարական հերոսի էությունը, այդ էության բարոյական հիմքերը վեր է հանում իր գեղագիտական մտահղացումը իրականացնող գեղարվեստական ինքնատիպ պատկերների միջոցով՝ *«Մեր բնույթը մեր հողից ենք առել, // և հողն Արցախա, բնավ էլ, հող չէ, //իմաստություն է, // հավատի հող է, // կացին էլ առնեն՝ // չտաշվող կող է, // և գուղձն ամեն՝ // թոնրաթեժ պող է...» («Տաճարն Աստծո»):*

Արցախցու գիտակցական և բարոյական աշխարհում ազ-

գայինի անխեղաթյուր ներկայությունը հատկապես անցյալ և ներկա դարաշրջանների հայտնի պատմական իրադարձությունների համապատկերում նրա կերպարը վերածել է խորհրդանշ-օրինակի. այն ընկալվում է որպես ազգային ինքնաճանաչման և ինքնագնահատման հատկանիշները մարմնավորող-խտացնող կերպար:

Հակոբյանի՝ Արցախը, արցախցու աներևակայելի համառությունն ու անկոտրում ոգին փառեբանականացրել է իր ներքին ու արտաքին հզոր շեշտադրումներով գործեր են, որոնցում յուրատիպ խոսքի զորությամբ, ստեղծագործական վարպետ հնարանքների գործադրմամբ մարմնավորվում, տեսանելի են դառնում թե՛ աստվածանվեր այդ աշխարհի ամբողջ գեղեցկությունն ու հմայքը, թե՛ նրա զավակների անուրանալի հերոսականությունն ու անսահման նվիրվածությունը հայրենի եզերքին՝ «*Ես գիտեմ աղբյուր-խոսքեր, որ երբ հնչում են, իմ // երկրի մարդիկ ոտքի են կանգնում, ծայնակցում, // գլուխները՝ վեր, // հայացքով՝ դեպի արևը, և այդ պահերին // որդիանում է լույսը նրանց բոցեղեն բիբերում: // Աստծո լույսի մեջ ամեն առավոտ հիմն է Արցախի*»:

Ընդ որում, հարկ է ընդգծել, որ Հակոբյանի բանաստեղծական համակարգի բաղադրատարրերը, տվյալ դեպքում՝ բաները, պատկերները, գեղարվեստական հնար-հնարանքները, որոնցով ներկայացվում, մարմնավորվում են հայրենի եզերքն ու նրա մարդիկ, ամենևին պարտադրող, ընթերցողի ուշադրությունն իրենց վրա սևեռող շեշտվածությամբ չեն: Դրանք անմիջական, հուզազգացական վարակիչ կենսուժով հարուստ ստեղծագործություններ են, իսկական վարպետության գրավականներ: (Համո Սահյանը հրաշալի է բանաձևել *վարպետությունը*՝ «Իսկական վարպետությունն այն է, որ վարպետությունը չերևա»)¹: Այս առումով տեղին է գրականագետ Արքմենիկ Նիկողոսյանի բնորոշիչ խոսքի մեջբերումը՝ «Սա փորձ ունեցող, ճանապարհ անցած և ճանապարհներին իմաստնացած բանաստեղծի պոեզիա է, որին չեն գայթակղում անպայման աչքի ընկնելու ժամանակավոր հնարանքներն ու միջոցները. նա ի սկզբանե ձերբագատված է այն բաներից, որոնցից բոլորն են հետագայում ձերբագատվում՝ փորձառություն ձեռք բերելուն զուգահեռ: Ուստի՝ Հակոբյանի պոեզիան ճանապարհ պարագրկող ու ճանապարհ բացող պոեզիա է, իսկ նրա ջան-

¹ Սահյան Համո, «Բանաստեղծությունը ծնվում է ցավից». *հարցազրույց*, «Գարուն», թիվ 9, 1984:

քը արդի բանաստեղծության զարգացման պարագծում գնահատելի»¹:

Ի դեպ, Վարդան Հակոբյանի ստեղծած գրականության էջերում յուրատիպ դրսևորումներով են կերպարավորված նաև արցախյան պատերազմը, արյան գնով կերտած հարաբերական խաղաղությունն ու այն պահպանող հայ գինվորը:

Անվերապահ իրողություն է. մեր ժողովրդի գոյապահպանման զորեղ կռվաններից, ազգային կեցության բարոյահոգեբանական հիմնարկներից մեկը եղել և մնում է վերաբերմունքը ազգային հերոսների, հանուն հայրենիքի իրենց կյանքը զոհաբերած ու սրբացված նահատակների և նրանց նշխարված հիշատակների նկատմամբ («Հողն Արցախս վրեժվում, որդոց շիրմին մխում է»): Բոլոր ժամանակներում էլ գործել է հայ մարդու այն գիտակցումը, թե՛ «Մեռելների աճյունն է ստեղծում Հայրենիք»²:

Հերոսացածների հիշատակները պահել-պահպանելը անկորուսելի արժեք է. այս բանաձևվող հայեցումը ոգեշունչ պատկերավորումով է արտահայտվում Հակոբյանի ինչպես «Տաճարն Աստծո» շարքի բանաստեղծություններում, այնպես էլ «Տաճարն Աստծո» պոեմում: Մեջբերենք մի հատված **«Տաճարն Աստծո»** պոեմից՝ զգալու համար խոսքի պատկերավոր հնչումների ներգործությունը, երբ այն մեր հերոսներին է վերաբերում.

*Մի ողջ զորամաս՝
Արցախ աշխարհից...
Արցախ աշխարհից
մարտնչման ելած ամեն մի գինվոր՝
ամրակուռ մի վանք
ու մի Ամարաս...*

Անթաքույց դառնությամբ է բանաստեղծն արտահայտում իր վերաբերմունքը «կերտվող հերոսների» նկատմամբ: Ըստ բանաստեղծի դավանած բարոյականի՝ «Հերոսը պիտի աճի հողից ու // բարձրանա այն դաշտում, ուր պատերազմ է // խաղաղության համար, ուր ինքը չի կարող չաճել, // քանզի այդտեղ մարդկանց արյուն է հեղվել»:

1 Նիկողոսյան Արքմենիկ, Ուղու շրջանցում՝ հանուն ճանապարհի (Վ. Հակոբյան, Փակիր աչքերդ՝ չերևաս, էջ 9):

2 Քաղված է Ալֆոնս դը Լամարթինի խոսքաշարից:

Կեղծ ու սուտ, սարքովի, «տաշտշած» հերոսից ազատված գրականությունը միայն կարող է իրականացնել իր առաքելությունը և համաժողովրդական հերոսականությունն ու ձեռք բերած հաղթանակը մշակութային ու ոգեկերտ արժեքների վերածել:

Հակոբյանը քաղաքացիական մեծ պատասխանատվությամբ է իր ստեղծագործություններով հասարակական վերաբերմունք ձևավորում ինչպես հանուն հայրենիքի լինելիության իրենց կյանքը զոհաբերած մարտիկների, այնպես էլ նրանց արյամբ սրբագործված ազգային բարոյականության նկատմամբ: Նրա հայրենանվեր գաղափարները վերածվում են դավանանքային հոգաբույժների՝ դառնալով հասցեատեր սերունդների հոգևոր հարստության, հավատի ու ոգու սյունը պահպանող հիմնաքարերից մեկը՝ *«Մենք՝ որդիք Հայկի, արդար ու վսեմ, // Դավ ու դառնություն այդ ե՞րբ չենք տեսել, // Բայց ոչ մի անգամ, Աստված է վկա, // Արցախին հաղթող չի եղել, չկա...»* (**«1988 թիվ, փետրվար»**):

Արցախի անապարտելիությանը հավատացող բանաստեղծը խիստ մերժողական վերաբերմունք ունի ազգային արժեքները ժխտելու միտված գաղափարախոսության, հայրենալքության հանդեպ՝ *«Մեր ունեցածը մի Քիրս, մի Մռով, // Թողնում-զնո՞ւմ ես... Ես իմ հայացքը // շրջում եմ քեզից հավիտյան խռով...// ու չեմ էլ ասում, // թե՛ գնաս բարով // ու չեմ էլ ասում, // թե՛ մնաս բարով...»* (**«Մեր ունեցածը մի Քիրս...»**):

Այնուամենայնիվ, «խռով» բանաստեղծը չի կարողանում չասել նաև իր հորդորի խոսքը. *«Մենք արծիվների հետ ենք մեծացել, // Քիրսը ախպերն է մեր լույս-հավատի: // Մի՛ լքիր լեռդ - ինչքան էլ խոցեն, // Մնա լեռան հետ՝ լեռը կհաղթի* (**«Հասակ ենք առել այնտեղ...»**):

Բանաստեղծի աշխարհայացքը, հասարակական, սոցիալ-քաղաքական ըմբռնումներն ու ազգային ձգտումները ձևավորում են կենսունակ ավանդների արժեհամակարգեր, որոնց հիմնախնդիրը հայերին, որտեղ էլ որ ապրելիս լինեն, ազգային գաղափարի շուրջ համախմբելն է՝ *«Հողը դարձնենք բերդ... Եվ դուռ չբացե՛ք // Ինչ թաթ էլ ցույց տան դռան նեղ ճեղքից...// Սրբեք մամուռը, բառն ընթեռնեցեք, // Արյուն է կաթում մեր ամեն խոսքից»* (**«1988 թիվ, փետրվար»**):

Եվ պատգամը՝ տրված քնարական հուզառատ գեղումով «Տաճարն Աստծո» պոեմի մուտքի խոսքում՝ *«Հեղինակի կողմից»* վերտառված. *«Ամեն մի արցախցու վերադարձ, դա Ար-*

ցախի վերադարձն է Արցախ: Մեր թւերով, մեր արմատներով ամուր գրկենք ու պիտի պահենք մեր չքնաղ, մեր հրաշալի, մեր անկրկնելի, իրենով այս աշխարհը գեղեցկացնող Արցախը: Աշխարհում գեղեցիկ ու չքնաղ շատ աշխարհներ կան, բայց ոչ մեկը Արցախ չէ: Արցախի սերը, դա տաճար է աստվածային»:

Հրանտ Մաթևոսյանը, որին պակաս չէր անհանգստացնում ժողովրդի՝ ազգային գաղափարի շուրջ համախմբվել կարողանալու խնդիրը, գրում է. «Հասարակական կյանքը իր բոլոր բաղադրամասերով կանգնած է փորձության առաջ: Բայց ինչ էլ որ լինի, ինքնապաշտպանության բնագոյը մեզ մղելու է ինքնատարբերակման, ինքնապահպանության ճանապարհ: ...Վերադարձ է լինելու ինքներս մեզ»¹:

Որ «ինքներս մեզ վերադարձը» հաստատապես լինելու է, չի կասկածում հայկնժդեհական ոգին կրող և ոչ մի հայ: Այդ ոգին թւածել է մեր բոլոր ավարայրներում և դարձել ներշնչանքի հզոր ուժ ազգային մշակույթի բոլոր բնագավառներում, գրականության մեջ՝ առավելապես, քանի որ, ինչպես Բրուկո Շուլցի բանաձևման մեջ է ասվում. «Ոգու նախասգբնական գործը հեքիաթներ պատմելն է, «պատմություններ» արարելը: Մարդկային իմացության շարժիչ ուժն այն հավատն է, որ ի վերջո այն կգտնի աշխարհի վերջնական իմաստը»²:

«Ինքներս մեզ վերադարձի» խոր հավատով է ներշնչված Նաև Վարդան Հակոբյանի ստեղծած գրականությունը:

Բանաստեղծի գեղագիտական իդեալը հիմնականում հայրենի եզերքի՝ անպատերազմ, խաղաղ կյանք ունենալու գաղափարի շուրջ է ծավալվում: Սակայն նրա գեղագիտական աշխարհի որոշիչ տարրերից են նաև ժամանակի պատմական, ազգային, բարոյահոգեբանական ու իմաստասիրական հարցերի արծարծում-արտածումները, որոնք մեծ մասամբ ներկայացվում են գոյապահպանական ու հասարակական հարցադրումների համապատկերում: Այս առումով առանձնանում են նրա պոեմներն ու վիպերգությունները («Համանվազ», «Գողգոթա», «Երամականչ», «Տաճարն Աստծո», «Մաշտոցն Ամարասում», «Քրիստոսի ծաղիկները»), ինչպես և տիրադների շարքը («Հիմարության առիթմի», «Բառը հասարակածի վրա», «Սուրբ սատանա», «Գրառումներ նշանի տակ», «Երկու միլիոն զոհերի ձայնով», «Լույսի հեղինակը»):

1 Մաթևոսյան Հրանտ, Հարցազրույց, «Հայություն», թիվ 6, 1996:

2 Բրուկո Շուլց, Առասպելը և իրականությունը, var addthis_config = {«data_track_addressbar»: false}:

Պոեմների գաղափարական ու գեղագիտական հարցադրումները պայմանավորված են բանաստեղծի գեղարվեստական ըմբռնումներով, ազգամշակութաբանական և գեղագիտական հայացքներով ու մտածումներով:

Ամենատարբեր թեմաները Հակոբյանի պոեմներում միավորվում են մի ընդհանրությամբ, որի առաջատար տարրերը հեղինակային ինքնակերպ դիտարկումներն ու ընկալումներն են, որոնցով ներկայացվում են ժամանակի մեջ իրենց արդիական նշանակությունը և արժեքն ունեցող երևույթներն ու փաստերը: Այդ պոեմները տարբեր ժամանակների, տարբեր իրականությունների, պատմական տարբեր իրողությունների խորաշերտերը թափանցող և քաղաքացիական սթափ մոտեցումներով, ինքնատիպ դիտարկումներով առանձնացող գործեր են: Դրանք մասամբ հենց այդ հասարակությունների «կենսագրությունն» ու նրանց «բնավորության» արտացոլումներն են:

Պոեմների գեղագիտական հիմնանպատակը արցախցու անկոտրում ոգու ուժը և ստեղծարար եռանդի անպարփակելիությունը ներկայացնելն է, որը հեղինակին մեծապես հաջողվում է. այն իրականացվում է կենսական հիմքեր ունեցող անմիջական ու անկեղծ խոսքով, որն առանձնանշվում է ինքնատիպ գեղարվեստականությամբ:

Արցախյան պատերազմի պատճառած հոգեցունց ցավի, մարդկային ողբերգության մի ծավալուն պատկեր-խտացում է **«Գողգոթա»** պոեմը: Հեղինակը իր մտահղացումը կյանքի է կոչել՝ ընտրելով հյուսվածքի շարադրման յուրատիպ ձև: Պոեմում արտացոլված կենսական նյութով և նրա գաղափարական մեկնաբանությամբ Հակոբյանը ստեղծել է դրամատիզմով հագեցած բովանդակություն ունեցող մի գործ, որն իր գեղարվեստականությամբ անկրկնելի է:

Զոհված Վարուժի հետ նրա չլինելիության հետ չհաշտվող կնոջ «գրույցը», որ ավելի շատ անդարմանելի ցավ ու տառապանքից վերելնող խոսքակռիվ է՝ սիրախառն հանդիմանանքներով, ըստ էության, երկխոսության պատրանք ստեղծող կառուցվածքային յուրատիպությամբ «մենախոսություն» է, որի հյուսումը սկզբից մինչև վերջ ընթանում է հետզհետե սաստկացող լարվածությամբ: Հուզիչ, ողբերգական ապրումների ցնցող զգացողություններով են համակում այրի կնոջ օրագրային գրառումները, որոնք երբեմն ունենում են խոհափիլիսոփայական բովանդակություն: Ինչ խոսք, նման հատվածնե-

րում խիստ նկատելի է դառնում բանաստեղծի ներկայությունը, որից, մեր կարծիքով, ինչ- որ չափով տուժում է կերպարի մտածումի հավաստիությունը: Բայց բարեբախտաբար դրանք չեն խանգարում կերպարի տիպականության լիարժեք լինելուն: Ահա «25.05.93 թ.» թվագրյալ գրառումից մի հատված. «Հայր չի մեռնում: Երևի մենք, որպես ժողովուրդ, միակն ենք, որ չենք մեռնում խաղաղ, տարիքն առած, բնական մահով: Մենք նահատակվում ենք, մենք զոհվում ենք...»: Իսկ ընդհանրապես հեղինակային միջամտությունները այս ոչ սովորական կառուցվածքով հյուսվող պատումի ընթացքին, ավելի են խորացնում ապրումները, սրում զգացողությունները. «Երեկոն լաց է լինում, // արցունքները դառնում են սնդիկի կաթիլներ, // ընկնում են ականջը // Խղճի: // Իսկ կինը՝ հոգնած թատրոնից անդամ աշխարհի // հոգնած սերերից ու ատելություններից....// հայտնվում է // Վարուժի միշտ հավատարիմ շիրիմի վրա....// Ձեռքերը տարածում է՝ երկար-երկար, // ինքը՝ անհաղթ, // ինքը՝ սիրող, // ինքը՝ հպարտ ու անպարտելի, // կանգնում է շիրիմին՝ որպես հավերժ կենդանի մի խաչ»:

Ազգային ինքնության, հոգեկերտվածքի ու աշխարհընկալման, ինչպես և ազգի կեցությունն իմաստավորող արժեքների գեղարվեստական հայտածումների յուրատիպ արտահայտություններ են «Երամականչ» պոեմը, «Տաճարն Աստծո» պոեմ-վիպերգն ու «Քրիստոսի ծաղիկները» ասք-պոեմը: Երեք գործերն էլ հետաքրքիր են նախևառաջ ընտրված կառուցվածքային ձև ու կերպով, ինչպես և մարդկային պարզ ու հասարակ ապրում-զգացմունքների արտահայտումներով: Պատմական եղելություններով, առասպելաբանությամբ ու տեսիլք-տեսլականներով, իմաստավոր պայմանականություններով են հյուսվում պոեմների ողջ ընթացքը: Բանաստեղծը ներքնատար խոսքային հոսքերով գեղարվեստական ավարտին է հասցնում մեր ազգային էության հիմնակետերը հանդիսացող անկորնչելի ոգու և անկոտրում կամքի մարմնավորումը՝ ամբողջականացնելով հայոց և նրա մաս կազմող Արցախ աշխարհի բանաստեղծական նկարագիրն ու բովանդակավորումը. «Եվ կաթողիկոսն Ամենայն Հայոց // երկարում է իր աջը օրհնաբանյալ, // և ափի մեջ խնկարկումով դալարում են լեզվակահյուսքերն // աշխարհալուր // մեր զանգերի՝ // արեգական շողերի պես՝ ձիգ, լուսարձակ, // Էջմիածնա Մայր տաճարից, // ապա քիրսված գմբեթներից Գանձասարի, Ամարասի ու // Գրչատան... // Եվ ձգվում են, և քաշվում են լեզվակները, // մեր արյան մեջ

արթնանում են հազար ու մի զանգ ու // դողանք // աստվածածեն» (**«Քրիստոսի ծաղիկները»**):

Տեսակի մեջ առանձնացող գործ է չորս մասից (**«Ընդերքներ», «Ամենատաք կետում», «Հուլունք Շամիրամա», «Աստծո տաճարը»**) բաղկացած **«Տաճարն Աստծո»** պոեմը, որով «հեղինակը փորձում է վիպել արցախյան էպոսի մի ուրույն տարբերակ՝ ըստ մեր ազգային էպոսի ճյուղային պատումների»¹:

Պոեմը Արցախի, նրա պատմության հերոսական էջերի, նրա զավակների զորավոր տեսակի, նրա բնության հրաշակերպության, ավանդապատումների իմաստնության և այդ ամենով պայմանավորվող արցախական ոգու կերպարավորումն է. այն, առանց վերապահության, ազգային ոգու՝ իր տեսակի մեջ անկրկնելի մի փառերգություն է: Հավաստենք ծաղկաքաղ արված տողերով՝ *«Մենք մեր Աստծո // սպարապետներն ենք, // և նկատել եմ դաշտ չունենք, // որտեղ խաչքար չլինի, // ձոր չունենք, // որտեղ չլինի մատուռ, // կամ վանք, կամ եխծի...// Եվ դրա համար ծաղկամուկերը // շատ են //սփռուն մեր հանդ ու ձորում, // և դրա համար // Հայկյան նիզակը ուր-որ խփում է՝ // աղբյուր է ելնում // և ոչ թե... արյուն»*, *«Ամենաբարձր կետը երկնքում, դա Քիրսի գագաթն է»*, *«Արարատի երակներն ի վեր //ելնում է Քիրսը, ահա, // մինչև դուռն Աստծու»*, *«Ես Դադիվանքի քարակերտ խաչն եմ: // Ինձ հնարավոր չէ պարտության մատնել»*: Եվ որպես փառերգության ավարտ-հատված՝

*Ես իմ Աստծո անձեռակերտն եմ,
և իմ արձակած նետի սուր ծայրին
հայոց աշխարհում
բարձրանում- ելնում-
վերընձյուղվում է
ՏԱՃԱՐՆ ԱՍՏԾՈՒ:*

Վարդան Հակոբյանի պոեմները, առանց բացառության, օժտված են ներքնատար խոսքի խոր գեղարվեստականությամբ և ունեն հեղինակային կենսահայաց դիտողականությունից ծնված հայեցումների, դատումների ու մտորումների, ինքնօրինակ վերլուծությունների այնպիսի նստվածքներ, որոնք ոչ միայն օգնում են բանաստեղծի ստեղծագործական դիման-

¹ **Սարինյան Սերգեյ**, Մեղեդիներից մինչև առասպել: (Վ. Հակոբյան, Երկեր, հ. II, էջ 705):

կարի, նրա կերտած գեղագիտական աշխարհի բովանդակավորմանն ու ամբողջականացմանը, այլև ապահովում են այդ գործերի մնայունությունը: Ահա ինչպես է գնահատում ակադեմիկոս Սերգեյ Սարինյանը բանաստեղծի՝ Արցախյան թեմայով պոեմները. «Առ այսօր հայոց արցախապատումի չգերազանցված նմուշներ են մնում Վարդան Հակոբյանի «Տաճարն Աստծո» վիպերգը և «Քրիստոսի ծաղիկները» ասքը»¹:

Ընդհանրապես պետք է ասել, որ հայ գրականության էջերում ազգային ոգու գեղարվեստականացման նոր որակների ենք հանդիպում Վարդան Հակոբյանի ստեղծագործություններում: Դրանք մեր ժողովրդին հուզող բարոյական, գոյաբանական, հոգեբանական ու մշակութային հարցերի գեղարվեստական անդրադարձումներով հարուստ գործեր են, որոնք իրենց խոսքային ենթաշերտերում, նաև՝ ի բաց, արտահայտում են մեզանում գոյություն ունեցող դժեղի երևույթների նկատմամբ սուր ընդգծված անհանդուրժողականություն, որը երբեմն հասնում է անթաքույց ցասման.

*Իրար հանդեպ՝ խիստ ռիսկալ,
Հո՞ծ խմբերով ամբոխական,
Երամ-երամ, շարան-շարան
մեզ քաշում ենք կառավարան.
-Տե՛ր, մեզանի՛ց դու փրկիր մեզ:*

«Եղերերգ»

Չնայած Վարդան Հակոբյանի պոեմներում այլասացությունների, բացախոսությունների տասնյակ օրինակների ենք հանդիպում, այդուամենայնիվ, շեշտումով պետք է նշենք, որ հեղինակի որդեգրած հիմնասկզբունքի և ստեղծագործական առաջնադրույթի մեջ գերական պայքարող, մաքառումներով արարող հայկական ոգու ուժի ընդգծումն է:

Հոգեհույզ, մարդու ներսի ցավը տակուվրա անող, բայց նաև անասելի ուժ ներաշխարհ բերող մի պատկերի ենք հանդիպում **«Երամական»**-ում: Արցախա ծուռ Արշակի մասին հյուսված հերոսապատումի այդ հատվածն առանձնանում է ապրումների ու զգացմունքների խտացումով, մարմնավորած ոգու զորությամբ: Խոսքի ներքին շեշտադրումով ու իրադրական բներանգով կարելի է գուգադրել Խաչիկ Դաշտենցի, Մու-

¹ Տե՛ս նույն տեղում:

շեղ Գալշոյանի՝ Սասնա ֆիդայիների կերպարները ներկայացնող պատկերների հետ: Արշակ ապերը Մուշեղ Գալշոյանի «Դո՛ւ նայիր, դու» ակնարկի հերոսներից մեկի՝ Իսրայել քեռու նման ձգտում է հաստատել ազգապահպանության, ազգային գոյաբանության բարոյահոգեբանական իր ըմբռնումները: Երկար ապրած տարիներով իմաստնացած ծերերը իրենց համակած ցավն ասես փորձում են խեղդել մեկը՝ երգի մեջ, մյուսը՝ պարի: Ազգային երգն ու պարը, ավելի տարողունակ դարձնելով կարոտը, միաժամանակ զորացնում են դիմակայելու ոգին, կորստյան ցավի դեմ յուրատիպ ինքնապաշտպանական միջոցի են վերածվում: Իննսուներ բոլորած Արշակ ապերը Անդրանիկ թոռան հարսնահանդեսում հանկարծ կանգնում է, գոտին ձգում, զուռնաչիներից դադար պահանջում ու կարդում կռվից չեկած Սերոբ որդու նամակի տողերը, որտեղ նա խոստանում է հաղթած վերադառնալ տուն և հոր հետ մեկտեղ «Քոչարի» պարել փոքրիկ Անդրի հարսնահանդեսում, վերջին բառերը նորից կարդալով՝ «*Նորից խենթացավ // մեր խենթ ապերը // ու ճչաց բարձր. // «Քոչարի» փչեք... // Ասաց ու կռվում զոհված իր որդու՝ // Սերոբի մաշված նկարը առավ՝ // ձիգ ու մեծադիր, // պարի մեջ մտավ... // «Էլ ի՞նչ հարսանիք, թե որդու հայրը // չպարի այնտեղ... Դե, եկ, շան տղա, // շան տղա Սերոբ, // խոստացե՞լ ես, դե, ուրեմն՝ պարի...»:* // Ամեն կողմերից փղծկոց ու լաց, // ամեն կողմերից պարի մեջ մտան // պարեցին իրենց ... զոհվածների հետ: // Առաջին անգամ տեսա նման պար»: (Հիշենք նաև Ակսել Բակունցի «Ծիրանի փողը» պատմվածքի այն դրվագը, որում գեղարվեստական պատկերն իր հզոր ներուժով կենսավորում, լսելի ու տեսանելի է դարձնում ծիրանի փողի թնդացող նվագն ու «ինչպես երկու վիթխարի ապառաժ» ձեռքերով, ծնկներով և կրծքով իրար զարնվող սասունցի տղամարդկանց պարը («Ինչպես լուսաբացը լեռներում, զարթնեց «Յար խոշտան» Նրանց ձեռքերի հարվածը պողպատի ձայն էր հանում, և կայծեր էին թռչում նրանց բորբոքված աչքերից»¹): Երկու պարագայում էլ պարը վերածվում է կորստյան ցավի, կարոտի ու ցասումի դրսևորման հզոր միջոցի:

Մարդու մեջ եղած անփոփոխականներից մեկը, անշուշտ, անցյալ չդարձող հիշողությունն է, որ ծնում է մեծ թախիծ: Հակոբյանը, ինչպես աշխարհում ապրող յուրաքանչյուր հայ, հայրենյաց թախիծի կենսաբանական կրողն է: Նրա գեղագիտա-

¹ Բակունց Ակսել, Երկեր, 4 հ-ով, հ. I, ՀՍՍՀ ԳԱ հրտ., Եր., 1976, էջ 202:

կան աշխարհի կարևոր տարրերից են թախիծ-կարոտն ու թախիծ-տխրությունը, որոնք ինչ-որ չափով ընկալվում են որպես արժեք-խորհրդանիշներ (*«Կարոտը իմ մեջ չլռող զանգ է»*): Եվ պետք է ասել, որ դրանք ընդգծուն տեղ ունեն Վարդան Հակոբյանի՝ հայրենի եզերքը կերպարավորող պոեմներում և գոյավորում են բարոյահոգեբանական ու մտազգացական վիճակներ, որոնք ներշնչողական են և կարողանում են ներագդել, ինչ-որ չափով չարժեքների ազդեցություններից պաշտպանել արցախցու մտածողության անփոփոխականը, նախաեն կազմող ազգային հիմնատարները:

Պոետական իր աշխարհը անընդհատ հարստացնելով արցախականով՝ Վարդան Հակոբյանը աննկատ ամբողջականացնում է արցախցու ազգային կերպարը. արցախցու, որ, *«Արարատի երակներն ի վեր» «մինչև դուռն Աստծու»* ելնող իր Քիրսի, իր Ժայռ ու քերծերի հետ ներծովվելով, ձեռք է բերել նրանց հավերժող անփոփոխը՝ վեհության ոգին.

*Երևի լեռան թոռ կամ ծոռ եմ ես
Իմ մեջ անմեռ է ոգին վեհության...
«Երևի լեռան...»*

Իր մեջ վեհության ոգին անմեռ պահող արցախցու կենսականաստ էթնոգծերից մեկը ժառանգականության և բնածինության գաղտնագրի անեափոխ պահպանումն է: Այս հատկանիշի շնորհիվ են գոյատևում նրա հավաքական աշխարհայացքի պատվարները կազմող արժեքային կողմնորոշիչները՝ լեզուն, հավատը, հույսն ու սերը, հպարտությունը, ազգային հերոսականությունը մարմնավորող իդեալ-հերոսը, ինչպես նաև բարոն և չարի, լավի ու վատի, արդարության և անարդարության մասին պատկերացումները, որոնցով էլ պայմանավորվում է նրան **փոքրտիեզերականից** դեպի **մեծտիեզերականը** ուղեկցող ծիրի անխաթարությունը:

ԱՄՓՈՓՈՒՄ

*ԱՐՑԱԽ ԱՇԽԱՐՀԻ ՆԿԱՐԱԳԻՐՆ ՈՒ ԲՈՎԱՆՆԱԿԱՎՈՐՈՒՄԸ
ՎԱՐԴԱՆ ՀԱԿՈԲՅԱՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ
ՉՈՒՄՆԱ ԵՐՎԱՆՆԱՆ*

Վարդան Հակոբյանի գեղագիտական հավատամքը հայրենիքն է, իսկ պոետական խոսքի գերակա թեման՝ Արցախը: Բանաստեղծի գեղագիտության մեջ Արցախ աշխարհի թեմայի գերակայությունը պայմանավորված է ոչ միայն նրա աշխարհայացքով, այլ նաև ոչ վաղ անցյալի արյունոտ իրադարձությունների, դրանց հաջորդած կենսաերևույթների ցավոտ ընկալումներով:

Հակոբյանի բանաստեղծական ելույթն ու տարածքը ամբողջ հարստությամբ երևում են հենց Արցախին և արցախցուն նվիրված գործերում, որոնց հենքում արցախյան բնաշխարհիկ խորապատկերներով ու գուներանգով գեղարվեստականացված արցախական ոգին է, հավատն ու լավ օրվա երազանքը:

РЕЗЮМЕ

*ОПИСАНИЕ И СОДЕРЖАТЕЛЬНОСТЬ ЗЕМЛИ АРЦАХ В
ПРОИЗВЕДЕНИЯХ ВАРДАНА АКОПЯНА
ЗУХРА ЕРВАНДЯНА*

Ключевые слова: поэтический, основной, отечественный, монументальный, поющий дифирамбы, посвященный богу, присущий внутреннему миру, символ-пример, самопознание, освященный.

Эстетическим символом веры Вардана Акопяна является Родина, а преобладающей темой поэтической речи - Арцах. В эстетике поэта преобладание земли Арцах обусловлено не только его мировоззрением, но и кровавыми событиями недавнего прошлого, последующими болезненными восприятиями жизненных явлений.

Глубина и протяженность поэтической сущности Акопяна всем своим богатством видны именно в произведениях посвященных Арцаху и арцахцу, в основе которых арцахский дух, отображенный художественным образом глубинными и многоцветными картинами природы Арцаха, вера и мечта о лучшем дне.

SUMMARY

DESCRIPTION AND SUBSTANTIVENESS OF ARTSAKH WORLD IN THE WORKS OF VARDAN HAKOBYAN

ZOUKHRA YERVANDYAN

Key words: *poetic, basic/fundamental, domestic, monumental, singer of the praises, devoted to God, inherent to inner world, symbol-example, self-awareness, sanctified.*

Aesthetic symbol of belief of Vardan Hakobyan is motherland, and Artsakh-is the prevailing theme of his poetic speech. The dominating role of Artsakh world in poet's aesthetics is determined not only by his ideology, but also with bloody occurrences of recent times, and painful perceptions of vital phenomena following them.

The deepness and extent of poetic essence of Hakobyan can be seen with all their richness in the works dedicated to Artsakh land and Artsakh people, which are based on spirit of Artsakh, depicted in aesthetic way by deep and colorful pictures of nature of Artsakh, belief and dream about better day.

ՀԱՅ-ԹԱԹԱՐԱԿԱՆ (ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ) ԸՆԴՀԱՐՈՒՄՆԵՐԸ (1905-1906 թթ.) ԵՎ ՀԱՅՈՑ ԿԱՄԱՎՈՐԱԿԱՆ ԶՈԿԱՏՆԵՐԻ ՀԵՐՈՍԱԿԱՆ ՍԽՐԱՆՔՆԵՐԸ*

Բանալի բառեր՝ ընդհարումներ, պատմություն, ազատագրական պայքար, քոչվոր ցեղեր, հայ-թաթարական, կամավորական ջոկատներ, սխրանք, ֆիդայական շարժում, հրոսակախմբեր, գաղափար, քաղաքական:

XX դարի սկզբին Այսրկովկասի թաթարներին որպեսզի տարբերակեն Կազանի և Ղրիմի թաթարներից, նրանց սկսեցին անվանել «այսրկովկասյան թաթարներ»՝ հիմք ընդունելով Վ. Ի. Լենինի համանման ձևակերպումը:

1905-1906 թթ. Ատրպատականում «այսրկովկասյան թաթարներ» անվամբ ինքնուրույն «ձևավորված» տարրերի և հայ ժողովրդի միջև սկսեցին ավելի հաճախակի դառնալ ընդհարումները: Թաթարները կեղծ հայտարարություններ էին տարածում, թե զարգացած ու առաջադեմ հայերն իբրև առաջ են ընթանում թաթարների հաշվին, որը և պատճառ է հանդիսանում նրանց միջև ծագած հակասությունների: Սա, իհարկե, շինծու պատրվակ էր քոչվոր ցեղերի համար, որպեսզի բնիկներին, ի վերջո, տեղահանեն իրենց հայրենիքից ու իրենք հիմնավորվեն այնտեղ: Սա թուրքական տարրերի կողմից փորձված միջոց է նոր տարածքների ու հողերի տիրանալու համար:

Թաթարները կարծում էին, թե 1905 թ. իրենց բախումներով էլ կսկսեն հայերի ֆիզիկական բնաջնջումը և դրանով իսկ կլուծեն հայկական հարցը, որը թուրքական իրականությունում արդեն ավելի սուր բնույթ էր ստացել:

Թաթարներն առանց այդ էլ Բաքվի հայերի դեմ լարված իրենց «մթին հաշիվներն» ունենալով, մասնավորապես որ հայերն արդեն իրենց ձեռքն էին առել Նավթարդյունաբերության և տնտեսության մյուս բնագավառների «սանձերը», իրենք էին դրության տերը, իրենք էին թելադրողը¹, ավելին, բորբոքում

* Հոդվածն ընդունվել է 27.05.2019 թ., երաշխավորվել է տպագրության պատմական գիտությունների թեկնածու Մելանյա Բալայանի կողմից՝ 05.06.2019 թ., ստորագրվել է տպագրության՝ 07.06.2019 թ.:

1 Տե՛ս Ուլուբաբյան Բ., «Արցախի պատմությունը սկզբից մինչև մեր օրերը», Երևան, 1994թ. Էջ 196:

էին ներքին հակասությունները: Մահմեդական թուրքերի կրոնական հակակրանքն ու ատելությունը քրիստոնյաների նկատմամբ աճում էր:

«Օգտագործելով մահմեդական բնակչության ֆանատիզմը և խավարամոլությունը,-գրել է պատմաբան Վ. Բալայանը,- ցարական պաշտոնյաները և թուրք կալվածատերերը ճգնում էին իրենց ցեղակիցներին հավատացնել, որ նրանց աղքատության պատճառը հայերն են, հետևապես՝ պետք է վրեժ լուծել նրանցից»¹: Եվ, ահա, բախումներ են տեղի ունենում այն վայրերում, որտեղ ապրում էր հայ-թաթարական խառը բնակչությունը՝ 1905-1906 թթ.: Դրանք ընդգրկում են Երևանի, Ելիզավետպոլի, Բաքվի սահանգները և Թիֆլիսը:

Անկասկած, 1905-1906 թթ. բախումներն իրենց չափերով չէին կարող-համեմատվել հայ-ադրբեջանական ո՛չ մերօրյա (1991-1994 թթ.), ո՛չ էլ առավել ևս՝ 1918-20 թթ. հայ-ադրբեջանական արյունահեղությունների հետ: Թեև, ինչպես էլ մոտեցանք խնդրին, պատճառների առանցքում վաչկատու ցեղերի հետամնացությունն է ու վայրենի բնույթը:

Հայ-ադրբեջանական վերջին երկու բախումները, որոնք անմիջապես հաջորդեցին ռուսական կայսրության և Խորհրդային Միության փլուզմանը և, համապատասխանաբար, Հայաստանի և Ադրբեջանի առաջին և երկրորդ հանրապետությունների ծնունդի հետ, ակնհայտորեն կրում էին տարածքային վեճի բնույթ: Հայ-թաթարական բախումները ևս իրենց խորքում ունեին նման պահանջներ: Վրաններում ծնված քոչվորը «աչք է գցում» հայի ձեռքերով բարձրացած շինություններին: Նա չի ստեղծում, նա ավերում է ու թալանում:

Հայ-թաթարական ընդհարումները 1905 թ. փետրվարի 6-9-ը Բաքվում տեղի ունեցան սահանգապետ Նակաշիճեի սադրանքով: Ահա թե իր հուշապատումներում այս մասին ինչ է գրում Վ. Ահարոնյանը. «Ցարական կառավարության կողմից կազմակերպուած թաթար հրոսախմբերը, այդ ընդհանրումների առաջին ամիսներին, յանկարծակի բերին, մեծ մասամբ անգէն, հայ բնակչութիւնը: Բաքուի, Շուշիի և Գանձակի առաջին ընդհարումներին տուժողները եղան հայերը: Մի քանի ամիս չանցած, սակայն, Կովկասի հայութիւնը զինուեց, կազմակերպուեց:

Ձարդ ուտելու հերթը, այս անգամ, թաթարներինն էր:

¹ Տե՛ս Բալայան Վ., «Արցախի պատմությունը հնադարից մինչև մեր օրերը», Երևան, 2011 թ., էջ 200:

Թաթարները, հայերի արթնութիւնը քնացնելու համար, սկսեցին կիրառել մի նեւագ գործելակերպ: Թաթար երեւելիները մօտենում էին հայ հասարակական գործիչներին, անիծում «շեյթանին» (սատանային, այսինքն՝ ռուս կառավարութեան), որ պատճառ էր դարձել երկու հարեւան ժողովուրդների արիւնոտ բախումներին, եւ առաջարկում հաշտարար յանձնախումբեր կազմել, խաղաղութեան թափօրներ կազմակերպել՝ հաշտեցնելու համար կռուող կողմերը»:¹

Բրիտանացի Լուիջի Վիլլարին՝ տեղեկանալով Բաքվում տեղի ունեցած ընդհարումների մասին, անձամբ մեկնում է Բաքու՝ հավաստի տեղեկություններ ստանալու համար: Վիլլարին առաջին հերթին մեղադրում է ցարական իշխանություններին, որոնք, կայսրության հպատակ ժողովուրդներին առավել հեշտ ղեկավարելու նպատակով, դիմում էին **«Բաժանիր, որ տիրես»** սկզբունքին: Նա այս արյունահեղությունը դիտում է ավելի լայն ենթատեքստում՝ թշնամության ժամանակակից գաղափարների և ասիական բարբարոսության միջև²: Այս խնդրին անդրադարձել է նաև ռուս մեծ գրող Մաքսիմ Գորկին: Ահավասիկ. «Կովկասում հայերը թուրք հավատարիմ հպատակ թաթարների ձեռքով ջարդվեցին: Սակայն այդ իրադարձությանը տրվել է ազգային ատելության տեսք և պետք է հավատալ, որ այդ այդպես է, և դա է ճշմարտությունը: Բայց ինչպես կարող է պատահել, որ հայերն ու թաթարները, որոնք դարերով ապրել են միասին, հանկարծակի անհաշտ թշնամիներ դառնային: Ի՞նչ տարօրինակ բան կա այստեղ: Չէ՞ որ երկրաշարժը նույնպես լինում է հանկարծակի... Երբ տաճկական սուլթանը ստիպեց քրդերին ու իր զինվորներին ոչնչացնել հայերին, նրանց ոչնչացրին տասնյակ հազարներով»:³

Թաթար խառնամբոխը հարձակվում է հայերի վրա, կողոպտում ու հրդեհում նրանց տները, վաճառատներն ու արհեստանոցները: Բախումների առաջին օրը սպանվեց 35 մարդ՝ 3-4 թուրք, և մնացյալը հայ: Ուշագրավ էր, որ այդ օրվանից նկատվեց իշխանությունների և ջարդարարների թաքուն ու բացահայտ դաշինքը, երբ ոստիկանությունը, ինչպես և զորքը, չտեսնելու էին տալիս հայերի հանդեպ գործադրվող բռնութեանը:

1 Ահարոնեան Վարդգես, Հովհաննես Թումանյան մարդը և բանաստեղծը, (Բոստոն, 1936թ., Վերահրատարակությունը՝ Համազգային հայ կրթական և մշակութային միություն), Երևան, 2019, էջ 86:

2 Համացանց. «Հայկական ուսումնասիրությունների մնի-կենտրոն» (Հայ-ադրբեջանական) թաթարական բախումները 1905-1906 թթ.:

3 «Горькийи Армения», 1968, с. 27.

յուններն ու ավելի քան կասկածելի վերաբերմունք ցուցաբերում: Այդ երևույթը նկատվեց ոչ միայն Բաքվում, այլև ուրիշ վայրերում: Հայերը արագորեն սթափվելով, զինված դիմադրություն կազմակերպեցին Նիկոլ Դումանի (Նիկողայոս Տեր-Հովհաննիսյան) ղեկավարությամբ: Հայերը պատրաստ չէին դեպքերի նման զարգացմանը: Ինչպես գրում է Աբ. Գյուլխան-դանյանը, *ոչ Բյուրոն և ոչ էլ Բաքվի Կ. Կոմիտենսկզքի շրջանում չէին ենթադրում, որ հայ թաթարական ընդհարումները այդքան մեծ ծավալ պիտի ստանան և տևեն երկու տարի, ինչպես որ եղավ դժբախտաբար: Հայերի զինումը հասկացվում է միմիայն ինքնապաշտպանության և ոչ հարձակման համար:*¹

Եվ այսպես, առանց հապաղելու, Նիկոլ Դումանն իր փոքրաթիվ խմբով շեշտակի հարվածներով կասեցնում է գազազած ու վայրենի ամբոխի առաջխաղացումը: «Իր առաջին քայլերեն մեկը կ'ըլլայ չորս ընկերներով նետուիլ դեպի հեռաւոր թրքական թաղի ծայրը գտնուող Դաշնակցութեան գաղտնի պահեստը, բերել անկէ 10-12 հրացաններ ու անոնցով հիմը դնել հայկական ինքնապաշտպանութեան: Իրենց թանկագին աջակցութիւնը կը բերեին նաեւ ռուսական բանակի մի քանի հայ զինուորներ պետական զօրանոցէն զենք ու փամփուշտ հայթայթելու մեր խումբերուն», - նշվում է ժամանակի պատմագրական աղբյուրներում: Ոգևորված Ն. Դումանի հաջողություններով, բազմաթիվ հայ երիտասարդներ հավաքվեցին հայդուկապետի դրոշի ներքո: «1880-ականներին սկսվեց ֆիդայական (հայդուկային) շարժումը ֆիդայի արաբական բառ է, որը նշանակում է հայրենիքի զոհ, հայդուկ հունգարերեն բառ է, նշանակում է հետևակ:² Տղամարդկանցից կազմվում են 5-ից 15 հոգանոց ինքնապաշտպանական խմբեր, որոնք իրենց հսկողության տակ են վերցնում հայկական թաղամասերը և ապահովում նրանց անվտանգությունը:

Կատաղած թուրքերը փորձեցին իրենց զայրույթը թափել թուրքական թաղամասում բնակվող հայերի վրա, սակայն Դումանն իր քաջերով հրաշքներ գործեց՝ հայերին դուրս բերելով այդ թաղամասերից: Եվ «հայերի հերոսական դիմադրությունը ստիպեց թուրքական վերնախավին՝ պարզել սպիտակ դրոշակ և սկսել բանակցությունները»³:

1 Գյուլխանդանյան Աբ., Հայ թաթարական ընդհարումները Բաքվի մեջ, «Հայրենիք», Բոստոն, 1933, 11, էջ 154:

2 «Ֆիդայական շարժումը», astxaslan.wordpress.com:

3 Բալայան Վ., «Արցախի պատմությունը հնադարից մինչև մեր օրերը», Երևան, 2011, էջ 200:

Ականատեսների վկայությամբ Նակաշիձեն բացահայտորեն խրախուսում էր թաթարներին:

Թաթարական ասպատակությունները դրանով, սակայն, չվերջացան, քանի որ դրանց ետևում կանգնած էին և՛ ցարական Ռուսաստանի, և՛ Թուրքիայի քաղաքական շահերի ետևում կանգնած սադրիչները, որոնք ունեին իրենց հեռահար նպատակներն ու ձգտումները: 1905 թ. փետրվար-մարտին ընդհարումները տարածվեցին ամբողջ Նահանգում, թափանցեցին հայաբնակ մյուս շրջանները նույնպես և Ղարաբաղ հասան օգոստոսին: Շուշիում և, առհասարակ, Ղարաբաղում ՀՅԴ կենտրոնը ստեղծեց պաշտպանական մարմին, որի ղեկավար էր նշանակված նշանավոր հայդուկապետ Վարդանը (Խանասորի Վարդան Սարգիս Մեիրաբյան): Հարձակվելով հայկական մասի վրա, թուրք խուժանն անմիջապես հրդեհի էր մատնել բազմաթիվ տներ: «Չարհուրեյի, չտեսված հրդեհը լափեց հարյուրավոր տներ քաղաքի կենտրոնական մասում, հարյուրավոր խանութներ, այրվեցին և նրանց մեջ եղած հարստությունները կորան: Միաժամանակ և սկսվեց թալանը. կրակից ազատվածը գողացվեց»¹:

Ճշգրիտ տվյալներ չկան, թե յուրաքանչյուր կողմից ինչքան զոհ է եղել:

Ռեալական դպրոցից դեպի Քարին տակ տանող կաճանի կողքի գերեզմանատանը կար մի շիրմաքար, որի գիրը պատմում է, թե ինչպես թուրք խուժանը գիշերով մտել է մի տուն և սրի քաշել թե՛ յոթ երեխաներին, թե՛ մորն ու հորը, թե՛ նաև երկու հյուրերին: Ընտանիքի 9 անդամները մեկ ազգանունով էին հիշվում (դժբախտաբար, արձանագրությունը չեմ արտագրել, որ նշեմ ազգանունը)²:

Շուշիի 1905 թ. օգոստոսի 16-ի հայկական ջարդերի ականատեսը պատմել է հետևյալը. «Վայրենացած մահմեդականները ներս էին խուժում հայոց Ագուլեցոց եկեղեցին, Ղուրանը դնում սեղանին և երդվում «համիսլամական պատերազմ» սկսել հայերի դեմ»³:

Բախումներ տեղի էին ունեցել նաև Աղդամում, Ասկերանում և Մարտակերտում: Հայ ժողովուրդն այստեղ ևս դիմում

1 Լեո, Պատմություն Ղարաբաղի հայոց թեմական հոգևոր դպրոցի, էջ 584-585:

2 Ուլուբաբյան Բ., «Արցախի պատմությունը սկզբից մինչև մեր օրերը», Երևան, 1994, էջ 198:

3 Բալայան Վ., Դրվագներ արցախահայության ազատագրական պայքարի և պետականակերտման պատմության (1813-2007 թթ.), Երևան, 2012, էջ 62:

եր ինքնապաշտպանության: Ասկերանի ծորի պաշտպանությունը գլխավորում էր վանեցի խմբապետ Համազասպը, Նրա պարտականությունն էր՝ փակել Աղդամի ճանապարհը դեպի Շուշի և սանձել մոտակա թուրքաբնակ գյուղերի՝ Խոջալուի, Մալիբեյլիի ասպատակիչներին: Համազասպ Սրվանձոյանի ջոկատն այդ խնդիրը կատարում էր մեծ հաջողությամբ, և զուր չէ, որ ասում են՝ Համազասպն այստեղ ստեղծեց իր հռչակը, և այստեղից սկսվեց Նրա հերոսական ուղին. (Միք. Վարանդյան): Իսկ Ղարաբաղում Նրա մասին երգ էին հյուսել, որ տարածված էր.

***Ամբողջ աշխարհում հռչակվեցավ
Համազասպը պանծալի...¹***

Դաշնակցական նշանավոր հայդուկներ Նիկոլ Դումանը, Խանասորի Վարդանը, Սեբաստացի Մուրադը (Մուրադ Խրիմյան), Քեռին, Դրոն (Դրաստամատ Կանայան), Դաշնակցական Խեչոն (Խաչատուր Գևորգյան) Սեպուհը, Կայծակ Առաքելը (Տիգրան Աբաջյան (Աղա) և շատ ուրիշներ ծեռնամուխ եղան ինքնապաշտպանական գործի կազմակերպմանն ու ղեկավարմանը: Մեծանուն բանաստեղծ, հասարակական-քաղաքական գործիչ Վահան Տերյանը 1906 թ. հունվարի 9-ին Ալեքսանդրապոլի իր մտերիմներից մեկին՝ մանկավարժ Սոֆյա (Սոնա) Օտարյանին ուղարկած նամակում մատնանշելով 1905-1906 թթ. հայ-թաթարական ընդհարումների ժամանակ ինքնապաշտպանության կազմակերպման գործում ՀՅԴ-ի ունեցած դերակատարությունը, գրել է. **«Մերոնք լաւ են, այժմ բաւականին զինւած են: Մանաւանդ «Դաշնակցութիւնը» մեծ դեր է խաղում և իմ խորին համոզմունքով եթէ չլինէր նա, շատ տեղերում ոչ մի հայ չէր մնայ: Թիֆլիսի ընդհարումների ժամանակ այնտեղ էի և աչքովս տեսայ Դաշնակց. (ուրեան) կատարած դերը: Կռուի մէջ Դաշնակց. (ուրիւնն) իրաւ հաւասարը չունի...²**

Այդ օրերին Համազասպ Սրվանձոյանը հավաքագրեց զենքի ընդունակ բոլոր կարող ուժերին: Արցախի ինքնապաշտպանական մարտերում իրեն հերոսաբար դրսևորած ՀՅԴ անդամ Ա. Վերդյանը (Դաշբուլաղ գյուղից) այդ մասին գրում է. **«Իմ ուրախութեան չափ ու սահմանն անցաւ, երբ Համազասպը ինձ կանչեց և ասաց.**

1 Ուլուբաբյան Բ., «Արցախի պատմությունը սկզբից մինչև մեր օրերը», Երևան, 1994, էջ 199:

2 Էմին-Տերյան Գևորգ, Վահան Տերյան անտիպ և անհայտ էջեր (Նամակներ, հոդվածներ, գրախոսություններ), Երևան 2014, էջ 68:

**- Աղասի, քեզ յանձնում եմ ձիաւոր հայդուկներ:
Սրանց խմբապետը դու պիտի լինես և պատուով կա-
տարես քո պարտականութիւնը:
Ես զինւորական բարև տւի և բարձրաձայն ասացի.
-Պատրաստ եմ»¹**

Շուշիում սկսված կռիվները շարունակվեցին մինչև օգոստոսի 20-ը և ավարտվեցին հայ անձնագոհ ինքնապաշտպանների հաղթանակով՝ զգալի կորուստներ պատճառելով թշնամուն, ինչի արդյունքում վերջինս սպիտակ դրոշ բարձրացրեց: Եվ դադարեցվեց կրակը: Ինչպես տեսնում եք, թուրք-թաթարական ցեղերը, երբ արդեն պարտվում են, սպիտակ դրոշ են պարզում, երբ «տեղները լայնանում է», ինչպես Արցախում են ասում, սկսում են անզիջում գրոհել, կոտորել, ավերել, թալանել: Մի՞թե այդպես չեղավ և Արցախյան պատերազմում, երբ նրանք տանով էին տալիս, աղաչում-պաղատում էին, որ հրադադար լինի, որը և կնքվեց Բիշկեկում: Իսկ հետո՞: Ի՞նչ եղավ: Հայտնի է բոլորիս:

Հայ-թուրքական ընդհարման ժամանակ հայերը տվել էին 40 սպանված և 68 վիրավոր: Չոհված հայ անվեհեր մարտիկների թվում էր նաև ինքնապաշտպանության ջոկատներից մեկի ղեկավար, Համազասպի կուսակցական և զինակից ընկեր Մարգար Ժամհարյանը (Մռավ)²: Թաթարների կորուստներն անհամեմատ մեծ էին՝ շուրջ 500 սպանված:³

Անտարակույս, մեծ է եղել Համազասպ Սրվանձտյանի նկատմամբ արցախահայերի տածած սերն ու վստահությունը: Ուստի, մատնանշելով Համազասպի՝ արցախահայերի ինքնապաշտպանության կազմակերպման գործում ունեցած, հիրավի, մեծ դերակատարումը՝ ակադեմիկոս Հր. Սիմոնյանը գրում է. «Շուշիում հաստատված մինչև այդ անհայտ վանեցի ոսկերիչ Համազասպ Սրվանձտյանն իր կտրիճներով կուրծք էր տալիս դաշտաբնակ թուրքերի հազարավոր ամբոխի դեմ արգելելով նրա մուտքը Լեռնային Ղարաբաղ: Չուր չէ, որ Ղարաբաղը երգեր ձոնեց Ասկերանի պատմական կռվի այդ քաջագուն հերոսին, հպարտացավ, որ իր կողքին է «Համազասպը պանծալի»⁴:

Ասում են՝ պատմությունն ունի իր տրամաբանությունը.

1 Վերդեան Ա., նշվ. աշխ., էջ 29:

2 Տե՛ս Ժամհարեան Մարգար (Մռավ), «Դրօշակ», Ժնև, 1905, նոյեմբեր, N 12, էջ 189-190:

3 Վարանդեան Մ., Հ.Յ. Դաշնակցութեան պատմութիւն, էջ 332:

4 Սիմոնյան Հր., Ազատագրական պայքարի ուղիներում, գիրք Ա. էջ 174.

Միայն յոթանասուն տարի հետո՝ խորհրդային կարգերի տապալման արդյունքում, կարողացանք արյան գնով ազատագրել մեր հինավուրց բերդաքաղաք Շուշին, ամբողջ Արցախը: Մենք կարողացանք ապացուցել, որ մեր կամքն անկոտրում է, որ մեր միասնականության և հայրենասիրության շնորհիվ մենք կանք ու հավետ լինելու ենք:

ԱՄՓՈՓՈՒՄ

**ՀԱՅ-ԹԱԹԱՐԱԿԱՆ (ԱՂԲԵԶԱՆԱԿԱՆ)
ԸՆԴՀԱՐՈՒՄՆԵՐԸ (1905-1906 թթ.) ԵՎ ՀԱՅՈՑ ԿԱՍԱԿՈՐԱԿԱՆ
ՑՈԿԱՏՆԵՐԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՍԽՐԱՆՔՆԵՐԸ
ՈԱԴԱ ԱՎԵՏԻՍՅԱՆ**

Հեղինակը հոդվածում անդրադառնում է հայ-թաթարական ընդհարումներին (1905-1906թթ.), որոնք, ցավոք, մեր պատմության ամենից քիչ լուսաբանված (կամ գրեթե չուսումնասիրված) էջերից են:

Հոդվածի մեջ առաջին անգամ գիտական շրջանառության մեջ են դրվում փաստեր, որոնք ներկայացնում են ոչ միայն քոչվոր ցեղերի՝ թաթարների, Այսրկովկասում հայտնվելու հանգամանքների, այլև նաև նրանց հեռագնա նկրտումների մասին: Աշխատության մեջ առանցքային տեղ է տրվում, բնականաբար, հայ ժողովրդի ֆիդայական շարժման անհրաժեշտությանն ու կարևորությանը, ազգի նվիրյալ զավակներ Նիկոլ Դումանի, Խանասորի Վարդանի, Սեբաստացի Մուրադի, Զեռու, Դրոյի (Դրաստամատ Կանայան), Սեպուհի, Կայծակ Առաքելի, Համազասպ Սրվանձտյանի և ուրիշների նվիրվածությանը, նրանց անձնուրաց ու կազմակերպված պայքարին՝ հանուն հայրենի հողը հրոսակախմբերից ազատագրելու վեհ գաղափարի:

РЕЗЮМЕ

**АРМЯНО-ТАТАРСКИЕ (АЗЕРБАЙДЖАНСКИЕ) СТОЛКНОВЕНИЯ
(1905-1906 ГГ.) И ОЧЕРЕДНЫЕ ПОДВИГИ ОТРЯД АРМЯНСКИХ
ДОБРОВОЛЬЦЕВ
РАДА АВЕТИСЯН**

Ключевые слова: столкновения, история, освободительная борьба, пересильные роды, армяно-татарский, добровольцы, фидаинское движение, орда, идея, политический.

В статье автор обращается армяно-татарским столкновениям (1905-1906 гг.), которые, к сожалению, являются наименее

освещенными страницами нашей истории (или почти неисследованными).

В статье впервые в научном обращении выдвинуты факты, которые представляют не только причины появления пересильных родов - татар на Кавказе, но и о дальнейшем их крещении.

В работе особое место уделяется, естественно, необходимости и важности Фидаинского движения армянского народа, преданности сынов нации: Никола Думана, Вардана Ханасора, Мурада Себасти, Дро (Драстамата Канаяна), Сепуга, Аракела Кастцака, Амазаспа Сирвандяна и др., их организованной борьбе во имя идеи освобождения армянской земли от орды.

SUMMARY

*ARMENIAN-TATAR (AZERBAIJAN) CLASHES (1905-1906) AND
SUBSEQUENT FEATS OF ARMENIAN VOLUNTEER DETACHMENTS*

RADA AVETISYAN

Key words: *clashes, history, liberal fight, nomadic tribes, Armenian-Tatar, voluntary brigade, exploit, fidy movement, gang, idea, political.*

In this article the author touches upon the Armenian-Tatar clash (1905-1906), which, unfortunately, is one of the least-illustrated (or almost not-studied) pages of our history.

For the first time facts are put in scientific circulation in the article, which represent not only the nomadic tribes, Tatars, circumstances of appearance in South Caucasus, but also their long-range ambitions. Naturally a pivotal place is given to the necessity and importance of Armenian people's fidy movement, dedication of nation's devoted sons as NikolDuman, KhanasorVardan, SebastatsiMurad, Qeri, Dro (DrastamatKanayan), Sepuhi, KaitsakArakel, HamazaspSrvandztyan and others, their self-sacrificing and organized struggle for the sake of noble idea of liberating native land from gangsters.

ՎԼԱԴԻՄԻՐ ԶԱԽԱՐՈՎ

ՂԱՐԱԲԱՂԸ Մ. ՅՈՒ. ԼԵՐՄՈՆՏՈՎԻ ԵՎ ՆՐԱ ՄԵՐՁՎՈՐՆԵՐԻ ԿՅԱՆՔՈՒՄ*

Բանալի բառեր՝ *Լերմոնտով, Խաստատով. Ակիմ Շան-Գիրեյ, Շոլմա, Շուշա, ավանդազրույց, դաստան, Շուշի, Ստեփանակերտ, ճանապարհ:*

...Կովկասի հանքային ջրերում Լերմոնտովը մինչև աշուն բուժման լրիվ կուրս է անցնում: Ընդհանուր թվով դա բավականին տեւական ժամանակաշրջան էր՝ ավելի քան չորս ամիս, որից հետո բանաստեղծը մեկնում է Ա.Ա.Վեյսամիևի անդրկուբանյան ջոկատ: Բայց ընթանալ այն ուղիով, որով ընթացել էր ռազմարշավային ջոկատը, անհնարին էր, չափից դուրս վտանգավոր, եւ Լերմոնտովը գնում էր Թաման, ուրկից էլ պետք է ծովային ճանապարհով հասներ Գելենջիկ, որտեղ զորաստուգում էր նախատեսված Նիկոլայ Առաջին կայսեր ներկայությամբ:

Սա լոկ ամբողջ տարվա իրադարձությունների կարճ հենքն է կամ ավելի ճիշտ՝ 1837 թ., այն մասը, երբ բանաստեղծն առաջին անգամ աքսորվել է Կովկաս: Այդ աքսորի ժամանակ Լերմոնտովը մտերմացել է իր զարմիկ Ակիմ Ակիմովիչ Խաստատովի հետ, ով այդ ժամանակ արդեն լեյք-գվարդիայի Սեմյոնովյան գնդի պորուչիկ էր: Նրա հայր Ակիմ /Յակիմ, Եկիմ, Օվագիմ, Հովակիմ/ Վասիլեւիչ /Բարսեղի/ Խաստատովը /1756-1809/ ազգությամբ հայ էր եւ ամուսնացած էր Լերմոնտովի տատի հարազատ քրոջ՝ Եկատերինա Ալեքսեւնայի հետ: Ակիմ Խաստատովն ուներ գեներալ-մայորի աստիճան⁶⁶:

Ա.Մ. Տուրգենեւն իր հիշատակարանում թողել է այդ ամուսնության եւ հարսանիքի հետ կապված բարդությունների պատմությունը.

«Մոսկվա եկավ սիմֆիրոպոլի ազնվական Ալեքսեյ Եմելյանովիչ Ստոլիպինսն՝ իրեն եւ դուստրերին ներկայացնելու, բարի մարդկանց տեսնելու, աղուհացով պատվելու եւ ուրախ ապրելու: Ազնվականն ուներ տնաբույս տղաներից ու աղջիկներից կազմված տնային թատրոն՝ գերազանց զվարճանք... Ալեքսեյ Եմելյանովիչի դուստրերից մեկը հայելու մեջ դեմքին կնճիռ-

* Հոդվածն ընդունվել է 25.05.2019 թ., երաշխավորվել է տպագրության բանասիրական գիտությունների թեկնածու Լեռնիկ Հակոբյանի կողմից՝ 03.06.2019 թ., ստորագրվել է տպագրության՝ 07.06.2019 թ.:

ներ նկատելով, բարեհաճ ունկն էր դնում հայկական ցեղին եւ օրենքներին պատկանող գեներալ-մայոր Խաստատովին եւ ընդունեց Նրա առաջարկը՝ միանալ օրինական ամուսնության կապով:

Աստված իմ, ճերմակաքար Մոսկվայում ինչպիսի՜ աղմուկ-իրարանցում բարձրացրին ամբարտավան իշխանադուստրերը, կոմսուհիները եւ պարզապես ազնավականների աղջիկները, բղավում են՝ ինչպես դիվոտված Լեդյու-Ռուլենը կոմունիստների ակումբում /1848թ./, գոռում են՝ ինչպե՞ս կարող է ազնվածին օրհորդն ամուսնանալ հայի հետ: Իսկ գիտի՞ այդ դժբախտ աղջիկը, որ Տիեզերական առաջին ժողովում պայթել է Արիոսի որովայնը, ախր չէ՜ որ նա կործանում է իր հոգին: Ինչքան ու ինչպես էլ որ Եկատերինա Ստոլիպինային բացատրում էին «մեղքը» /այն ժամանակ տիկնայք չգիտեին հայ եկեղեցու եւ Արիոսի ուսմունքի տարբերությունները հայ եկեղեցուց/, - եւ ապա ինչու պիտի ազնվական խավի ամբարտավան օրհորդներն այդքան շատ անհանգստանային իր համար,- ամուսնությունը տեղի ունեցավ, ու տիկին Խաստատովան երջանիկ էր զգում իրեն ամուսնու հետ. գեներալ Խաստատովը բարի ու բարեմիտ մարդ էր, եւ հասարակությունում Նրան սիրում էին»:

Պատանեկան տարիքում Ակիմ Վասիլեւիչը Ա. Վ. Սուվորովի համհարզներից մեկն էր, իսկ Նրա քույր Աննա Վասիլեւնան ամուսնացած էր Միխայիլ Լազարի Լազարեւի հետ:

Իր հայ ազգականների հետ Մ. Լեյբմոստովը ծանոթացել է 1818 թվականին, երբ առաջին անգամ չորս տարեկանում իր տատիկի՝ Ելիզավետա Ալեքսեւնա Արսենեւայի ու Նրա բազմաթիվ սպասավորների հետ հայտնվել է տատի քրոջ՝ Ե.Ա. Խաստատովայի կալվածքում: Ակիմ Վասիլեւիչ Խաստատովը մյուս հայ գեներալների՝ Ս.Ս. Դավիդովի, Ս.Մանեւի, Յա. Աբրամովի հետ կռվել է խոշոր շատ ճակատամարտերում: Խիզախության եւ արիության համար Նրան գովել է ինքը՝ Ա.Վ. Սուվորովը: Սուվորովի հետ նա ծանոթացել է 1780 թվականին, եւ Սուվորովը Նրան իրեն համհարզ է վերցրել: Ա.Վ. Խաստատովն աչքի է ընկել Կինբուռնի ճակատամարտում: 1797թ. հոկտեմբերի մեկին Կինբուռնի մոտ տեղի ունեցած ճակատամարտի մասին Գ. Ա. Պոտյոմկինին հղած զեկույցում Սուվորովը հատուկ նշել է մարտում վիրավորված Ա.Վ. Խաստատովի անունը: 1789 թ. գնդապետի աստիճանով Ա.Խաստատովն աչքի է ընկել Ֆոկչանիի եւ Ռիմնիկի ճակատամարտերում, երկու ան-

գամ վիրավորվել է եւ պարգեւատրվել Գեորգիեւյան IV աստիճանի շքանշանով:

Ա.Վ. Խաստատովը մասնակցել է Նաեւ Իզմայիլ բերդի գրավման դաժան մարտերին: 1790 թ. դեկտեմբերի 21-ին Գ. Պոտոմկինին հղած զեկույցում Ա.Վ. Սուվորովը գրել է. «Լիովին արդարը մատուցելով իմ կողքին գտնվող եւ բոլոր հրամաններս կատարած աստիճանավորներին՝ առանձնահատուկ ուշադրության է արժանի փոխգնդապետ Ակիմ Խաստատովը...»:

Ակիմ Խաստատովը տիրապետում էր մի քանի օտար լեզուների, նշանակված է եղել Մ.Ի. Կուտուզովի ջջախմբում, Խերսոնում ապրել է Սուվորովի մոտ՝ սպասելով պատվիրակության մեկնմանը Թուրքիա: 1793 թ. Նա ծառայել է Ռուսաստանի դեսպանատանը՝ Կոստանդնուպոլսում: Պաշտոնաթող է եղել 1799 թվականին: Ա.Վ. Խաստատովի Բոգդան անունով եղբայրը 1780 թ. Աստրախանի նավահանգստային մաքսատան պետն է եղել: Լինելով Հյուսիսային Կովկասի բազմալեզու բնակչության շրջանում մեծացած հայ, Նա լավ գիտեր «ասիական հանգամանքներն ու նրանց բարքերը», դրա համար էլ Սուվորովը Պ.Ի. Տուրչանինովին հղած նամակում խնդրել է Բոգդանին իր իսկ խնդրանքով տալ աստիճան եւ իր /Սուվորովի/ մոտ իր ընդունակությունների գծով աշխատելու թույլտվություն: Հայտնի է, որ Սուվորովը մարդկանց հետ դժվար էր լեզու գտնում, բայց երբեք չէր մոռանում նրանց, ովքեր արժանացել էին իր վստահությանը:

Նա մտերմություն էր անում Խաստատով եղբայրների հետ, նրանց կոչում էր իր բարեկամը եւ բարձրպաշտոնյա դեմքերին հղած նամակներում եւ զեկույցներում նշում էր նրանց խիզախությունը՝ խնդրելով դրա համար բարձրացնել նրանց աստիճանը:

Իսկ ովքե՞ր էին գեներալ-մայոր Ա.Վ. Խաստատովի նախնիները:

XVIII դարի առաջին կեսին կիզյարցի *հայ վաճառական Սաֆար Վասիլեւ /Բարսեղյան/* հումքի վերամշակման մետաքսագործարան կառուցեց Չեչնիայի սահմանի մոտ՝ Թերեք գետի ձախ ափին: Կալվածքը կոչվեց Շյուկոզավոդսկ կամ պարզապես Շյուկովոյե: <...> 1764 թվականից գործարանի օբեր-տնօրեն դարձավ Սաֆարի որդին՝ Վասիլի Խաստատովը: Հետո գործարանը վերցվեց պետության կողմից, այնտեղ աշխատող հայերին ու վրացիներին դարձրին պետական գյուղացիներ, իսկ օբեր - տնօրեն Ակիմ Վասիլեւիչ Խաստատովը դարձավ

մետաքսագործարանի կալվածատեր: Իր երիտասարդ տիկնոջը Նա Մոսկվայից բերեց հենց այդ կալվածքը: 1809 թվականին Եկատերինա Ալեքսեևնան այրիացավ, բայց կալվածքից չհեռացավ, դաստիարակում էր երեք երեխաներին՝ Մարիային, Աննային եւ Ալիմին /Յակիմ, Հովակիմ/: Միխայիլ Լերմոնտովի՝ երկրորդ ծնկան երկու մորաքույրերը՝ Մարիա եւ Աննա Խաստատովաները, շատ էին սիրում իրենց զարմիկին: Նրանց եղբայր Ալիմ Ալիմովիչ Խաստատովը՝ բանաստեղծի քեռին, նույնպես մտերիմ էր նրա հետ: Աննա Ալիմովնա Խաստատովան ամուսնացած էր գեներալ-մայոր Պ.Ի. Պետրովի հետ, ով Կովկասյան գծի եւ Սեւծովյան տարածաշրջանի զորքերի շտաբի պետն էր: <...> Պետրովները Լերմոնտովի ազգականներն էին մոր կողմից, նրանց հետ բանաստեղծը հանդիպել է մանկական տարիքում /1820 եւ 1825 թթ./, Կովկասի հանքային ջրերում: <...>

1825 թ. Ելիզավետա Ալեքսեևնա Արսենևան թոռան հետ հերթական անգամ մեկնել է Կովկաս, նորից հյուրընկալվել քրոջ՝ Եկատերինա Խաստատովայի կալվածքում, ում ավագ դուստրը Լերմոնտովի մոր նման կրում էր Մարիա անունը: Մարիա Ալիմովնա Խաստատովան այդ ժամանակ արդեն ամուսնացած էր Պ.Պ. Շան-Գիրեյի հետ: Այդ գալուստին Մ.Լերմոնտովի տատիկը ավագ զարմուհուն համոզեց իր հետ մեկնել Տարխանի եւ այնտեղ կալվածք գնել: Մարիան տեղափոխվեց Պենզայի նահանգ եւ Տարխանիում մորաքրոջ կալվածքին մոտ գտնվող Ապալիխա կալվածքը գնեց:

* * *

Արդեն մեկ անգամ չէ, որ գրել են, թե Լերմոնտովը ճանապարհին կարող էր հայտնվել Ղուբայում կապված այն բանի հետ, որ «Նիժնի-Նովգորոդցիներն» ուղարկվել էին Ղուբայի գավառ՝ սեպտեմբերին սկսված ապստամբությունը ճնշելու համար: 1837թ. սեպտեմբերի 5-ին այն բարձրացրել էր Շամիլի աջակից Հաջի Մամեդը: <...>

Այստեղ իսկը ժամանակն է՝ մեջբերելու Լերմոնտովի նշանավոր նամակը: Այն ուղարկվել է Անդրկովկասից Պետրոգավոդսկ՝ Սվյատոսլավ Ռաբուկուն: Նամակը ներկայացնում ենք լրիվ:

«Սիրելի բարեկամ Սվյատոսլավ

Ենթադրում եմ, որ իմ երկու նամակները կա՛մ կորել են

փոստում, կա՛մ էլ քո պատասխանները չեն հասել ինձ, որով-
հետեւ այն ժամանակվանից, ինչ գտնվում եմ այստեղ, ես քո
մասին գիտեմ միայն տատիկի նամակներից: Ինձ, վերջապես,
տեղափոխեցին գվարդիա, բայց՝ Գրոդնոյի գունդ, ու թե չլինե-
ր տատիկը, ապա, խղճով ասած, սիրով կմնայի այստեղ, որով-
հետեւ հազիվ թե Պոսեյնիեն Վրաստանից ուրախ է:

Այն պահից, ինչ դուրս եմ եկել Ռուսաստանից, կհավատա՞ս,
որ անընդհատ գտնվել եմ թափառումների մեջ՝ մեկ անիվների,
մեկ՝ ձիու վրա, Գիծը կտրել անցել եմ Կիզլյարից մինչեւ Թա-
ման, անցել լեռները, եղել Շուշայում, Կուբայում, Շեմախայում,
Կախեթիայում, հագնված չերքեզի նման, հրացանը մեջքիս,
գիշերել բաց դաշտում, ննջել շնագայլերի ճիչերի տակ, չուրեկ
կերել եւ անգամ Կախեթի գինի խմել...

Մրսեցնելով ինձ ճանապարհին, ես ջրերը հասա լրիվ հո-
դացավի մեջ, մարդիկ ինձ ձեռքերի վրա դուրս տարան սայլա-
կառքից, չէի կարողանում քայլել, մեկ ամսում ջրերն ինձ ապա-
քինեցին, երբեք այսքան առողջ չեմ եղել, բայց օրինակելի էլ
կյանք եմ վարում. գինի խմում եմ լոկ այն ժամանակ, երբ ինչ-
որ տեղ լեռներում գիշերը մրսելով ու տեղ հասնելով տաքաց-
նում եմ ինձ...Այստեղ, պատերազմից բացի, այլ ծառայություն
չկա, ես ջոկատ հասա շատ ուշ, քանզի Կայսրն այժմ հրամայել
է երկրորդ ռազմարշավ չանել, ու ես այն միերկու-երեք կրակոց
եմ լսել, բայց փոխարենը իմ ուղեւորությունների ընթացքում
երկու անգամ պաշտպանվել եմ պատասխան հրաձգությամբ:
Մի անգամ գիշերը երեքով՝ ես, մեր գնդից մի սպա ու մի չեր-
քեզ /հասկանալի է՝ խաղաղ/ ձիերով գնում էինք Կուբայից, եւ
քիչ մնաց, թե ընկնեինք լեզգիների հրոսակախմբի ձեռքը: Լավ
տղաներ այստեղ շատ կան, հատկապես Թիֆլիսում շատ կար-
գին մարդիկ կան, իսկ թե ինչն է այստեղ իսկական հաճույք՝
դա թաթարական բաղնիքներն են: Ինչ վայրերում որ եղել եմ,
բոլոր հիշարժան տեղերի ճեպանկարներն արել եմ, եւ ինձ
հետ կարգին հավաքածու եմ կրում, միով բանիվ՝ ես ճամփոր-
դել եմ: Լեռնաշղթան անցնելով, հենց որ տեսա Վրաստանը,
սայլակառքից իջա ու բարձրացա ձիու վրա, ձյունապատ սա-
րը /Կրեստովայա/, մազլցեցի մինչեւ կատարը, ինչն ամենեւին
դուրսին բան չէր, այնտեղից երեւում է Վրաստանի կեսն՝ ինչ-
պես ափիդ մեջ եւ, ճիշտ եմ ասում, ես չեմ վախենում բացատ-
րել կամ նկարագրել այդ զարմանալի զգացումը. լեռնային օդն
ինձ համար համադարման է, թող սատանայի ծոցը գնան թա-

խիծն ու մեղամաղձությունը, սիրտդ խփում է, կուրծքդ ազատ շնչում, էլ ոչինչ պետք չէ այդ թուպեին, այդպես կնստեի ու մի ամբողջ կյանք դիտեի՝:

Սկսել եմ թաթարերեն խոսել սովորել, լեզու՝ որ այստեղ, եւ ընդհանրապես՝ Ասիայում, անհրաժեշտ է՝ ինչպես ֆրանսերենը եվրոպայում, բայց հիմա, ափսոս, սովորելը կիսատ կմնա, իսկ հետագայում կարող էր եւ հարկավոր գալ: Ես արդեն պլանավորել եմ Մեքքա ու Պարսկաստան եւ այլուր գնալ, հիմա մնում է միայն խնդրել՝ Պերովսկու հետ հիվա գնացող արշավախմբին միանալու համար:

Տեսնու՞մ ես, որ այդ ամենից ես ահավոր թափառաշրջիկ եմ դարձել, ճիշտ եմ ասում՝ հակված եմ նման կյանքի: Եթե խելքիդ փչի ինձ պատասխանել, ապա գրիր Պետերբուրգի հասցեով, եւ ոչ, ավա՛ղ, Ցարսկոյե Սելոյի, ձանձրալի է նոր գունդ գնալը, լիովին ետ եմ վարժվել ռազմաճակատից եւ լրջորեն մտածում եմ պաշտոնաթող լինելու մասին:

Մնաս բարով, սիրելիդ իմ բարեկամ, մի մոռացիր ինձ ու հավատա, այնուամենայնիվ, որ իմ ամենամեծ թախիծը եղել է այն, որ դու տուժել ես իմ պատճառով:

Հավերժ քեզ նվիրված՝ Մ. Լերմոնտով:»

Իրակլի Անդրոնիկովը, մեկնաբանելով այս նամակը, նշել է. «Բայց, քանի դեռ Նիժնի-Նովգորոդցիները գտնվում էին ռազմերթում, Շիրվանի միլիցիայից վրա են հասել շիրվանցի հազար հոգի: Սեպտեմբերի 11-ին Ղուբայի պաշարումը վերացել է, եւ Նիժնի-Նովգորոդցիների օգնությունը պետք չի եկել: Ամսի 22-ի վրա Նրանք լոկ հասել են Շամախի եւ այնտեղ որոշ ժամանակ մնացել «Շիրվանի գավառը հսկելու համար», միայն դրանից հետո են վերադարձել Կախեթիա՝ իրենց շտաբ-բնակարանը: Ակներեւաբար, Լերմոնտովը Թիֆլիսում ստացել է Ղուբայի շրջանում իր գունդը ներկայանալու կարգադրագիրը, բայց Նիժնի-Նովգորոդցիներին այնտեղ չի գտել: Այդ դեպքում հասկանալի է դառնում, թե Լերմոնտովը ինչու է ընկել Ղուբա ու Շեմախա, ինչու գիշերը, ինչ-որ սպայի հետ լոկ մի խաղաղ չերքեզի ուղեկցությամբ մեկնել է Ղուբայից, ինչու է լեզգիների մի ամբողջ ջոկատի հետ գիշերային ընդհարման ժամանակ կրակոցներ արձակել»:

Իսկ, այ, հետո Անդրոնիկովը գրել ու պնդել է, թե Շամախիից դեպի Կախեթիա՝ Նիժնի-Նովգորոդյան գնդի շտաբ-բնակարան մեկնելով, Լերմոնտովը պետք է ընթանար Նուխիի մի-

ջով, քանզի Շամախիից Ղարա-Աղաջ տանող ուրիշ ճամփա չկա ու չի եղել: Այնինչ, Լերմոնտովի նամակում հիշատակված է ոչ թե Նուխին, այլ՝ Շուշին, որը գտնվում է եւ Ղուբայից, եւ Շամախիից հեռու, Անդրկովկասի հարավային սահմաններին մերձ: *Թվում է՝ Լերմոնտովի հետ վիճելն անիմաստ է, այդուհանդերձ՝ Անդրոնիկովը կասկածել է «Շուշա» գրվելու արդարացիության վրա:*

Կրկենք. այդ նամակի ինքնագիրը, շատ ափսոս, պահպանված չէ, սակայն կարելի է միանգամայն հստակ նշել, որ այն գրված է 1837 թ. Նոյեմբերի երկրորդ կեսին-դեկտեմբերի սկզբին: «Ինձ Նորից վերադարձրել են գվարդիա» բառերը վկայում են այն մասին, որ այդ նամակը չէր կարող գրված լինել 1837թ. հոկտեմբերի 11-ին: *Նամակն այդ առաջին անգամ հրապարակվել է «Ռուսսկոյե օբզորենիե» հանդեսում՝ բանաստեղծի երրորդ ծնկան եղբայր Ակիմ Շան-Գիրեյի հիշատակարանում: Բայց առաջին հրապարակման մեջ «В Шыме»-ի փոխարեն տպագրվել է «В Шyme»: Այդ անճշտությունը ես բացատրում եմ այն փաստով, որ 1890 թվականին Ակիմ Պավլովիչ Շան-Գիրեյն արդեն մահացած է եղել, սրբագրությունը կարդալ արդեն չէր կարող, իսկ Նրանք, ովքեր նամակը պատրաստել են հրապարակման, ազատ կերպով կարող էին ռուսերեն <ш> /շ/ տառը կարդալ <м> /մ/, մանավանդ որ պատկերներում նմանությունը մեծ է:*

Որ Շումա անունով քաղաք Անդրկովկասում բացակայում է, դա գիտեր Լերմոնտովի առաջին կենսագիր-Պավել Ալեքսանդրովիչ Վիսկովատովը: Հաջորդ՝ 1891 թվականին նա Ռիխտերի հրատարակությունում լույս է ընծայել բանաստեղծի ստեղծագործությունների հինգ-հատորյակը, որտեղ ներառել է եւ այդ նամակը՝ արդեն «Шyme»-ն սրբագրած՝ «Шымы»: Անգամ այդքանից հետո արդի սիրողական լերմոնտովագետ Դ.Ա. Ալեքսենը 2006 թվականին գրել է. «Նամակը չի կարելի ապրիորի վավերական ու արժանահավատ համարել՝ բառի ճշգրիտ - Գիրեյի իմաստով վերցված, քանի որ Նրա ինքնագիրը մեզ չի հասել, տեքստը հայտնի է Ա.Պ. Շան-Գիրեյի հուշերով...Միանգամայն ակներեւ է, որ դա ոչ թե ճշգրիտ հաշվետվություն է Կովկաս առաջին աքսորի մասին, այլ՝ ավելի շուտ բանաստեղծական երեւակայություն, Պեչորինի՝ ռուսական Չայլո Հարոլդի, ապագա ուղեւորությունների եսքիզ»:



Սիրողական մոտեցման տեր մարդու համար, ինչպես ասում են, ամեն ինչ է կարելի, բայց բոլոր նախորդ լերմոն-տովագետներին ուղղել փորձող մարդը չի կարող չիմանալ, որ հենց նման եզրակացությունն ինքն է ապրիորի սխալ:

Նախ՝ այնպիսի դեպքերը, երբ այս կամ այն փաստաթուղթը բնագրով չի հասել մեր օրերը, այլ հայտնի է միայն ցուցակով՝ պատմության ու գրականագիտության մեջ ավելի քան շատ կան:

Երկրորդ. վերջին ավելի քան հարյուր տարում ոչ-ոք չի փորձել որոնել Ակիմ Պավլովիչ Շան-Գիրեյի արխիվը:

Երրորդ. կասկածն առ այն, թե այդ նամակում ճշմարտությունը չէ գրված, այլ ներկայացված է իբր «Մեր ժամանակի հե-

րոսի» ապագա պլանը, անհեթեթություն է: Լերմոնտովը 1837 թվականի նոյեմբերին գուցե եւ մտածել է, որ շուտով ինքը ինչ-որ բան կգրի Կովկասում իր ուղեւորությունների մասին, սակայն՝ այնպես, որ այդ նամակում բառ իսկ չասելով, գրվանի տակ դրած կազմի Պեչորինի ապագա տեղաշարժումների պլանը՝ նման միտքը կարող է ծնվել լոկ գառնացանքի մեջ:

Չորրորդ. Լերմոնտովագետներից շատերն են վաղուց արդեն հանգել Լերմոնտովի ստեղծագործության ինքնակենսագրականության մտքին, եւ բանաստեղծի կյանքի կոնկրետ իրադարձությունների հաստատումը գտնում են նրա ստեղծագործության մեջ:

Եվ **հինգերորդ.** բանաստեղծի՝ XX դարի 50-ական թվականներին լույս տեսած երկերի առաջին ակադեմիական ժողովածուի մեջ մեկնաբանները, կազմելով այդ նամակին վերաբերող մեկնաբանությունները, բերել են նրա վավերականությունը հաստատող՝ այն ժամանակ մեծ քանակությամբ վավերագրական հայտնի վկայություններ:

Համեմատության համար հիշյալ ժողովածուից մեջբերենք դրանք, որտեղ նշված են այն էջերի ու տողերի համարները, որոնց վերաբերյալ արվել են մեկնաբանությունները : <...>

Այսպիսով, խոսելով նամակում Շուշի անվան մասին, անհրաժեշտ է տարրական համեմատություն կատարել Լերմոնտովյան ձեռագրերում տառերի ու բառերի գրելաձևի վրա: Այդ համեմատությունը հստակ ցույց է տալիս, որ <М> եւ <ш> տառերն այնքան են միմյանց նման, որ Լերմոնտովի՝ Ա.Պ. Շան-Գիրեյի արխիվում գտնված նամակում, հղված Ռաբեսկուն, դժվար չէր Մыша-ի փոխարեն կարդալ Мыша: Հատկապես որ՝ նրանց քիչ բան է հայտնի եղել բանաստեղծի կովկասյան առաջին արքայի մասին: Իրակի Անդրոնիկովի տեսակետն ամենեւին չի կարող ընդունվել հենց միայն այն պատճառով, որ «Ныча» եւ «Мыша» բառերի գրությունները խիստ տարբերվում են միմյանցից:

Բնականաբար, հարց է ծագում. բանաստեղծն ինչու՞ է հայտնվել Շուշիում: Ուղիղ պատասխան այդ հարցին առայժմ չի գտնված: Բայց երբ ուշադիր նայում ես Լերմոնտովյան ժամանակի ճանապարհային քարտեզին, ապա երեւում է, որ Թիֆլիսից Ղուբա գնում էին միայն Ելիզավետպոլով՝ հետո թեքվում Շամախու ուղղությամբ: Այո, կարելի էր շրջերթ անել ու

գնալ Նուխիով, բայց հազիվ թե Լերմոնտովը արել է դա, նա, ըստ երեւույթին, ավելի կարճ ուղի է ընտրել: Վերադառնալով հետ՝ բանաստեղծը լիովին կարող էր ելիզավետպոլից թեքվել Շուշիի ուղղությամբ, քանի որ իրեն պետք է եղել եւ ինչ-որ կարելու պատճառներով, ավելի շուտ իր ծառայողական գործերով, ընդգծում եմ ծառայողական ռազմական գործերով, հայտնվել այնտեղ: Կասկած չկա, որ բանաստեղծի ներկայությունը Շուշիում եղել է միանգամայն կարճաժամկետ, կարծում ենք՝ երկու-երեք օրից ոչ ավելի:



Շուշի: Ծենքը, որտեղ տեղի բնակիչների պատմածով, 1837թ.

*կանգ է առել Լերմոնտովը: Մինչեւ 1989 թ. շենքի վրա
հուշատախտակ է եղել:*

* * *

1837թ. Ղարաբաղում Լերմոնտովի լինելու փաստը ունի նաեւ մեկ այլ շատ կարելու հաստատում, որին ուշադրություն չի դարձվում: Խոսքը վերաբերում է մեծ բանաստեղծի ստեղծագործության մի նշանակալից էջի: Այո, այո, հենց 1837թվականին է Լերմոնտովը գրի առել Աշուղ-Ղարիբի մասին ասքը եւ մշակելով վերածել հեքիաթի, որը, սակայն, չկարողացավ, լիովին հասցնել վերջնամշակման: <...> Մինչեւ այժմ վեճեր են

գնում առ այն, թե այդ ասքի որ տարբերակն է գրառել Լերմոն-տովը, իսկ այն գոյություն ունեւոջ միայն Անդրկովկասի շատ ժողովուրդների մոտ, այլեւ՝ Միջին Ասիայում: Սակայն արեւելազետ, Սանկտ-Պետերբուրգի համալսարանի դոցենտ Ա.Ի. Պըլեւի բազմամյա ուսումնասիրությունները ստեղծագործական գործընթացի հետաքրքիր պատկեր են բացահայտել: Այդ թեմայով նա հրապարակել է հինգ հոդված, եւ յուրաքանչյուր նորը լրացվում է ոչ միայն քննախույզ գիտնականի դիտարկումներով, այլեւ՝ փաստերով: Ըստ արեւելազետի համոզիչ եզրահանգման՝ Լերմոնտովյան «Աշուղ Ղարիբ» հեքիաթի համար հիմք է հանդիսացել հենց Ղարաբաղում՝ նրա լսած դաստանը: <...>

ԱԿԻՄ ՊԱՎՈՎԻՉ ԾԱՆ-ԳԻՐԵՅԸ ՂԱՐԱԲԱՂՈՒՄ

Սկզբում մեջբերենք Լերմոնտովյան հանրագիտարանից Մ. Դամիանիդիի հոդվածի ժլատ տողերը:

«ԾԱՆ-ԳԻՐԵՅ ԱԿԻՄ /Հովակիմ/ ՊԱՎՈՎԻՉ» /1819-1883/, Լ. երրորդ ծնկան եղբայրն է ու մտերիմը: Ծնվել է Հյուսիսային Կովկասում՝ Շյուկոզավոդսկայա ստանիցայում, տատի՝ Եկատերինա Ալեքսեւնա Խաստատովայի /բանաստեղծի տատ Ելիզավետա Ալեքսեւնայի հարազատ քրոջ/ կալվածքում: Ծնողները. Պավել Պետրովիչ եւ Մարիա Ակիմովնա Ծան-Գիրեյներ: Մաքուր ու անկեղծ բարեկամություն է կապել Ակիմ Պավլովիչին Լ. հետ: 1825 թ. աշնանը Ծան-Գիրեյների ընտանիքը Ե.Ա. Արսենեւայի առաջարկությամբ տեղափոխվում է Պենզայի նահանգ: Նրա օգնությամբ գնում են Տարխանիից երեք վերստի վրա գտնվող Ապալիխա կալվածքը: Ծ.-Գ.-ի պատանեկությունն անցել է Ե.Ա. Արսենեւայի տանը, բանաստեղծի կողքին: Նա եղել է Լերմոնտովի կյանքի շատ իրադարձությունների վկան: <...> Ծ.-Գ.-ն պատկանել է այն քիչ մտերիմների թվին, ում Լերմոնտովը հաղորդակից է դարձրել իր մտահոգումներին: Լերմոնտովին նա վերջին անգամ տեսել է 1841 թ. ծմռան-գարնանը, Պետերբուրգում: Պյատիգորսկում մենամարտի ժամանակ զոհվելու լուրն առնելով, Ակիմ Պավլովիչն է Ե.Ա. Արսենեւային Պետերբուրգից Տարխանի ուղեկցել: Նաեւ ինքն է Պյատիգորսկից ուղարկված իրերը բացել, դասավորել: Դրանց շարքում նա հայտնաբերել է Օդոեւսկու ալբոմը՝ Լերմոնտովի վերջին բանաստեղծություններով: Ավելի ուշ ալբոմը նա է Ա.Ա. Խաստատովի միջոցով վերադարձրել Օդոեւսկուն: Ծ.-Գ.-ն Պե-

տերբուրգի Կայսերական հանրային գրադարանին և հանձնել Լերմոնտովի՝ եւ Տարխանիում գտնված ու Պյատիգորսկից այնտեղ եկած բոլոր գրքերը, ձեռագրերն ու նամակները: Շ.-Գ.-ն ավարտել է Պետերբուրգի Հրետանային ուսումնարանը, Կրեմենչուգում ծառայել է որպես դաշտային հեծելազորային հրետանու պետ Ի.Կ. Առնոլդիի համհարգ:



*Ակիմ /Հովակիմ/ Պավլովիչ Շան-Գիրեյը. 1860-ական
թվականների լուսանկար:*

Նա գեներալ Առնոլդիի տիկնոջը՝ Սոֆյա Կառլովնային և նվիրել Լերմոնտովի՝ Չաբուլոտսկու բնագրից 1841 թ. իր ընդօրինակած յուղաներկ դիմանկարը: Հետագայում նրա դուստրը՝ Ս.Ի. Ուխտոմսկայան, պատճենը հանձնել է Պետերբուրգում Լերմոնտովի թանգարանին: Կորցնելով հետաքրքրությունը շտաբային գործի նկատմամբ, Շ.-Գ.-ն պաշտոնաթող եղավ: 1844թ. նա գնեց Գեորգիեսկից ոչ հեռու գտնվող Նովո-Ստոլիպինսկոյե կավածքը, որը մի ժամանակ պատկանում էր իր նախապապ Ա. Ե. Ստոլիպինին, եւ զբաղվեց գյուղատնտեսությամբ: 1851 թ.նա ամուսնացավ գեներալ Վերգիլիևի խորթ դուստր Էմիլյա

Ալեքսանդրովսկա Կլինգենբերգի հետ: Նրա տիկինը ծանոթ է եղել բանաստեղծի հետ, նրա՛նց տանն է տեղի ունեցել Մարտի-նովի հետ Լերմոնտովի վեճը: Շ.-Գ.-ն, հավանականորեն, նրա-նից է իմացել մենամարտի մանրամասները:

Շ.-Գ.-ների ընտանիքը Պյատիգորսկում օգտվում էր հար-գանքից: Ինքը՝ Շ.-Գ.-ն խելացի, եռանդուն, գործնական մար-դու հեղինակություն ուներ, դրա համար էլ նրան գավառի ազն-վականության պարագլուխն են ընտրել: Կովկասի փոխարքայի հանձնարարությամբ նրան ուղարկել են Պետական խորհրդի կոմիտե եւ Ստավրոպոլի նահանգի գյուղացիության կազմա-կերպման գծով Կովկասյան կոմիտե: Այդ գործունեության հա-մար նրան պարգևատրել են բրոնզե մեդալով: Միջոցների սա-կավորությունը նրան մղել է ծառայության անցնելուն եւ աշխա-տելուն Շուշիում, Նախիջեւանում, Երեւանում: Կյանքի վերջին տարիները նվիրել է Հայաստանի երաշտային շրջաններում ոռոգչական աշխատանքներին: Հանգստի հազվադեպ ժամե-րին նա տրվում էր սիրելի զբաղմունքին՝ նկարչությանը: <...> Նրա մոտ էր կանգ առնում բանաստեղծի առաջին կենսագի-րը՝ Դերպտից եկող Պ.Ա. Վիսկովատովը /սաեւ՝ Պ.А.Висковатый -**թարգմ.**/ եւ բարձրաձայն ընթերցում Լերմոնտովի մասին գրած իր գիրքը: Նա ուշադիր լսում էր Շ.-Գ.-ի դիտողություննե-րը եւ բազմաթիվ ուղղումներ է կատարել գրքում: Շ.-Գ.-ն հիշո-ղություններ է թողել Լերմոնտովի մասին, որոնք բանաստեղծի մասին գրված հուշերից ամենաբովանդակալիցն ու անաչառն են հանդիսանում:

Ակիմ Պավլովիչին ենք մենք պարտական նրանում, որ Լեր-մոնտովի գրասեղանն ու բազկաթոռը գտնվում են Պյատի-գորսկում «Լերմոնտովի տնակում»: 1883թ. դեկտեմբերի 8-ին Շ.-Գ.-ն սրտի պայթումից վախճանվեց Թիֆլիսում, 64 տարե-կանում: Աճյունը տեղափոխվել է Պյատիգորսկ: Նրան թաղել են Լերմոնտովի նախնական թաղման վայրից ոչ հեռու»: <... >

Իսկ այժմ խոսքը տանք Ակիմ Պավլովիչի դստերը՝ Եվգենյա Ակիմովնային: <...>


«Հայրս տառապում էր անգործությունից ու հանկարծ իմա-ցավ, որ Ելիզավետայոյի նահանգում՝ հեռավոր Շուշի քաղաքում պաշտոն է ազատվել եւ խնդրեց իրեն տեղափոխել այնտեղ: <...> Շուշի քաղաքը /Ղարաբաղի նախկին մայրաքաղաքը, որ-տեղ ժամանակին ուղանցաբար եղել էր Լերմոնտովը/ գտնվում է բարձր լեռնավանդակի վրա, որի ստորոտից ոչ այնքան հե-ռու, համեմատաբար հարթ տափարակի վրա Խանքենդի կոչ-

վող փոքրիկ գյուղում էր տեղակայված շտաբ-բնակարանը, եւ գնդի հրամանատարի դուստրերն իրենց երկրպագուների հետ ձի հեծած էին գալիս մեզ հյուր, մենք էլ՝ իրենց: Ժամանակին, հավանաբար, հենց նշված գյուղում էր տեղակայված գունդը, ուր գործուղված է եղել Լերմոնտովը: Շուշի կարելի էր գնալ միայն ձիով, իրերը տեղափոխել՝ ավանակներին ու ձիերին բարձած: Խոշոր ու մեծաքանակ ապրանքները տեղ էին հասցվում ուղտերի քարավանով: 7 վերստի բարձրությամբ կտրուկ վերելք, ցածում այսպես կոչված՝ խանի այգիները, քարավանսարայում /իջեւանատան նման մի բան/ եկվորները կանգ էին առնում եւ իրերը վերաբարձելով՝ ձի հեծած, լեռնային նեղ ճանապարհով, որի երկու կողմը կիրճեր էին՝ փոքր գետերով հանդերձ եւ անդունդներ, բարձրանում քաղաք:

Հայրիկն ուշադիր ուսումնասիրեց շրջակայքը եւ ծանրութեթեւ անելով բնակչության, հատկապես՝ աղքատ խավի, ծանր վիճակը, անվավոր փոխադրամիջոցների համար նախատեսված հատուկ՝ զիգզագածեւ ուղի կառուցելու միտք հղացավ՝ Թիֆլիս տանող ռազմավիրական ճանապարհի նման: Ձեռնամուխ եղավ հարթաչափական հաշվարկներին... Ուղեժապավենի հարթեցումն ընթանում էր այնպիսի դժվար ու վտանգավոր տեղերով, որ նրան պետք էր լինում իրանի շուրջը փաթաթած եւ ամուր կապված բարակ պարանով աշխատել, որի մյուս ծայրը պահում էին վերելում գտնվող մարդիկ: Վերջիններս շարժվում էին նրան զուգահեռ ու դանդաղ: Այդ կերպ էր նա պահում մարմնի հավասարակշռությունը՝ շարժվելով ուղղաբերձ ժայռերի փոքր ու նեղ ելուստներով, որտեղ հազիվ էր տեղավորվում ոտնաթաթը:

Հայրիկն իր մոտ կանչեց բնակիչներին, բացատրեց ամեն ինչ, եւ նրանք հասկացան ու հիացած էին: Նա նրանց ասաց, որ եթե ուզում են իրոք գլուխ գա գործը եւ համաձայն են յուրաքանչյուր ընտանիքից հերթով մեկական բանվոր տրամադրելու գործին, ապա ինքը թույլտվություն կվերցնի Նահանգապետից, ով իր անմիջական պետն է՝ Բուլատով ազգանվամբ, քաղաքացիական անձ է եւ շատ մարդասեր անհատ, ցանկացած լավ գործի, լավ նախաձեռնության ընդառաջող:

Նահանգապետը հորս ճանաչում էր որպես մի մարդու, որին կարելի էր վստահել: Նա Ելիզավետպոլում էր բնակվում, եւ հայրս գնաց այնտեղ: Բացատրեց նրան խնդրի էությունը եւ ստացավ թույլտվությունը: Այդպես ահա սկսվեց ճանապարհի շինարարությունը: <...>



Պատկեր՝ Շուշի քաղաքից: Վ.Վերեշագինի նկարներից, 1865 թ.

Ժայռոտ տեղերը վառողով պայթեցնելու համար պատրույզներ էին պետք: Վառողը խառնում էին ջրի հետ, պատրույզները գցում ստացված լուծույթի մեջ, լավ ներծծվելուց հետո հանում եւ հիմնավորապես չորացնում: Այդ աշխատանքը հարկ էր անել խնամքով, այլապես կարող էին դժբախտ պատահարներ լինել: Այդ ժամանակ մեզ մոտ էր ապրում հորեղբորս՝ Ալեքսեյ Պավլովիչի երիտասարդ դուստրը: Հայրս այդ աշխատանքը վստահել էր նրան, ես էլ օգնում էի: Մենք շահագուշտ էինք, բայց եւ մեծ եռանդով էինք աշխատում: Երբ պատրույզները պատրաստ էին լինում, հայրիկը դրանք տանում էր վարձված վարպետների ու բանվորների մոտ: Մենք երբեմն ձի հեծած գնում էինք նրանց աշխատանքը դիտելու:

Ժամանակն անցավ, աշխատանքներն ավարտվեցին, եւ ճանապարհը, վերջապես, պատրաստ էր: Համընդհանուր ինչպիսի՞ ուրախություն էր տիրում... Հայրիկը նահանգապետին հեռագրեց այդ մասին եւ պատասխան ստացավ՝ թե գալիս է տեսնելու եւ ընդունելու այն: Հայրս իր նման մի խումբ հեծյալների ուղեկցությամբ գնաց նրան ընդառաջ: Ճանապարհի կեսին նահանգապետը դեռ հեռվից տեսավ նրանց ու հրամայեց կանգ առնել: Երբ նա իջավ կառքից, հայրիկը մոտեցավ: Նա-

հանգամայն գրկեց նրան եւ համբուրեց՝ շնորհակալություն հայտնելով լավ կատարված աշխատանքի համար ու հրավիրեց իր հետ միասին կառք նստել: <...>

Շուտով նորակառույց ճանապարհով ազատ երթեւեկություն հայտարարվեց, ու ձգվեց տարբերազան ապրանքներով բարձված ձիասայլերի ու ձիաբեռնասայլերի, ձիափոխ կառքերի շարանը, քաղաքը կենդանության նոր թափ առավ: <...>

Իմ կրտսեր եղբայր Ակիմ Ակիմովիչը, որ ավարտել էր Թիֆլիսի դասական գիմնազիան, ընդունվեց Կիեւի համալսարանի ֆիզիկա-մաթեմատիկական ֆակուլտետ: Ավարտելով համալսարանական կրթությունը, նա ամուսնացավ իր պրոֆեսորի խորթ դստեր հետ եւ հաշվապահի ծառայության անցավ Լիտվա-Ռուսիայի երկաթուղում:

Երբ նա արձակուրդ էր վերցնում, մեկնում էր հայրիկի մոտ, գործում օգնում նրան: Հորս մահից հետո նա պաշտոնաթող եղավ, պետական գանձարանից հայրիկի վերցրած կապալի ժամկետը շարունակելու թույլտվության հասնելով իր համար՝ ուղեւորվեց Բաշ-Նորաշեն, որը Երեւանի մոտ է, եւ աշխատեց այնտեղ: Դաշտերի ոռոգման համար եղբայրս էլ մի, ոչ այնքան մեծ, ջրանցք կառուցեց: Նա էլ, հայրիկի պես, բոլորի հետ պարզ ու բարեհամբույր վարվեցողություն ուներ եւ շրջակա գյուղացիության, բնակչության կողմից վստահություն էր ձեռք բերել: Եվ մարդիկ իրենց գործերով միշտ խորհուրդ էին հարցնում նրանից:

Մի անգամ այնպես պատահեց, որ երբ հարեւան գյուղից մի թաթար բնակիչ տնտեսական գործերով եղբորս մոտ էր եկել, նույն թաթարական գյուղում սպանվեց տեղական բեկերից մեկը, եւ մարդասպանը զրպարտեց եղբորս այցելած թաթարին՝ իբր նա է սպանել, ու վերջինիս բանտ նստեցրին: Խեղճի ընտանիքն էլ վազեց եղբորս մոտ՝ պաշտպանելու աղերսանքով: Աղքատ գյուղացուն պաշտպանող չկար, մարդասպանն էլ կաշառել էր սուտ վկաների: Ու եղբայրս, հանգամանորեն պարզելով, թե իրականում դեպքն ինչպես է կատարվել, անձամբ գնաց Երեւան՝ նահանգապետի մոտ, ամեն ինչ բացատրեց եւ ինքն էլ որպես պաշտպան հանդես եկավ դատարանում, ապացուցելով, որ սպանվածի ու սպանողի միջեւ արյան վրեժի թշնամություն է եղել, եւ որ դժբախտ թաթարը դեպքը տեղի ունենալու պահին իր մոտ է եղել: Իր պաշտպանական ճառն

ասելով՝ եղբայրս շահեց գործը , ու խեղճուկրակ թաթարին արդարացրին, իսկ մյուսին դատապարտեցին եւ Սիբիր արքարեցին, եւ, իհարկե՝ մարդասպանի ընտանիքը խորապէս ատեց եղբորս, ու նրա հանդեպ վրիժառուքուն ծագեց: Այն ժամանակ Անդրկովկասում դուրին էր մարդասպան վարձելը:

Ձմռանը Երեւանում ապրող եղբայրս ուշ երեկոյան ակումբից վերադառնում էր տուն: Երբ նա բանալին հանեց եւ ուզում էր բացել շքամուտքի դուռը, հանկարծ շենքի անկյունից դուրս թռան երկու հոգի եւ դաշույններով հարձակվեցին նրա վրա: <...> Եղբորս կինը ճչալով օգնություն կանչեց, խոհարարը դա լսելով՝ ակնթարթորեն դուրս վազեց ու գոռալով նետվեց եղբորս կողմը, բայց արդեն ուշ էր, մարդասպանները երկու վերք հասցնելով եղբորս որովայնին, վայրկենաբար չքվեցին ու այնպէս էլ չհայտնաբերվեցին, ենթադրվում էր, որ Պարսկաստան էին փախել: <...> Հուղարկավորելուց երկու օր անց ես տուն վերադարձա: Դա եղել է 1912 թվականին»: <...>

Այսպիսին է Եվգենյա Ակիմովնա Շան-Գիրեյի ավելի քան հետաքրքիր պատմությունը, որը գործնականորեն առաջին անգամ է ծանոթացնում ղարաբաղյան հողում Լեւոնտովի զարմիկի հսկայական, ես կասեի՝ տիտանական գործունեության հետ:

Ականատեսի նրա վկայությունը լիովին մերկացնում է ժամանակակից ադրբեջանական քարոզչությանը: Նրա եղբայր Ակիմ Ակիմովիչը՝ Ակիմ Պավլովիչի որդին, դավաճանորեն սպանվել է ոչ թե հայերի, այլ՝ կովկասյան ստոր թաթարների կողմից, որոնց այժմ կոչում են ադրբեջանցիներ: Կովկասի իրական կեղծելու մասնագետ՝ բաքվեցի այդ անմաքուր հեղինակներն իրենց աչքակապության ու խաբեությունների համար պետք է խաչվեն պատմության խաչելափայտին:

**Թարգմանությունը՝
ՆՎԱՐԴ ԱՎԱԳՅԱՆԻ**

ԱՄՓՈՓՈՒՄ

ՂԱՐԱՔԱՂԸ Մ. ՅՈՒ. ԼԵՐՄՈՆՏՈՎԻ
ԵՎ ՆՐԱ ՄԵՐՁԱՎՈՐՆԵՐԻ ԿՅԱՆՔՈՒՄ
ՎԼԱԴԻՄԻՐ ԶԱԽԱՐՈՎ

Որու մեծ բանաստեղծ Մ. Յու. Լերմոնտովի եւ նրա շրջապատի որոշակի անձանց կողմից Ղարաբաղի /պատմական Հայաստանի 10-րդ նահանգ Արցախ/ հետ ունեցած առնչությունների եւ, մասնավորապես, կովկասյան առաջին քսորի շրջանում բանաստեղծի՝ կարճատեւ այցով Շուշիում եղած լինելու շուրջ է ՌԴ Լերմոնտովյան կոմիտեի նախագահ, պրոֆ. Վլադիմիր Ալեքսանդրովիչ Զախարովի գիտական ուսումնասիրությունը:

Պետք է ասել, որ Արեւելքի մշակույթի կերպարներն ու Կովկասը Լերմոնտովին ուղեկցել են ստեղծագործական ողջ, ցավոք՝ կարճատեւ, կյանքում, ընդորոմ, Լերմոնտովը միայն առաջին ու երկրորդ քսորների ժամանակ չէ, որ եղել է Կովկասում. Երկրամասը նրան ծանոթ է եղել դեռ մանկությունից...

Մեծ բանաստեղծի ղարաբաղյան այցի մասին ինչպես հիմք՝ այնպես էլ վեճերի առիթ է տվել 1837 թ. վերջին նրա մտերիմ Ս. Ա. Ռաբեսկու գրած նամակը: Շուշի այցելելու հարցի պարզմանն ու բանաստեղծի մահից տարիներ անց նրա զարմիկ Ակիմ Շան-Գիրեյի՝ Շուշիում ծավալած գործունեության մասին է ոչ միայն մասնագետների, այլեւ ընթերցողական լայն շրջանակի համար նախատեսված՝ «Ղարաբաղը Լերմոնտովի եւ նրա շրջապատի կյանքում» գիրքը:

РЕЗЮМЕ

КАРАБАХ В ЖИЗНИ М. Ю. ЛЕРМОНТОВА И ЕГО ОКРУЖЕНИЯ
ЗАХАРОВ ВЛАДИМИР

Ключевые слова: Лермонтов, Хастатов, Аким Шан-Гирей, Шума, Шуша, легенда, Шуши, Степанакерт, дорога.

Книга «Карабах в жизни М. Ю. Лермонтова и его окружения» профессора Владимира Александровича Захарова, председателя Лермонтовского комитета РФ - научное исследование вопроса: был или не был великий русский поэт в Карабахе /бывшая 10-я губерния исторической Армении/, в частности - в городе Шуши. Поводом к этому послужило известное письмо поэта, отправленное своему другу С.А. Раевскому, в конце 1837 года, в котором Лермонтов перечисляет многие населенные пункты на Северном Кавказе и в

Закавказье, где ему пришлось побывать в тот год. О письме этом идут споры. Книга содержит немало неизвестных до сих пор документов, свидетельствующих о том, что не только Лермонтов, но и некоторые лица из его окружения были в Карабахе. Книга предназначена не только для специалистов, но и для широкого круга читателей.

SUMMARY

KARABAKH IN THE LIFE OF M. YU. LERMONTOV AND HIS RELATIVES VLADIMIR ZAXAROV

Key words: *Lermontov, Khastatov, Akim Shan-Girey, Shuma, Shusha, legend, Shushi, Stepanakert, road.*

The scientific study of the President of RF Lermontov Committee, prof. Vladimir Aleksandrovich Zakharov is about the relationships of the great Russian poet M. Yu. Lermontov and some persons of his entourage /the 10th province Artsakh of historical Armenia/, particularly it is about the poet's short visit to Shoushi during the first Caucasian exile.

It must be said that the characters of Eastern culture and Caucasus accompanied Lermontov for his whole creative, unfortunately, short life, further, Lermontov wasn't only in Caucasus during the first and second exiles; the land has been familiar to him since childhood...

About the great poet's visit to Karabakh as basis as well as controversy caused the conflict in 1837: the last letter by his close friend S. A. Raevsky. After having found out the issue of visiting Shoushi and after some years of the poet's death, the activity about his cousin Akim Shan-Girey in Shushi is not only for specialists but also for a wide range of readers - the book «Karabakh in the Life of Lermontov and its surroundings».

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. **Ավանեսյան Արմեն** - ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի ավագ գիտաշխատող

2. **Ավետիսյան Ռադա** - Ստեփանակերտի «Գրիգոր Նարեկացի» համալսարանի մարդկային ռեսուրսների կառավարման բաժնի պատասխանատու

3. **Երվանդյան Չոլխրա** - բանասիրական գիտությունների թեկնածու, ՀԴՏՀ լեզուների ամբիոնի դոցենտ

4. **Չախարով Վլադիմիր** - պատմական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր, Ռուսաստանի Լեոմոնտովյան կոմիտեի համանախագահ

5. **Լալայան Վահրամ** - պատմական գիտությունների թեկնածու, Ստեփանակերտի «Գրիգոր Նարեկացի» համալսարանի պատմության ամբիոնի վարիչ

6. **Հակոբյան Վարդան** - բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Ստեփանակերտի «Գրիգոր Նարեկացի» համալսարանի ռեկտոր

7. **Մովսեսյան Ռենա** - բանասիրական գիտությունների թեկնածու, Ստեփանակերտի «Գրիգոր Նարեկացի» համալսարանի լեզուների ամբիոնի վարիչ

8. **Յավրուժյան Մարատ** - բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ, ՀՀԿԳՆ Լեզվի կոմիտեի նախագահի տեղակալ

9. **Շիրինյան Անի** - Ստեփանակերտի «Գրիգոր Նարեկացի» համալսարանի կարիերայի զարգացման և գործատուների հետ կապի կենտրոնի պատասխանատու

10. **Սիմոնյան Նանար** - բանասիրական գիտությունների թեկնածու, Ստեփանակերտի «Գրիգոր Նարեկացի» համալսարանի Արևմտահայերենի, հայագիտության գիտահետազոտական Լուտովիկա և Յակոբ Այնթապյան կենտրոնի գլխավոր մասնագետ

11. **Քուլմունց Միլեր** - բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ, Գորիսի պետական համալսարանի հայոց լեզվի և գրականության ամբիոնի դասախոս

СВЕДЕНИЯ ОБ АВТОРАХ

1. **Аванесян Армен** – кандидат филологических наук, старший научный сотрудник литературного института имени М. Абегамян НАН РА

2. **Аветисян Рада** – ответственная отдела управления человеческими ресурсами университета «Григор Нарекаци» города Степанакерта

3. **Акопян Вардан** – доктор филологических наук, профессор, ректор университета «Григора Нарекаци».

4. **Ервандян Зухра** – кандидат филологических наук, доцент кафедры языков ГЭА Армении

5. **Захаров Владимир** – кандидат исторических наук, профессор, член союза писателей России и Армении, Сопредседатель Российского Лермонтовского комитета.

6. **Кумунц Мгер** – кандидат филологических наук, доцент, преподаватель Горисского государственного университета.

7. **Лалаян Ваграм** – кандидат исторических наук, заведующий кафедрой истории степанакертского университета «Григор Нарекаци»

8. **Мовсесян Рена** – кандидат исторических наук, заведующая кафедрой языков степанакертского университета «Григор Нарекаци»

9. **Симонян Нанар** – кандидат филологических наук, главный специалист западно-армянского арменоведческого научно-исследовательского центра Лютовикии Акопа Аинтаплеан степанакертского университета «Григор Нарекаци»

10. **Ширинян Ани** – ответственная отдела развития карьеры и связи с работодателями степанакертского университета «Григор Нарекаци»

11. **Яврумян Марат** – кандидат филологических наук, доцент, заместитель председателя комитета языка МНО РА

INFORMATION ABOUT AUTHORS

1. **Armen Avanesyan** - Candidate of Philological Sciences, Senior Researcher at Literary University named after M. Abeghyan of NAS RA
2. **Rada Avetisyan** - in Charge of Human Resources Management at Stepanakert «Grigor Narekatsy» University.
3. **Vardan Hakobyan** - Doctor of Philological Sciences, Professor, Rector of «GrigorNarekatsy» University
4. **Zukhra Yervandyan** - Candidate of Philological Sciences, Associate Professor of ASUE Languages Chair
5. **Vladimir Zakharov** - Candidate of Historical Sciences, Professor, Co-Chairman of the Russian Lermontov Committee.
6. **Mher Kumunts** - Candidate of Philological Sciences, Docent, Lecturer at the Chair of Armenian Language and Literature of Goris State University.
7. **Vahram Lalayan** - Candidate of Historical Sciences, Head at History Chair of Stepanakert «Grigor Narekatsy University»
8. **Rena Movsesyan** - Candidate of Philological Sciences, Head at the Languages Chair of Stepanakert «Grigor Narekatsy» University.
9. **Nanar Simonyan** - Candidate of Philological Sciences, Chief Specialist of Lutovica and Agob Aintablean Western-Armenian and Armenology Research Centre at Stepanakert «Grigor Narekatsy» University.
10. **Ani Shirinyan** - in Charge of Career Development and Employers' Contact Center at Stepanakert «Grigor Narekatsy» University.
11. **Marat Yavrumyan** - Candidate of Philological Sciences, Docent, Deputy Chairman of the Language Committee of the Ministry of Education and Science of RA

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Վարդան Հակոբյան

«Պատկեր. առարկայականությունից դեպի
տրամաբանականը կամ ժամանակի և տարածության
տարրալուծումը բառի մեջ» 9

2. Վահրամ Լալայան

«Նարեկի խորհրդաբանության արտացոլումը միջնադարյան
լուծմունքի չորս խմբագրումներում» 34

3. Անի Ծիրինյան

«Դիցաբանական կերպարներն ու մոտիվները
Չարենցի ստեղծագործության մեջ» 49

4. Մարատ Յավրումյան

«Հայերենի քերականության ձևայնացումը տիպաբանական
մոտեցմամբ. UD ծառադարանների փորձ» 61

5. Արմեն Ավանեսյան

«Արցախյան հերոսամարտը Վրեժ Իսրայելյանի արձակում» 74

6. Միեր Զումուլնց

«Գրաբարի անցյալ դերբայը բարբառային
մի քանի բառերում. ստուգաբանություններ» 81

7. Նանյա Սիմոնյան

«Սարոյան-Կարապենց գրական առնչություններ» 90

8. Ռենա Մովսեսյան

«Գեղարվեստական գրականությունն իբրև բարբառային
բառերի պահարկման և գործածական
ակտիվության միջավայր» 97

9. Չուխրա Երվանդյան

«Արցախ աշխարհի նկարագիրն ու բովանդակավորումը
Վ. Հակոբյանի ստեղծագործություններում» 110

10. Ռադա Ավետիսյան

«Հայ-թաթարական (ադրբեջանական)
ընդհարումները 1905-1906 թվականներին» 125

11. Վլադիմիր Չախարով

Ղարաբաղը Լեռմոնտովի և Նրա շրջապատի կյանքում 134

Տեղեկություններ հեղինակների մասին 153

СОДЕРЖАНИЕ

1. Вардан Акопян

«Образ: из предметности к логичному, или разделение
времени и пространства в слове» 9

2. Ваграм Лалаян

«Мистические восприятия «Книги скорбных песнопений»
Григора Нарекаци в четырех изданиях средневекового
комментария» (Гл.1-Гл. 28) 34

3. Ани Ширинян

«Мифологические образы и мотивы
в произведениях Чаренца» 49

4. Марат Яврумян

«Синтаксически аннотированный корпус армянского
языка и универсальные зависимости» 61

5. Армен Аванесян

«Арцахская война в прозе Врежа истраеляна» 74

6. Мгер Кумунц

«Прошедшее время причастий в нескольких словах
древнеармянского языка: грабар» 81

7. Нанар Симонян

«Литературные соотношения Сарояна и Карапенца» 90

8. Рена Мовсесян

«Художественная литература как среда хранения
и активного употребления диалектных слов» 97

9. Зухра Ервандян

«Описание и содержательность земли Арцаха
в произведениях Вардана Акопяна» 110

10. Рада Аветисян

«Армяно-татарские (азербайджанские) столкновения
1905-1906гг. и очередные подвиги отрядов
армянских добровольцев 125

11. Владимир Захаров

«Карабах в жизни Лермонтова и его окружения» 134

Сведения об авторах 154

CONTENTS

1. Vardan Hakobyan

«The Image from the Subject Matter to the Essence or
Decomposition of Time and Space in a Word» 9

2. Vahram Lalayan

«Narek's counseling reflection on the four editions
of the Medieval solutions» 34

3. Ani Shirinyan

«Atheistic characters and motives in the work of Charents» 49

4. Marat Yavrumyan

«Formation of Armenian grammar with
a typological approach: UD treebank experience» 61

5. Armen Avanesyan

«Artsakhian heroic fight in the prose of Vrej Israelyan» 74

6. Mher Kumunts

«Grabar's past participle in a few dialectal words: etymologies» 81

7. Nanar Simonyan

«Saroyan-Karapents Literary relationships» 90

8. Rena Movsesyan

«Fiction Literature as active environment of storage
and use of dialectal words» 97

9. Zukhra Yervandyan

«The description and content of Artsakh world
in V. Hakobyan's works» 110

10. Rada Avetisyan

«Armenian -Tatar (Azerbaijan) clashes (1905-1906) and
subsequent feats of Armenian volunteer detachments» 125

11. Vladimir Zakharov

«Karabakh in the Life of M. Yu. Lermontov and his Surroundings» 134

Information about authors 155

ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ «ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ»
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԴՊՐԱՏՈՒՆ 1(7)-2019

Հասարակական գիտությունների
հանդես

СТЕПАНАКЕРТСКИЙ УНИВЕРСИТЕТ
«ГРИГОР НАРЕКАЦИ»

ДПРАТУН 1(7)-2019

Журнал социальных наук

STEPANAKERT
«GRIGOR NAREKATSY» UNIVERSITY

DPRATUN 1(7)-2019

Journal of Social Sciences

Տպագրությունը՝ օֆսեթ
Թուղթը՝ օֆսեթ
Չափսը՝ 60x84 1/8
Ծավալը՝ 20.0 տպ. մամուլ
Տպաքանակը՝ 300



ИЗДАТЕЛЬСТВО АРМАВ

Ք. Երևան, Շիրազի 24 շ. 48 բն
հեռ.՝ +374-10347335, +374-99373130
Էլ փոստ՝ armav-hrat@mail.ru

Г. Ереван, ул. Шираза 24д. 48 кв
тел: +374-10347335, +374-99373130
Email: armav-hrat@mail.ru